



Չ. ՏԱՐԻ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՊՈՍՏՈՆԱԿԱՆ ԵՊԱՐԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՊԱՐԿՈՍՈՒԹՅԱՆ ԵԶՐԻԼՏԻ

ՊԼՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԱՆԻԻ
ԱՐԵՆԱՅՆ ՀԼՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՊԱՐԿՈՍՈՒԹՅԱՆ ԵԶՐԻԼՏԻ

ՓԵՐՏՈՒՄ

2023

II. ԵԶՐԻԼՏԻ




ՀՐԱՄԱՆԱԻ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



«ԷԶՄԻԱԾԻՆ»

կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր

Խմբագրական


Գլխավոր խմբագիր՝ **Գեորգ Մադոյեան**

Լեզուատնական խմբագիր՝ **Նարէ Սարգսեան**

Տեխնիկական խմբագիր՝ **Գոռ Գրիգորեան**

Խմբագրական խորհուրդ՝ **Տ. Եզնիկ արք. Պետրոսեան,
Տ. Չաքարիա ծ. վրդ. Բաղումեան,
Տ. Անդրէաս վրդ. Եզեկեան,
Գոհար Աւագեան,
Ազատ Բոզոբեան,
Խաչիկ Րաֆֆի Գազեր,
Վարդան Դերիկեան,
Գեորգ Տեր-Վարդանեան**





“Etchmiadzin”

Journal of Religious and Armenological Studies

Editorial staff

Editor-in-Chief **Gevorg Madoyan**

Stylistic editor **Nare Sargsyan**

Technical editor **Gor Grigoryan**

Editorial Board **Archbishop Yeznik Petrosyan,
Proto-Archimandrite Zakaria Baghumyan,
Archimandrite Andreas Yezekyan,
Gohar Avagyan,
Azat Bozoyan,
Hacik Rafi Gazer,
Vardan Devrikyan,
Gevorg Ter-Vardanyan**



«Эчмиадзин»

Религиоведческий и арменоведческий журнал

Редакционный состав


Главный редактор **Геворг Мадоян**

Стилистический редактор **Нарэ Саргсян**

Технический редактор **Гор Григорян**

Редакционный совет **Архиепископ Езник Петросян,
Протоархимандрит Закария Багумян,
Архимандрит Андреас Езекян,
Гоар Авакян,
Азат Бозоян,
Хачик Рафи Газер
Вардан Деврикян,
Геворг Тер-Варданян**

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆԳՐԱԿՆԵՐ



ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՍԵՐ ՊԱՅՔԻ ԱՌԻՌՈՎ

(20 փետրվարի, 2023 թ.)

Միրելիներ,


Մուտք ենք գործում Մեծ Պահջի շրջան: Այս ժամանակամիջոցը քրիստոնյայի կյանքում կարեւոր հանգրվան է սրբության ու կատարելության աստվածապատվեր ճանապարհին: Պահջի մեջ աղոթական խոկումներով, ինքնաքննությամբ ու երկնային շնորհների հայցով զորություն ենք ստանում ի կատար ածելու Քրիստոսի հորդորն ու պատգամը. «Արդ, կատարյալ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե. 48): Կատարելության ուղին սկզբնավորվում է զղշումով ու ապաշխարությամբ, որոնցով սրբագրվում են մտքի, խոսքի եւ գործի սխալներն ու սայթաքումները: Հատկապես այս խորհրդավոր շրջանում, ավետարանական առակի օրինակով (Ղուկ. ԺԵ. 11–32) առ երկնավոր Հայրը դառնալով, խնդրում ենք Տիրոջից գթությամբ ներել մեր մեղքերը, մաքուր սիրտ հաստատել մեզանում: Հայցում ենք լուսավորել մեր միտքը, ամրացնել մեր կամքը՝ ընթանալու տերունավանդ պատվիրաններով:

Պահեցողության այս շրջանում Հայրապետիս հորդորն է ու պատգամը՝ միմյանց հանդեպ լինել առավել հոգատար, ազնիվ ու հարգալից, բարությունն ու սերը դարձնել հիմը փոխհարաբերությունների եւ ամուր պահել նվիրումն ու հավատարմությունը առ Աստված, ազգն ու հայրենին: Մեր օրերում, երբ մեր հայրենիքն ու ժողովուրդը վիրավոր են մեզ պատուհասած պատերազմի արհավիրքներից, աղոթական կյանքով Աստու հետ մշտական երկխոսության մեջ լինենք, զերծ մնանք ամեն չար ու վատ մտածումից ու գործից՝ միասնաբար նորոգելու համար հայրենական ու ազգային մեր կյանքը, դիմագրավելու մեր դեմ հառնած նե-

ղուծյունները եւ մեր հարազատ երկիրը՝ Հայաստանն ու Արցախը դարձնելու «հույսի հայրենիք, լույսի հայրենիք»:

Աղոթենք, որ Ամենակալն Աստված Իր ողորմությունն ու պահպանությունը տարածի աշխարհասփյուռ մեր ժողովրդի վրա, պարգևի անվտանգ ու բարօր կյանք եւ խաղաղության մեջ պահի մեր երկիրը: Թող Փրկիչ մեր Տերն ընդունի մեր սրտերի խնդրանքներն ու հայցը, արժանի դարձնի Իր կենսատու եւ փրկարար շնորհներին եւ զորացնի ամենքիս՝ Մեծ Պահքի միջոցով հասնելու հուսառատ Սուրբ Հարության տոնին:

«Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտութեամբ եւ սիրով եղիցին ընդ ձեզ» (Բ. Յովհ. Յ), այսօր եւ միշտ. ամէն:





Տ. ՆԵՐՍԷՆԻ ՎԱՐՂԱՊԵՏ ԽԱԼԱԹՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՍԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(12 փետրվարի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ես եմ Հովին քաջ եւ ճանաչեմ գիմսն,
եւ ճանաչեմ յիմոցն: Որպէս գիտէ զԻս
Հայր, գիտեմ եւ ես զՀայրն»
(Յովհ. Ժ. 14–15):

Միրելի հավատացյալ քույրեր եւ եղբայրներ,

Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի այս խոսքերը մեկ անգամ եւս ոգեկոշում են մեզ այս սուրբ Խորանից խոսելու Ղեւոնդյանց քահանաների սխրանքի մասին: Մեր տոնացուցցի մեջ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տարվա այս շրջանը հատկացրել է Ավարայրի հերոսամարտի սրբերին եւ նվիրական ձեռով այն անվանել Վարդանանց օրեր:

Ղեւոնդյանց քահանայից կամ Վարդանանց տոնը բոլոր ժամանակներում ամեն հայի համար հանդիսացել է ազգային ամենասիրելի տոներից մեկը, քանի որ այն ազատագրական պայքարի միջոցով հայկական ինքնուրոշյունը եւ ուղղափառ դավանանքը պահպանելու լավագույն օրինակ է տալիս:

451 թվականին զրադաշտութեան տարածման եւ կրոնափոխութեան դեմ պայքարի ելնելով՝ հայոց ազնվական ու կրոնական խավերը համախմբվում են եւ որոշում միասնական ճակատով դուրս գալ պարսկական բանակի դեմ: Սա մի ազատագրական պայքար էր, որի հիմքում ընկած էր ոչ միայն ազգի ֆիզիկական գոյատեւումի ապահովումը, այլեւ հոգեւոր ու բարոյական կյանքով ապրելու նրա անխախտ իրավունքի պաշտպանութունը: Ավարայրի դաշտ մարտնչում էին ոչ միայն աշխարհականներ, այլ նաեւ եկեղեցականներ՝ Ղեւոնդ երեցի գլխավորութեամբ:

Վարդան Մամիկոնյան զորավարի առաջնորդությամբ եւ 1036 քաջ նահատակ մարտիկներով հայոց բանակը ճակատամարտի դուրս եկավ Սասանյան Պարսկաստանի հզոր բանակի դեմ: Թեպետ հայոց բանակը պարտվեց պատերազմի դաշտում, իսկ քահանաները գերեվարվեցին, բայց արդյունքում մենք պահպանեցինք մեր կրոնը, հավատքն ու ազգային ինքնությունը: Դա ամենամեծ ձեռքբերումն էր, քանի որ թույլ տվեց մեզ հետագայում զարգացնել Հայաստանում կրոնագիտական կենտրոնները, դպրոցներն ու պետական այլ հաստատությունները: Հնարավորություն ստեղծվեց հաջորդող շրջանում կազմակերպել ազատագրական պայքար: Բացել դիմադրության նոր ճակատ:

Ղեւնդ Երեցի եւ իր ընկերակից քահանաների նահատակությունը անկոտրում կամքի ու հավատքի վառ օրինակ է մեզ համար: Ըստ հայ պատմիչների, նահատակությունից առաջ Ղեւնդ Երեցը դարձի է բերում Նյուշապուհ քաղաքի պարսիկ մոգպետին, որը քահանաների հետ միասին ընդունում է նահատակության պսակը:

Հիրավի, կրոնափոխության վտանգի առջեւ կանգնած հայ ազգն ու հայ Եկեղեցին միասնական ուժով ապստամբեցին բիրտ ուժի դեմ: Դա պարզապես բռնի քաղաքականության հետեւանք էր, որով Սասանյան պետությունը ցանկանում էր քրիստոնյաներին բնաջնջել Պարսկաստանի եւ հատկապես Հայաստանի երեսից:

Քրիստոնեությունը, որը տարածվել էր Հայաստանում Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների միջոցով եւ ազգային կրոնի վերածվել Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից, այնքան խորը արմատներ էր ձգել հայկական ինքնության ու մտածելակերպի մեջ, որ հեշտ չէր այն արմատախիւ անել: Այստեղ կարելոր է ընդգծել ազգային եւ կրոնական վտանգի առջեւ կանգնած հայ հոգեւորականի ինքնագոհության պատրաստակամությունը: Ոչ թե փախչել վտանգի պահին, այլ առաջամարտիկը լինել պայքարի թեժ հորձանուտում: Հայ հոգեւորականի այսօրինակ հատկությունները պետք է ի հայտ գային մեր պատմության այլ ժամանակներում եւս: Հիշենք միայն Սարգարապատի, Բաշ-Ապարանի հերոսամարտերն ու Արցախյան գոյապայքարը, որտեղ հոգեւորականը՝ մի ձեռքում խաչը բռնած, մյուսում՝ զենք, կանգնած է եղել հայ զինվորի կողքին: Նա օգնել է զինվորին մարտի դաշտում, իսկ հարկ եղած դեպքում հայրաբար հորդորել ու աղոթել նրա համար եւ նրա հետ միասին:

Ղեկնդրանց քահանաների ինքնազոհողությունը նման է մի փոքրիկ պատմության, որը ցույց է տալիս գիտակից եւ հավատալից մարդու վերաբերմունքը մոտավուտ մահվանը:

Մի դպրոցում, դասի ժամանակ, ուսուցիչը խոսում է կյանքի, մահվան եւ մահից հետո կյանքի գոյություն մասին: Սակայն նկատում է, որ աշակերտներին ավելի շատ հետաքրքրում է անդրշիրիմյան կյանքի մասին հարցը, ինչ է մարդուն սպասվում մահվանից հետո: Եւ ամեն անգամ նման հարցերի ժամանակ ուսուցիչը ժպտալով խուսանավում է պատասխանից: Աշակերտներն այնուամենայնիվ պնդում են, որ ուսուցիչը պատասխանի իրենց հարցին: Ուսուցիչն այս անգամ ասում է. «Դուք նկատել եք, որ անդրշիրիմյան կյանքով հետաքրքրվում են նրանք, ովքեր չգիտեն՝ ինչպես ապրել այս կյանքը»: Եւ հետո ավելացնում է. «Դուք պետք է հարց տաք ձեզ, թե ինչպիսին է ձեր կյանքը մինչեւ մահը»:

Ղեկնդրանց քահանաները քաջ գիտակցել են իրենց անելիքը այս կյանքում եւ ուսուցչի այս հարցին պատասխանել են շատ վաղուց Մեր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խոսքերով. «Ես եմ Հովիւն քաջ. եւ ճանաչեմ զիման, եւ ճանաչեմ յիմոցն: Որպէս գիտէ զԻս Հայր, գիտեմ եւ Ես զՀայրն»: Ինչպես ճշմարիտ հոգեւորականն է հոգ տանում իր հոտի մասին, սիրում է իր հոտը, նույնպես եւ Երկնային Հայրն է սիրում իր քահանային՝ փրկագործելով ու լուսավորելով նրա ազնիվ կյանքն ու հոգին: Ահա ինչու է ասվում. «Որպէս գիտէ զԻս Հայր, գիտեմ եւ Ես զՀայրն»:

Միրելի հավատացյալներ, ցավոք այսօր էլ մեր կյանքում արձանագրվում են բազմաթիվ Ավարայրի հերոսամարտեր, եւ մենք մշտապես ստիպված ենք լինում ապացուցել մեր ազգի անկախ եւ ազատ ապրելու իրավունքը: Աշխարհն այսօր էլ ճանաչում է միայն բիրտ ուժը եւ բռնագործի լեզուն: Կյանքը ալեկոծված է պատերազմներով եւ տարատեսակ վտանգներով, որոնք խաթարում են ազգերի բնականոն ու խաղաղ զարգացումն ու համակեցությունը: Ես համոզված եմ, որ միայն մեր անասնական բնազդներից ազատվելով եւ այլոց տիրանալու մոլուցքից վեր բարձրանալով պիտի հասկանանք ու տեսնենք հոգեւոր արժեքների եւ աստվածային սիրո հովանու ներքո ապրելու երանավետ կյանքի գեղեցկությունը:

Դարավոր ոսոխն այսօր քնած չէ եւ փորձում է բնաջնջել մեր ազգը, հավատքը եւ ազգային հինավուրց սովորություններն ու մշակույթը: Քա-

ուսանօրյա պատերազմի օրերին հայ քահանան Ղեւոնդ երեցի օրինակով կանգնեց հայ զինվորի կողքին եւ նահատակվելով այս անգամ էլ, ինչպես Ավարայրում, շթողեց նրան միայնակ:

Սիրելի հավատացյալներ, մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի թույլ չտանք նոր ավարայրների կրկնությունը մեր կյանքում: Մենք պետք է ամեն հնարավորն անենք, որ վերափոխենք մեզ: Փոխենք մեր վերաբերմունքը շատ հարցերի նկատմամբ: Փոխենք մեր մտածելակերպը: Զերբազատվենք այն պառակտիչ եւ անհեռատես գործերից, որոնք խաթարում են մեզ, թույլ չեն տալիս համախմբվել միասնական գաղափարի շուրջը: Այո՛, թշնամուն հաղթելու ամենամեծ գեները մեր բարգավաճումն է, մեր թերի կողմերի վերանայումը եւ շտկումը: Զարգացնել մեր կրթական համակարգը, տնտեսությունը, մշակույթն ու գիտությունը. ահա օրվա հրամայականը: Սա է միակ ճանապարհը: Մեր զորացումը մեր թշնամու տկարությունն է:

Վեհափառ Տեր, թույլ տվեք հանուն Մայր Աթոռի միաբանության եւ մեր հավատավոր ժողովրդի շնորհավորել Ձեզ քահանայական այս խորհրդավոր եւ պատվավոր տոնի առիթով՝ մաղթելով Ձերդ Սրբությունը բեղմնավոր ու արգասաբեր գործունեություն՝ հովվելու եւ առաջնորդելու մեր ազգը, մեր Եկեղեցին դեպի լուսավոր ու խաղաղ նավահանգիստ:

Սիրելի Հավատացյալ ժողովուրդ, եկեք այս նվիրական տոնի առիթով առաջնորդվենք նահատակ մեր քահանաների զորություններով: Լավատես լինենք մեր ապագայի հանդեպ, վերազինվենք եւ միասնաբար կառուցենք մեր գալիքը: Լծվենք հայրենիքի շենացման քաղցր ու կարեւոր գործին: Անսանք մեր Տեր Հիսուս Քրիստոսի սիրո լույսին եւ, Ղեւոնդյանց քահանաների խիզախությամբ տոգորվելով, չվախենանք գալիքից, չերկյուղենք նյութածին վտանգներից, քանի որ մենք աստվածային ժողովուրդ ենք: Բազում հաղթանակներ տեսած ու ապրած ժողովուրդ ենք: Եւ թող մեզ առաջնորդի Ղեւոնդյանց քահանաների այսօրվա կարգախոսը, որն ասում է. «Ես եմ Հովիւն քաջ. եւ ճանաչեմ զԻմսն, եւ ճանաչեմ յԻմոցն: Որպէս գիտէ զԻս Հայր, գիտեմ եւ ես զՀայրն»:

Սեր, շնորհ եւ խաղաղություն լինի ընդ ձեզ,

Այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:



Տ. ԶԱՔԱՐԻԱ ՍԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐՂԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ՊԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՏՅԱՌՆԸՆՂԱՌԱՋԻ ՏՈՆԻՆ

(14 փետրվարի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Առդ, արձակես զճառայս Քո, Տէր,
ըստ բանի Քում ի խաղաղութիւն, զի
տեսին աչի իմ գփրկութիւն Քո»

(Ղուկ. Բ, 29–30):

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ,

Այսօր Հայոց Եկեղեցին հանդիսաբար նշում է քառասնօրյա Հիսուս մանկան տաճարին ընծայվելու տոնը, որը հրաշալի առիթ է վերընթերցելու ավետարանական համապատասխան հատվածը, մտորելու օրվա խորհրդի մասին եւ զորանալու Աստծու խոսքով: Սուրբգրային բազում դեպքերի նման սա եւս տեղի է ունենում Երուսաղեմի տաճարում, որ կենդանի վկան է հրեա ժողովրդի պայքարի ու մաքառումի, երազի եւ հոգեւոր վերազարթոնքի: Այստեղ են նաեւ Տիրամայրն ու Աստվածահայր Հովսեփը, որոնք մովսիսական օրենքի համաձայն, իրենց զավակին տաճար են տանում «Տիրոջը ներկայացնելու» (Ղուկ. Բ, 22):

Ս. Ղուկաս ավետարանիչը պատմում է նաեւ արդար ու աստվածավախ Սիմեոն ծերունու մասին, որին Ս. Հոգուց հրամայված էր մահ չճաշակել, մինչեւ տեսներ Տիրոջ Օծյալին: Ըստ մեր Եկեղեցում պահպանված ավանդույթյան, որն առաջին անգամ մեջբերել է Է.—Ը. դարերի քերականագետ, շարականագիր եւ թարգմանիչ Ստեփանոս Սյունեցին, նա ապրել է 344 տարի: Այո՛, դուք ճիշտ լսեցիք, գրեթե երեք ու կես դար, որը շատ խորթ է ժամանակակից մարդու մտածողության համար: Ինչպե՞ս կարելի է այդքան ապրել ու չձանձրանալ կյանքից, չհոգնել թեկուզ մեր մարմնից, նույն կյանքի զանազան կրկնություններից, մարդկանցից, շրջապատող իրերից, ինչո՞ւ է Աստված այսպես «պատժում» մարդուն:

Ի տարբերություն նույն ժամանակաշրջանում ապրող մարդկանց՝ այս Սիմեոնն աներեր հավատով, անկորնչելի հույսով եւ անսպառ համբերությամբ սպասում էր Աստծու խոստման կատարմանը, նրա կյանքի նպատակն Աստծուն հանդիպելն ու Նրան գրկելն էր: Այլ խոսքով՝ Աստված ոչ թե պատժել էր Սիմեոնին երկարակեցությամբ եւ կյանքը դարձրել ունայն ու անհետաքրքիր, այլ մեծագույն շնորհի ու պատվի էր արժանացրել եւ իմաստավորել նրա կյանքը: Իզուր չէ, որ Քրիստոսի Եկեղեցին Սիմեոն ծերունուն գովերգում է «աստվածազգեաց» մակդիրով, քանզի նա կրեց, գրկեց մանուկ Հիսուսին: Բացի Սիմեոնից, այստեղ էր նաեւ ութսունչորսամյա Աննա մարգարեուհին, որ կրկին նույն սպասման մեջ էր, խոսում էր մանկան մասին եւ շնորհակալություն հայտնում Աստծուն՝ այս պահին արժանացնելու համար:

Եւ ահա կատարվում է Եգեկիելի մարգարեությունը. տաճարի արեւելյան փակված դուռը բացվում է, քաղաքի դղրդյունից բնակիչները շտապում են սրբավայր՝ տեսնելու մանուկ Փրկչին: Պատկերն իսկապես շատ հուզիչ է: Հոգեկիր Սիմեոնը տաճարում մոտենում է Աստվածամորը եւ գրկում մանուկ Աստվածորդուն, որի գալստյան եւ ծննդյան մասին ավետել էին մարգարեները: Աննկարագրելի ուրախություն էր ապրում Սիմեոն ծերունին, իրականացել էր նրա ապրելու բուն նպատակը, եւ հիմա նա կարող էր հանգիստ ննջել: Նա փառք տվեց Աստծուն, մարգարեացավ մանկան մասին եւ Տիրոջից խնդրեց խաղաղությամբ իրեն արձակել. «Աչքերս տեսան փրկությունդ, որ պատրաստեցիր բոլոր ազգերի առաջ, Լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների եւ փառք Իսրայելի՝ ժողովրդիդ համար» (Ղուկ. Բ. 30—32): Սիմեոնը փակում է աչքերն այն վստահությամբ, որ գրկեց, տեսավ Նրան, ով անգամ մահից հետո իրեն փրկության է արժանացնելու: Սա գիտակցված մահ է եւ հաստատուն համոզում, որ Աստծու հետ հաջորդ հանդիպումը տեղի կունենա արդեն հավիտենականության մեջ: Չպետք է մոռանալ, որ անգամ Ս. Մովսես մարգարեն շտեսավ Աստծուն, բայց Սիմեոնն ու Աննան արժանացան այդ մեծ պարգեւին: Հիրավի, նման երջանկությունից եւ երանությունից հետո էլ ինչ է պետք մարդուն այս կյանքում... Այս տեսարանից զարմացած են նույնիսկ Հիսուսի ծնողները, բայց Սիմեոնն օրհնեց նաեւ Տիրամորը՝ մարգարեանալով գալիք դեպքերի մասին: Փաստորեն, ավետարանական այս պատմությունը մարդու եւ Աստծու, Հին Ուխտի ու Նոր Ուխտի հանդիպման մասին է, որտեղ սպասումն արդարացված է, իսկ կյանքը՝ օրհնված:

Իրականում մեր կյանքի նպատակը նույնպես, սիրելիներ, Աստծուն հանդիպելն է, Նրան ճանաչելն ու սրտում ընդունելը: Աստվածճանաչողության հասնելու խաչի ճանապարհն ամեն մեկս յուրովի ենք անցնում եւ ապրում. մեկին այն գուցե հեշտությամբ է տրվում, մյուսը ստիպված է ամեն օր ճիգ ու ջանք թափել, պայքարել անգամ հանապազօրյա հացի համար, մեկ ուրիշն էլ համբերությամբ, խոնարհությամբ եւ համառությամբ է հասնում դրան: Բայց պետք է շմոռանալ եւ միշտ հիշել, որ Աստված տալիս է համապատասխան ուժն ու շնորհը եւ սպասում իր հետ հանդիպմանը, որը կարելոր է հենց տվյալ մարդու փրկության, հոգեմտավոր կյանքի աճի եւ գորացման համար: Այդ սպասված հանդիպումը կարող է հիմնովին փոխել յուրաքանչյուրիս կյանքը, վերափոխել, վերադասավորել նույն կյանքի հանդեպ մեր առաջնայնություններն ու պատկերացումները՝ հնարավորություն տալով գլխավորը զանազանել երկրորդականից, անժամանակը՝ ժամանակավորից, հոգեւորը՝ նյութականից, հայրենիքը՝ պարզ հողից: Միայն այս դեպքում մենք կսկսենք այլ աչքերով նայել մեր ապրածին, վրա հասած փորձություններին, մեզ շրջապատող մարդկանց վարքին եւ ավելի ուշադրություն կդարձնենք հոգեւոր-բարոյական արժեքներին, այսինքն՝ կմտածենք եւ կգործենք քրիստոնեաբար: Եւ այդ ժամանակ աստվածատուր կյանքը կդառնա ավելի հետաքրքիր ու նպատակասլաց, իսկ ժամանակավոր դժվարություններն ու փոթորիկները՝ Տիրոջով հաղթահարելի:

Նայե՛ք ձեր շուրջը եւ պիտի համոզվեք, թե որքան՝ երջանիկ են Աստծուն հանդիպածներն ու Նրան ճանաչողները: Այդպիսիներն էլ ապրում են նյութապաշտ եւ եսի թագավորության այս ժամանակավոր աշխարհում, բայց մի տեսակ ուրիշ են, ներքին լույս, խաղաղություն ունեն, աներեր հավատ ու հավատարմություն Արարչի հանդեպ, փառք եւ գոհություն են հայտնում իրենց ապրած ամեն օրվա համար եւ զարմանալիորեն երջանիկ են: Ցավոք, մեր շրջապատում քիչ չեն նաեւ նրանք, որոնք ամեն ինչ ունեն՝ փող, իշխանություն, շքեղ մեքենաներ, երթեւեկում են թիկնազորով, հպարտանում իրենց հնարավորություններով, ցոփ ու շվայտ կյանքով, սոցցանցերի բյուրավոր հավանումներով... Շատերն էլ, բնականաբար, նախանձում, երանի են տալիս այս տեսակ մարդկանց եւ անպայման ցանկանում նմանվել: Բայց հավատացե՛ք՝ առերեւոյթ այս «երջանիկներից» կամ «հաջողակներից» շատերն իրական կյանքում դժբախտ են, միայնակ, չեն կարող ազատ քայլել փողոցով եւ

շիտակ նայել մարդկանց աչքերի մեջ, քանզի տարբեր մեղքերի մեջ են, հաճախ բարդույթավորված եւ անընդհատ ինչ-որ բան կորցնելու վախով: Իսկ ամենասարսափելին այն է, որ նրանք դեռ չեն հանդիպել Աստծուն, վայելել աստվածճանաչողության պարզեւած քաղցրության բերկրանքը, այլապես կապրեին եւ կգործեին արժեքային այլ համակարգով, կգնահատեին իրենց կյանքը եւ նյութը կդարձնեին ոգեղեն իրականություն: Ուրեմն, օր առաջ պետք է նախապատրաստվել եւ պատրաստ լինել Աստծու հետ հանդիպմանը, որն անպայման մեկ օր լինելու է կամ այս կյանքում եւ կամ հանդերձյալում:


Սիրելիներ, քրիստոնյաներս ամեն անգամ Աստծուն ենք նաեւ հանդիպում, երբ Սիմեոնի եւ Աննա մարգարետուհու նման եկեղեցի ենք գալիս: Դարեր շարունակ հանդիպման այս վայրն անփոփոխ է մեզ համար, որի ամեն մի քարը շաղախված է մեր հայրերի աղոթքով, արցունքով ու հավատով: Եկեղեցին ոչ միայն փրկության Նոյան տապանն է, այլեւ քրիստոնեական մեր ինքնության ծննդավայրը, որ դարձել է մեր էության անբաժանելի մասը եւ Արարատյան ազգի հավերժության գրավականը: Ի վերջո՝ ի՞նչ ենք փնտրում մենք եկեղեցում, եթե ոչ Աստծուն, որի հետ կարող ենք անկեղծ զրուցել, մեր սիրտն ու հոգին բացել Նրա առաջ եւ խաղաղված դուրս գալ այս սրբավայրից: Ինչպես Ս. Հովհան Ոսկեբերանն է դիպուկ նշում. «Եթե եկեղեցի ես եկել սուրբ մարդկանց փնտրելու, ապա սխալվում ես: Եթե եկել ես Աստծուն փնտրելու, ապա ճիշտ ընտրություն ես արել»:

Անխոս Աստծու հետ մեր հանդիպումն ավելի ամբողջական է դառնում, երբ մասնակցում ենք Ս. Պատարագի ահեղ խորհրդին եւ Ս. Հաղորդություն ստանում: Եթե Սիմեոնը գրկեց մանուկ Հիսուսին, ապա մենք հնարավորություն ունենք ճաշակելու Նրան: Այս սրբազան արարողության ժամանակ երկիրը երկինք է դառնում, հրեշտակներն իջնում են երկնքից, գինվորյալ եւ հաղթական եկեղեցիները մեկ են դառնում, իսկ Ս. Խորանին պատարագվում է մեր Տերը: Հիշում եք, երբ համավարակի խիստ օրերին եկեղեցիները փակ էին հավատացյալներիդ առաջ, իսկ եկեղեցական արարողությունները հեռարձակվում էին համացանցով, շատերդ էիք տրտնջում, դժգոհում ստեղծված իրավիճակից: Ցանկանում էիք եկեղեցի գնալ, աղոթել, ձեր լույսի եւ հույսի մոմը վառել, բայց անհնար էր: Հոգեւոր տեսանկյունից սա փորձության շրջան էր ամենքիս համար, երբ սկսեցինք արժեւորել, գնահատել կյանքը, ժամանակը եւ

խորհեցինք մեր կյանքում Աստծու կարեւորութեան եւ դերակատարութեան մասին: Հետեւաբար, եկեք չհապաղենք, պատճառաբանութիւններ չփնտրենք եւ հնարավորութեան դեպքում անպայման եկեղեցի գնանք եւ հանդիպենք Աստծուն: Չէ՞ որ նույն եկեղեցում է նաեւ հնչում Աստծու խոսքը եւ ուղղափառ տեսանկյունից մեկնաբանվում:

Մի խոսքով՝ Աստծու հետ ցանկալի հանդիպումը միշտ ուժի մեջ է, մնում է պատրաստ լինենք դրան եւ համապատասխան կյանքով ապրենք: Եւ տա Աստված, որ Սիմեոնի նման Նրան հանդիպելիս, պարզապես առանց երկմտութեան եւ վախի կարողանանք ասել. «Այժմ, ո՛վ Տեր, ըստ Քո խոսքի՝ խաղաղութեամբ արձակիր ծառայիդ, որովհետեւ աչքերս տեսան փրկութիւնդ» (Լուկ. Բ. 29–30):

Տիրոջ անսահման սերը, խաղաղութիւնը եւ օգնականութիւնը լինեն ամենքիս հետ այսօր եւ հավիտյանս, ամեն:



**Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՊԱՆԻ ԿԻՐԱԿԻՆ
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(19 փետրվարի 2023 թ.)

«Եւ առ Տէր Աստուած գմարդն գոր արար, եւ եղ զնա
ի դրախտին փափկութեան գործել զնա եւ պահել»
(Մննդ. Բ. 15):

«... Զպատկերն իւրական խառնեալ Ընդ հողանիւր
բնութեանս... Եղ ի դրախտին փափկութեան յորում
ցնծայր զուարեացեալ անտխրական խնդութեամբ»
(Կանոն Բուն Բարեկենդանի):

Միրելի՜ քույրեր եւ եղբայրներ, այսօր մեր եկեղեցում նշվում է Բուն Բարեկենդանի տոնը: Բուն Բարեկենդանով մեկնարկում է Մեծի Պահոց 48 օրեր ձգվող ճանապարհորդությունը: Բուն Բարեկենդանի տոնի առիթով մեզ են հասել եւ մեր մշակույթի մեջ պահպանվել հետաքրքրաշարժ պատմություններ, ավանդազրույցներ, հեքիաթներ եւ ժողովրդական բանահյուսության բազմաթիվ գոհարներ: Այս ամենի նպատակը մեկն է՝ հավատացյալ ժողովրդի շրջանում տարածել եւ ամրապնդել դրախտային կյանքի պատկերները, քանի որ Բուն Բարեկենդանի տոնի խորհուրդը ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդկության նախամեղանշական, դրախտային կյանքի պատկերի վերականգնում:

Իսկ ի՞նչ է հայտնի մեզ դրախտի մասին:

Դրախտի մասին որոշ պատկերացումներ կազմելու համար դիմենք Սուրբ Գրքին եւ մեր եկեղեցու Սրբազան Հայրապետներին:

Մննդոց գրքի առաջին երկու գլուխներում, որտեղ ընդգրկված է արարչագործության պատումը, ներկայացվում է Աստծու կողմից երկնքի ու երկրի, լուսատուների, բուսական ու կենդանական աշխարհների ստեղծումը: Զափազանց խոսուն բառապաշարով ներկայացվում է նաև

մարդու արարումը: Այնուհետեւ արձանագրվում է, որ Աստված մարդուն բնակեցրեց երանավետ դրախտում: Ս. Ներսես Շնորհալի հայրապետը, խտացնելով Սուրբգրային տվյալները՝ մարդու դրախտային կյանքի մասին նշում է հետեւյալը. «Ահա այս դրախտում մարդը ցնծալով ուրախանում էր, քանի որ վայելում էր անտխրական խնդություն» (Կանոն Բուն Բարեկենդանի): Ծննդոց գրքում արձանագրված է, որ դրախտը գտնվում է ստույգ վայրում՝ ըստ ամենայնի Միջագետքում, նաեւ հաճախ այդ աշխարհագրական վայրը նույնացվում է Հայկական լեռնաշխարհի հետ, քանի որ այստեղից են սկիզբ առնում Աստվածաշնչյան երկու գետերը՝ Եփրատն ու Տիգրիսը (Ծննդ. Բ. 14): Պատահական չէ նաեւ, որ մեծ տարածում ունի «Հայաստան երկիր դրախտավայր արտահայտությունը»: Ուրեմն, Սուրբ Գիրքը, եթե արձանագրում է ստույգ բնակավայր, Սուրբ Ներսես Շնորհալի հայրապետը հիմնվելով Սուրբգրային ավանդության վրա, եզրակացնում է, որ այդ դրախտավայրը ոչ միայն պարզ բնակավայր է, այլ հոգեվիճակ, որում բացարձակապես տեղ չունեն տխրությունը եւ տառապանքը:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ,


Դրախտի՝ մահվանից հետո գոյություն ունեցող մի նոր կյանքի պատկերացումը քրիստոնեական մեր հավատքի առանցքային մասն է: Զհավատալ դրախտին, չհավատալ՝ հոգու հավիտենությունը, չհավատալ՝ մահվանից հետո գոյություն ունեցող կյանքին, նշանակում է չլինել քրիստոնյա: Սրանով հանդերձ, հիմա մտորում եմ, որ, լինելով քրիստոնյա, մեր խոսակցությունների մեջ հաճախ բացակայում է դրախտի մասին զրույցը: Թվում է, թե մենք դրախտի մասին մտածում ենք՝ որպես հեռավոր մի հեքիաթի, որ ստեղծված է ընդամենը մեր երեւակայությունը սնուցելու համար, բայց իրականում դրախտի գոյությունը մեր հավատքի հիմնաքարերից է: Նորից եմ կրկնում. եթե չկա դրախտ, չկա հավիտենական կյանք, ապա անիմաստ է դառնում քրիստոնեական մեր հավատքը, համոզումը, քրիստոնեական վարդապետությունը: Բուն Բարեկենդանի խորհուրդը ոչ միայն դրախտի մասին խոսելն է, այլ առավելաբար այն մասին է, թե ինչպե՞ս հայտնվենք մենք դրախտում, ինչպե՞ս վերադառնանք դրախտ: Մենք ունենք հավաստի պատմություն, որը քրիստոնյաներիս համար անբեկանելի է. գոյություն ունի դրախտ, որտեղից մարդը վտարվել ու արտաքսվել է մեղքի պատճառով: Մարդու ամբողջ կյանքը դարձել է դեգերումների մի շղթա, եւ այդ դեգերումները պետք

է արժեք ստանան նորից դեպի դրախտ վերադառնալով: Ուրեմն, ինչպէս վերադառնանք դրախտ: Եկեղեցին միանշանակ է պատասխանում այս հարցին՝ գիտակցված, կշռադատված, իմաստավորված զրկանքներով եւ տառապանքներով: Ինչո՞ւ եմ ասում գիտակցված, որովհետեւ իր ծննդից հետո մարդը կամա-ակամա ենթարկվում է տառապանքների: Չկա երկրավոր կյանք, որը թունավորված չլինի նեղութուններով: Պատկերացնենք մեր կենցաղի մեջ ամենասովորական իրադարձութիւնները՝ պսակներ, ծնունդներ, ուրախալի առիթներ, որոնց մեջ անգամ տխրութիւնը գերակշռում է: Ամուսնութիւններն անգամ երբեմն մթազնվում են համատեղ կյանքի անախորժութիւններով եւ դժվարութիւններով: Հաճախ նաեւ մարդու ծննդյան ուրախութիւնն է մթազնվում հիվանդութիւն տխուր հեռանկարներով: Կամա-ակամա մարդն իր տկար բնութիւն պատճառով ենթակա է տառապանքների, էլ չեմ խոսում տարերային եւ բնական աղետների մասին, որոնց մենք վերջերս ականատես եղանք, պատերազմների մասին, որոնց հետեւանքով բազմաթիւ զոհեր ու վիրավորներ ունեցանք նաեւ մենք: Ուրեմն, տառապանքը մեր կյանքի անխուսափելի ու անբաժան մասն է, իսկ քրիստոնյայի համար զրկանքը բնական, խելամիտ եւ հավասարակշռված ընտրութիւն է: Եւ եկեղեցին իր հերթին ասում է, որ ինքներս պետք է կամավորաբար զրկենք մեզ այնպիսի գործողութիւններից, որոնք կարող են առավել մեծ տառապանքի պատճառ դառնալ եւ խոչընդոտել մեր մուտքը դրախտ: Եւ Բուն Բարեկենդանով՝ զրկանքների ստանձմամբ, մեկնարկում է այս ճամփորդութիւնը, որը կոչվում է Մեծի Պահոց շրջան:

Սիրելի քույրեր եւ եղբայրներ, հարկավ Մեծ Պահքի շրջանը, որը նորից եմ կրկնում զրկանքներ եւ տառապանք ստանձնելու մի շրջան է, հաճախ մեզ մոտ հարց է առաջացնում. «Տէր Աստված, մենք ի բնե արդեն մեծ տառապանքներ եւ զրկանքներ ենք կրում, ունենք նյութական դժվարութիւններ, անպաշտպանվածութիւն չփարատվող զգացումներ, արտաքին ճնշման, այլեւս մեզ ի՞նչ է մնում, որից մենք մեզ կամավորաբար զրկենք»: Իհարկէ, ինչ-որ առումով արդարացված են այսպիսի մտածումները եւ նման մտքեր կարող են այցելել մարդկանց: Բայց արդո՞ք մեզանից վերցված է ամեն ինչ, արդո՞ք մենք հնարավորութիւն չունենք ինքներս մեզ զրկանքներ պատճառել հանուն դրախտային կյանքի: Այսօր ընթերցվեց Ավետարանական մի հատված, որում գերիշխող նյութը բարեգործութիւնն է: Արդո՞ք մենք հնարավորութիւն չունենք օգտա-

գործելու մեր լեզուն եւ մի քանի բարի խոսքեր ասելու այն մարդկանց, որոնք ընկճված են: Արդյո՞ք մենք չենք կարող մի քանի քայլ ավել անել եւ հոգատարություն դրսեւորել այն մարդկանց հանդեպ, որոնք զրկված են քայլելու հնարավորությունից, արդյո՞ք մենք ի վիճակի չենք զսպելու մեր բարկությունը այն մարդկանց նկատմամբ, որոնք կյանքի տարբեր հանգամանքների բերումով կորցրել են հավասարակշռությունը՝ հայտնվելով ծանր հեգեբանական իրավիճակի մեջ: Արդյո՞ք մենք զրկված ենք այն հնարավորությունից, որ մեր կերակուրը կիսենք կարիքավորների հետ: Եւ Մեծի Պահոց շրջանի խորհուրդը ամփոփված է հենց այսպիսի զրկանքների մեջ, եւ ոչ ոք չպետք է մտածի, որ շունենք այդ հնարավորությունները: Աստված բոլորիս կյանք է պարգեւել՝ ապրելու եւ գործելու համար, եւ յուրաքանչյուրս մեր շափով առողջություն եւ կարողություններ ունենք եւ դրանք կարող ենք ծառայեցնել հասնելու համար նրանց ուժեր կարիքի մեջ են: Սա է ճանապարհը դրախտ վերադառնալու

Մեծի Պահոց շրջանում երբեմն նաեւ տարակուսանքներ են հայտնվում, թե ինչի համար է անհրաժեշտ հրաժարվել սննդի որոշ տեսակներից: Արդյո՞ք դա անհրաժեշտություն է: Իհարկե, մեր եկեղեցին որոշակի մեղմացումներ թելադրում է այն մարդկանց համար, որոնք առողջական խնդիրներ ունեն եւ Մեծի Պահոց շրջանում չեն կարող որոշ սննդատեսակներից ամբողջովին հրաժարվել: Բայց մյուս կողմից ականհայտ է նաեւ, որ սննդի շարաշահումն ինքը հանգեցնում է առողջական լուրջ խնդիրների եւ խաթարում մարդու բնականոն կյանքը: Այնպես որ, եկեղեցու թելադրությունն է եղել միշտ եւ այսօր, որ Մեծի Պահոց շրջանին սննդի պահեցողությունը զուգորդվի հոգեւոր պահեցողության հետ, առաքինությունների զորացման հետ: Այս մաղթանքով է, որ Տիրոջ օրհնությունն եմ հայցում ամենքիդ, որպեսզի պահեցողությամբ կարողանանք հասնել մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարությանը, որին փառք հավիտյանս. ամեն:



Տ. ՎԱԶԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(26 փետրվարի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ եհան արձակեաց զնա Տէր Աստուած ի դրախտէ անտի փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ: Եւ եհան զԱղամ, եւ բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան»

(Ծննդ. Գ. 23–24):

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հիշատակում է աստվածաշնչյան դրվագ, որտեղ Աղամը արտաքսվեց դրախտից եւ Մեծ Պահջի երկրորդ կիրակին դրա համար կոչվում է Արտաքսման կիրակի: Երբ ուսումնասիրում ենք Ծննդոց գիրքը, տեսնում ենք որ մարդու ու ողջ տիեզերքի արարումից հետո ստեղծելով դրախտը, Աստված մարդուն դրեց այնտեղ եւ այնտեղ՝ կենաց ծառի կողքին նաեւ դրեց շարի եւ բարու իմացության ծառը եւ հանձնարարեց մարդուն, որ կարող է դրախտի բոլոր պտուղներից օգտվել բացի շարի եւ բարու իմացության պտղից: Սակայն շարը Եւայի միջոցով Աղամին դրդեց պատվիրանազանցության, եւ Աղամն ու իր կինը՝ Եւան, ուտելով արգելված պտուղը, տեսան որ մերկ են: Նրանք պատվիրանազանց եղան՝ հասկանալով շարը եւ բարին: Եւ Աստված, նրանց հետ խոսելով, տեսավ, որ չեն գիտակցում իրենց արարքը եւ դրախտից դուրս դրեց: Սակայն դրախտից դուրս դնելով՝ միայնակ չթողեց նրանց: Երբ ուսումնասիրում ենք, տեսնում ենք որ Աղամն ու Եւան մեր պատկերացրած այսօրվա երեխաների պես էին: Մանուկները նույնպես այսօր չեն հասկանում, որ իրենք մերկ են, ամոթի զգացողություն չունեն, քանի որ այդպիսին է մարդու բուն բնությունը: Մեր եկեղեցական հայրերը նշում են, որ դրախտում ներդաշնակություն էր իշխում մարդու եւ կենդանական ողջ աշխարհի միջեւ. Աղամը բոլոր կենդանիներին տալիս էր անուններ

եւ դրանք դառնում էին նրանց անունները: Եւ այս ներդաշնակությունը մենք տեսնում ենք զանազան պատկերներում, հատկապես, մանրանկարչության եւ սրբապատկերների մեջ, որտեղ վայրի գազանների հետ միասին շրջում են նաեւ ընտանի կենդանիները: Սակայն, երբ մեղքը աշխարհ եկավ, այն ամբողջությամբ խեղաթյուրեց այս ներդաշնակությունը. մարդը դրախտից դուրս խոցելի դարձավ, բնականաբար արդեն նոր խնդիրների առջեւ կանգնելով: Այսուհետ նա իր աշխատանքով պետք է վաստակեր հանապազօրյա հացը: Սակայն կարելու է հիշել. դեռ Գիրք Ծննդոցում է նշվում, որ, երբ Աստված ստեղծեց երկիրը, անձրեւ չկար եւ չկար նաեւ մարդը, որպեսզի այդ երկրի հողը մշակեր: Ուրեմն, մարդն ի սկզբանե ստեղծված էր նաեւ արարելու եւ Տիրոջ արարչագործությունը շարունակելու համար: Եւ ի՞նչն է հետաքրքիր. մարդուն պետք է օգտվեր պտուղներից եւ սերմերից, իսկ կենդանիները՝ խոտերից ու բույսերից, եւ, երբ մեղքը ամբողջությամբ աշխարհ մտավ, լիովին փոխվեց այս ներդաշնակությունը: Եւ որպեսզի մեղքը հավիտենական չլինի, Աստված մարդուն հանեց դրախտից, որպեսզի նա դրսում շարունակի իր կյանքը:

Սակայն տեսեք, որ Աստված, Ադամին դրախտից հանելով, նրան միայնակ չթողեց: Նաեւ տեսնում ենք, թե ինչ նրբանկատությամբ, ինչպիսի հայրական գուրգուրանքով է Աստված վարվում իր ստեղծած մարդու հետ: Նրանց նույնիսկ կաշվե հագուստներ հագցրեց, խնամք տարավ եւ իր հորդորներով Աստված ներկա էր Ադամի եւ Եւայի՝ այսինքն մարդու ամբողջ կյանքի ընթացքում: Բայց շատ կարճ ժամանակ անց, ինչպես նշեցի, երբ մեղքը մուտք գործեց աշխարհ, մարդկային կյանքը խեղաթյուրվեց եւ փոխվեց իրավիճակը: Մարդ-Աստված հարաբերությունների խեղաթյուրումից բացի փոխվեցին նաեւ մարդ-մարդ, մարդ-բնություն հարաբերությունները: Մարդը նաեւ ինքն իր հետ փոխեց իր հարաբերությունները: Եւ ահա այսօր տեսնում ենք, թե ինչ է կատարվում աշխարհում, որտեղ չկա սեր, խաղաղություն եւ համերաշխություն, եւ ահա ինչու մենք կենդանիներին ենք ատում, իսկ կենդանիները մեզ վրա են հարձակվում: Սակայն հիշենք, որ եկեղեցու սուրբ հայրերը անապատներում ճգնելու ընթացքում կարողանում էին զսպել իրենց սպառնացող վայրի գազաններին, ճիշտ այնպես ինչպես Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, 13 տարի գուբի մեջ մնալով, կարողացավ տիրապետել ինչպես սողուններին, այնպես էլ միջատներին, եւ սողուններն ու միջատները չվնասեցին նրան: Մարդը վերականգնում է իր հատկություններն ու ունակություն-

ները՝ աշխարհի եւ տիեզերքի հետ ներդաշն գոյակցելու համար, բայց, բանի որ մենք միայնակ չենք կարող անել, Աստված, տեսնելով այս ամբողջը, ուղարկեց Իր Միածին Որդուն: Սակայն Աստվածաշնչի Ծննդոց գրքում կան նախադասություններ, որոնց ընթերցանությունը այսօր էլ մեր մարդկային միտքն ու հոգին անտարբեր չի թողնում եւ մեզ տանում է մեծ զղջման: Դրանցից են, օրինակ, «Աստված տեսավ, որ մարդկանց շարագործությունները բազմանում են երկրի վրա, եւ ամեն ոք իր մտքում ամեն օր խնամքով մտածում է շարագործությունների մասին, զղջաց Աստված, որ մարդ է ստեղծել երկրի վրա»: Դուք պատկերացնում եք, սիրելի հավատացյալներ, որ ամենակարող եւ ամենազոր Աստված Ինքը տրտմեց այն բանի համար, որ մարդ է ստեղծել, որովհետեւ մարդը ոչ միայն պատվիրանագանց եղավ, այլ նաեւ ունկնդիր եղավ շարին: Կարող եք հարցնել՝ այդ դեպքում ինչպե՞ս շարը հայտնվեց այն միջավայրում, որտեղ, ամեն օր Աստված արարելով, ասում էր՝ բարի է: Եկեղեցու հայրերն ասում են, որ դրանք տասներորդ դասի հրեշտակներն էին, որ անհնազանդ էին եւ մարդուն եւս մղեցին անհնազանդության: Որովհետեւ մարդու արարումով Աստված ցանկանում էր լրացնել հրեշտակների այդ դասը: Սակայն տեսնում ենք, թե ինչպե՞ս շարը խեղաթյուրեց: Եւ հետո տեսնում ենք, որ ջրհեղեղի միջոցով պատժվում է մարդկությունը, բայց որի մի մասը փրկվում է, որպեսզի երկրի վրա նոր կյանք ստեղծվի: Այստեղ է, որ, սիրելիներ, մեզ մտածումներ են այցելում. այդ դեպքում ինչպե՞ս պատասխան տանք Ադամի ու Եւայի կատարածի համար: Պողոս առաքյալը Հռոմեացիներին ուղղված իր նամակում այս մասին խոսում է՝ ասելով, որ այնպես, ինչպես մեկ մարդով մեղքը աշխարհ մտավ, այդպես էլ մեկ մարդով պետք է գա մեր փրկությունը: Այստեղ է մեր Տիրոջ մարմնանալու մեծ խորհուրդը, որպեսզի մեզ նորից վերադարձնի դեպի Աստված: Սա նշանակում է, որ մենք պետք է վերադառնանք մեր ինքնության արմատներին: Մենք ինքներս շատ անգամներ բացվում ենք դեպի ուրիշները, բայց քիչ է պատահում, որ ներհայեցողությամբ վերադառնանք ինքներս մեզ, որոնք եւ տեսնենք մեր ներսի մարդուն, որովհետեւ Տիրոջ գալով Ինքը ցանկացավ մեզ համար դուռ բացել եւ տալ հնարավորություն՝ վերադառնալու ներդաշնակությանը:

Կրկին նայում ենք այս փակված վարագույրին, այն փակ է, որովհետեւ խորհրդանշում է դրախտից Ադամի արտաքսումը: Բայց կարող ենք մտածել. «Բայց մեզ, Տէր, զգու՛ն ողորմութեան, որ ողբալով կարգամբ առ

Քեզ»։ Մեր ծիսակարգում այս խնդրանքին ի պատասխան ասվում է, թե արդարները կարող են մտնել Աստծու Արքայություն, բայց նաեւ ասվում է, ոչ միայն արդարները կարող են արժանանալ դրան, այլեւ նրանք, ովքեր ապաշխարություն մաքրվում են. զղջալով նրանք եւս կարող են այս դռնով ներս գալ եւ փրկություն հայցել Աստծուց։

Մենք փորձում ենք վերադառնալ մեր մարդկային նկարագրին ու կերպարին։ Մեր կյանքը խեղաթյուրում են, որովհետեւ ամեն տեսակ քաղաքական, տնտեսական, ներանձնային հարաբերություններով սերը չբանում է եւ, կարծեք, հիշում ենք Ավետարանի մի ուրիշ խոսք. Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Կգա գուցե ժամանակ, որ մարդկանց սիրո բացակայության պատճառով կվերանա նաեւ մարդը»։ Սիրելի հավատացյալներ, պետք է փորձենք սիրով, խաղաղությամբ, ներողամտությամբ, մանավանդ, հանդուրժողականությամբ ապրել Մեծ Պահի այս ընթացքը, որ գեղեցիկ կերպով մեզ տանում է իր կիրակիները։ Արարողակարգի միջոցով դեպի սուրբ հարություն եւ դեպի փրկության լույսը մեր ճանապարհն անցնենք ոչ միայն կերակուրների խնայողություններով ու բուսական կերակուրներով, այլ անպայմանորեն նաեւ մեր ազդեցություններով եւ մեր ներհայեցողությամբ։

Թող Աստված զորացնի ամենքիս, եւ Արտաքսման այս կիրակիի մտածումներով նորից դառնանք ու խնդրենք մեր Աստծուն՝ ասելով. «Բացիր մեզ, Տեր, Քո ողորմության դռները, որ խնդրում եւ ազաչում ենք Քեզ»։





ՄԱՏԹԷՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԶՈՒՂԱՅԵՑԻ

**ՔԱՐՈՉ ԱԲԱԳ ՀԻՆԳՆԱԲԹԻ ՕՐՈՒԿԱՆ, ԱՅՍ ԽՕՍՔԻՆ ՄԱՍԻՆ.
«ԵՍ ՏԻՐՈՉՍԷ ԱՌԻ ԻՆՉ ՈՐ ՁԵՉԻ ԱԲԱՆՂԵՑԻ»¹**

Իսրայէլեան թագաւորական գունդէն գերագոյն շնորհներուն վիճակուածը, խաղաղարարը, թագակալ արքան, արքայորդի Սողոմոնը, որ ժողովով կը յորջորջուի, նաեւ իր նախկիններուն առաջինը եւ յետոյ եկողներէն գերազանց երեւցածը իմաստութեամբ՝ ըստ տիրական խոստումին, որ կը հայի կարճ հոգիին եւ խակամիտ շուտափոյթ մարդոց՝ որոշ գործի մը կը խրատէ զանոնք, որպէսզի կարենան իրենց կամքի լրումին հասնիլ՝ ըսելով. «Ամեն բանի ժամանակը կայ»², որպէս թէ ըսել ուզէ՝ պտուղներուն արդիւնքները հաւաքել: Նախ՝ խնդրէ սերմանելուն ժամանակը, թէեւ բազմաթիւ աշխատութեամբ կը կատարուի, եւ ապա պտուղ տալու ժամանակին կը սպասես վայելելու համար: Սակայն, անոնք որոնք անիմաստ խօսքերով հանդէս կու գան գիտութեան վարժումին՝ անոնց լուր կը հրամայէ, իսկ իմաստներէն պերճացածներուն պատշաճ է խօսիլ՝ ուրիշներու օգուտին համար: Իսկ ես թիրապետեմ միտքիս քննութեամբ յեղաշրջելով խրատողին հրամանը՝ մերժեցի, որովհետեւ տակաւին հոգիի հասակին աճումով աստուածային իմաստներուն ծոցին մէջ, ինքն իրեն ոչ մէկ կերպով կարելի է մատակարարել, այլ՝ երբ աննկար սաղմը ծնունդին ժամանակը դեռ չէ կտրած, այլ՝ վիժելով ծնածներուն թիւին մէջ չի՛ համրուիր:

Եւ արդ՝ բողոքին եւ ինծի յայտնի է, թէ անիմաստ ընտրութեամբ իր ուժերէն աւելի վեր ձեռք նետեց ինքնամուլս եւ անգովելի յօժարութեամբ կանգնեցաւ ահագնատեսիլ ատեանին մէջ, բայց ո՛չ թէ յուսահատութեան պատճառով ծովուն մէջ ընկղմելու, անհմուտ լողակ իբրեւ վայրաքարչ

¹ Ա. Կորնթ. ԺԱ. 23:

² Ժող Գ. 1:

նիւթը ստորին ջուրերուն խորքը, ինչ բանի պատճառով միտքին աչքերը վեր բարձրացուց՝ աստուածային իմաստութեան լոյսը խնդրելու՝ պաղատանքով գոչելով. «Լո՛յս տու, Տէ՛ր, իմ աչքերու»³, եւ տուող հանճարէն ճշմարիտ Աստուած Հոգիէն, որ աշխարհի ոչինչներն ու յիմարները աշխարհայիններու գերագոյն բնութիւնը կը կազմէ: Նաեւ զօրութեան Հոգիին շտեմարանը ա՛ն, որ բազմաթիւ տառապողներ քու միջոցով⁴ արքայական ճոխութեան բարձրացուց, որ եւ զիս ալ ընդհանրապէս վերջացածս այսպիսի պատիւով սիրել ընդունեցիր, այլ՝ ըղձալի սիրով կը փափաքիմ անհամեմատելի անունը⁵ իմ վրաս կոչուած ըլլայ իմ բոլոր թերութիւններուն որպէս լրում: Նաեւ բարեմիտ միաբան եղբօրդ կը մաղթեմ ձեռնտու ըլլալ սրտագոչ բաղձանքներով, որպէսզի կարենամ խօսիլ հոգելից եւ աստուածային խօսքերու մասին, որ մեր առջեւը դրինք, որ կ'ըսէ. «Ես Տիրոջմէ ստացայ»: Տակաւին, պարտաւոր ենք մեր գործին հիմքն ալ դնել, որու վրայ կը շինուի Սուրբ Եկեղեցին, այն է՝ ուղղափառ հաւատքի դաւանութիւնը, որ աւանդելով մեզի տուին յուսադիր վէմին վրայ հաստատուած ուղղադաւան հայրերը. ուրիշ տեղ մը գրուած պիտի գտնես, գտիր ու կարդա՛: Բայց հիմա կը պաղատիմ, անծանօթ ծնունդ ծոցոյ Հօր Միածին Որդի, արթնցնոր քնարս եւ փարթամացնոր խօսքերս Քու պարգեւներովդ, որպէսզի պատշաճ կերպով երգէ իմ տկար լեզուս այս Մեծ օրուան խորհուրդը: Իմանալի Արեգակ, սփռէ՛ Քու լոյսդ իմ խաւարած միտքիս, որպէսզի լուսաւորուած միտքով ամուր կերպով բռնէ աստուածային խօսքէդ խորքերը տեսնողիդ՝ Քեզմէ յայտնուած ընտիր անօթ Պօղոս Առաքեալին, որ կ'ըսէ. «Որովհետեւ ես Տիրոջմէ առի...»⁶:

Բայց նախքան աստուածային խորութիւններուն քննութեան անցնիլը, քիչ մը ընդարձակութիւն տանք այս օրուան խորհուրդի իմացումին մասին:

Նախ՝ այս տօնը հին Օրէնքի ո՞ր տօներուն [կը զուգահիւյի], որ Տէրը մեծամեծ Խորհուրդը այս օրը կատարեց:

Երկրորդ՝ թէ՛ ի՞նչ կը յայտնէ այս օրը եւ ասոր ընթերցուածներուն կանոնը:

³ Սղմ. ԺԲ. 4:
⁴ Հաւանաբար նկատի ունի իր ուսուցիչը՝ Սուրբ Գրիգոր Տաթեւացին:
⁵ Այստեղ անուն ըսելով ո՛չ թէ անձնանունը նկատի ունի, այլ՝ վարդապետական աստիճանը:
⁶ Տէս Ա. Կորնթ. ԺԱ. 23:

Երրորդ՝ թէ լուանի քանիերորդ օրն էր այս օրը: Եւ ինչպէ՛ս իրարու կը համաձայնին շորս աւետարանիչները այս օրուան համար: Եւ թէ բաղարջով աւանդեց խորհուրդը Իր Մարմինին, թէ՛ խմորով:

Չորրորդ՝ Եկեղեցւոյ ո՞ր խորհուրդները դրուեցան այս օրուան ընթացքին:

Հինգերորդ՝ թէ ինչո՞ւ համար երեկոյեան ժամուն, ընթրիքէն ետք ու աշակերտներուն ոտքերը լուալէն ետք տուաւ Իր Մարմինն ու Արիւնը:

Վեցերորդ՝ թէ մենք ինչո՞ւ համար դրուած այս կարգին համաձայն չենք կատարեր խորհուրդը ներկայիս:

Եօթներորդ՝ թէ ի՞նչ պատճառով Քրիստոսի կողմէ կատարուեցան Օրէնքին աւանդութիւնները, իսկ Իրմէ ետք խափանուեցան:

Արդ՝ սկիզբը դնենք առաջին գլուխը խնդրելով, որ ըսինք, թէ հին Օրէնքի ո՞ր տօներուն [կը զուգահիւսի] այս մէկը:

Անոնց մէկ տօներէն է, որ միշտ կը կատարէին գառնուկին մատուցումով եւ երեսի հացով⁷, որ անմահ Գառին խորհուրդը կը պատկերացնէ՝ որ Նոր եկեղեցւոյ մէջ կը կատարուի:

Եւ դարձեալ՝ Շաբաթի հանգստեան տօնը⁸, որ ներկայիս Եկեղեցին միւս շաբաթը [Կիրակի օրը] կը կատարէ, ի պատիւ յարութեան:

Տակաւին ամսամուտի տօնը⁹, որ լուսինին նորոգուելուն կը կատարուէր, այժմ փոխուած է Կոյս Աստուածածինի տօնին:

Նաեւ կը տօնէին Օրէնքներու տւշութիւնը, որ պենտեկոստն¹⁰ կ'անուանուի, որ նաեւ Հոգիին իջնելը այդ օրը կը տօնուի:

Իսկ փողերուն տօնը¹¹, որ առաքեալները կը խորհրդանշէր՝ որոնք տիեզերքին փողերն են:

Դարձեալ՝ Տաղաւարահարացը¹² խորանայարկ բնակութեամբ կը գուշակէր աստուածային խորաններուն եկեղեցւոյ նորոգումը:

Իսկ Քաւութեան տօնը¹³, որ թա...¹⁴ մեղքերը կը քաւէին, այս խորհուրդին օրինակով պահքի ապաշխարութեամբ մեր քաւուիլը:

⁷ Տէս Ելից ԻԵ. 30:

⁸ Տէս Ծննդ. Բ. 2–3: Ելից ԺԶ. 22–30, Ի. 8:

⁹ Տէս Թիւք ԻԸ. 11–15:

¹⁰ Տէս Ղեւտ. ԻԳ. 15, 16: Գործք Բ.1–3:

¹¹ Տէս Թիւք Ժ. 2: Ղեւտ. ԻԳ. 24:

¹² Տէս Ղեւտ. ԻԳ. 40–42:

¹³ Տէս Ղեւտ. ԻԵ 9:

¹⁴ Բողոք ձեռագիրներուն մէջ անըթերցելի է այս բառը:

Իսկ մեծ ու գլխաւոր տօնը Իսրայէլի որդիներուն Եգիպտոսէն ելլելն է¹⁵, անցնիլը ծովահեղձ ընթացքով՝ երկինքէն տեղացող մանանային վայելումին համար, որ նոյն խորհուրդով ամէն տարի նոյն օրը կը կատարուէր:

Արդ, կ'երեւի, թէ տօներէն՝ որոնք ցոյց տուինք, այս տօնը Աւագ Հինգշաբթիինը գառնուկին զենումն է եւ ժողովուրդին ելքն է, որ նոյն օրը Տէրը մեծամեծ խորհուրդներուն սկիզբը ըրաւ:

Այսքանը առաջին գլուխին համար:

Եկէք հիմա երկրորդ գլուխին, թէ ի՞նչ կը յայտնէ այս օրը եւ այս օրուան ընթերցուածներուն կանոնները:

Արդ՝ այս օրը մեծախորհուրդ եւ պատուած է, քանի որ արարչութեան առաջին օրուան խորհուրդն ու ապացոյցը ունի, որովհետեւ այնտեղ ստեղծուած մարդը ապականացու ոչ խելամուտ ցանկութեամբ, հիմա Երկրորդ Ադամը դարձեալ ստեղծեց՝ նորոգելով բնութիւնը: Նաեւ ծովը անցաւ եւ ամպածածկ ժողովուրդին կը բերէր ջուրով լուացումին օրինակը՝ Սուրբ Հոգիին առումով, իսկ երրորդ ժամէն ետք հաւաքուիլ խորհուրդը կատարելու համար, Ադամեան մեղքի զովացումն է, որ բնութեան տապով ջերմացած կ'ըլլայ: Իսկ ընթերցուածներուն կարգը դրուեցաւ, որ Պատարագի ընթացքին կը կարդացուին, Իսահակէն կ'ըսէ, կը նշանակէ փրկչականին զենումը, որ Աբրահամին սուրին արձակումով զարկաւ՝ Հայր Աստուած Իր Միածին Որդին տուաւ, որ խաչէն կախուելով մեռաւ, ըստ Սաբեկայի մէջ կախուած խոյին¹⁶: Տակաւին բազմաթիւ խորհուրդներ ունի այս օրուան տեսութիւնը, որ իմաստուններուն յայտնի է:

Ետքէն երրորդ գլուխը դնենք. նախ ըսենք, թէ այդ օրը լուսինին քանիերորդ օրն էր:

Երկրորդ՝ թէ ինչպէ՞ս իրարու կը համաձայնին շորս աւետարանիչները այս օրուան խորհուրդին կապակցութեամբ: Եւ երրորդ՝ թէ բաղարջ աւանդեց Իր Մարմինի խորհուրդին եւ ո՛չ թէ՛ խմոր: Արդ՝ ստուգապէս լուսինին տասնչորրորդ օրուան երեկոյին կը կատարուէր գառնուկին զենումը, որ սկիզբէն այդ ազգին օրինադրուեցաւ, որով հրամայեց զենման ոչխարը պատրաստել տասներորդ ամսին¹⁷ սկիզբը մինչեւ տասնչորրորդ օրուան երեկոն ուտել բաղարջը, եւ եղեգով, որ Տէրը եւս նոյն օրը կատար-

¹⁵ Տէս Ելք:

¹⁶ Տէս Մնդդ. ԻԲ.:

¹⁷ Տէս Ելք ԺԲ. 18:

րեց, որ լուսինին տասնհինգերորդ օրը կ'ըլլար զենուճը՝ խաշով, Գառնուկին՝ աշխարհին մեղքերը վերցնողին:

Հսենք երկրորդը եւս, թէ աւետարանիչներուն ըսածները կարգ մը թիւրամիտ քննողներու կողմէ կասկածանքով ընդունուեցաւ, որովհետեւ շատ չեն համաձայնիր, քանի որ Մատթէոսը կ'ըսէ, թէ՝ «Բաղարջակերաց տօնին առաջին օրը աշակերտները մօտենալով Յիսուսի, ըսին»¹⁸: Իսկ Մարկոս, թէ՝ «Բաղարջակերաց տօնին առաջին օրը, երբ Ջատիկին համար գառնուկը մորթին»¹⁹: Իսկ Ղուկաս, թէ՝ «մօտեցած էր Բաղարջակերաց տօնը, որ Ջատիկ [Պասֆայ] կը կոչուի»²⁰: Եւ Յովհաննէսը, որ կ'ըսէ. «Ջատիկի տօնին նախօրեակին, Յիսուս գիտնալով»²¹: Արդարեւ, երեք աւետարանիչները տասնչորրորդ օրուան երեկոն Բաղարջակերաց կը կոչեն, որու ընթացքին կը մորթէին զատիկը ու բաղարջով կ'ուտէին, երբ Յիսուս եւս իր աշակերտներուն հետ միասին ըրաւ այդ ընթրիքը: Եւ Յովհաննէսը, որ կ'ըսէ, «Ջատիկի տօնին նախօրեակին»²², կը կոչէր առաջին օր անցած եօթ է օրերուն, քանի որ լուսինի տասնհինգերորդ օրէն առաջ էր, որ մեծագոյն տօն կը կոչէին, որ միւսներուն ըսած նոյն Բաղարջակերաց տօնին առաջին օրն է: Իսկ Յովհաննէսի խօսքը, թէ՝ «պալատ չէին մտներ, որպէսզի չպղծուէին»²³, որ երեք աւետարանիչներու ըսածին հակառակ կը թուի, այդպէս չէ սակայն, ինչպէս անոնք կ'ըսեն, թէ Քրիստոս Օրէնքով հրամայուած օրէն մէկ օր առաջ կատարեց Ջատիկը, այլ՝ հրեաները՝ որովհետեւ իրենց ցանկութիւնը Քրիստոսի մահուան կատարումն էր, այդ պատճառով իրենց տօնը անարգեցին, որպէսզի ամսի տասնհինգին՝ երբ Քրիստոս խաշուեցաւ, կատարեն Ջատիկը:

Եւ դարձեալ՝ կրկնակի կերպով կը լսուի Ջատիկ անունը Գիրքին մէջ: Տեղ մը գառնուկի մորթուելուն համար ըսուած է, ըստ այնմ, թէ՝ «ն'ը կ'ուզես որ Քեզի համար գատկական ընթրիքը պատրաստենմ»²⁴, եւ ե՞րբ, քանի որ Ջատիկը բաղարջին համար կը կատարուէր, որ կ'ըսէ. «Եօթ օր կ'ուտէին»²⁵, այդ պատճառով չէին ուզեր պղծել, որպէսզի Ջատիկը բաղարջով ընեն:

¹⁸ Մատթ. ԻԶ. 17:

¹⁹ Մարկ. ԺԳ. 12:

²⁰ Ղուկ. ԻԲ. 1:

²¹ Յովհ. ԺԳ. 1:

²² Յովհ. ԺԳ. 1:

²³ Տէս Յովհ. ԺԸ. 28:

²⁴ Մատթ. ԻԶ. 17:

²⁵ Եւր. ԻԳ. 14:

Իսկ երրորդը, թէ բաղարջով աւանդեց եւ ո՛չ թէ խմորով:

Արդ, յայտնի է, թէ Տէրը բաղարջով ըրաւ, որ մենք եւս պարտաւոր ենք նոյնը ընել, քանի որ Բաղարջակերացին առաջին օրը հրեաներուն տուներէն ներս խմոր չէր գտնուէր, որ Մովսէսէն գրուած օրէնքները կը ցուցնեն: Իսկ Քրիստոս Բաղարջակերացին առաջին օրը կարգեց այս խորհուրդը՝ Աւետարանիչներուն վկայութեամբ: Եւ դարձեալ՝ որովհետեւ պէտք չէր օրինագանց երեւիլ, որպէսզի չարանախանձ հրեաներու ազգին առիթ չտայ: Դարձեալ՝ քանի որ բաղարջին նիւթը աւելիով կը պատկանի այս խորհուրդին, որովհետեւ պարզ ու անխառն է արտաքին միջամտութիւններէ, ըստ Պօղոսին, որ կ'ըսէ. «Ո՛չ ճիմ խմորով եւ ո՛չ ալ շարութեան, այլ...»²⁶: Բայց եւ այնպէս այս բաներուն մասին իմանալը պատշաճ կը համարենք, քանի որ խմորեալ հացը չի՛ փոփոխեր հացին գոյութիւնը, որովհետեւ անոր հանգամանքներն են, որոնցմով կը կատարուի մեծագոյն խորհուրդը, տակաւին կը յայտնուի ստուգագոյն պատմութիւններով, որովհետեւ առաքելական աւանդութիւններով եկեղեցիները ընդհանուր բաղարջով կը կատարէին այս խորհուրդը, եւ հակառակող ընդդիմացողներէն ոմանց, որոնք Մովսիսական օրէնքներուն կը հնազանդէին՝ կ'ըսէին որ բաղարջով կատարուի Փրկչական խորհուրդը, այդ պատճառով տեղի տուին մէկ վայրի մէջ խմորով կատարել, որպէսզի օրէնքի իշխանութենէն շանցնին, իսկ նախապէս ըսուած աղանդին դադարումով՝ եկեղեցիները դարձեալ ընդունեցին նախկին սովորութիւնը, իսկ ոմանք անհնազանդ գտնուեցան ատոր: Արդ, ինչքան հնարաւոր է ցոյց տրուեցաւ, թէ բաղարջով պատշաճ է եւ ո՛չ խմորով:

Այսքանը երրորդ գլուխին մասին:

Դառնանք այժմ չորրորդ գլուխին, թէ Եկեղեցւոյ խորհուրդներէն որո՞նք դրուեցան այս օրը:

Արդ՝ բոլոր խորհուրդները Քրիստոսէ դրուեցան, տարբեր վայրերու մէջ եւ տարբեր ժամանակի, սակայն Փրկչական զենումին եւ քահանայութեան աստիճանին խորհուրդը այս օրը աւանդուեցաւ Տիրոջմէ՝ Վերնատան մէջ, ըստ այնմ, թէ՛ «Ասիկա Մարմինս է...: Ասիկա կատարեցէք Իմ յիշատակիս համար»²⁷: Ասիկա չորրորդ գլուխին համար ըսինք:

²⁶ Տէս Ա. Կորնթ. Ե. 8:

²⁷ Տէս Դուկ. ԻԲ. 19:

Եկէք հինգերորդ գլուխին, թէ ինչո՞ւ համար ընթրիքէն եւ աշակերտներուն ոտքերը լուալէն ետք տուաւ Իր Մարմինը եւ Արիւնը, որովհետեւ պէտք է նախ օրինակին կատարումը ընել եւ ապա նորը, որ Քրիստոսէ էր, սկիզբը ըլլար, ուստի կ'երեւէր, թէ հինին Օրէնսդիր իսկ նորին Փրկիչ կը ճանչցուէր:

Եւ դարձեալ՝ որովհետեւ այս Խորհուրդը՝ առ Աստուած հաղորդութիւն է, իսկ ինչքանով որ ըստ ինքեան յատուկ տեսակով տիրականին վայելումը ունէին, անոր կապակցուած որեւէ մէկ յօդի կարիք չկար: Իսկ հիմա, քանի որ կը կամենար անոնցմէ մարմինով բաժնուիլ, պատշաճ էր այս խորհուրդը, միութեան շաղկապ որպէս փակցնել դէպի Իրեն յօդակցուած: Նաեւ, որովհետեւ կը կամենար յիշատակը նոյն կերպով կատարել՝ վերջին աւանդութիւններէն անմոռաց մնալով, քանի որ վերջին ըսուած աւանդները սիրելիներուն կը ստիպեն շատ անյապաղ կատարել:

Իսկ թէ ինչո՞ւ համար [ոտքերու] լուացումէն ետք տուաւ Իր Մարմինն ու Արիւնը, որովհետեւ կը կամենար նախ մաքրել զանոնք Ադամական մեղքերու ախտէն՝ ջուրի լուացումին միջոցով եւ Խորհուրդին ընդունարան պատրաստել: Նաեւ խոնարհութեան միջոցով զանոնք Իր Մարմինին եւ Արիւնին վայր ու կայան [ըլլալ] կամենալով, ըստ այնմ, թէ՛ «Ես ո՞ւր պիտի հանգչիմ, եթէ ոչ հեզերուն ու խոնարհներուն մէջ»²⁸: Այսքան հինգերորդ գլուխին համար:

Վեցերորդ գլուխն ալ յայտնենք, թէ ինչո՞ւ համար մենք ներկայիս ըստ այդ կարգին չենք տօներ դրուած խորհուրդը:

Եւ գիտելի է, թէ մենք պէտք է Քրիստոսի [տուած] խորհուրդի կատարումի օրինակին հետեւինք, ըստ այնմ, որ է իրերու էութիւնը, այսինքն՝ ըստ ձեւին եւ ըստ նիւթին, հացով ու գինիով կատարել աւանդուած խորհուրդը: Սակայն, մենք պէտք չէ ըստ այդ կարգին աւանդենք, որ Ան կատարեց, որ է՝ ընթրիքէն ետք: Այլ, ինչ որ մեզի պատշաճ է, նախ քան մարմնական կերակուր ընդունիլը, ո՛չ թէ մահուան երկիւղի համար, որպէսզի ո՛չ ոք առանց կեանքի թողակի այս կեանքէն չելլէ: Իսկ անօթի ըլլալով ճաշակելը [հաղորդուիլը], գեղեցիկ պատճառ կ'ըմբռնուի: Եւ ասիկա վեցերորդ գլուխին համար:

²⁸ Հմմտ. Ես. 42, 2:

Հիմա այլեւս ժամանակն է բան մըն ալ ըսել եօթներորդ գլուխին մասին, թէ ինչ պատճառով Քրիստոսէ կատարուեցան Օրէնքի պահանջները, եւ ինչո՞ւ համար Իրմէ ետք խափանուեցան:

Արդ՝ որովհետեւ օրէնքները տուողը Ինքն էր, այդ պատճառով կը պատուէ Իր իսկ դրած սահմանը, որովհետեւ օրէնքներու լրումին եւ ո՛չ թէ անոնց լուծումին կ'ըսէր Իր գալը²⁹:

Եւ դարձեալ՝ որպէսզի Իր խափանելով կարծիք կազմել չտայ՝ թէ Աստուծմէ չդրուեցան նախկին օրէնքներուն հրամանները: Իսկ թէ ինչն էր պատճառը օրէնքներու դրութեան խափանումին Քրիստոսի գալուստէն ետք, քանի որ ճշմարտութեան գալէն ետք օրինակները [զօր] տեղ կը զբաղցնեն, ինչպէս մարմինին երեւնալուն՝ կը մերժուին ուրուական ստուերները: Իսկ Օրէնքը հանդերձեալ բարիքներուն ստուէր կը կոչուէր, որով Քրիստոս էր ճշմարտութիւնը եւ մարմինը՝ այն ստուերին:

Դարձեալ՝ օրէնքներու անկատարութեան մասին, որովհետեւ օրէնքներու գործերէն շնորհք չէր պարգեւուէր, բայց միայն նորով ցոյց կը տրուէր կատարեալ փրկութիւնը, եւ որովհետեւ [Օրէնքը] կը տկարանար փրկութիւն գործել, ապա անոր խափանումը յարմար էր:

Եւ դարձեալ՝ քանի որ մինչեւ Տիրական գալուստը մարդկային բնութիւնը տղայական հասակի մէջ էր, որ օրէնքներու դաստիարակութեան վարժումով աւետարանական կատարեալ գիտութիւնը կ'ընդունէր, այդ պատճառով ճշմարիտ Փրկիչին գալուստին, պէտք էր ուսումի վարժութիւնները խափանել:

Դարձեալ՝ որովհետեւ Քրիստոսի նախքան մարմինով չարչարուիլը վնաս չկար օրէնքները գործադրելէն, սակայն Քրիստոսի չարչարանքներէն ետք [օրէնքները] պահողներուն համար վնասող եւ մահացուցիչ կ'ըլլար:

Եւ դարձեալ՝ քանի որ Քրիստոսի չարչարանքներէն առաջ եւ յետոյ որոշակի կերպով օրէնքները պահելը յաւէտ մեղադրելի կամ վնասակար բան մը ընել չէր, այլ՝ ընդհանուր քարոզութենէն եւ կատարելագոյն փրկութենէն ետք, որ Քրիստոսով յայտնուեցան մեզի Իր հետ մեռնելով, իսկ պահողներուն համար հին օրէնքներուն հրամանը մահաբեր կ'ըլլար:

Եւ արդ՝ իրապէս ցոյց տրուեցաւ Մովսիսական օրէնքներուն խափանումին պատճառը, եւ ասոնցմով՝ քիչ մը նուէր խօսքերով պատուեցինք

²⁹ Տէս Մատթ. Ե. 17:

մեծախորհուրդ տօնին այս օրը: Իսկ մենք Սուրբ Հոգիին ձեռնտուութեամբ եւ ձեր աղօթքներուն օժանդակութեամբ ամուր կերպով բռնուինք աստուածային խօսքէն, որ ըսուած է տիեզերագոչ քարոզողէն եւ Քրիստոսով կենդանի Պօղոսէն, որ կ'ըսէ. «Ես Տիրոջմէ առի ինչ որ ձեզի աւանդեցի, թէ Տէր Յիսուս Իր մատնութեան գիշերը հաց առաւ, Աստուծոյ գոհութիւն յայտնեց, կտրեց զայն. «Ասիկա Մարմինս է Ասիկա Արիւնս է»³⁰:

Բայց նախ մեզի պէտք է այս իմանալ, թէ թէեւ բոլոր թուղթերը Պօղոսէ գրուած են, սակայն բոլորը մէկ տեղ չէ, կամ մէկ հարցի մասին եւ կամ նոյն մտածումին չեն նայիր, այլ՝ բազմաթիւ քաղաքներու եւ բազմաթիւ հարցերու մասին, ինչպէս նաեւ տարբեր-տարբեր մտածումներով խօսուած են, որոնցմէ մէկ նշանաւոր եւ հռչակ ունեցող քաղաքը, Կորնթոսն է: Այս քաղաքին, որուն ուղղուած է դրուած խօսքը, որ ներքնապէս ու արտաքնապէս կը ճոխանար, այսինքն՝ կենցաղական առատութեամբ յղկացած, նաեւ բազմաթիւ իմաստութիւններով լեցուած: Իսկ թէ ինչո՞ւ համար այս հարցին մասին եւ ինչ միտումով երբեմն սաստկութեամբ խօսած է եւ երբեմն ալ մխիթարական կերպով: Ասիկա բնական բարոյական վկայութեամբ եւ գրութիւններով հաստատուած է եւ բազմաթիւ այլ կերպերով, որ հիմա մէկ առ մէկ պիտի չիշատակենք, սակայն այս ընթերցուածը ուրիշ հարցի մը համար ընտրուած է: Քանի որ սիրոյ զօրութիւնը, որ հաւատքի եւ չքաւորներուն նկատմամբ [ունէին Կորնթացիները], նուազած կը տեսնէր անոնց մէջ, որ Եկեղեցւոյ սկզբնական շրջանին կար Առաքեալներուն հաստատած ժամանակ, որովհետեւ ո՛չ ոք իր ունեցուածքին համար կ'ըսէր թէ իմս է: Իսկ յետոյ, հաւատացեալներուն աւելնալուն, այլեւս հնարաւոր չէր ըլլար հարուստներն ու աղքատները մէկ սեղանով հաւասարեցնել [այսինքն՝ նոյն սեղանին նստեցնել], բացի նշանաւոր եւ տօնական օրերուն: Այդ երեւելի օրերէն մէկը Աւագ Հինգշաբթին էր՝ հին Զատիկը, որու ընթացքին նորին Խորհուրդը աւանդուեցաւ, որ հարուստները հաւաքուելով սեղանի պատրաստութիւնը կը տեսնէին՝ աղքատները հրաւիրելով, որոնք պատրաստուած սեղան չունէին, սակայն ետքէն այս [սովորութիւնը] կամաց-կամաց խանգարուեցաւ: Որովհետեւ, սեղանին պատրաստ ըլլալէն ետք երբ ժողովուրդին առաջնորդը իր իւրայիններով կու գար ու կը նստէր, պատարագը կը մատուցէր, իւրայիններուն հաղորդութիւն կու տար, եւ ուշագրութիւն չէր դարձներ չքաւորներուն,

³⁰ Տէս Ա. Կորնթ. ԺԱ. 23:

քանի որ նախ մարմնաւոր սեղանէն կ'ուտէին եւ ապա միայն Տիրական սեղանէն կը վայելէին՝ ըստ Տիրոջ օրինակին՝ Սուրբ Վերնատան մէջ, որմէ ելլելով առաքեալները կարգը փոխեցին, այդ պատճառով յառաջիկայ խօսքով կը մեղադրէ այդ, երբ կ'ըսէ. «Ես Տիրոջմէ առի»³¹, որպէսզի ցոյց տայ՝ Տէրը բոլորին առջեւ անհամեմատելի կերպով բարին դրաւ, իսկ դուն ժլատութեամբ կը վարուիս աղքատներուն նկատմամբ: Մեր նախնիները մարմնական կերակուրներ ու Տէրունականները կը բաշխէին բոլոր ծառաներուն եւ ազատներուն, իսկ դուք ամօթ կը զգաք ձեր ծառայակից չքաւորներուն մարմնական կերակուրներ տալ, այդ պատճառով կ'ուզէ զանոնք խակ ու տմարդի բարքէն աղքատներուն եւ չքաւորներուն հանդէպ սիրոյ վարժեցնէ, որ Տէրունական սեղանին, գիշերի մատնութեան, ինչպէս նաեւ զարհուրելի եւ հնազին Անպարտականին մահուան հրաւերին յիշատակումով, որ կ'ըսէ. «Տէր Յիսուս Իր մատնութեան գիշերը»³², զանոնք մեծապէս կը յանդիմանէ: Նաեւ Անոր նմանիլ կը յորդորէ, որովհետեւ Տէրը Ինքզինք խաչի մահուան տուաւ քեզի համար, իսկ դուն անխնայ կերպով պարտաւոր ես մարմնական սեղանէն տալ՝ կարօտեալ անձերուն պէտքերը լիացնելով:

Ասոնց մասին այսքան:

Բայց մենք խօսքին իմաստը քննութեամբ հանենք, եւ անհմուտ ըլլալով՝ մեր միտքի տկարութեամբ աստուածային խօսքին բաժանում մը ընենք՝ մեզի օժանդակ ըլլալով՝ իբրեւ անհմուտ ուղեւորներու որպէս արձաններ կանգնած դժուար անցանելի ճանապարհին վրայ, որով խօսքի աւարտին հասնինք՝ իբրեւ բարի օթեւան ժամանած, որ կ'ըսէ՝ «Ես Տիրոջմէ առի...»³³:

Նախ ըսենք, թէ ո՞ր ստացաւ այս Խորհուրդը եւ ինչո՞ւ համար «աւանդեցի» կ'ըսէ:

Երկրորդ՝ այստեղ ի՞նչ միտումով Տիրական ու Փրկչական Անունը կ'օգտագործէ, ըսելով՝ «Տէր Յիսուս»:

Երրորդ՝ թէ ինչո՞ւ համար գիշերով, կամ որմէ՞ եւ կամ ի՞նչ պատճառով կը մատնուէր, որովհետեւ կ'ըսէ. «Այն գիշերը, երբ մատնուեցաւ»³⁴:

³¹ Ա. Կորնթ. ԺԱ. 23:

³² Ա. Կորնթ. ԺԱ. 23:

³³ Ա. Կորնթ. ԺԱ. 23:

³⁴ Ա. Կորնթ. ԺԱ. 23:

Չորրորդ՝ թէ պէտք է երկու նիւթով կատարել, քանի որ այս Խորհուրդը հացով ու գինիով է...:

Հինգերորդ՝ թէ ինչո՞ւ համար հացով, գինիով եւ գոհութեամբ հանդերձ ու բեկանելով-կտրելով սահմանեց այս Խորհուրդը, որովհետեւ կ'ըսէ. «Հացը առաւ, գոհութիւն յայտնեց ու կտրեց զայն»³⁵:

Վեցերորդ՝ թէ հացը ինչպէ՞ս կը փոխուի Քրիստոսի Մարմինի, իսկ գինին՝ Անոր Արեան, քանի որ կ'ըսէ. «Ասիկա Իմ Մարմինս է..., նոր...»³⁶:

Եօթներորդ՝ թէ ինչո՞ւ համար կը հրամայէ ուտելով առնել Տիրոջ Մարմինն ու Արիւնը, եւ ո՞չ թէ՛ ուրիշ զգայութիւններով վայելել, որովհետեւ կ'ըսէ. «Առէ՛ք, կերէ՛ք»³⁷:

Այս գլուխներու աւարտին, այս խօսքին եզրակացութիւնը կ'ընենք:

Արդ, առաջին գլուխին սկիզբը ընենք, թէ ո՞ւր առաւ: Եւ ինչո՞ւ համար աւանդեցի կ'ըսէ. «Ես Տիրոջմէ առի»³⁸. պէտք է գիտնալ, թէ բոլոր շնորհներն ու պարգեւները, որոնք ըստ Հոգիին եւ ըստ մարմինի են, մէկէ մը կը տրուի ընդունողի մը, սակայն մէկը տուող է միայն, իսկ միւսներուն նոյնը շնորհող, իսկ ոմանք միայն առնողներ են եւ ոչ՝ առնուածները ուրիշներուն տուող, ինչպէս արեգակը իր ճառագայթները բնական կերպով: Իսկ ինքն իր մէջ միշտ ունի եւ նոյնը՝ նիւթին թափանցումով կը ծագի. այս է՝ օդին, ապակիին եւ այլ պարզագոյն նիւթի տեսակ, որոնք իրենց մէջէն անցնելով՝ իրենք կը փայլին, իսկ թանձրամած նիւթերու տեսակները, ոչ թէ միայն իրենք բաժին չունին Աստուծոյ լոյսէն, այլ՝ մօտիկ եղողներուն ալ պատճառ ու առիթ են խաւարի մէջ մնալուն:

Արդ՝ բոլոր բարի շնորհներն ու կատարեալ պարգեւները միայն էական Բանէն կը տարածուին արարածներուն վրայ, որ միայն Տուող կ'երեւի, բայց ո՞չ մէկէն ոչինչ առած: Իսկ սուրբերու եւ ընտրեալներու դասերը, զանազան շնորհներու պարգեւները նախանձ չունեցող Տուողէն առնելով՝ Հոգիին սիրով ու զօրութեամբ, մեղքի խաւարով կը ծածկուին, իրենք շնորհքէն անմասն կ'ըլլան եւ ուրիշներուն վրիպումին պատճառ կ'ըլլան:

Իսկ ըսելով, թէ՛ «Ես Տիրոջմէ առի», առաւելաբար ուրիշներուն կը ցուցնէ, իսկ իր՝ աստուածային շնորհներուն ընդունող ըլլալը կը հաստատէ: Բայց թէ ինչպէ՞ս «Տիրոջմէ առի» կ'ըսէ, քանի որ ո՞չ միայն առաքեալ-

³⁵ Ա. Կորնթ. ԺԱ. 24:

³⁶ ՏՆԱ Ա. Կորնթ. ԺԱ. 24–25:

³⁷ Մատթ. ԻԶ. 26:

³⁸ Ա. Կորնթ. ԺԱ. 23:

ներուն խումբէն շէր համարուէր այն ատեն եւ ո՛չ ալ կատարուած խորհուրդին մօտիկ էր, այլ՝ հալածողներէն մէկն էր: Ուստի, այս եւս ուսուցանելի է, թէ այն սեղանը ո՛չինչ ունի առաւել, քան հիմա, որ ամէն ինչ կ'առնէ ու կու տայ, ինչպէս միշտ:

Եւ դարձեալ՝ կը թուի միւս անճառելիներուն հետ միասին՝ յափշտակուած ատեն կ'առնէր ու կ'ընդունէր մեծ եւ ահագին խորհուրդը, եւ «ձեզի աւանդեցի» ըսելով՝ անդառնալի եւ անյապաղ փութով նոյն Կիրակի օրը կատարել:

Դարձեալ՝ ինձմէ մէկը եթէ աւանդ առնէ, պարտաւոր է զայն զգուշութեամբ պահել ու խորհիլ, թէ ուրկէ՞ առին հատուցումը, ինչպէս ներկայիս Եկեղեցին Փրկիչին յիշատակը կը կատարէ, մինչեւ Անոր երկրորդ գալուստը:

Ասոնք առաջին գլուխին քննութիւնն են, որովհետեւ կ'ըսէ. «Ես առի...»:

Եկէք երկրորդ գլուխին, թէ՛ այստեղ ի՞նչ միտումով Տիրական ու Փրկչական Անունը կ'օգտագործէ, ըսելով՝ «Տէր Յիսուս»:

Բայց նախ քնենք, թէ «Տէր» եւ «Յիսուս» անունները ի՞նչ կը յայտնեն:

Եւ արդ, Տէր անունը ունեցուածք ունենալը կը յայտնէ, որովհետեւ ծառայական կերպով հնազանդողները ինքնին իսկ կը ցուցնէ, եթէ անհարազատներու [օտարներու] վրայ է, դիւրաւ անցանելի տէրութիւններէ առած կ'ըլլայ այս անունը, որ այսօր շատերու վրայ կ'իշխէ³⁹, իսկ վաղը իրեն հակառակը կը պատահի: Ինչքան՝ առաւել եւս Միածին Որդիին կը յարմարի Տէր ըսել, Որուն իշխանութիւնը անսկիզբ եւ անփոփոխ է ու անվախճան կը քարոզուի:

Իսկ թէ ի՞նչ կը յայտնէ «Յիսուս» անունը:

Պէտք է գիտնալ, թէ իւրաքանչիւր անուն այս երեքով կը ստորոգուի, այսինքն՝ գործէն, ձայնէն եւ հանգամանքէն, իսկ «Յիսուս» անունը հանգամանքէն կը ճանչցուի, որովհետեւ կ'ըսէ. «Իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ»⁴⁰: Եւ ինչպէս էմմանուէլը ծնունդին միջոցաւ կը յայտնէ, որ կնոջմէ է, Աստուծոյ Բանին մեզի հետ ըլլալը⁴¹: Իսկ Քրիստոս անունը,

³⁹ Խօսքը Լենկ Թիմուրի (1336–1405) մասին է: Միջինասիական զօրապետ: Հայաստանի վրայ երեք անգամ արշաւած է (1386, 1394, 1399):

⁴⁰ Մատթ. Ա. 21:

⁴¹ Տէս Ես. է. 14, Ը. 8: Մատթ. Ա. 23:

քանի որ ըստ մեզի «օժանիլ-Քրիստոս» եղաւ, կ'ըսուի⁴², ըստ մեզի՝ մարդկօրէն: Այսպէս է նաեւ Յիսուս անունը, քանի որ Տէր Յիսուս փրկեց, ցոյց կու տայ թէ հին օրերէն Տէր է, որ այստեղ Փրկիչ կ'երեւի, որ նախաստեղծներուն դուրս գալէն ետք աստուածախօս Մովսէսը արքունական եւ արարչական անունը յաճախ կը գործածէ, ըստ այնմ. «Տէր Աստուած Ադամին ըսաւ. “Ո՞ւր ես”»⁴³: Եւ թէ՛ «Տէր Աստուած մարդը դրախաւէն դուրս դրաւ»⁴⁴: Եւ թէ՛ «Աստուած Կայէնին ըսաւ. “Ո՞ւր է եղբայրդ՝ Աբելը”»⁴⁵: Այստեղ դրուած անունները մեզի իմացնել կու տան, թէ՛ թէեւ Ստեղծիչ ու ինամիչ է, սակայն դատողական խստութեամբ կը վարուի հակառակողներուն եւ յամառներուն հետ, այդպէս ալ այստեղ դատողական եւ փրկչական անունը կը յորջորջէ, թէ՛ թէեւ Տէրը ո՛չ ոք դատելու եկաւ⁴⁶, ինչը Իր խօսքին մէջ ըսաւ, այլ՝ որպէսզի ո՛չ ոք անուշադիր կերպով մօտենայ այս սոսկալի խորհուրդին՝ այդ պատճառով երկիւղ պատճառելով Տէրունական անունը Փրկիչին կը յարմարեցնէ⁴⁷:

Դարձեալ՝ քանի որ Տէրը կը հաճէր այսպիսի անուններով Իրեն յորջորջել՝ ըստ այնմ, թէ՛ «զիս Վարդապետ ու Տէր կը կոչէի, ճիշդ կ'ընէի»⁴⁸: Տակաւին, որովայնին մէջէն սրբուած Երեմիան կը գոչէ. «Մեր հոգիներուն երեսը Տէր Յիսուս»: Նաեւ, Տիբերական ծովին վրայ երեւցած ատեն Իր սիրելի աշակերտը՝ Յովհաննէսը Պետրոսին ճանչցուց զինք, ըսելով. «Տէրն է»⁴⁹, այդ պատճառով այսպիսի սովորական անունով փրկական եւ Մեծ խորհուրդը աւանդողը զեկուցեց:

Եւ դարձեալ՝ որովհետեւ «Տէր» ըսելով Յիսուս անունը ըղձալի ու քաղցր կ'ըլլայ, որ հրեաներն ու դպիրները Բանին քարոզողները կը տանջէին՝ Յիսուս անունը ուսուցանելուն համար: Արդ, անոնք որոնք ամբարտաւանութեամբ կ'ատէին եւ իրենց վրայ տիրելը [Յիսուսի] կամաւորաբար կը մերժէին, իսկ ասիկա այս խորհուրդին Տէր եւ բոլորին Աստուած կը հաստատէ զինք:

Այսքանը երկրորդ գլուխին համար:

⁴² Տէս Մատթ. Բ. 4, ԺԶ. 16:

⁴³ Ծննդ. Գ. 9:

⁴⁴ Տէս Ծննդ. Գ. 23:

⁴⁵ Տէս Ծննդ. Դ. 9:

⁴⁶ Տէս Յովհ. Գ. 17:

⁴⁷ Տէս Ա. Կորնթ. ԺԱ. 23:

⁴⁸ Տէս Յովհ. ԺԳ. 13:

⁴⁹ Տէս Յովհ. ԻԱ. 1–14:

Քննենք նաեւ երրորդ գլուխը, թէ՛ ինչո՞ւ համար գիշերով, կամ որմէ՞ եւ կամ ի՞նչ պատճառով կը մատնուէր:

Գիտելի է, թէ երեկոյեան ժամը ի զուր տեղ եւ առանց նպատակի չի՛ յիշեցներ, այլ՝ առաւելապէս լսողներուն սիրտին մէջ զղջում կ'արծարծէ, որովհետեւ թէեւ մէկը քարէն ալ աւելի ծանր ըլլայ՝ մտածելով, թէ ինչպէ՞ս սերովբէներուն Տէրը մարդոց փրկութեան համար կը տագնապի, մոմէն աւելի կակուղ կ'երեւի եւ աղէտներու հոգացողութենէն կը մաշի:

Եւ դարձեալ՝ «գիշերով» ըսելով, որովհետեւ կ'իմացուի երէկը՝ մարդուն դրախտէն արտաքսուիլը, ըստ այնմ. «Այս ժամուն փակուած դրախտը բանալ կը կամենայ»⁵⁰: Երեկոյեան էր նաեւ, որ աղանին Նոյին քով վերադարձաւ⁵¹: Նաեւ ժողովուրդին Եգիպտոսէն ելլելը երեկոյեան էր⁵²: Տակաւին, գիշերով աւանդելով Խորհուրդը, որովհետեւ օրերու լրումին եւ երեկոյացուած դարուն ուղարկեց Աստուած Իր Որդին՝ հակառակամարտ այս խաւարած կենցաղին, լուծելու մեղքերու անգիտութեան խաւարը:

Որպէսզի գիտնանք, թէ արարչութեան առաւօտէն սկսած մինչեւ երեկոյ եւ ետքէն եկող դարու ժամանակը, ինչքանի հասաւ Աստուծոյ, սուրբ հրեշտակներու խումբերուն եւ մարդոց սեռին՝ նահապետներուն, տեսնողներուն եւ արդարներու խումբերուն աշխատութիւնը, մինչեւ որ մեծախորհուրդ աւետարանուելով կատարուեցաւ:

Իսկ թէ որմէ՞ կը մատնուէր, յայտնի է Մարգարէէն եւ այս տարակուսանքը կը լուծուի, թէ Հօրմէն կ'ըսուի Միածին Որդիին մատնումը՝ Իր Որդիին կամատրաբար մատնուիլը Իր թշնամիին ձեռքը՝ ըստ այնմ. «Տէրը զի՞նք մե՞ր մեղքերուն համար մահուան մատնեց»⁵³:

Տակաւին, Պօղոս Առաքեալ ուրիշ տեղ մը կը վկայէ, որ Իր Որդիին շինայեց, այլ՝ մեր բոլորին համար մահուան մատնեց զի՞նք⁵⁴: Նաեւ պարարտ եզին զենումը՝ անառակ որդիին համար⁵⁵, որ խաշին վրայ մահուամբ՝ Հօր կամքով եւ Հոգիին հաճութեամբ կը կատարէր:

Դարձեալ՝ ուրիշ տեղ մը Հօր կատարեալ սէրը կը ցուցնէ՝ ըստ այնմ. «Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին

⁵⁰ Տէս Շարական, Վաղարշապատ, 1888, Օրհնութիւն Պահոց ԴԿ., էջ 98:

⁵¹ Տէս Ծննդ. Ը. 11:

⁵² Տէս Ելք Ժ. 22–23, Ը. 27, Ժ. 22–23:

⁵³ Հմմտ. Հոռոմ. Գ. 25:

⁵⁴ Տէս Հոռոմ. Ը. 32:

⁵⁵ Տէս Դուկ. ԺԵ. 11–32:

տուալ»⁵⁶: Ասով, Երեք Անձերուն բնութեան միութեան կամակցութիւնը կը յայտնէ:

Տակաւին, Ինքզինք մատնեց՝ ըսելով. «Զիս կը փնտռէ՛ք, ձգեցէ՛ք որ առոնք երթան»⁵⁷: Իսկ ուրիշ տեղ մը՝ «Իշխանութիւն ունիմ անձս մահուան մատնելու»⁵⁸, եւ դարձեալ առնելու երեքօրեայ յարութեամբ:

Յուդայէն եւս կը մատնուէր, թէեւ ո՛չ թէ բնութեան փրկութեան համար հոգալով, ինչպէս Յուդա Իսկարիոփտացին, որ մատնեց զԻնք, եւ թէ՛ «զիս մատնողը Ինձի հետ սեղան նստած է»⁵⁹, եւ տակաւին բազմաթիւ այսպիսի [վկայութիւններ]:

Իսկ թէ ինչո՞ւ ստիպողաբար մատնուեցաւ, [որովհետեւ] ինչպէս ամէն ինչ՝ [այս ալ] կ'ուզէր գործելով կատարել:

Քանի որ նախաստեղծներն ալ, սկզբնաչար օձին հաճելով, կամաւորաբար իրենք զիրենք մատնեցին անխնայ եւ զուր տանջողին, որ մեղքերու զանազան վէրքերով կատարեալ բնութիւնը [հարուածեց]: Իսկ չարին գործելուն պատճառը պարզ բարիէն եւ գոյ եղողները ստացողէն սկիզբէն բնութեան մէջ դրուած է կ'ըսէին, ինչ բանի պատճառով Աստուած Բանը մարմինի ծննդեամբ մարդոց մէջ կ'երեւի, եւ մեղանշած Ադամին բնութիւնը առնլով՝ նոյնը առանց մեղքի կը պահէ: Իսկ թշնամիի բանսարկութենէն մարդոց բազմազան շարշարանքներուն պատճառը յայտնապէս կը ցուցնէ եւ կամաւորաբար կը մատնուի մահուան շարշարանքներուն, որպէսզի իրաւամբ եւ ո՛չ թէ միայն աստուածական զօրութեամբ մատնուածները ի զուր փրկէ:

Դարձեալ՝ համագոյակից բնութիւն ըլլալով յանցապարտ կը գտնուէր, սակայն հատուցանելու համար բաւարար չէր, տկար եւ անզօր ըլլալուն համար, այդ պատճառով Քրիստոս Աստուած մահուան եւ խաչի կը մատնուէր, որով կարենար մեզ առաջին ստացած փառքին [վերադարձնել]:

Ասոնք երրորդ գլուխին մասին:

Խօսքը ուղղենք չորրորդ գլուխին, թէ պէտք է երկու նիւթով կատարել Քրիստոսի այս խորհուրդը, այսինքն՝ հացով ու գինիով:

Ասիկա շատ յարմար կ'երեւի, քանի որ մարմինին կենդանութեան պատճառը այս երկուքով կ'ըլլայ, այսինքն՝ ուտելով ու խմելով, ապա հո-

⁵⁶ Յովհ. Գ. 16:

⁵⁷ Յովհ. ԺԸ. 8:

⁵⁸ Հմմտ. Յովհ. Ժ. 18:

⁵⁹ Ղուկ. ԻԲ. 21:

գրին կենդանութեան պատճառը եւս պէտք է խորհրդական ուտելով ու խմելով ըլլար:

Դարձեալ՝ քանի որ այս խորհուրդը փրկական մահուան շարշարանքներուն յիշատակն է, իսկ տէգով կողը խոցած ատեն՝ արիւնը մարմինէն բաժնուեցաւ, որ նիւթերուն կրկին բնութիւնը կը նշանակէր, այդ պատճառով կը պատշաճի մարմինին տեղ հացը գործածել, իսկ ի նշան արիւնին՝ գինին: Մարդկային բնութիւնը նաեւ կրկին նիւթերու միացումով գոյացաւ՝ իմանալի հոգիէ եւ զգալի մարմինէ: Իսկ այս խորհուրդը մարդոց փրկութեան համար կը կատարուի, պատշաճ է կրկին նիւթ ունենալով, որ է հացն ու գինին, քանի որ հացը մարմինին փրկութիւնը կը ցուցնէ, իսկ գինին՝ հոգիինը:

Դարձեալ՝ որովհետեւ ո՛չ ոք առանց ուտելու եւ խմելու կրնայ ըստ մարմինի կեանք ունենալ, նմանապէս հոգին յաւիտենական կեանք չի՛ կրնար ունենալ, եթէ հոգեւոր կերակուրը չուտէ, այն է՝ Աստուծոյ Որդիին Մարմինն ու Արիւնը: Եւ ինչպէս կերակուրն ու խմելիքը մարմինի բնութեան կը փոխարկուին ու այդքան կը միանան, այնքան որ մարդուն մարմինին եւ արիւնին մէջ անորոշաբար կը փոխարկուի, այդպէս ալ, ան որ Տիրոջ Մարմինն ու Արիւնը կ'ուտէ [եւ կը խմէ], այնուհետեւ խառնուելով Անոր կը միանայ:

Ասիկա շորրորդ գլուխին համար:

Ըսենք հինգերորդ գլուխն ալ, թէ ինչո՞ւ համար հացով, գինիով եւ գոհութեամբ հանդերձ ու բեկանելով-կտրելով սահմանեց այս Խորհուրդը, որովհետեւ հացը առաւ, գոհութիւն յայտնեց...

Պէտք է գիտնալ, թէ հացով ու գինիով այս խորհուրդը աւելի կը յարմարէր, քան ուրիշ նիւթով մը՝ բազմաթիւ պատճառներով, որ յայտնելով պիտի ծանուցենք:

Նախ՝ քանի որ հացն ու գինին բոլորին կողմէ դիւրութեամբ կը գտնուին, այդ պատճառով ասով կը կատարուի՝ անխափան ըլլալով մեր փրկութեան յիշատակը:

Երկրորդ՝ որովհետեւ հացը աւելիով կը հաստատէ մարդուն սիրտը, իսկ գինին՝ բերկրանքով կ'ուրախացնէ, քան բոլոր քաղցր խմիչքները: Այդպէս ալ Տիրոջ Մարմինն ու Արիւնը, որ հացով ու գինիով կը կատարուի, աւելիով կ'ուրախացնէ հոգիները, քան բոլոր հոգեւոր խորհուրդները, որոնք Եկեղեցոյ մէջ սահմանուած են:

Երրորդ՝ քանի որ հացն ու գինին ձեռքերու սրբագոյն շօշափումով կ'ըլլայ, քան մինս ու արիւնը, որ Հին Ուխտին մէջ քահանաները կը կատարէին:

Չորրորդ՝ որովհետեւ հացը ցորենի բազմաթիւ հատիկներէն մէկի կը բաղկանայ, իսկ գինին՝ խաղողի բազմաթիւ հատիկներէն կը հաւաքուի, այսպէս ալ կը գուշակէ Տիրոջ Մարմինը, որ բազմաթիւ մասունքներէ հաւաքուած է Սուրբ Եկեղեցին, որ Քրիստոսի խորհրդաւոր Մարմինն է՝ բազմաթիւ հաւատացեալները մէկի մէջ հաւաքուած:

Հինգերորդ՝ թէ ուրկէ՞ կ'ըլլայ հացը, նախ կամնասայլով յարգէն գատելով կը բաժնուի եւ ազօրիքով կը մանրացուի, ապա՝ հնոցին կրակով կ'եփուի՝ որով մեզի համար կերակուր կը դառնայ: Իսկ հնձանին մէջ ճմլուած գինին՝ մեզի համար խմելու կը պատրաստուի: Իսկ ասոնք յարմարագոյնս կը նշանակեն Քրիստոսի շարշարանքները, որովհետեւ կամնասայլով՝ շարշարանքներով կամնեցաւ, նեղութիւններու հնոցին մէջ եփուեցաւ եւ խաչի հնձանին մէջ ճմլուեցաւ:

Վեցերորդ՝ որովհետեւ Նոր Խորհուրդին համար պէտք չէր Հին օրէնքին նիւթը դնել, որ անոր [հինին] դադրումը կը ցուցնէր, որոնց քահանայութիւնը Քրիստոսի քահանայութենէն անկատար էր, այդ պատճառով կը յարմարցնէ Նորին օրէնքները, այդ նիւթով կատարելու Նոր Խորհուրդը, որ Օրէնքէն առաջ էր, որ Մելիքսեդեկը մատուցեց, որ է հաց եւ գինի, որով Քրիստոսի ճշմարիտ քահանայութիւնը կը պատկերէր անոր մէջ [Մելիքսեդեկի] Դաւիթի վկայութեան համար թէ՛ «Դուն յալիտեան քահանայ ես ըստ կարգին Մելիքսեդեկի»⁶⁰:

Եւ թէ ինչո՞ւ համար գոհութիւն յայտնելով կը բեկանէր, պէտք է քննենք պատճառը:

Նախ՝ տեսնենք, թէ ի՞նչ կը յայտնէ գոհութիւն յայտնելը:

Եւ երկրորդ՝ թէ Քրիստոս ինչո՞ւ գոհութիւն կը յայտնէր, քանի որ հացը առաւ, գոհութիւն յայտնեց:

Երբ կը քննենք թէ ուրկէ՞ ծնունդ առած է գոհութիւն յայտնելը, բազմապատիկ երախտիքներէ նոյնը կը գտնենք, թէ վայելողը չէր կրնար հատուցման կշիռին չափը գիտնալ, գոհութիւն յայտնելու համար խօսքը ապաստան կ'ըլլայ, ուստի պարգեւը տուողը լսելով ու անով ախորժելով՝ ցնծալով կ'ուրախանար: Նաեւ, մարդոց սովորութիւնն է, երբ որեւէ

⁶⁰ Սղմ. ճթ. 4:

բան կ'ուզուի իրենցմէ սիրելիներու կողմէ, առաջին հերթին անոր երախտիքներուն համար գոհութիւն տալով միտքը կը գրգռեն եւ նոր միայն ուզուած բանը անոր կը կցորդեն: Իսկ անհկա թերեւս շտատամսի տալու՝ գոհութենէն գրաւուելով:

Իսկ օրհնելն ու գոհանալը իրարմէ քիչ մը զանազանուած կ'երեւին, որովհետեւ օրհնութիւնը Աստուծմէ [ստացած] բարիքներուն համար փառատրութիւն է, իսկ գոհութիւնը՝ նոր [յետագային] առնելիքներուն համար շնորհակալութիւն:

Իսկ թէ ինչո՞ւ համար գոհութիւն կը յայտնէր, քանի որ Հօր ունեցած ամէն ինչը Իրն էր, ինչ բանի պատճառով կարիք չունէր Հօր գոհութիւն յայտնելու, որովհետեւ Ինք [գոհ] կը մատուցուէր եւ մեզի պարգեւներ կու տար, մինչ՝ Հին Ադամը, որ ձրիօրէն ընդունեցաւ աստուածային պարգեւները, փոխանակ գոհութիւն յայտնելու՝ շնորհքներու ժխտող կ'ըլլար, իսկ Նոր Ադամը գոհութիւն յայտնելով՝ Հինին պարտքերը կը վճարէր:

Եւ դարձեալ՝ քանի որ ինքնահաւանները Հօր հակառակ կը կարծէին, այդ պատճառով գոհութիւն յայտնելով՝ կը յանդիմանէ այս մոլոր տեսութիւնը: Իսկ մեզի կ'ուսուցանէ աստուածային բարիքներէ վայելած ատեն՝ ապերախտ չգտնուիլ: Նաեւ, որովհետեւ փափաքելով կը փափաքէր այս պասեքը աշակերտներուն հետ ուտել, այդ պատճառով ուրախացած գոհութիւն կը յայտնէր: Տակաւին, Հօր գոհութիւն յայտնեց որպէս մեզմէ մէկը եւ ի դիմաց մեզի գոհացաւ Անորմէ՝ մեզի Իր Որդին տալու՝ մեր փրկութեան համար՝ Իր կամքով ու գթութեամբ: Իրեններուն սորվեցուց Իր [չիշատակին] Խորհուրդին կատարումը Հօր փառքին եւ Անոր ի գոհութիւն նուիրեն: Տակաւին, գոհութիւն յայտնելով կը ցուցնէ, թէ ակամայ կերպով չեկաւ շարշարանքներուն: Կը խրատէ մեզի, թէ ինչ վիշտ ալ որ կրենք, պէտք է գոհութեամբ կրենք: Տակաւին, կտրելով՝ աշխարհի վրայ Իր ստոյգ մահը յայտարարեց, որպէսզի հարեւանցի բան մը չհամարենք Խորհուրդը, այլ՝ իբրեւ ճշմարիտ հաց կտրեց, այդպէս ալ Իր Մարմինը սպաննեց՝ մեր կենդանութեան համար եւ ապա տուաւ աշակերտներուն, ու անոնց հետ միասին ամբողջ աշխարհին: Սակայն, այս բեկանումը միայն հացին համար կը կատարուի, իսկ խաչին վրայ՝ ո՛չ, այլ ատոր հակառակ, որովհետեւ՝ «Անոր որեւէ մէկ ոսկորը պիտի չփշրուի»⁶¹: Դարձեալ, ինչ որ խաչին վրայ չկրեց, պատարագած

⁶¹ Եւր ժԲ. 10: 3ովհ. ԺԹ. 36:

Ժամանակ կը կրէ, քեզի համար կը ներէ բեկանումը ընդունիլ, որպէսզի բոլորը լիացնէ⁶²: Եւ թէ ինչպէս կտրեց շորս մասերու բաժնելով, ինչպէս Եկեղեցին ներկայիս կ'ընէ: Նաեւ Տէրը նոյն ձեւով կը բեկանէր հացը, ի ծանօթութիւն Կղէոպեաններուն⁶³:

Դարձեալ, համարձակութիւն կու տար Աւետարանին՝ աշխարհի շորս կողմերը քարոզելու:

Այսքանը հինգերորդ գլուխին մասին:

Հիմա գանք վեցերորդ գլուխին, թէ հացը ինչպէ՞ս կը փոխուի Քրիստոսի Մարմինին, իսկ գինին՝ Անոր Արեան:

Արդ, բոլորին յայտնի է, թէ նախ նոր հաց կը դնենք սեղանին վրայ՝ որ սոսկ միայն հաց է, աստուածապետական զօրութենէն ո՛չինչ ունի իր մէջ, այլ՝ երբ Տիրոջ կողմէ խօսքով աւանդուի կատարել Իր մահուան յիշատակը սրբութիւններուն վրայ, հացը ճշմարտապէս կը փոխուի Քրիստոսի Մարմինին, իսկ գինին՝ Արեան:

Ինչ օրինակով կրնանք հաստատել:

Ինչպէս մարդը լոկ մարմինով՝ առանց հոգիի, մարդու օրինակ կ'ըսուի եւ ո՛չ տիրապէս մարդ, իսկ երբ Աստուծոյ կամքով մեռած մարմինին բանաւոր հոգին կը խառնուի, կ'ըսուի՝ ճշմարիտ մարդ կենդանի: Բայց հոգին, որ ասոր հետ միացաւ, ո՛չ թէ մեր զգալի աչքերուն երեւցաւ, կամ նոյն մարմինին վրայ առաւելութիւն մը տեսանելի եղաւ, այլ՝ միայն նոյնը կենդանի մարմին եղած կը տեսնենք: Այսպէս ալ Քրիստոսի Մարմինին եւ Արեան նշանները մինչեւ հիմա սոսկ հաց եւ գինի միայն կը տեսնենք, ասոր վրայ կատարելով Տիրոջմէ [տրուած] խորհրդական աւանդը, անշունչ մարմինը տիրապէս կը շնչէ կենդանարար հոգին ու կ'առնէ ասիկա, որ նախապէս զգալի մարմին էր, հիմա՝ Սուրբ Հոգիով Քրիստոսի Մարմին, իսկ գինիին հետ միութեամբ՝ Քրիստոսի Հոգիին, ասիկա Իր Արիւնը ըլլալով կատարեց: Եւ ինչպէս հոգին մեռած մարմինին խառնուելով, մարմինի էութեան վրայ նիւթական ո՛չ մէկ առաւելութիւն կը կատարուի, այլ՝ նիւթը միայն անով [հոգիով] կը զօրանայ ու կը ներգործէ, իբրեւ կենդանի, ըստ այնմ ասոր միանալով Աստուծոյ Հոգին այս նիւթէն Քրիստոսի Մարմին արարեց, ո՛չ մէկ այլալուծութիւն կամ առա-

⁶² Տէս Յովհ. ԺԹ. 30:

⁶³ Տէս Յովհ. ԺԹ. 25:

ւելուծիւն կ'ըլլայ, այլ՝ միայն իմանալի զօրութիւնը ընդունեցաւ եւ զինք ճաշակողներուն վրայ կը ներգործէ:

Ինչ է իր ներգործութիւնը. մեղքերու քաւութիւն եւ թողութիւն, յոյսով անմահանալ, Աստուծոյ միանալ, ինչպէս Տէրը Իր խօսքին մէջ կ'ըսէ. «Ով որ այս հացէն ուտէ, յաւիտեան մահ պիտի չտեսնէ»⁶⁴: Եւ թէ՛ «ով որ մարմինէս կ'ուտէ, Ան մէջս պիտի բնակի»⁶⁵:

Եւ դարձեալ՝ ինչպէս Ինք այս հացը օրհնելով, ըստ Իր զօրութեան Քրիստոսի ճշմարիտ Մարմին եղաւ՝ աստուածային խօսքով գերագոյն աստիճանի ելլելով, քանի որ հացը Քրիստոսի Մարմինին կը փոխուի, այդպէս ալ ամբողջութեամբ հացը Քրիստոսի Մարմինին [փոխուելով] Աստուծոյ հետ կը միաւորուի: Բայց թէ ինչ կերպով, այսպիսի փոխումը մեր գիտցած բնական պարագաներուն նման չէ, այլ՝ ամէն ինչէն զատուելով կը տարբերի, քանի որ այս խորհուրդին մէջ հացը Քրիստոսի Մարմինին վրայ բան չաւելցնէր, այլ՝ հացն ու իր բոլոր մասնիկները ամբողջութեամբ Քրիստոսի Մարմինի կը փոխուին: Եւ այսպէս այս հացով Քրիստոսի Մարմին կ'ըլլայ, առանց առաւելութեան եւ պակասութեան:

Արդ, թէ ինչպէ՞ս պէտք է հաւատանք, թէ սա ճշմարտապէս Քրիստոսն է եւ Քրիստոսի Մարմին, որմով կը հաղորդուինք, եւ ո՛չ թէ մարմինին օրինակը. այս մասին Տիրոջ եւ Իր առաքեալներուն կողմէ բազմաթիւ խօսքեր ըսուած են, որոնք կրնան իմաստունները հաւանութեան բերել, քանի որ ժողովուրդին մէջ բարձր ձայնով ըսաւ. «Ով որ Մարմինէս կ'ուտէ եւ Արիւնէս [կը խմէ]՝ յաւիտեանական կեանք կ'ունենայ»⁶⁶: «Մարմինս»⁶⁷ ըսաւ եւ ո՛չ թէ «Մարմինիս օրինակը», ինչ բանը ճաշակողները կ'աղաղակէին. «Աստուծոյ Որդիին Արիւնը մեզ բոլոր մեղքերէն կը սրբէ»⁶⁸: Իսկ ան որ անարժանութեամբ կ'ուտէ, ոչ թէ օրինակին մէջ խտրութիւն չի դներ, այլ՝ Տիրոջ Մարմինին, եւ որովհետեւ օրհնուած հացը Աստուծոյ հետ համաբնութիւն է եւ ոչ՝ օրինակ, այդ պատճառով զօրութիւն ունի մեղքերը սրբելու, ինչպէս Աստուած: Ապա եթէ օրինակ էր՝ չէ՛ր սրբէր, ինչպէս մարդուն պատկերը մարդ չէ ու չի՛ խօսիր:

⁶⁴ Հմմտ. Յովհ. 2. 50–52:

⁶⁵ Յովհ. 2. 57:

⁶⁶ Յովհ. 2. 54:

⁶⁷ Յովհ. 2. 55:

⁶⁸ Տէս Ա. Յովհ. Ա. 7:

Դարձեալ՝ որովհետեւ զինք ճշմարիտ Աստուած կը հաւատանք, ինչպէս իսկ է՝, իսկ աստուածային Բանը գործ կատարելն է, ինչպէս յայտնի է սրբագան գրութիւններէն. «Աստուած ըսաւ. “Երկինքն ու երկիրը թող ըլլան”»⁶⁹, եւ այլն, որ խօսքին հետ մեծամեծ գործեր կը կատարուէր առանց յապաղումի: Նաեւ, նոյն Արարիչը ըսաւ որ հացը Իր Մարմինը ըլլայ, ու Իրեն համար դիւրին է, որ այսօր մեր միջոցով կը կատարուի նոյն արարչական խօսքին զօրութեամբ:

Այսքանը վեցերորդ գլուխին մասին:

Հիմա պէտք է եօթներորդ գլուխին դառնալ, թէ ինչո՞ւ համար կը հրամայէ ուտելով առնել Տիրոջ Մարմինն ու Արիւնը, եւ ո՞չ ուրիշ զգայութիւններով վայելել:

Արդ, քննասէր միտքերուն համար շատ յարմար ու գեղեցիկ կը թուի յառաջիկայի տեսութիւնը, որովհետեւ ինչպէս զգալի հացէն մարդոց մարմիններուն կենդանութիւն կ'ըլլայ, առանց որուն հնարաւոր չէ ապրիլ, եւ ասիկա ուրիշ զգայարանքներով չի տրուիր մարդուն, բացի ճաշակելիքով միայն, ինչքան ալ բոլոր զգայութիւնները յաւիտենական զօրութիւն ունին հանգամանքին միացած ըլլալով, այսպէս ալ Քրիստոսի Մարմինը, որ հաւատացեալներուն հոգիներուն կերակուրն է, ուտելով կը պատշաճի, առանց որուն հնարաւոր չէ յաւիտենական կեանքը ունենալ, բացի ուտելով: Տիրոջ Մարմինը կրկին կերպով կ'իմացուի, այսինքն՝ զգալապէս եւ հոգեւորապէս: Ուտելը հոգեւորապէս է, երբ մէկը սրբութեամբ եւ յոյսով կը ճաշակէ, այդ պատճառով այսպիսի կրկնակի ուտելով Քրիստոսի հետ կը միանայ: Եւ մարդ ալ կայ, ով անարժանաւորութեամբ [ուտելով] իր անձին դատապարտութեան՝ կ'ուտէ ու կը խմէ:

Եւ դարձեալ, Տիրական հաւաստի խօսքով, թէ՛ «Մարմինս նշմարիտ կերակուր է, իսկ Արիւնս՝ նշմարիտ խմելիք»⁷⁰: Եւ թէ՛ «ով որ Մարմինէս կ'ուտէ եւ Արիւնէս կը խմէ՝ մէջս կը բնակի»⁷¹: Այս է պատճառը, որ ճաշակողական զգայութեամբ միաւորութիւնը առաւել կ'ըլլայ, քան միւսներով, որովհետեւ զգայարանները երեք տեսակ են. նախ՝ ինչպէս աչքերը, ականջները եւ քիթը: Եւ Բ.՝ շօշափելիքները: Եւ Գ.՝ ճաշակելիքները, որոնք զգայութիւններու ընդունողներն են: Արդ, Գ., անոնք որոնք չեն միաւորուիր եւ

⁶⁹ Տէս Ծննդ. Ա.:

⁷⁰ Յովհ. Զ. 56:

⁷¹ Յովհ. Զ. 55, 57:


չեն հաղորդակցիր զգայութիւններուն, բայց ասոնց մէջ զգայարաններուն նմանութիւնն է միայն՝ իրադրութիւնները զգալու համար:

Իսկ երկրորդ զգալիքը, որոնք կը հաղորդակցին, բայց իրապէս չեն միաւորուիր, թէեւ առաւել կը կցորդուին քան միւսները, քանի որ ջերմութիւնն ու ցրտութիւնը իրապէս կը կցորդուին շօշափելիքներուն եւ ո՛չ միայն իմանալիով:

Իսկ երրորդ զգալիքը, որոնք կը կցորդուին եւ իրապէս կը միաւորուին զգայութիւններուն, ինչպէս ճաշակելիքի երեւելի զգայութիւնը, որով առաւել կ'ըլլայ միաւորութիւնը ճաշակական զգայարանքով, քան շօշափելիքով, որովհետեւ շօշափելիքներէն ու շօշափողներէն միատարր չեն ըլլար, սակայն կերակուրէն եւ ճաշակելիքներէն միատարր կ'ըլլայ, քանի որ կերակուրն ու խմելիքը մարմինի գոյացութեան մէջ կ'անցնին: Պատարագի Խորհուրդը երրորդ զգայարանքներուն կը նմանի, որոնք են ճաշակելիները, այդ պատճառով պատշաճ է ճաշակելով ստանալ: Իսկ ուտելիքը շատ յարմար է Քրիստոսի շարժարանքներուն, որով Քրիստոսի Մարմինը խոցուեցաւ, ինչպէս Խորհուրդը մատուցած ատեն հացով կը կատարուի:

Արդ, այսքանը բաւարար է մեզի այս խօսքին տեսութեան համար:
Եւ մարդասէր Քրիստոսին փառք յաւիտեանս: Ամէն:

Գրաբարէ Արեւմտահայերէնի վերածեց՝
ՎԱՐԱՆ Դ (ՅԱԿՈԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵՆ

ԿՐՈՆԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Սկիզբը՝ 2022 թ. թիվ 2., է.:

ԳԼՈՒԽ Բ. ԱՇԽԱՐՀՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆ

«Բանականության վերջին փայլը հանաչումն է այն իրողության, որ կա իրերի անսահմանություն, որը գերազանցում է իրեն»

(Բլեզ Պասկալ):

Ե՛հ ֆանտաստ գրող Ստանիսլավ Լեմի՛ պատմվածքներից մեկում նկարագրված է գիտնականի մի փորձարարություն, որի ընթացքում վերջինս մեկուսացված ուղեղները տեղադրում է առանձնահատուկ արկղերի մեջ եւ դրանք միացնում իրականության ամբողջական պատրանք

¹ Ստանիսլավ Լեմ (1921–2006 թթ.)՝ 20-րդ դարի լեհ հայտնի գրող, փրիսոփա, երեւակայագիր (фантастик) եւ գալիքաբան (futurologist), որի ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի 40 լեզուներով: Հանրահռչակ հեղինակն իր գրքերում քննարկել է գիտության ու տեխնիկայի զարգացման հնարավոր հետեւանքները, ինչպես նաեւ գիտարկել տիեզերագնացությանը, գրականությանը, գիտությանը վերաբերող փրիսոփայական բնույթի զանազան խնդիրներ: Նրա ամենահայտնի ստեղծագործություններից են՝ «Մարդը Մարսից» (1946 թ.), «Երեւակայության Հիվանդանոցը» (1948 թ.), «Աստղանավորդներ» (1951 թ.), «Մագելանի Ամպը» (1955 թ., հայերեն հրատ. 1964 թ.), «Էդեմ» (1959 թ.), «Ներխուժում Ալդեբարանից» (1959 թ.), «Սոլյարիս» (1961 թ., հայերեն հրատ. 1965 թ., համանուն ֆիլմը՝ 1972 թ.-ին), «Անպարտելին» (1964 թ.), «Դիպլոմաների Փրիսոփայությունը» (1968 թ.), «Աստուծու Չայնը» (1968 թ.), «Բացարձակ Դատարկություն» (1971 թ.) եւ այլն: Լեմի անունով է կոչվել նաեւ 3836 աստղակերպը (առավել մանրամասն տե՛ս DARKO SUVIN, Three World Paradigms for SF: Asimov, Yefremov, Lem, “Pacific Quarterly (Moana): An International Review of Arts and Ideas 4”, 1979, էջ 271–283 եւ LUTZ D. SCHMADEL, Dictionary of Minor Planet Names, 5th ed., New York, 2003, էջ 325, ինչպես նաեւ՝ FREDRIC JAMESON, The Unknowability Thesis. In Archaeologies of the Future: This Desire Called Utopia and Other Science Fictions, London and New York, 2005: Հմմտ. տե՛ս СТАНИСЛАВ ЛЕМ, Моя жизнь, Собрание Сочинений в 10 томах, т. 1, Москва, 1992 եւ Д. Р. МЫШКО, «Антифинальная» Позиция С. Лема В Научно-Фантастических Романах 60–80-х годов: К Проблеме Типологии Фабулы, «Славяноведение», № 5, 1995, էջ 45–49, ինչպես նաեւ՝ Д. П. БАК, Биография непрожитого, или Время жестоких чудес: Фантастика Станислава Лема на рубеже столетий, «Новый Мир», №9, 1996, էջ 193–207 եւ А. ГРИЦАНОВ, Лем Станислав, «Всемирная энциклопедия: философия, XX век», Москва-Минск, 2002, էջ 413: Տե՛ս նաեւ В. И. БОРИСОВ, К. В. ДУШЕНКО, Лем Станислав, «Большая Российская Энциклопедия», т. 17, Москва, 2010, էջ 211–212՝ ծ. ք.):

ստեղծող սարքավորումներին: Այդ արկղերը ներկայացնելով իր հյուրին՝ գիտնականն ասում է. «Սրանք մահկանացուների ճակատագրերն են, նրանց աշխարհը, նրանց կեցությունը, մի խոսքով՝ այն ամենը, ինչին կարող են հասնել եւ ինչը կարող են ճանաչել: Ներսում առկա են յուրահատուկ ժապավեններ, որոնց վրա ձայնագրված են էլեկտրական կարճատեւ տատանումներ՝ հենց այն հարյուր կամ երկու հարյուր միլիարդ երեւոյթներին համապատասխան, որոնց մարդը կարող է բախվել առավել հարուստ տպավորություններով լի իր կյանքի տարիներին: Եթե բարձրացնեք թմբկազլանի կափարիչը, ապա կտեսնեք միայն փայլուն ժապավեններ՝ պատված ցելցուլոսիդի² վրա բորբոսի նստվածքաշերտեր հիշեցնող սպիտակ կեռագծերով, բայց իրականում դրանք հարավի տոթ գիշերներն են ու ծովի ալիքների շաշտունը, կենդանիների մարմիններն ու հրաձգության որոտը, հուղարկավորություններն ու գինարբուքները, խնձորների եւ տանձերի համը, ձնաբուքերը, բոցավառ բուխարու մոտ ընտանեկան միջավայրում անցկացրած երեկոներն ու խորտակվող նավի տախտակամածից հնչող ճիշերը, լեռնագագաթներն ու գերեզմանները եւ զառանցական զգայախաբուցությունները. այնտեղ ողջ աշխարհն է»³:

Սույն պատմվածքը միայն երեւակայության անսանձ թռիչքի մասին չէ. այստեղ պատկերված է մեր ճանաչողության յուրօրինակ կաղապարատիպը: Այս գրվածքում կեմի կողմից առաջադրված հարցը առանցքային նշանակութուն ունի իմացաբանության ասպարեզում: Ինչպես կարող ենք ճշմարիտ գիտելիք ձեռք բերել մեզանից դուրս գտնվող իրականության վերաբերյալ:

Զգայարանները ո՛չ միայն հաճախ են խաբում մեզ, այլեւ դրանց միջոցով ստացված տվյալները հատկանշվում են պատրանքայնությամբ (օրինակ՝ մեզ թվում է՝ արեւը պտտվում է երկրի շուրջը, եւ որ՝ քարը կամ ձեռքը կարծր ինչ-որ բան են, կամ՝ էկրանին փոփոխվում են ոչ թե շարժանկարի ժապավենի առանձին նկարները, այլ տեղի է ունենում կերպարների իրական շարժում եւ այլն): Դժվար է, առհասարակ, ապացուցել, որ այս ծառը կամ այն տունը, ինձանից անկախ գոյություն ունեն

² Առաձգական եւ դյուրավառ քիմիական պինդ նյութ, որը գործածվում է ալեհավաք, խաղալիքներ, շարժանկարի եւ լուսային ժապավեններ, ինչպես նաեւ արդուզարդի առարկաներ պատրաստելիս (ծ. ք.):

³ *Տես* СТАНИСЛАВ ЛЕМ, Из воспоминаний Ийона Тихого: I или «Странные ящики профессора Коркорана», пер. И. Левшин, К. Душенко, Д. Брускин, В. Ковалевский, Ф. Широков, Москва, 1990, էջ 2 (ծ. ք.):

ճիշտ այն ձեւով, ինչպես ես եմ դրանք ընկալում: Այժմ առարկաներն ինձ թվում են այդպիսին, բայց ինչ տեսք կունենային, եթե ուրիշ լիներ զգայարանների կառուցվածքը: Չէ՞ որ հայտնի է, որ մասնավորապես միջատներն աշխարհն այլ կերպ են տեսնում, քան՝ մենք, եւ, հետեւաբար, այն պատկերանում է նրանց միանգամայն ուրիշ կերպով:

Ճիշտն ասած, ձայնը, որպես այդպիսին, գոյություն չունի. կան միայն ալիքներ, որոնք, ներգործելով լսողական զգայարանի վրա, իմ ներսում ձեւավորում են ձայնի զգայություն: Միանգամայն նման զգայություն հեշտութամբ կարելի է առաջացնել լսողական նյարդի մեխանիկական գրգռման արդյունքում: Որպես այդպիսին՝ գոյություն չունի նաեւ լույսը (կամ գույնը), այլ կա որոշապես մեր տեսողական զգայարանների վրա ներազդող քվանտների հոսք:

Այսպիսով, կարելի է ապացուցել, որ աշխարհի՝ մեր պատկերը կազմավորող բոլոր զգայությունները պայմանավորված են զգայարաններով: Նույն հոսանքը, եթե հաղորդենք լեզվին, կառաջանա թթվայնության զգացողություն, եթե անցկացնենք աչքով, կգոյանա կարմիրի կամ կապույտի զգայություն, եթե փոխանցենք մաշկին, առաջ կգա խտրմանքի զգացում, իսկ լսողական նյարդի պարագայում՝ ձայնի զգացողություն⁴: Դեռեւս անգլիացի փիլիսոփա Դեյվիդ Հյունը, ապա ավստրիացի ֆիզիկոս էռնստ Մախը մատնացույց են արել, թե ինչպե՞ս ենք մենք, զգայությունն ընդունելով որպես ճանաչողության միակ սկզբնաղբյուր, անխուսափելիորեն հանգում սկեպտիցիզմի ծայրահեղ ձեւին: Է. Մախը հոգեկանի եւ ֆիզիկականի հարաբերակցության վերաբերյալ իր աշխատության մեջ անդրդվելի հետեւողականությամբ զարգացնում է սույն գաղափարը: Որպես մեկնակետ՝ նա ընդունում է այն իրողությունը, որ մարդու կողմից ընկալված արտաքին աշխարհի յուրաքանչյուր երեւույթ միեւնույն ժամանակ մեր զգայությունը, հետեւաբար՝ հոգեկան վիճակն է⁵: Այսպիսով, եթե մեր միտքն ինչ-որ գործողություն կատարելիս առաջնորդվի միայն զգայարաններով փոխանցված տեղեկատվությամբ, մենք դժվար

⁴ Նմանատիպ գիտափորձեր դեռեւս 19-րդ դարում կատարել է գերմանացի ֆիզիկոս Հերման Հելմհոլցը (առավել մանրամասն տես Գ. Ի. ЧЕЛПАНОВ, Мозг и душа, 6-е изд., Москва, 1918, էջ 147 շրնկ.):

⁵ Տես Դ. Юм, Трактат о человеческой природе, пер. с англ., Собрание сочинений, т. 1, Москва, 1966, էջ 27 եւ Ծ. Мах, Анализ ощущений и отношение физического к психическому, пер. с нем., 2-е изд., Москва, 1908, էջ 254 շրնկ.:

Թե կարողանանք աշխարհի ճանաչողության օբյեկտիվ շափանիշներ գտնել: Տվյալ դեպքում կհայտնվենք այն իրավիճակում, որի մասին խոսել է Արթուր Շոպենհաուերը. «Անհնար է դրսից թափանցել իրերի էություն ներսը, որքան էլ որ առաջադիմենք մեր հետազոտության մեջ, արդյունքում կստացվեն միայն պատկերներ ու անուններ: Մենք նմանվում ենք այն մարդուն, որը թափառելով դղյակի շուրջը՝ ապարդյուն կերպով փնտրում է շքամուտքը եւ այդ ընթացքում արտապատկերում ճակատամասը»⁶: Կամ մեկ այլ համեմատությամբ՝ մենք նման ենք «Զմրուխտյա քաղաքի կախարդը» հեքիաթի հերոսներին, որոնց համար քաղաքում ամեն բան կանաչ էր՝ իրենց իսկ կրած փականքով ակնոցների պատճառով:

Բայց չէ՞ որ կան առարկաներ, որոնց մասին մենք գիտենք, չնայած որ երբեք չենք տեսել դրանք. այդպիսիներից են, օրինակ, եւ մեզանից անսահման հեռվում ցուլացող աստղերը, եւ նյութերի տարրական մասնիկները: Մարդն ինչպե՞ս էր կարող առանց զգայարանների օգնության որեւէ դատողություն անել դրանց վերաբերյալ: Ըստ երեւույթին, զգայություններից եւ պարզագույն մտահանգումներից զատ, առկա է ճանաչողության մեկ այլ մակարդակ, որտեղ կենտրոնական դերակատարությունը վերապահված է վերացական մտքին:

Ճանապարհը դեպի այն իրերը, որոնց ըմբռնումը փակ է անմիջական զգայությունների համար, անցնում է մաթեմատիկական եւ տրամաբանական վերացարկումների աննյութական աշխարհով:

Սկզբնապես վերացական մտածողությունը, ինչպես մատնանշել է Թոմմա Աքվինացին ԺԳ. դարում, անբաժան է զգայական պատկերացումներից, սակայն աստիճանաբար զարգանալով ու բարդանալով՝ այն

⁶ Տե՛ս А. ШОПЕНГАУЭР, Мир как воля и представление, т. 1, Москва, 1900, էջ 103: Վ. Լենինի «Մատերիալիզմ եւ էմպիրիոկրիտիցիզմ» երկում (գրվել է 1905–1907 թթ. հեղափոխության պարտությունից հետո, հրատարակվել 1909 թ.-ի մայիսին: Դրանում Լենինը մշակել է մարքսիստական կոուսակցության փիլիսոփայական, տեսական հիմքերը: Հայերեն առաջին անգամ առանձին գրքով հրատարակվել է 1939 թ.) նմանատիպ եզրահանգումների առնչությամբ ակնատես ենք լինում հեղինակի խիստ կշտամբանքներին: Եվ, ըստ էության, նրա ողջ փաստարկությունը հանգում է հակաակորդների հայացքների՝ Բերկլիի փիլիսոփայության հետ նույնական լինելու իրողության ապացուցմանը: Մինչդեռ սույն նույնանմանությունը դժվար թե կարելի է փիլիսոփայական ինչ-որ հանցագործություն համարել: Մեր օրերում, ըստ կրեեոնատիկայի հիմնադիր Նորբերտ Վիների, «Ֆիզիկայի միամիտ իրապաշտությունը իր տեղը զիջում է ինչ-որ բանի, որին պատրաստակամությամբ կարող էր համաձայնել եպիսկոպոս Բերկլին» (տե՛ս Н. ВИНЕР, Кибернетика и общество, пер. с англ., Москва, 1958, էջ 34՝ այսուհետ՝ Н. ВИНЕР, նշ. աշխ., 1958):

մեզ դուրս է բերում փորձառությունն և նեղ շրջանակից⁷: Վանելով զգայականը՝ միտքն իր գործառնություններն արդեն բխեցնում է գաղափարական, մտահասանելի կառույցների ոլորտում:

«Առողջ դատողությունը», հասարակ տրամաբանությունը՝ ճանաչողության այս տարրական ձևերը սկզբնական փուլում կաշկանդում են վերացական մտքի թռիչքը, սակայն ամեն քայլափոխին այն ավելի ու ավելի է հեռանում դատողական հասկացությունների սովորական աշխարհից: «Բանականությունը», պարզունակ դատողությունն իրենց տեղը զիջում են գիտական ու փիլիսոփայական ըմբռնումների լայն հորիզոններին: «Առողջ բանականությունն» առավել բարձր մակարդակում նույնքան անվստահելի ու անհամապատասխան գործիք է, որքան՝ զգայարանները: Անշուշտ, այն իր տեղում, առօրյա կենցաղում իր ուղեկիցների՝ «վեց զգայարանների» հետ միասին հավատարմորեն ծառայում է մեզ, սակայն, որոշակի պահից սկսյալ, ավարտվում է պարզ տրամաբանության տիրույթը:

Սույն իրողությանը կարելի է ակնառես լինել արդեն բնագիտության օրինակում, երբ խոսքը վերաբերում է հասկացությունների մի համակարգը մեկ այլ, առավել բարդ համակարգով, մասնավորապես՝ էվոլյուցիոն և քվանտային ֆիզիկական հարաբերականության տեսությունը⁸, կամ նյութաբանական ֆիզիկական հարաբերականության տեսությունը⁹ փոխարինելուն: Այն, ինչ նախկինում պատկերանում էր իբրև միակ հնարավոր տարբերակ եւ հանգիստ տեղավորվում «առողջ բանականության» շրջանակում, պարզվում է՝ ֆիզիկամատիմատիկական մտքի՝ համաշխարհային իրականության խորքը ներթափանցելու գլխապտույտ ձգտումների միայն մի աստիճանն է, մի շրջափուլը:

Այս առումով հատկանշական է դանիացի հայտնի ֆիզիկոս Նիլս Բորի՝ մի նոր տեսության քննարկման ժամանակ իր ելույթի մեջ արտաբերած հետեւյալ աֆորիզմը. «Բոլորն էլ համաձայն են, որ ենթադրյալ տեսությունը խելացիոր է: Հարցը հետեւյալն է՝ արդյո՞ք այն բավականաչափ խելացիոր է, որպեսզի նաեւ ճշմարիտ լինի»¹⁰: Այլ կերպ ասած, գիտ-

⁷ *Sten Thomas Aquinas, Summa Theol., 1, 1, 9:*

⁸ Հայտնի է նաեւ «հիպերբոլյան երկրաչափություն» անվամբ (ծ. ք.):

⁹ Հաճախ, որպես հոմանիշ, կիրառվում է նաեւ «ռեկլատիվիստական ֆիզիկա» ձեւակերպումը (ծ. ք.):

¹⁰ *Sten A. A. Элиович, О методологии струнной программы, «Метафизика», № 2, 2011, էջ 101 (ծ. ք.):*

նականներն այժմ վարկածի հակասությունը «առողջ բանականությունը» որակում են ոչ որպես այդ ենթադրության թերություն, այլ ավելի շուտ՝ որպես արժանավորություն¹¹:

Պատահական չէ, որ ֆրանսիացի փիլիսոփա Անրի Բերգսոնը մեր պարզ տրամաբանությունն անվանել է «կարծր մարմինների տրամաբանություն»¹²: Վերջինը սերտորեն կապված է զգայական պատկերացումների հետ եւ այն, ինչ հնարավոր չէ պատկերացնել ականբեւաբար, նրա հայեցակետից կեղծ է: Մինչդեռ միկրոաշխարհի ժամանակակից ֆիզիկան գործառու է հատկապես «անպատկերանալի», պարադոքսալ հասկացություններով¹³: Օրինակ՝ ի՞նչը կարող է առավել անհեթեթ թվալ, քան պնդումը, ըստ որի տեղափոխվելիս «ատոմային օբյեկտները չեն շարժվում հետագծով»:

Համաձայն անգլիացի ֆիզիկոս Պոլ Դիրակի բնորոշման, քվանտային տեսությունը ստեղծվում է հիմնականում այնպիսի հասկացությունների հիմամբ, որոնք «չեն կարող մեկնաբանվել հայտնի պատկերացումներով եւ չեն կարող ընդհանրապես բացատրվել նույնիսկ համապատասխան բառերով»¹⁴: Սույն համոզմունքը կիսել են նաեւ խորհրդային գիտնականները: «Քվանտային մեխանիկան,— գրում է ակադեմիկոս Մ. Օմելյանովսկին,— ճշգրիտ հասկացություններով արտացոլում է ատոմային օբյեկտների շարժումը, որը որոշակի պայմաններում նման է մասնիկների շարժմանը, իսկ այլ հանգամանքներում՝ ալիքների տարածմանը, բայց այն միեւնույն ժամանակ արմատապես տարբերվում է երկուսից: Այ-

¹¹ Մերօրյա ֆիզիկան մշտապես բախվում է պարադոքսներին, որոնք ոչնչացնում են սկզբնական պատկերացումները: Ահա թե ինչն էր Մաքս Պլանկը պնդում, որ «փիլիսոփան, որը գիտական տեսությունը գնահատում է այնքանով, որքանով կարելի է դրա իմաստը հստակ ընկալել, խոչընդոտում է հետագա առաջադիմության հանդեպ գիտության մեջ առկա ձգտմանը» (տե՛ս Մ. ПЛАНК, Единство Физической Картины Мира, Москва, 1966, էջ 198): Հատկանշական է, որ Կ. Մարքսը գիտության մեջ առկա հարակարծությունները նույնպես համարել է անխուսափելի: «Գիտական ճշմարտությունները,— գրել է նա,— եթե դիտարկենք միայն իրերի խաբուսիկ տեսանկյունից ըմբռնող ամենօրյա փորձառություն հիմամբ, միշտ պարադոքսալ են» (տե՛ս К. МАРКС И Ф. ЭНГЕЛЬС, Сочинения, т. 16, 2-е изд., Москва, 1960, էջ 131):

¹² Տե՛ս А. БЕРГСОН, Творческая эволюция, пер. с франц., Москва-Санкт-Петербург, 1914, էջ III (այսուհետ՝ А. БЕРГСОН, նշ. աշխ., 1914):

¹³ Տե՛ս Философия естествознания, Москва, 1966, էջ 72, 226—227: Ի հակադրություն մակրոաշխարհի շրջանակում ձեւավորված տրամաբանության, արդի ֆիզիկան պնդում է, որ «քվանտային մեխանիկայում գոյություն չունի մասնիկի հետագծի հասկացություն» (տե՛ս Л. Д. ЛАНДАУ, Е. М. ЛИФШИЦ, Квантовая механика, 2-е изд., Москва, 1963, էջ 14):

¹⁴ Տե՛ս П. А. ДИРАК, Принципы квантовой механики, пер. с англ., Москва, 1960, էջ 13:

դուհանդերձ, եւ սուչնը հարկավոր է ընդգծել ամենայն վստահությամբ, նմանատիպ շարժումն անպատկերանալի է»¹⁵: Այսպիսով, մեր առջեւ առկա են եւ տրամաբանական հակասություն, եւ ակնառու կաղապարատիպի տեսքով առարկան պատկերացնելու լրակատար անհնարինություն, բայց եւ այնպես խոսքը դեռեւս վերաբերում է իրականությունը:

Նիլս Բորն ընդգծում էր, որ միկրոաշխարհի հետազոտության ընթացքում գիտությունը միաժամանակ կենտրոնանում է «երկու միմյանց բացասող դրույթների»¹⁶ վրա: Դա նշանակում է, որ այլեւս անհնար է երեւույթը խցկել հին համագրության (այսինքն՝ սինթեզի) պրոկրուստյան մահիճը¹⁷. հարկավոր է այն նկարագրել հակասական եզրույթներով: Սուչնի վրա է խարսխված Ն. Բորի հռչակած լրացման սկզբունքը, որը, իր իսկ կարծիքով, կարելի է կիրառել եւ հոգեբանության, եւ գիտելիքի այլ ոլորտների անշուշտյամբ: Մինչդեռ գիտության մեջ լրացման սկզբունքի բացահայտումից շատ առաջ համանման կերպով են ստեղծվել թե՛ քրիստոնեություն վարդապետական բանաձեւերը, եւ թե՛ բուդդիստների անտինոմիական (հակօրինական)¹⁸ տրամաբանությունը:

¹⁵ Տե՛ս Մ. Э. Омеляновский, Проблема наглядности в физике, «Вопросы философии», № 11, 1961, էջ 55: Սուչն խնդրի վերաբերյալ առավել մանրամասն տես նաեւ փիլիսոփայության դոկտոր Ա. Մ. Մոստեպանենկոյի հետեւյալ աշխատությունը՝ А. М. МОСТЕПАНИНКО, Пространство и Время в Макро-, Мега- и Микром мире, Москва, 1974, էջ 185 շրնկ.:

¹⁶ Տե՛ս Н. БОР, Атомная физика и человеческое познание, пер. с англ., Москва, 1961, էջ 81: Հմմտ. նաեւ В. ПАУЛИ, Философское значение идеи дополнителности. — в кн.: В. ПАУЛИ, Физические очерки, Москва, 1975, էջ 56 (այսուհետ՝ В. ПАУЛИ, նշ. աշխ., 1975):

¹⁷ «Պրոկրուստյան մահիճ» այլաբանական արտահայտության ներքո հասկացվում է չափանիշ, որին բռնազբոսիկ կերպով հարմարեցնում են վերջինիս չենթարկվող երեւույթները: Այն ծագել է առասպելական Դամաստես ավազակի «Պրոկրուստես» (բառացի՝ «ձգող-երկարացնող») մականունից: Ըստ հին հունական դիցաբանության՝ Նլեսիս քաղաքի մոտակայքում հաստատված Դամաստես Պրոկրուստեսը բռնելով ուղեւորներին՝ պառկեցրել է հատուկ մահճի վրա եւ խոշտանգել նրանց. եթե զոհի հասակը երկար է եղել մահճից, կտրել է նրա ոտքերը, եթե կարճ՝ մարմինը ձգելով հասցրել է մահճի երկարությանը: Ավազակին նրա իսկ ձեռով սպանել է Աթենքի 11-րդ արքա Թեսեսը, որը հիշատակված է նաեւ Հոմերոսի «Իլիական»-ում եւ «Ոդիսական»-ում (տես «Мифы народов мира», энциклопедия в 2-х томах, т. 2: К—Я, Москва, 1992, էջ 337, եւ Н. С. АШУКИН, М. Г. АШУКИНА, Крылатые слова, Москва, 1960, էջ 504՝ ծ. ք.):

¹⁸ «Անտինոմիական» եզրույթը լայնորեն կիրառվում է գիտության եւ փիլիսոփայության բնագավառներում: Այն ծագել է հին հունարեն «անտինոմիա» (ἀντι [«դեմ, ընդդեմ, հակա»] + νόμος [«սովորույթ, օրենք»] = ἀντινομία) բառից, որը նշանակում է «հակասություն օրենքի մեջ», կամ՝ «հակօրինություն, ներհակություն տրամաբանորեն հավասարապես ապացուցելի երկու օրենքների, սկզբունքների կամ կատեգորիաների միջեւ» (տես ԷՂՈՒՍԻԿ ԱՂԱՅԱՆ, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976, էջ 83, եւ ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Օտար բառերի բառարան, Երեւան, 2011, էջ 49՝ ծ. ք.):

Կրոնական խորհրդապատկերների հակօրինությունները հիշեցնում են ֆիզիկոսների երկերում առկա իրականության «լրացուցիչ» նկարագրության մասին: Հենց սա նկատի ունեւր գերմանացի աստվածաբան Հ. Դոնցերը, երբ պնդում էր, որ «ատոմաֆիզիկական իրավիճակի տեսական-իմացաբանական հետեւանքները դուրս են գալիս ֆիզիկայի շրջանակից եւ չափից ավելի ներխուժում արդի աստվածաբանություն»¹⁹:

* * *

Ռացիոնալիզմը նույնքան անհարմարավետ զգաց իրեն նաեւ իր հնագույն ամրոցում՝ մաթեմատիկայում, որը վաղնչական ժամանակներից համարվել է բնագիտության հիմնականախբը: Մեր (այսինքն՝ 20-րդ) դարասկզբին մաթեմատիկան ցնցվեց «հիմունքերի առանձնահատուկ ճգնաժամից»՝ պայմանավորված պարադոքսների ու հակասությունների բացահայտմամբ, որոնց, կարծես հանգեցրել են ավանդական տրամաբանության անվիճարկելի մեթոդները: Սույն ճգնաժամի հաղթահարմանն էին ուղղված Բ. Ռասսելի, Դ. Հիլբերտի, Ա. Կոլմոգորովի եւ Ս. Նովիկովի աշխատությունները: Ճգնաժամի հետեւանքով մաթեմատիկան տրոհվեց մի քանի ճյուղերի, մի քանի «մաթեմատիկաների», որ բացատրվում է ապացույցների կիրառելի միջոցներով: Այսպես, դասական մաթեմատիկայի շրջանակում անվիճելիորեն ապացուցված թեորեմը սխալ է համարվում ինտուիցիոնիստական²⁰ մաթեմատիկայում: Իսկ 1930-ական թվականներին վիեննացի տրամաբան Կուրտ Գյոդելն անկատարության մասին իր հանրահայտ թեորեմով ցույց տվեց, որ նույնիսկ ամբողջական

¹⁹ Տե՛ս H. DONZER, Das Symboldenken in der Theologie, “Universitas”, Jahrgang 22, №4, Stuttgart, 1967, էջ 375:

²⁰ Ինտուիցիոնիզմը փիլիսոփայական ուղղություն է մաթեմատիկայի եւ տրամաբանության մեջ, որը հրաժարվում է ակտուալ անվերջության վերացարկումից եւ մաթեմատիկայի ու տրամաբանության հիմքը համարում է ինտուիտիվ համոզվածությունը՝ ինտուիցիան (ներքմբռնումը): Ինտուիցիոնիզմն առաջացել է 20-րդ դարասկզբին, որպես արձագանք ընդդէմ Կանտորի բազմությունների տեսության, որն ընկալվում էր որպես դասական մաթեմատիկայի հիմք, եւ ծավալվել այդ տեսության մեջ բացահայտված պարադոքսների շնորհիվ: Ինտուիցիոնիզմի նախահայրը համարվում է Ա. ՊՈՒՍՆԿՍՐԵՆ, իսկ հիմնադիրը՝ Լ. ԲՐԱՈՒԵՐԸ: Այն հետագայում զարգացրել են Հ. Վեյլը եւ Ա. Հայթինգը (առավել մանրամասն տե՛ս “Frege on Russell’s Paradox”, in: “Translations from the Philosophical Writings of Gottlob Frege”, edited by Peter Geach & Max Black, 2nd ed., Oxford, 1960, էջ 234–244, եւ AREND HEYTING, Intuitionism: An Introduction, 3rd rev. ed., Amsterdam, 1971: Հմմտ, նաեւ W. S. ANGLIN, Mathematics: A Concise History and Philosophy, New York, 1994, ինչպես նաեւ՝ DENNIS E. HESSELING, Gnomes in the Fog. The Reception of Brouwer’s Intuitionism in the 1920s, Birkhäuser, 2003 եւ այլն՝ ծ. ք.):

Թվերի թվաբանությունը վերաբերող պարզագույն դատողություններում առկա են պնդումներ, որոնք սկզբունքորեն չի կարելի ո՛չ ապացուցել, ո՛չ էլ հերքել: Այլ կերպ ասած՝ մնալով մաթեմատիկական, խիստ ձեւական տրամաբանության²¹ շրջանակում՝ անհնար է նույնիսկ թվերի պարզագույն հատկությունների վերաբերյալ կառուցել պնդումների միասնական, անհակասական մի համակարգ:

Վկայակոչենք եւս մեկ օրինակ: 1922 թ. պետրոգրադցի մաթեմատիկոս Ալեքսանդր Ֆրիդմանը Ալբերտ Այնշտայնի հավասարումների լուծման հիմամբ հանգեց այն եզրակացության, համաձայն որի տիեզերքը պետք է ունենա ինքնապարփակ ձեւ եւ, այդուհանդերձ, այն, ըստ երեւույթին, շարունակաբար ընդարձակվում է²²: Նույնիսկ ինքը՝ Այնշտայնը, որի տեսությունն ընկած էր Ֆրիդմանի աշխատությունների հիմքում, սկզբում չէր կարողանում համաձայնել նմանօրինակ՝ առաջին հայացքից ցնորական թվացող հետեւության հետ: Միայն 1923 թվական

²¹ Ձեւական տրամաբանությունը կոչվում է նաեւ «ֆորմալ տրամաբանություն, տեսական տրամաբանություն» կամ «մաթեմատիկական տրամաբանություն»: Այն գիտություն է ճիշտ մտածելու օրենքների ու ձեւերի մասին: Ձեւական տրամաբանության՝ որպէս գիտության հիմնադիր հույն փիլիսոփա Արիստոտելն այն անվանել է «անալիտիկա» (այսինքն՝ «վերլուծություն»), մինչդեռ «տրամաբանություն» եզրույթը գործածության մեջ է մտել նրա մահից հետո՝ Ք.ա. III դարում: Որպէս ֆորմալ տրամաբանության սկզբնական փուլ՝ ընդունված է դիտարկել ավանդական տրամաբանությունը, իսկ որպէս զարգացում՝ մաթեմատիկականը (առավել մանրամասն տե՛ս “Logic, History of: Precursors of Modern Logic”, Encyclopedia of Philosophy, t. 5, 2nd ed., New York, 2006, էջ 440–446 (այսուհետ՝ Encyclopedia of Philosophy, t. 5) եւ “Logic, History Of: Modern Logic”, Encyclopedia of Philosophy, t. 5, էջ 447–484: Հմմտ. նաեւ՝ Н. И. КОНДАКОВ, Формальная (традиционная) логика, Москва, 1967, էջ 406–428 եւ նույնի Վ. И. ЛОГИЧЕСКИЙ СЛОВАРЬ-СПРАВОЧНИК, Москва, 1975, էջ 285, ինչպէս նաեւ՝ Մ. Մ. ՌՈՋԵՆՏՍԱԻԻ, Փիլիսոփայական Բառարան, Երեւան, 1975, եւ Ա. Ա. ՆԱԼԶԱՅՅԱՆ, Հոգեբանական Բառարան, Երեւան, 1984՝ ծ. ք.):

²² Տե՛ս А. А. ФРИДМАН, Мир как пространство и время, 2-е изд., Москва, 1965: Հաճախ է շոշափվել այն հարցը, թե փիլիսոփայական ինչպիսի՞ համոզմունքների տեր է եղել Ա. Ֆրիդմանը: Սույն խնդրի պարզաբանումը դժվար է, քանի որ նա գրել է արդեն այնպիսի տարիներին, երբ հազիվ թե հնարավոր լիներ ուղղակիորեն արտահայտել պաշտոնական հիմնադրույթներից տարբերվող մտքեր: Այնուամենայնիվ, այն փաստը, որ գիտնականն իր գլխավոր աշխատությունն սկսում է սուրբգրային բնաբանով («Այլ զամենայն չափով եւ թուով եւ կշռով կարգեցեր...»: Հարկ ենք համարում նշել, որ բնագրում առկա վերոնշյալ սուրբգրային հղումը հեղինակը վերցրել է Սողոմոնի Իմաստությունից (Իմաստ. ԺԱ. 21), որը համեմատելով 1805 եւ 1860 թթ. հրատարակված Աստվածաշունչի գրաբար բնագրերի հետ՝ պարզեցինք, որ դրանք լիովին համընկնում են [տե՛ս Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, յաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան Վարդապետի, Վենետիկ, 1805, էջ 469, ինչպէս նաեւ՝ Գիրք Աստուածաշունչը Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860, էջ 673՝ ծ. ք.] եւ այն եզրափակում Գ. Դերժավինի «Աստված» բանաստեղծությունից բերված քաղվածքով, որոշակի խորհրդածությունների առիթ է տալիս:

նի մայրսին նա հրապարակեց մի հայտարարություն, որով ընդունում էր Ֆրիդմանի պարագոքսալ եզրահանգումների²³ ճշգրտությունը:

Սովորական մտածողության հետ նմանատիպ մի հակադրության մեջ հայտնվեց նաև ժամանակի վերաբերյալ այնչտայնյան պատկերացումը: Մեզ համար միանգամայն բնական է այն, որ եթե նյութն ամբողջությամբ անհետանար, ժամանակն ու տարածությունը կշարունակեին իրենց գոյությունը: Կմնար, այսպես ասած, «տեսական դատարկությունը», իսկ ժամերն ու րոպեները կանցնեին իրենց հաջորդականությամբ. սակայն միթե կարելի է «կանգնեցնել» ժամանակը: Իրականում, ինչպես ապացուցել է Այնշտայնը, նյութի ոչնչացմամբ կվերանային թե՛ տարածությունը, թե՛ ժամանակը:

Սույն միտքը միանգամայն անհեթեթություն է. «առողջ բանականություն» համար տարածությունից ու ժամանակից դուրս առկա կեցությունը թվում է աննկարագրելի եւ հետեւաբար՝ անհավանական մի իրողություն: Բայց այստեղ «բանականությունը» զրկված է վերջնական դատողության իրավունքից: Այն, ինչ նա մերժում է, ընդունելի է դառնում գիտության համար:

Եվ ինչպես լրացման սկզբունքի պարագայում, այստեղ եւս պարզվում է, որ կրոնական մտածողությունը վաղուց արդեն գերազանցել է ժամանակի բնույթի մասին այնչտայնյան ընկալումը: Դրանից զատ, դեռևս Եկեղեցու հայրերից մեկը՝ Ս. Օգոստինոսը նյութի սկզբնավորումից առաջ ժխտում էր ժամանակի գոյությունը²⁴: Այդ ժամանակ դա ծաղրանքի ենթարկվեց շատ փիլիսոփաների կողմից, եւ միայն այժմ պարզ դարձավ, թե ինչքան մոտ էր Ս. Օգոստինոսը ֆիզիկայի հարաբերականության տեսության գաղափարներին: «Ժամանակն ի հայտ է եկել աշխարհի հետ միասին, — հաստատելով Ս. Օգոստինոսի միտքը՝ գրում է Վերներ Հայզենբերգը, — այն, հետեւաբար, պատկանում է աշխարհին, այդ իսկ պատճառով այն ժամանակ, երբ գոյություն չի ունեցել տիեզերքը, ամենեւին չի եղել նաև ժամանակը»²⁵:

Այս բոլոր հայտնագործությունները սկզբում գիտնականներին հանգեցնում էին հուսահատության: «Երբ ես, — խոստովանում էր Հայզենբեր-

²³ Սույնի առնչությամբ տես Հավելված 4:

²⁴ *Տես* АВГУСТИН АВРЕЛИЙ, Исповедь, XI, Москва, 1914, էջ 313:

²⁵ *Տես* В. ГЕЙЗЕНБЕРГ, Физика и философия, пер. с нем., Москва, 1963, էջ 28–29: Հմմտ. նաև В. ГЕЙЗЕНБЕРГ, Физика и философия, Часть и целое, Москва, 1989, էջ 74 (*այսուհետ՝* В. ГЕЙЗЕНБЕРГ, նշ. աշխ.՝ ծ. ք.): Հարկ ենք համարում նշել, որ «այն ժամանակ, երբ չի եղել ժամանակը» ձևակերպումը լոկ պայմանական եւ ոչ ճշգրիտ արտահայտչաձև է:

գը,—քննարկումից հետո զբոսնում էի հարեւանությամբ գտնվող այգում, իմ առջեւ կրկին ու կրկին ծառանում էր հետեւյալ հարցը՝ կարո՞ղ է բնությունն իսկապես լինել այնպես անհեթեթ, ինչպես որ այն հառնում է մեր առջեւ ատոմային գիտափորձերի ժամանակ»²⁶:

Մի խոսքով՝ գիտությունն ինքն է մարդուն հանգեցնում աշխարհի պարագոքսալ գերբանական կառուցվածքի իրողությանը: Այն, ինչն «առողջ բանականության» համար իր մեջ բովանդակում է անբացառելի հակասականություն, հաստատվում է ֆիզիկամաթեմատիկական եւ փիլիսոփայական մտածողության բարձրագույն տեսակով:

* * *

Թվում էր՝ ճանաչողության երկրորդ ուղին այնքան շատ բաներ է տվել, որ դրանցով կարելի էր սահմանափակել մեր որոնումները: Բայց դեռ վաղ է տոնախմբության համար: Ամրոցի դարպասները բացվել են, սակայն դժվար թե կարողանանք ներս մտնել: Վերացական մտածողությունը, լինի դա գիտություն, թե մտահայեցողական (սպեկուլյատիվ) փիլիսոփայություն, իր իսկ վերացականությամբ չի կարող հանգեցնել իրականության ճշմարիտ ու վերջնական ճանաչողությանը: «Վերացական մտածողությունը,—ասում է Վ. Սոլովյովը,—մտքի անցումային մի վիճակ է, երբ այն բավականաչափ ուժեղ է՝ զգայական ընկալման բացառիկ իշխանությունից ազատվելու եւ դրան բացասաբար վերաբերվելու համար, սակայն դեռեւս ի զորու չէ յուրացնել գաղափարը՝ վերջինիս լիակատարությամբ եւ իրական առարկայական կեցության ամբողջականությամբ, ներքուստ եւ էապես միավորվել դրա հետ, այլ կարող է միայն (փոխաբերական իմաստով) հպվել վերջինիս մակերեսին, սահել դրա արտաքին ձեւերի վրայով»²⁷:

Սույնի առնչությամբ հիշենք, թե ինչպես էր Տոլստոյի հերոս Կոնստանդին Լեւինը պատկերացնում վերացական կառուցվածքների եւ

²⁶ Տե՛ս В. Гейзенберг, նշ. աշխ., էջ 17 (ծ. ք.):

²⁷ Տե՛ս Вл. Соловьев, Чтения о богочеловечестве, собрание сочинений, 2-е изд., т. III, Санкт-Петербург, 1912, էջ 67 (այսուհետ՝ Вл. Соловьев, նշ. աշխ., т. III, 1912): Հարկ ենք համարում ընդգծել այն փաստը, որ Վ. Սոլովյովի սույն միտքը խորթ չի եղել խորհրդային որոշ հեղինակներին: Այսպես, նրանցից մեկը գրում է. «Ճանաչողության տեսության զարգացումը ցույց տվեց, որ եզրահանգության որեւէ ձեւ չի կարող մեզ բացարձակապես վատահելի գիտելիք տալ» (տե՛ս Б. В. Ахлибинский и Н. И. Храленко, Чудо нашего времени: Кибернетика и проблемы развития, Лениздат, 1963, էջ 91):

կենդանի աշխարհայացքի փոխհարաբերությունները: Վերջինս հազիվ էր միայն հասկացել, թե ո՞րն է կյանքի իմաստը, երբ տեսությունները զրկվեցին նրա վրա ունեցած իշխանությունից: «[Փիլիսոփաների] մտքերը, — գրում է Լեւ Տոլստոյը, — թվում էին նրան բեղմնավոր, երբ նա կամ կարգում էր, կամ հերքումներ էր մտածում ուրիշ ուսմունքների դեմ... Բայց բավական էր, որ նա մոռանար մտքի արհեստական ընթացքը եւ վերադառնար դեպի այն, ինչը բավարարում էր նրան... եւ ահա այդ արհեստական ամբողջ շենքը հանկարծ փուլ էր գալիս, ինչպես խաղաթղթից շինած տուն, ու պարզվում էր, որ շենքը կառուցվել է հենց միեւնույն վերադասավորված բառերից, անկախ բանականությունից, ավելի կարեւոր՝ կյանքի ինչ-որ բանից»²⁸:

Մարդկային ճանաչողության այս առանձնահատկությունը հաստատում է գոյութենապաշտների (էքզիստենցիալիստների) այն միտքը, համաձայն որի մեր աշխարհայացքը շատ ավելի քիչ կախում ունի տեսություններից, քան մենք ենք կարծում: Իմացության կենսական լիակատարությունն արմատավորված է այս խորունկ, խորհրդավոր «ինչ-որ բանի» մեջ: Հետեւաբար, անհրաժեշտություն է առաջանում իմացաբանության մեջ, փորձառականից ու վերացականից գատ, փնտրել նաեւ ինչ-որ երբորդ ասպեկտ: Այն ո՛չ միայն պետք է լրացնի դրանց, այլեւ թույլ տա իսկապես ներթափանցել ճանաչելի էություն մեջ, միախառնվելով դրան՝ մի ամբողջություն կազմի եւ «ներքուստ» մտահայտի:

Այսպես, օրինակ, եթե մենք նույնիսկ տեսություն կառուցենք գիտակցության ու մտածողության վերաբերյալ, ապա այն երբեք չի կարող փոխարինել անձնական ինքնագիտակցության անմիջական կենդանի գործողությանը: Առավել եւս, միայն վերացական մտածողության ճանապարհով բխեցված Գերագույն Իրականության վերաբերյալ գաղափարը կվերածվի ոչ կենսունակ մի տեսության եւ երբեք չի կարող կրոնական ընկալման հիմք հանդիսանալ:

²⁸ Քանի որ հեղինակը չի նշել, թե վերոնշյալ մեջբերումը Լեւ Նիկոլաևիչ Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպի որ հրատարակությունից է կատարել, ուստի որոշեցինք նշյալ հատվածի թարգմանության ու ծանոթագրության համար, պահպանելով Ալեքսանդր Մենի մեջբերման համառոտագիր կառուցվածքը, օգտագործել նաեւ հայերեն թարգմանության համապատասխան հատվածը՝ հմմտ. տե՛ս Лев Николаевич Толстой, Полное Собрание Сочинений, т. 19: Анна Каренина, части 5—8, Москва, 1935, часть 8, IX, էջ 369—370, ինչպես նաեւ՝ ԼԵՒ ՏՈՒՍՏՈՅ, Աննա Կարենինա, հտ. 2-րդ, Երեւան, 1979, մաս 8-րդ, գլ. IX, էջ 476 (ծ. ք.):

* * *

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում «ճանաչողության այս երրորդ ուղին»:

Առաջադրված հարցի պատասխանը որոնելու լավագույն տարբերակը ինքնաճանաչողության՝ որպես սկզբնակետի ընդունումն է: Իսկապես, ի՞նչը կարող է մեզ ավելի անմիջականորեն տրված լինել, եթե ոչ՝ մեր սեփական «եսը»: Մինչդեռ վերջինիս մասին մենք իմանում ենք բնավ ոչ զգայարանների միջոցով եւ ոչ էլ տրամաբանական գործողություններով: Միանգամայն ակնհայտ է, որ մեր «ես»-ը դրսևորվում է առանց ձայնի, հոտի, գույնի կամ առանց այլ հատկության, որոնք վկայում են արտաքին աշխարհի գոյության մասին. այդուհանդերձ, դրա իրականությունն այնքան անվիճարկելի է մեզ համար, որ մենք, մեր «ես»-ից զատ, ամեն բան կարող ենք պատրանք համարել: Այս իսկ պատճառով պատահական չէր, որ Ռ. Դեկարտը կեցության վերաբերյալ իր խորհրդածություններն սկսել է «Cogito, ergo sum», այսինքն՝ «Մտածում եմ, հետևաբար կամ» (կամ՝ «Մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ») բանաձևով²⁹: «Սա, — համաձայն Սարտրի բնորոշման, — ինքն իրեն ճանաչող գիտակցության բացարձակ ճշմարտությունն է»³⁰: Վերացական մտածողությունն այստեղ նույնքան անզոր է, որքան զգայական օրգանները: Այն անհատականությունը տրոհում է հազարավոր տեսակետների ու վիճակների՝ չկարողանալով դրանք միավորել մեկ կենդանի ամբողջության մեջ, մինչդեռ «ես»-ի ներքին միասնությունն անհուսալի կերպով խույս է տալիս վերլուծությունից: Ավելին, համաձայն մի փրկսոփայի ճշմարիտ գիտողության՝ «նմանատիպ գիտակցությունը, ըստ էության, չի կարելի բնութագրել, չի կարող սահմանվել տրամաբանական եղանակով: Գիտակցության բնույթը, դրա հատկություններն աննկարագրելի են. այն, ինչպես նաև հոգեկանին վերաբերող ամեն բան հասկանալու համար անհրաժեշտ է ուղղակիորեն վերապրել դրանք»³¹: Ավելի հեշտ է կույրին բացատրել

²⁹ «Cogito, ergo sum» բանաձևեր լատիներեն թարգմանություն է Ռենե Դեկարտի (1596–1650 թթ.) «Je pense, donc je suis» պնդման, որը հեղինակն առաջին անգամ կիրառել է իր «Գատողություն Մեթոդի մասին» (1637 թ.) աշխատության մեջ (տես RENÉ DESCARTES, Discours de la Methode pour bien conduire sa raison, & chercher la verité dans les sciences..., Leyde, MDCXXXVII, էջ 33 եւ 34՝ ծ. ք.):

³⁰ Տե՛ս JEAN-PAUL SARTRE, L'existentialisme est un humanisme, Paris, 1946, էջ 132:

³¹ Տե՛ս Ր. Էյսլեր, Сознание и бытие, «новые идеи в философии», № 5, Санкт-Петербург, 1913, էջ 133:

կարմիր գույնի հատկությունները, քան ռացիոնալ եզրույթներով ավանդել ինքնագիտակցության էությունը, որը մեզ բացահայտվում է ներմբունդության (ինտուիցիայի) անուղղակի գործողությամբ:

Իրականության այս խորագույն եւ ամբողջական ընկալումը գերազանցում, թեեւ որեւէ կերպ չի բացառում ճանաչողության առաջին երկու կողմերը: Մարդն օժտված է ո՛չ միայն զգայություններով ու բանականությամբ, այլ նաեւ ներըմբռնման յուրահատուկ «օրգանով», որը նրա համար բացահայտում է կեցության էությունը: Միայն ընկալիչ զգայարաններն ու տրամաբանական վերլուծությունները բավարար չեն Բախի ֆուգայի³² կամ Վլադիմիրյան Աստվածամոր սրբապատկերի³³ վեհությունը հասկանալու համար: Նույնիսկ «Ճշգրիտ» գիտությունների բնագավառում ներըմբռնողական բնույթի նախադրյալներն առաջադասված են խիստ փաստարկների շղթային: «Մաթեմատիկոսի ստեղծագործական աշխատանքի արդյունքը պատճառաբանված դատողությունները, ապացույցներն են, — ընդգծում է Զորջ Փոյան, — սակայն ապացույցները բացահայտվում են ճշմարտանման դատողությունների շնորհիվ, ենթադրությունների միջոցով»³⁴: Հիշենք, որ գիտական բազմաթիվ հայտնագործություններ

³² «Ֆուգա» եզրույթը ծագել է լատիներեն «fuga», այսինքն՝ «վազք, փախուստ» բառից: Այն բարդ իմիտացիոն պոլիֆոնիկ երաժշտական ձև է՝ հիմնված բոլոր ձայներում մեկ կամ մի քանի թեմաների բազմակի անցումների եւ զարգացումների վրա: Ֆուգան լինում է պարզ (մեկ թեմայով), բարդ (երկու թեմայով՝ կրկնակի ֆուգա), կամ եռակի (երեք թեմայով): Նաեւ լինում են երկձայն եւ քառաձայն ֆուգաներ: Ֆուգայի ձևը մեծ զարգացում է ապրել Յոհան Սեբաստիան Բախի եւ Գ. Ֆ. Հենդելի ստեղծագործություններում, լայնորեն կիրառվել արեւմտաեւրոպական, ռուս դասականների, 20-րդ դարի կոմպոզիտորներ Պ. Հինդեմիթի, Գ. Շոստակովիչի եւ այլոց երկերում: Ֆուգայի ձեւին դիմել են նաեւ հայ կոմպոզիտորներ Ա. Սպենդիարյանը, Ա. Խաչատրյանը, Ա. Բաբաջանյանը եւ այլք (առավել մանրամասն տես՝ В. ЗОЛОТАРЁВ, Фуга, Москва, 1965 եւ Л. Л. КРУПИНА, Эволюция фуги, Москва, 2001, *ինչպես նաեւ* IMOGENE HORSLEY, Fugue: History and Practice, New York/London, 1966: Հմմտ. նաեւ PAUL WALKER, Fugue in German Theory from Dressler to Mattheson, Buffalo, 1987 եւ նույնի Theories of Fugue from the age of Josquin to the age of Bach, New York, 2004 եւ այլն՝ ծ. ք.):

³³ Վերոհիշյալ սրբապատկերի պատմությանն ու դրա հետ կապված ավանդություններին, *ինչպես նաեւ աստվածաբանական մանրակրկիտ վերլուծությանը կարելի է ծանոթանալ հետեւյալ հրատարակություններով՝* М. АЛПАТОВ И В. ЛАСАРЕФФ, Ein Byzantinisches Tafelwerk aus der Kommenenepoche, "Jahrbuch der preussischen Kunstsammlungen", Band XLVI, Berlin, 1925, էջ 140—155, եւ В. И. ВАХРИНА, Л. А. ШЕННИКОВА, Владимирская Икона Божией Матери— Второе Пришествие, «Православная Энциклопедия», т. IX, Москва, 2005, էջ 8—38, *ինչպես նաեւ* Л. А. УСПЕНСКИЙ, Богословие Иконы Православной Церкви, Нижний Новгород, 1997 (ծ. ք.):

³⁴ Տե՛ս Д. ПОЙА, Математика и Правдоподобные Рассуждения, пер. с англ., Москва, 1957: Զարիզ Թաունսը վերոհիշյալ հոդվածում [նկատի ունի սույն աշխատության առաջին գլխում վկայակոչած հետեւյալ հղումը՝ Ч. ТАУНС, Слияние науки и религии, пер. с англ. — В книге: Диалоги. Полемиические Статьи О Возможных Последствиях Современной На-

իրենց իսկ ստեղծողներին հայտնվել են որպես ակնթարթային ներըմբռնողական ընկալումներ, որոնք միայն հետագայում են հիմնավորվել փաստերով ու տրամաբանությունով: Այս տեսանկյունից նյութտոնյան խնձորի մասին առասպելն այնքան էլ անհիմաստ չէ: Դ. Մենդելեևը, օրինակ, երազում է տեսել իր՝ [քիմիական տարրերի պարբերական] աղյուսակը:

«Ներըմբռնողությունը, ներշնչանքը, — պնդում էր մեր դարի ռուս գիտնականների շրջանակում հայտնի ամենափիլիսոփայական մտքերից մեկը՝ Վ. Ի. Վերնադսկին, — հիմքն է գիտական մեծագույն հայտնագործությունների, որոնք հետագայում են խարսխվել փաստերի վրա եւ ընթանում են խիստ տրամաբանական ճանապարհով, պայմանավորված չեն գիտական, տրամաբանական մտքով եւ իրենց ծագմամբ կապված չեն բառի ու հասկացության հետ»³⁵:

Նույն միտքն արտահայտում է նաեւ ֆրանսիացի ականավոր ֆիզիկոս Լուի դը Բրոյլը: Նա գրում է, որ «իր հիմունքներով ու իր մեթոդներով, ըստ էության, ռացիոնալ մարդկային գիտությունն իր առավել սքանչելի նվաճումները կարող է իրականություն դարձնել միայն մտքի վտանգավոր, հանկարծակի թռիչքների ճանապարհով, երբ դրսևորվում են խիստ դատողության կապանքներից ազատագրված կարողությունները, որոնց անվանում են երեւակայություն, ներըմբռնողություն»³⁶: Ժա-

уки, Москва, 1979, էջ 59—67: Հմմտ. նաեւ «Литературная газета», № 34, 1967՝ ծ. ք.] գրում է. «Մաթեմատիկական կամ տրամաբանական ապացույցները պարտադիր կերպով ենթադրում են միմյանց համաձայնեցվող եւ հետաքրքրություն ներկայացնող իրավիճակի համար կիրառելի կանխադրույթների որոշակի ամբողջություն: Այդուհանդերձ, մաթեմատիկոս Գյոդելն ապացուցեց, որ մաթեմատիկայում, ըստ էության, անհնար է իմանալ արդյո՞ք ընդունված կանխադրույթները համաձայնեցվում են միմյանց, թե՛ ոչ: Գյոդելը եւս մեկ անակնկալ մատուցեց մեզ՝ ապացուցելով, որ գոյություն ունեն մաթեմատիկական ճշմարտություններ, որոնք սկզբունքորեն հնարավոր չէ ապացուցել հասարակ տրամաբանության միջոցով»: Այս ամենը հաշվի առնելով՝ Ն. Վիներն ընդգծում է համաշխարհային օրինաչափությունների օբյեկտիվության նկատմամբ զգայական հավատի անհրաժեշտությունը: «Առանց հավատի առ այն, որ բնությունը ենթարկվում է օրենքներին, — գրում է նա, — չի կարող լինել որեւէ գիտություն: Անհնար է ապացուցել այն, թե բնությունը ենթարկվում է օրենքներին, քանզի մենք բոլորս էլ գիտենք, որ, հաջորդ պահից սկսած, աշխարհը կարող է նմանվել «Ալիսան Հրաշքերի Աշխարհում» գրքի մեջ նկարագրված կրոկետ խաղին» (տե՛ս Н. ВИНЕР, նշ. աշխ., 1958, էջ 195): Ժամանակակից հանրահոշակ փիլիսոփա եւ սոցիոլոգ Կարլ Փոփերը նույնպես պնդում է, որ «լուրաքանչյուր հայտնագործություն բովանդակում է «իռացիոնալ տարր» կամ «ստեղծագործական ներըմբռնում»՝ բերգսոսյան իմաստով» (տե՛ս К. ПОPPER, The Logic of Scientific Discovery, New York, 1961, էջ 32):

³⁵ Տե՛ս В. И. ВЕРНАДСКИЙ, Размышления Натуралиста, «Природа», № 6, 1973, էջ 30:

³⁶ Տե՛ս ЛУИ ДЕ БРОЙЛЬ, По тропам науки, пер. с франц., Москва, 1962, էջ 295:

մանակակից մեկ այլ ֆիզիկոս՝ Վոլֆգանգ Պաուլին, ընդունելով, որ ո՛չ փորձապաշտոնությունը (էմպիրիզմ), ո՛չ էլ «մաքուր (կամ՝ վերացական) տրամաբանությունը» ի վիճակի չեն ճանաչողի ու իրականության միջեւ միություն հաստատել, նույնպես դիմում է ներըմբռնողությանը: Այդուհանդերձ, ֆիզիկոսը ներըմբռնումն առնչակցում է անգիտակցականի ոլորտին այնպես, ինչպես դա ընկալում էր հոգեբույժ-փիլիսոփա Կարլ Գուստավ Յունզեր: Նմանատիպ նախառացիոնալ ճանաչողության իմացաբանական օբյեկտիվ արժեքը, ըստ Պաուլիի, բխում է «տիեզերքում առկա որոշակի կարգից, որը կախված չէ մեր ինքնահաճուխությունից եւ տարբերվում է երեւույթների աշխարհից»³⁷: Ներըմբռնողական ճանաչողության հիմնական առանձնահատկությունն այն է, որ վերջինս ճանաչողին ընձեռում է համաշխարհային կեցության զարկերակին համաձայնակից դառնալու հնարավորություն: Բնականաբար, մտքի պատմության հարյուրամյակների ընթացքում փիլիսոփաները չէին կարող շրջանցել ճանաչողության այս ուղին:

Ներըմբռնողության հասկացությունը գոյություն է ունեցել եւ հնդկական, եւ հունական մտահայեցողության մեջ, դրա մասին գրել են միջնադարյան աստվածաբաններ Թոմաս Աքվինացին եւ Յակոբ Բյոմեն: Յուլյց տալով ռացիոնալ իմացության վերջնական սահմանները, Ռ. Դեկարտը գրել է. «Մերժելով սիլլոգիզմների բոլոր կապերը՝ անհրաժեշտ է լիովին վստահել ներըմբռնողությանը՝ որպես մեզ մնացած միակ ճանապարհի»³⁸: Գ. Լայբնիցն այն անվանում էր «ամենակատարյալ գիտելիք»³⁹. Գյոթեն ասում էր, որ «բանականությամբ մասնատված կեցությունը միշտ մնացորդ է տալիս»⁴⁰ եւ դրանից էր բխեցնում ներըմբռնողության անհրաժեշտությունը: Ֆիխտեն ներըմբռնողությունը համարում էր ուղիղ ճանապարհ գեպի «ես»-ի իմացություն⁴¹, իսկ, ըստ Շելինգի, նե-

³⁷ Տե՛ս В. Паули, նշ. աշխ., 1975, էջ 137:

³⁸ Տե՛ս Р. Декарт, Избранные Произведения, пер. с франц. и лат., Москва, 1950, էջ 86 շրնկ.:

³⁹ Տե՛ս В. Ф. Асмус, Проблема Интуиции в Философии и Математике: (Очерки Истории. XVII — начало XX в.), Москва, 1963, էջ 19 (այսուհետ՝ В. Ф. Асмус, նշ. աշխ., 1963՝ ձ. ք.):

⁴⁰ Ներկայացնում ենք վերոնշյալ հղման գերմաներեն ամբողջական տարբերակը՝ «Es waren verständige, geistreiche, lebhaftige Menschen, die wohl einsahen, daß die Summe unsrer Existenz, durch Vernunft dividiert, niemals rein aufgehe, sondern daß immer ein wunderlicher Bruch übrigbleibe» (հմմտ. տե՛ս JOHANN WOLFGANG VON GOETHE, Wilhelm Meisters Lehrjahre: Vollständige Ausgabe der acht Bücher, Berlin: Hofenberg, 2016, գլ. 18-րդ, էջ 228: Ի դեպ, Յ. Գյոթեի սույն երկն առաջին անգամ լույս է տեսել 1795–1796 թթ. Բեռլինում՝ ձ. ք.):

⁴¹ Տե՛ս В. Ф. Асмус, նշ. աշխ., 1963, մաս II, գլ. III, էջ 66–75 (ձ. ք.):

րը մբռնողության մեջ «օբյեկտը տրվում է միանգամայն ոչ այնպես, ինչպես մաթեմատիկայում իրազննությունը»⁴²: Դրանով նա ցանկանում էր ընդգծել, որ ներմբռնողական մտահայեցողության մեջ հաղթահարվում է այն անդունդը, որը միջնորդավորված ձեռով օբյեկտն առանձնացնում է ճանաչող սուբյեկտից:

Շելինգի հետեւելով իմացության ներմբռնողական ճանապարհի մասին ուսմունքը զարգացրել է Վ. Սոլովյովը: Նա պարզաբանում է դրա առանձնահատկությունները՝ դիտարկելով գեղարվեստական ստեղծագործության գործընթացը:

«Այդ կատարյալ պատկերները, — գրում է նա, — որոնց արվեստագետը մարմնավորում է իր ստեղծագործության մեջ, նախ եւ առաջ մասնավոր, պատահական իրականության շրջանակում դիտարկվող երեւույթների պարզ վերարտադրություններ չեն, երկրորդ՝ ոչ էլ այդ իրականությունից վերացարկված ընդհանուր հասկացություններ: Ինչպես դիտարկումը, այնպես էլ վերացարկումը կամ ընդհանրացումն անհրաժեշտ են գեղարվեստական գաղափարների զարգացման, բայց ոչ դրանց ստեղծման համար, այլապես դիտարկող եւ մտածող յուրաքանչյուր մարդ, ամեն մի գիտնական կամ մտավորական կարող էր իսկական արվեստագետ լինել: Գեղարվեստական ստեղծագործության գործընթացին քիչ թե շատ քաջատեղյակ յուրաքանչյուր ոք քաջ գիտակցում է, որ գեղարվեստական գաղափարներն ու պատկերները հիմնականում դիտարկման եւ ռեֆլեքսիայի⁴³ բարդ արգասիքներ չեն, այլ իրենց ներքին ամբողջականությամբ (արվեստագետը դրանք տեսնում է այնպես, ինչպես իրենց առնչությամբ ուղղակիորեն պնդել են Յ. Գյոթեն ու Է. Հոֆմանը) միանգամից հայտնվում են մտահայացքում, իսկ գեղարվեստական հետագա աշխատանքը հանգում է միայն

⁴² Տե՛ս Փ. ՇԵԼԼԻՆԳ, Система Трансцендентного Идеализма, пер. с нем., Ленинград, 1936, էջ 24: Ներմբռնողության տեսության զարգացման առնչությամբ առավել մանրամասն նաեւ В. Փ. АСМУС, նշ. աշխ., 1963:

⁴³ Փիլիսոփայական եզրույթ (լատ.՝ reflexio — անդրադարձում) է, որը նշանակում է կշռադատության կամ խորհրդածության տեսակ, որի դեպքում մտածողությունն անդրադառնում է իր սեփական գործունեությանն ու բովանդակությանը, մասնավորապես՝ առարկաների մասին իր պատկերացումներին՝ մտային օբյեկտներին (առավել մանրամասն տե՛ս MARTIN HEIDEGGER, Discourse on Thinking: a translation of Gelassenheit, New York, 1966: Հմմտ. նաեւ И. С. ЛАДЕНКО, Модели Рефлексии, Новосибирск, 1992, եւ А. С. ШАРОВ, Ограниченный Человек: значимость, активность, рефлексия, Омск, 2000, *ինչպես նաեւ* Г. П. ЩЕДРОВИЦКИЙ, Мышление, Понимание, Рефлексия, Москва, 2005՝ ծ. ք.):

դրանց զարգացմանն ու նյութական մանրամասնություններով մարմնավորմանը... Հետեւաբար, եթե պատկերման արվեստի առարկան չի կարող լինել ո՛չ արտաքին փորձով ընկալվող մասնավոր երեւույթը, ո՛չ էլ խոհական ռեֆլեքսիայով բխեցված ընդհանուր հասկացությունը, ապա դա կարող է լինել մտահայեցությամբ բացահայտվող իրական գաղափարը»⁴⁴:

Սակայն ինտուիտիվիզմին իրական հաղթանակ բերեց ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին սկիզբ առած մտքի զարգացումը: Ինտուիտիվիզմի ժամանակակից ձեւերի հիմնադիր կարելի է համարել մեր հարյուրամյակի առաջին երեք տասնամյակների առավել ինքնատիպ փիլիսոփաներից մեկին՝ Անրի Բերգսոնին (1859–1941 թթ.)⁴⁵:

Բերգսոնը ցույց տվեց, թե ինչպե՞ս է մեր դատողական տրամաբանությունը, «ինտելեկտը»^{46*} (կամ «բանականությունը») զարգացել բնաշրջության (այսինքն՝ էվոլյուցիայի) ընթացքում, լինելով մարդու՝ շրջակա միջավայրին հարմարվելու մի գործիք: Եթե հանուն գոյության մղվող պայքարում կենդանիներին առաջնորդում էր բնագրը, ապա «բանականությունը» զենքեր էր մատակարարում մարդուն: Այն ծառայել է նյութի վրա, նախ եւ առաջ, արտաքին ազդեցության համար, այդ իսկ պատճառով մեր կենցաղային տրամաբանությունը համակված է մեխանիկական սկզբունքներով: «Բանականությունն» ի վիճակի չէ իրերի խորքը թափանցել: Ներըմբռնո-

⁴⁴ Տե՛ս Вл. Соловьев, *նշ. աշխ.*, Т. III, 1912, 5-րդ ընթերցում, էջ 65, 68:

⁴⁵ Անրի Բերգսոնի աշխատությունների ընտրանու հինգհատորյակը՝ ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսել 1913–1914 թվականներին Սանկտ-Պետերբուրգում: Դրանում ընդգրկված չեն «Փիլիսոփայական ներըմբռնողություն» («Новые идеи в философии», вып. 1, Санкт-Петербург, 1912, էջ 1–28) եւ «Տեւականություն ու միաժամանակություն» (Петербург, 1923) երկերը: Նրա գրվածքների շարքում կոթողային է հետեւյալ աշխատությունը՝ «Les deux sources de la morale et de la religion», 9 ed., Paris, 1932, որը թարգմանված չէ ռուսերեն: Բերգսոնի [եւ նրա փիլիսոփայության] առնչությամբ առավել մանրամասն տե՛ս А. Штенберген, *Интуитивная Философия Анри Бергсона*, пер. с нем., Санкт-Петербург, 1913, եւ Г. У. Карр, *Философия Бергсона в популярном изложении*, пер. с англ., Москва, 1913, *ինչպես նաեւ* Ф. Гранжан, *Революция в философии*, пер. с франц., Москва, 1914, ու П. Блонский, *Современная Философия*, часть II, Москва, 1922, էջ 15–31: Տե՛ս նաեւ Н. О. Лосский, *Интуитивная Философия Бергсона*, 3-е изд., Петербург, 1922, եւ Т. Хилл, *Современная Теория Познания*, пер. с англ., Москва, 1965, էջ 245 շրնկ.: Հարկ ենք համարում նշել, որ նույնիսկ մարքսիստ հեղինակները «Բերգսոնի՝ բնագանցական մտածողությանն ուղղված քննադատական դիտողությունները, մեծավ մասամբ, արդար եւ դիպուկ» են համարել (տե՛ս А. С. Богомолов, *Идея развития в буржуазной философии XIX и XX веков*, Москва, 1962, էջ 179):

^{46*} Բերգսոնյան եզրույթաբանության համաձայն՝ «ինտելեկտը» զուտ բանական, խոհական [կամ դատողական] ճանաչողության մի ձեւ է:

ղուծյունն առավել լայն է, քան՝ կենցաղային տրամաբանությունը, այն, ըստ Բերգսոնի, «գուրս է գալիս բանականության սահմաններից»⁴⁷:

Բերգսոնը հիմք է ընդունում այն միտքը, ըստ որի համաշխարհային իրականությունը, ներառյալ մարդկային մտածողությունը, չընդհատվող հոսանք է, համընդհանուր մի գործընթաց: Սույն գործընթացը տրոհելով «բաղադրյալ մասերի»՝ ռացիոնալիզմը չի կարող ըմբռնել դրա էությունը, վերջինիս ներքին ազդակը: «Վերլուծությունը, — ասում է փիլիսոփան, — միշտ օգտագործում է անշարժը, մինչդեռ ներըմբռնողությունն իրեն զետեղում է շարժականության մեջ»⁴⁸: Համաձայն Բերգսոնի սահմանման ներըմբռնողությունը «բանական համակրանքի մի տեսակ է, որի միջոցով տեղափոխվում են առարկայի ներսը՝ դրանում առկա միակի եւ, հետեւաբար, աննկարագրելիի հետ միաձուլվելու համար»⁴⁹:

Ներըմբռնողության հասկացության հետ սերտորեն առնչվում է հավատքը, որը մարդու այնպիսի մի ներքին վիճակ է, որի առկայության դեպքում նա, առանց զգայարանների կամ մտքի տրամաբանական ընթացքի միջնորդության, անբացատրելի վստահությանմբ համոզված է ինչոր բանի արժանահավատության մեջ: Այսպիսով, մենք, անկախ մեր գիտակցությունից, հավատում ենք նյութի գոյությանը՝ առանց որեւէ ապացույցի: Ս. Բուլգակովը նույնիսկ հավատն ուղղակիորեն նույնացնում էր ներըմբռնողության հետ⁵⁰:

Թերեւս Բերգսոնի ուսմունքի ամենախոցելի կետը նրա՝ ներըմբռնողության իմաստավորման գործընթացում վերացական մտածողության դերակատարության վճռական հերքումն էր: Չնայած որ վերջինս իրավացիորեն մատնանշում էր «ինտելեկտի» օգտապաշտական բնույթը, այնուամենայնիվ, նա թերագնահատեց բանականության կարեւորությունն ու գորությունը: Միանգամայն ակնհայտ է, որ մարդը չի կարող հրաժար-

⁴⁷ Տե՛ս А. БЕРГСОН, նշ. աշխ., 1914, էջ 160: Սույնի առնչությամբ Բերգսոնը նշում էր, որ փիլիսոփայական յուրաքանչյուր համակարգ խարսխված է «սկզբնական ներըմբռնողության» վրա, եւ հետո է միայն մտածողն արդեն փորձում բանականորեն ձեւակերպել այն: Համաձայն Բերգսոնի տեսակետի՝ սույն «ձեւակերպումն» անխուսափելիորեն աղքատացնում է ուսմունքը եւ, վերջիվերջո, հանգեցնում այն իրողության, որ տվյալ համակարգն այլեւս բավականություն չի պատճառում հենց հեղինակին (տե՛ս նույնի *Философская интуиция*, «Новые идеи в философии», вып. 1, Санкт-Петербург, 1912, էջ 3):

⁴⁸ Հմմտ. տե՛ս նույնի *Творческая эволюция. Материя и память: Введение в метафизику*, Минск, 1999, էջ 1197 (ծ. ք.):

⁴⁹ Տե՛ս նույնի *Собрание сочинений*, т. 5, Санкт-Петербург, 1914, էջ 6:

⁵⁰ Տե՛ս С. Булгаков, *От марксизма к идеализму*, Санкт-Петербург, 1903, էջ 203:

վել գրանից, ինչպես նաև հասկացությունների համակարգից: Նրա իմացությունն ամբողջական բնույթի է, որում սերտորեն փոխկապակցված են ընկալման բոլոր երեք մակարդակները:

Այդ իսկ պատճառով ինտուիտիվիզմի ուսմունքն սեւեռված չմնաց Բերգսոնի [գաղափարների] վրա, այլ շարունակեց կատարելագործվել ու զարգանալ⁵¹: Այդուհանդերձ, իր բոլոր մակարդակներում՝ լինի դա Հուսերլի «մտադրությունը», թե՛ գոյութենապաշտների «լուսավորությունը», պահպանվում է խորքային մտահայեցողության առաջնահերթությունը, որը մարդու առջեւ բացահայտում է իրերի ներքին էությունը: Հենց «համակերպության», ներըմբռնողական կարողությունների զարգացման հիմքում է գտնվում ելքը իմացաբանական այն զնդանից, որտեղ մարդուն փորձում էին բանտարկել Դ. Հյունը, Ի. Կանտը եւ պոզիտիվիստները:

Այն, որ Կանտը մարդկային իմացության սահմանների ու հնարավորությունների վերաբերյալ հարցը զետեղեց առհասարակ փիլիսոփայության առանցքում, նրա մեծագույն արժանիքն է: Սակայն կանտականության հիմնական թերությունն այն էր, որ վերջինս բանականության՝ իր «անատոմիական [կամ կազմաբանական] թատրոնում» դիտարկում էր ոչ թե կենդանի դինամիկ իմացությունը, այլ, համաձայն Վ. Էնսի դիպուկ բնորոշման՝ «մտքի սխեմատիկ դին»: Հատկապես այդ պատճառով էր, որ Կանտը կանգ առավ կես ճանապարհին՝ մարդու համար անհնարին համարելով «առարկան իր մեջ» ճանաչելու գործընթացը: Նա [մարդկային] հոգու խորքերում շտեսավ այն անսպառ ուժերը, որոնք ունակ են պատռելու էմպիրիկ [այսինքն՝ փորձապաշտական] վարագույրը⁵²:

Միայն անմիջնորդական փորձառություն, վերացական մտածողության եւ ներըմբռնողության անքակտելի համակցության արդյունքում է ծնունդ առնում իմացության բարձրագույն անբաժանելի տեսակը, որի ներսում, համաձայն Ն. Բերդյաևի սահմանման, գերիշխում է «Մեծ Բա-

⁵¹ Բերգսոնից հետո ինտուիտիվ [կամ ներըմբռնողական] փիլիսոփայությունը զարգացել է Ն. Օ. Լոսսկու, Ս. Ա. Լեվիցկու եւ այլոց աշխատություններում: Ինտուիտիվիզմին սերտորեն կապված է նաև Էդմունդ Հուսերլի, Էդուար Լե Ռուայի, Հանս Դրիշի, Ալֆրեդ Ուայթհեդի, Ջորջ Սանտայանայի, Օսվալդ Շպենգլերի եւ էքզիստենցիալիստներից [կամ գոյութենապաշտներից] ոմանց փիլիսոփայությունը:

⁵² Տե՛ս Վլ. Էրն, Гносеология Владимира Соловьева, Сборник о Вл. Соловьеве, Москва, 1911, էջ 129–206, ինչպես նաև՝ Ե. Трубецкой, Метафизические предположения познания: опыт преодоления Канта и кантианства, Москва, 1917:

նականությունը»⁵³: Նա չի սահմանափակվում դատողության նեղ շրջանակով եւ ի վիճակի է բարձրանալ պարագոքսային, անտինոմիական (հակօրինական) ոլորտ: Այն իր մեջ ներառում է փոքր բանականության բոլոր ուժերը, որպես ամբողջություն՝ մասերը: Հենց սույն իրողությունն է թույլ տալիս նրան սեփական հայացքը բնության տեսանելի երեւոյթներինց ուղղել դեպի կեցության սահմանագիծ:

Շարունակությունը՝ հաջորդիվ:

Ռուսերենից թարգմանությունը՝
ՅՈՒՆԿ ՍԱՐԿՍՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ



⁵³ *Скѹ* Николай Бердяевъ, *Sub specie aeternitatis: Опыты философские, социальные и литературные* (1900–1906 г.), Санкт-Петербург, 1907, էջ 435 (ծ. ք.):



ԱՇԽՈՒՆՋ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ԿԳՄՄՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԳԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ
(ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ
ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՆ ՀԱՍԱՐ)¹

Քորզն ավանդաբար լայնորեն օգտագործվել է կրոնական արարողություններում եւ եկեղեցու ներքին հարդարանքում: Այդ ու նմանատիպ այլ կարիքների համար մեծ հեղինակութուն վայելած վանական խոշոր համալիրներն ու եկեղեցիները կիրառում էին նվիրատվություններից ստացված ու սեփական գործատներում հյուսված գորգերը: Դրանց հիման վրա էլ վանական խոշոր համալիրներում՝ այդ թվում նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ժամանակի ընթացքում կազմավորվել են գորգերի հավաքածուները: Բայց աշխարհաքաղաքական ծայրահեղ անբարենպաստ պայմանների բերումով՝ այդ հավաքածուները պարբերաբար կողոպտվել են կամ էլ կողոպտվելուց խուսափելու համար նվիրաբերվել են տվյալ տարածաշրջաններում իշխողներին: Այդ ամենի պատճառով էլ գորգերի ներկայիս հավաքածուն հիմնականում կազմված է 1940-ական թվականներից սկսված հայրենիք վերադարձած սփյուռքահայերից ու սփյուռքի տարբեր կազմակերպություններից ստացված նվիրատվություններից: Զգալի թվաքանակ են կազմում նաեւ «Հայգորգ» արտադրական միավորումից ու անհատ քաղաքացիներից ձեռք բերված գորգերը: Նոր հավաքածուում պահպանվել է նաեւ Մայր Աթոռում մինչ խորհրդայնացումը եղած գորգերի հավաքածուից շուրջ մեկուկես տասնյակ նմուշ: Այստեղ ներկայացված են հիմնականում պատմական Հայաստանի արեւելյան նահանգների գորգագործական կենտրոնները՝ Արցախը, Այու-

¹ Ստացվել է 18.01.2023, գրախոսվել է 28.01.2023: էլ. հասցե՝ ashkhunjpoghosyan@gmail.com:

նիքը, Վասպուրականը, Ուրմիա լճի ավազանի հայաբնակ գորգագործական կենտրոնները եւ այլն: Բավականին շատ են նաեւ փոքրասիական հայ գաղթավայրերին վերաբերող գորգերը: Առանձին խումբ են կազմում պարսկական եւ մի շարք այլ հանրույթներին վերաբերող գորգերը: Տիպաբանական առումով հավաքածուում կան բուսածաղկային, խորանավոր, երկրաչափական խոշոր հորինվածքներով, ինչպես նաեւ աստղազարդերով ու վիշապի ոճավորումներով բնորոշվող գորգեր, որոնք ընդհանուր առմամբ հնարավորություն են ընձեռում որոշակի պատկերացում կազմելու հայոց գորգագործական մշակույթի մասին:

Մայր Աթոռի թանգարաններում պահվող պատմամշակութային արժեքների թվում իր առանձնահատուկ տեղն ունի գորգերի ու կարպետների հավաքածուն: Հայտնի է, որ գորգն ու գործվածքի այլ տեսակները լայնորեն օգտագործվել են եկեղեցական արարողություններում եւ եկեղեցու ներքին հարդարանքում²: Գորգը նաեւ հայոց Առաքելական Եկեղեցու առաջնորդի իշխանության խորհրդանիշն է: Ավելին՝ հայոց գրավոր սկզբնաղբյուրներում գորգագործական մշակույթին վերաբերող տեղեկություններին քաջատեղյակ Հարություն Քուրտյանը ենթադրում է, որ Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր դասերի համար էլ նախատեսված են եղել իրենց կարգին համապատասխան գորգեր³: Ըստ էության՝ եկեղեցու կարիքների բավարարման համար վանական խոշոր համալիրներին կից գոյություն են ունեցել գորգագործական արհեստանոցներ: Մասնավորապես՝ նման մի արհեստանոց գոյություն է ունեցել պատմական Հայաստանի Ուտիք նահանգի Գարդման գավառի Փիփ գյուղի մերձակայքում գտնվող Չարեքի վանքի մենաստանում, որտեղ էլ 1731 թ. գործել են Աղվանից Ներսես կաթողիկոսին վերագրվող հայտնի գորգը: Դա շուրջ երեք հարյուրամյա պատմամշակութային բացառիկ արժեք է, որի գեղազարդման համակարգում առանցքայինը կենտրոնական դաշտում պատկերված երկայնաձիգ հինգ հորինվածքներն են եւ գորգադաշտի ծայրերում պատկերված վարսանդավոր խոշոր բուսանախշերը՝ կենաց ծառի ոճավորումները³: Ամեն դեպքում, այս գորգը վկայում է, որ մենաստան-

² Ավելի մանրամասն տես Յ. ՔՈՒՐՏՅԱՆ, Գորգը հայոց մօտ, Վեներտիկ, Սբ. Ղազար, 1947, էջ 44:

³ Հ. ՔՈՒՐՏՅԱՆ, նշ. աշխ., էջ 68. տես նաեւ՝ Ս. ԴԱՎԹՅԱՆ, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երեւան, 1981, էջ 128–129. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ, Արցախյան ծագումով երկու գորգերի մասին, Համազգային. Արցախի մշակութային-գրական տարեգիրք, Երեւան–Ստեփանակերտ, 2019, էջ 19–27, նույնը՝ Չարեքա անապատում

ներում ապաստանած կանայք եւ աղջիկներն զբաղվում էին նաեւ եկեղեցու ներքնատեսքին ու հոգեւորականների հանդերձանքին անհրաժեշտ ասեղնագործություններ ու գործվածքի այլ տեսակներ պատրաստելով:

Եկեղեցիներ, մանավանդ լայն հեղինակություն վայելած վանական խոշոր համալիրներ ու բնականաբար Մայր Աթոռ գորգեր եւ այլ գործվածքներ մուտք էին գործում նաեւ նվիրատվությունների միջոցով:

Այս առումով բացառիկ սկզբնաղբյուր է Ակոռու սրբոյն Յակոբայ վանքի նվիրատվությունների մատչանը, ուր գրանցված են 1670—80-ական թթ.⁴ ընդամենը մեկուկես տասնամյակի ընթացքում նվիրաբերված առարկաները, որոնց թվում հիշատակված են նաեւ տասնյակ գորգեր ու կարպետներ⁴: Ակնհայտ է, որ խոշոր եկեղեցիներն ու վանքերը, եւ մանավանդ Մայր Աթոռը, շատ ավելին ու արժեքավորը պետք է ստացած լինեին:

Անտարակույս, ժամանակի ընթացքում եկեղեցում գործածված գորգերից, ստացված նվիրատվություններից, եկեղեցու գործատներում գործված գորգերից եւ այլ ճանապարհներով ձեռք բերված գորգերից ձեւավորվել են հավաքածուներ, որոնք պահվում էին գանձատուն-թանգարաններում:

Յավոք, ռազմաքաղաքական անընդմեջ վայրիվերումների պայմաններում հայոց աշխարհը պարբերաբար ենթարկվել է ավարառություն, ինչի հետեւանքով էլ վանքերն ու եկեղեցիները զրկվել են ժամանակի ընթացքում ստեղծված մշակութային արժեքների՝ այդ թվում նաեւ գորգերի հավաքածուներից: Նման հավաքածուների գոյություն ու դրանց ճակատագրերի մասին սկզբնաղբյուրներում կան բավականաչափ տեղեկություններ: Դրանց թվում ցայտուն օրինակ է Ուռհայի եւ Եդեսիայի հայկական եկեղեցիներից խաչակիրների կողոպտած «արքայական գորգերին» վերաբերողը⁵: Բացի այդ, վանքերում պահվող գորգերն օգտագործվում էին որպես թանկարժեք նվերներ, որոնց միջոցով հնարավոր է եղել որոշ դեպքերում խուսափել կողոպուտների ենթարկվելու

1731 թվականին գործված գորգի պատմամշակութային նշանակության մասին, «Գիտական հոդվածների ժողովածու», Գավառի պետական համալսարան, 7, 2019, էջ 132—147:

⁴ Հ. ՓԱՓԱՋՅԱՆ, Ակոռու ս. Հակոբայ վանքի քյոթուկը, Բանբեր Մատենադարանի, 12, Երեւան, 1977, էջ 191—215:

⁵ ԱՆԱՆՈՒՆ ԵՂԵՍՅԱՆ, Ժամանակագրություն, թարգմ. բնագրից, առաջ. եւ ծանոթ.՝ Լ. Տեր-Պետրոսյանի, Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, ասորական աղբյուրներ, Բ., Երեւան, 1982, էջ 110—11:

վտանգից: Օրինակ՝ Ղուկաս Կարնեցին, ներկայացնելով 1794–1795 թթ. Իրանի Աղա Մուհամեդ Ղաջար շահի Կովկաս կատարած արշավանքի հետեւանքները, տեղեկացնում է, որ վանքն ասպատակություններից զերծ պահելու համար նա ստիպված է եղել նվերներ տալ շահին ու նրա մերձավորներին, որով էլ «անտանելի վնասակրութիւն եղեւ եւ ի գորգոյ եւ յայլոց դատարկեցաք»⁶:

Սակայն հայտնի է, որ եղել են նաեւ հակառակ գործընթացներ, մասնավորապես՝ այդ դեպքերից շուրջ կես դար առաջ էլ գորգերի պակասը լրացնելու համար Քիրմանի նահանգի խանը Նադիր Շահի հրամանով ամենաընտիր գորգերն է ուղարկել էջմիածին⁷:

Ըստ էութեան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավաքածուի հերթական կազմավորումն սկսվել է ԺԹ. դարի 30-ական թվականներից, երբ Արեւելյան Հայաստանում հաստատվեց խաղաղություն, ու տարածաշրջանի տնտեսական ու հասարակական բնականոն զարգացումների համար ստեղծվեցին համեմատաբար նպաստավոր պայմաններ: Ընդ որում՝ եղած տեղեկությունները ցույց են տալիս, որ հավաքածուն ձեւավորվել է ինչպես նվիրատվությունների, այնպես էլ նպատակային գնումների միջոցով: Եւ եղած տեղեկությունները ցույց են տալիս, որ հավաքածուն ձեւավորվել է ինչպես նվիրատվությունների, այնպես էլ նպատակային գնումների միջոցով, օրինակ՝ 1873 թվականին Արցախի թեմի առաջնորդ Սարգիս Զալալյանի ծախքով տեղում գնվել եւ էջմիածնի վանք է ուղարկվել երեսուն մեծ ու փոքր գորգ⁸: Մակար Բարխուդարյանցը վկայում է ԺԹ. դարի առաջին քառորդում Կոթիի գյուղացի Պ. Տեր-Սահակյանցի՝ էջմիածնի վանքին նվիրած գորգերի մասին, որոնց համար նա երկու անգամ արժանացել էր Եփրեմ կաթողիկոսի շնորհակալական կոնդակին⁹: Այդ ամենի արդյունքում էլ ԺԹ. դարի վերջերին Մայր Աթոռի թանգարաններում արդեն կազմավորվել էր գորգերի բավականին հարուստ հավաքածու, որի մասին, որպես ականատես, հիշատակել է ռուս նշանավոր հրապարակախոս, ազգագրագետ ու ճանապարհորդ Եւգենի Մարկովը:

⁶ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ, Բնագրեր, Իրվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, հտ. Ա. 1780–1785, աշխատ.՝ Վ. Գրիգորյանի, Երեւան, 1984, էջ 30:

⁷ ԲԱԿՈՒՐ, Գյուլիստան Նամե, գիրք առաջին(մ. թ. ա 750–մ. թ. 1828), Մեծ կուանք, Երեւան, 2005, էջ 184:

⁸ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑԻ, նշ. աշխ., էջ 30:

⁹ ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՅ, Աղվանից աշխարհ եւ դրացիք: Արցախ, Երեւան, 1999, էջ 358:

Ըստ այդմ՝ նա առանձնակի կարեւորել է Վեհափառի գահավորակի տակ փռելու համար մետաքսե շքեղ, մորեգույն գորգը, որը Մայր Աթոռի պատվերով գործել էին Կոստանդնուպոլսում¹⁰: Թեեւ ներկայիս հավաքածուում չկա այդպիսի հիմնագույնով մետաքսե գորգ, բայց ենթադրում ենք, որ դա գործել են Հերեկեի սուլթանական գորգագործական արտադրամասում, որտեղ, ի դեպ, ինչպես վարպետներն ու նկարիչները, այնպես էլ գորգագործուհիների մեծագույն մասը հայեր էին:

Դժբախտաբար, Հայաստանի խորհրդայնացման ու հետագայում էլ Մայր Աթոռի դեմ եղած հալածանքների արդյունքում հերթական անգամ ցաք ու ցրիվ եղավ այդ հավաքածուն: Սույն ցուցակում ներկայացված գորգերի թվում սակավաթիվ են այն նմուշները, որոնք, ըստ երեւույթին, Մայր Աթոռում կային նախքան խորհրդայնացումը: Ցավոք, եղած նյութերը հնարավորութուն չեն ընձեռում պարզելու Մայր Աթոռում դրանց հայտնվելու ժամանակն ու հանգամանքները:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գորգերի հավաքածուի ստեղծման վերջին շրջանն սկսվում է 1940-ական թվականների կեսերից, երբ սկսվեց զանգվածային հայրենադարձությունը, սերտացավ Հայրենի—Սփյուռք ու մանավանդ՝ Սփյուռք—Մայր Աթոռ կապը, ու դրա արդյունքում էլ մշակութային այլ արժեքների թվում անհատ սփյուռքահայերից գորգեր նվիրաբերվեցին Մայր Աթոռին: Ընդ որում՝ նկատելի է, որ այս շրջանում ստացված գորգերի մեծ մասը վերաբերում է հյուսիսարեւմտյան Իրանի գորգագործական՝ այդ թվում Չհարմահալի, Բուրվարի, Լիլահանի, Ուրմիա լճի ավազանի հայաբնակ գորգագործական կենտրոններին:

1960—80-ական թթ. հավաքածուն հարստացավ «Հայգորգ» արտադրական միավորման նկարիչների գծանկարներով ստեղծված գորգերի նմուշներով, որոնց թվում առանձնահատուկ տեղ ունեն հայոց գորգագործական մշակույթի միջնադարյան ավանդույթների՝ մասնավորապես վիշապագորգերի հիման վրա խորհրդահայ լավագույն գորգանկարիչներից մեկի՝ Հակոբ Քեշիշյանի գծանկարներով ստեղծվածները: Բացի այդ՝ 1970—90-ական թվականներին հավաքածուն հարստացել է նաեւ անհատ քաղաքացիներից կատարված գնումների միջոցով: Այդ շրջանում ձեռք բերվածներից կարեւոր են Արցախի եւ Սյունիքի գորգագործական կենտ-

¹⁰ ЕВГЕНИЙ МАРКОВ, Зимнее путешествие по горам Кавказа, Русская Армения, http://www.vostlit.info/Texts/Dokumenty/Kavkaz/XX/1900—1920/Markov_E/text1.htm

րոններին վերաբերող մի շարք նմուշներ՝ մասնավորապես «սումախ» տեսակի կարպետը, «Բարգուշատ» տիպին պատկանող գորգի հատվածը, «Որոտան» տիպին պատկանող թվակիր, հայատառ հիշատակարանով գորգը եւ այլն:

Հավաքածուի բովանդակության առումով հարկ է արձանագրել, որ չնայած բավականին պատկառելի քանակությանը, այնուամենայնիվ այն ամբողջական պատկերացում չի տալիս հայոց գորգագործական մշակույթի տեսակների ու կենտրոնների մասին: Բանն այն է, որ նվիրատվությունների միջոցով ստացվածները բնականաբար նվիրատուի ճաշակին եւ ունեցած հնարավորությունների սահմաններում էին, ուստի նվիրաբերված գորգերն էլ միշտ չէ, որ վերաբերում են հայոց գորգագործական մշակույթի ավանդույթներին: Ամեն դեպքում հարկ է շեշտել, որ ներկայիս հավաքածուում առանձնակի պատմամշակութային նշանակություն ունեն ԺԸ.—ԺԹ. դդ. առաջին կեսին վերաբերող գորգերը, որոնք, ամենայն հավանականությամբ, Մայր Աթոռում կային մինչ 1920 թվականը: Դրանք ինչպես ժամանակագրական, այնպես էլ տիպաբանական առումով առանձնահատուկ կարեւորություն ներկայացնող սկզբնաղբյուրներն են հայոց գորգարվեստի պատմության ուսումնասիրման համար:

Մայր Աթոռի թանգարաններում պահվող պատմամշակութային արժեքների պահպանման ու ցուցադրման համալիր ծրագրերի թվում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ն նպատակադրվել է գորգերի հավաքածուի հիման վրա ստեղծել հայոց գորգի թանգարան: Մեր հետազոտությունների՝ մասնավորապես հավաքածուում եղած գորգերի գիտական անձնագրերի կազմման արդյունքում ակնհայտ դարձավ, որ հավաքածուի մեծագույն մասը չի համապատասխանում նախատեսվելիք ցուցադրության պահանջներին: Դրանց զգալի մասը, ըստ էության, պարսկական գորգեր են, մյուսներն ուղղակի բնորոշվում են տեխնիկատեխնոլոգիական, գուներանգային եւ գեղազարդման համակարգերին վերաբերող որակական ցածր հատկանիշներով: Մի զգալի մասն էլ բնորոշվում է վիճակի պահպանվածության ցածր մակարդակով:

Հայոց գորգագործական մշակույթը հնարավորինս ամբողջական ներկայացնող թանգարան ստեղծելու Գարեգին Բ.-ի ծրագրի իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ սկսվեց ապագա ցուցադրությանն անհրաժեշտ գորգերի ձեռք բերման նոր գործընթաց: Դրա ար-

դյունքում իրականացված ձեռքբերումներով մասամբ լրացված է հավաքածուում հայոց ավանդական տեսակներին վերաբերող գորգերի պահասը¹¹:

2008–2014 թվականներին Մայր Աթոռը գնումների միջոցով ձեռք է բերել վերը նշված բոլոր պահանջներին համապատասխանող ութ գորգ, որոնք բոլորն էլ պատմամշակութային տեսակետից կարելուր նշանակութուն ունեցող արժեքներ են: Նոր ձեռք բերվածները պատկանում են հայոց գորգերի այն տեսակներին ու նաեւ այն կենտրոններին, որոնց վերաբերող նմուշները բացակայում էին Մայր Աթոռի հավաքածուներում: Ամեն դեպքում, դրանց ձեռքբերումը պայմանավորված էր Մայր Աթոռի տարածքում կազմակերպվելիք գորգի ապագա թանգարանի ցուցադրութունում հայոց ավանդական գորգարվեստը հնարավորինս ամբողջական տեսքով ներկայացնելու անհրաժեշտությամբ:

Վերջին ձեռքբերումների մասին խոսելուց հարկ ենք համարում անդրադառնալ ամենավերջին ձեռքբերմանը: Խոսքը ժէ.—ժԸ. դդ. առաջին կեսին վերաբերող՝ մետաքսաթելով գործված ասեղնագործ գորգիկի մասին է: Այն արված է ասեղնագործական բարդ եղանակներով ու այդ առումով ներկայացնում է այդ ոլորտի զարգացման բարձր մակարդակն ուշմիջնադարյան Հայաստանում¹²: Դրա գեղազարդման համակարգի հիմնական տարրը «ձողի-Փամբակ» տեսակի գորգերին բնորոշ «Ծաղկած խաչ» հորինվածքն է: Այն լրացված է դասական վիշապագորգերի գեղազարդման համակարգերին բնորոշ մանրակներով, որոնք, ի դեպ, ներկայացված են նաեւ վերը նշված դարաշրջանին վերաբերող այլ ասեղնագործ գորգիկների գեղազարդման համակարգերում: Մեր պրպտումները հնարավորութուն են տվել եզրակացնելու, որ խնդրո առարկա ձեռքբերումն ստեղծվել է Հյուսիսային Արցախի մենաստաններում եւ ներկայացնում է Արցախի մելիքական տներում եւ վանական համալիրներում ասեղնագործական մշակույթի ավանդույթները, որոնք ըստ էության, համահունչ են այդ նույն դարաշրջանին վերաբերող գորգարվեստի ավանդույթներին:

Մայր Աթոռի գորգերի հավաքածուն պարունակում է պատմական Հայաստանի ու մերձակա տարածաշրջանների գորգագործական տար-

¹¹ Այս մասին տես Ա. ՊՈՂՈՍՅԱՆ, Մայր Աթոռի գորգերի հավաքածուների նոր համարումների մասին (2008–2014 թթ), «էջմիածին», 2014, Ը., էջ 127–137:

¹² Անդ, էջ 134–136:

բեր կենտրոններին վերաբերող շուրջ երկու հարյուր հիսուն գորգ եւ կարպետ: Այստեղ կան հայկական եւ պարսկական հանգույցներով գործված գորգեր, որոնք առանձնանում են նաեւ գունային ինքնատիպ լուծումներով եւ յուրահատուկ գեղազարդման համակարգերով: Այնուամենայնիւ, հավաքածուի կարեւորման հարցում գոյություն ունի մի հիմնական բացթողում՝ բացակայում են այս կամ այն ճանապարհով ձեռք բերված գորգերի վերաբերյալ ծագումնաբանական նախնական տեղեկութունները, որոնք հնարավոր էր պարզել ձեռք բերման պահին ու արձանագրել համապատասխան գրանցամատյաններում: Այդ հանգամանքը նկատելիորեն բարդացնում է դրանց ուսումնասիրման հետ կապված հարցադրումների՝ մասնավորապես՝ ծագումնաբանության հետ կապված խնդիրների պարզաբանումը:

Մեր հետազոտութուններից պարզվել է, որ գորգագործական կենտրոնների առումով առավել հարուստ են ներկայացված պատմական Հայաստանի արեւելյան նահանգների գորգագործական կենտրոնները՝ Արցախը, Սյունիքը, Ղարադաղ-Արաքսպարը, ինչպես նաեւ Վասպուրականի արեւելյան գավառները:

Բավականաչափ հարուստ են ներկայացված Խոյի, Ուրմիա լճի ավազանի ու մասնավորապես Սալմաստի, Աղբակի ու Սոփուղ Բուլաղի հայաշատ գորգագործական կենտրոնները: Դրանց վերաբերող նմուշները՝ ուղեգորգերը, փոռցներն ու պատի զարդերը, կարեւոր սկզբնաղբջուրներ են ԺԸ.—ԺԹ. դդ. հայոց ու նաեւ առաջավորասիական գորգագործական մշակույթի ուսումնասիրման, գորգերի տիպաբանման ու դրանց ավանդույթների տարածաշրջանային տարածման հարցերի ուսումնասիրման համար: Բավականին նմուշներ վերաբերում են հարավարեւելյան Կովկասի հայաշատ գորգագործական կենտրոններին:

Գորգերի հավաքածուում կան նաեւ Արեւմտյան Հայաստանում եւ Փոքր Ասիայի հայաշատ բնակավայրերում ԺԹ. դարի երկրորդ կեսին ու Ի. դարի սկզբներին գոյություն ունեցած գորգագործական մանր ձեռնարկութուններում գործված գորգերի նմուշներ: Դրանք հիմնականում ներկայացնում են Իկոնիայի, Կեսարիայի, Սպարտայի, Գյորգեսի ու գորգագործական մի շարք այլ կենտրոնների ավանդույթները, որոնցում իրենց երեւելի ներդրումն ունեն նաեւ հայերը: Փոքրասիական գորգագործական կենտրոններին վերաբերողների թվում են նաեւ այդ տարածաշրջանի հայաբնակ վայրերում, ինչպես նաեւ Արեւմտյան Հայաստա-

նի քաղաքներում գոյություն ունեցած որբանոցներում գործված գորգերի նմուշները: Հայտնի է, որ որբանոցների ստեղծման գործընթացները հատկապես լայն ծավալ ստացան 1894—95 թվականներից, ու այդ հաստատություններում էլ, ի շարս այլ մասնագիտությունների, որբերին ուսուցանում էին նաև գորգագործության արվեստը: Հայ որբերի ձեռքերով գործված՝ Մայր Աթոռում պահվող գորգերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու դրանց գեղարվեստական ու տեխնոլոգիական հատկանիշների մասին:

Հավաքածուում բավականին հարուստ է «Հայգորգ» արտադրական միավորման ձեռնարկություններում գործված գորգերի բաժինը: Դրանք հիմնականում Հակոբ Քեշիշյանի ու նրա աշակերտների՝ Մակար Մնացականյանի, Միլետա Վարդանյանի, Նորայր Մխեյանի գծանկարներով ստեղծված գորգերն են, որոնք հիմնականում կրում են հայոց գորգագործական մշակույթի ավանդույթներն ու նրանց հետ կազմում մեկ ամբողջություն:

Ընդհանուր առմամբ՝ հավաքածուի գորգերն աչքի են ընկնում տեսակների բազմազանությամբ ու այս կամ այն չափով ներկայացնում են հայոց բնորոշ գորգերի բոլոր խմբերը:

Մայր Աթոռի գորգերի հավաքածուում պահվում են նաև պարսկական, թուրքմենական եւ էթնիկական այլ հանրույթներին վերաբերող նմուշներ:

Ստորեւ ներկայացնում ենք հավաքածուում ներկայացված գորգերի խմբերի, դրանց վերաբերող տեսակների ու դրանց տարածաշրջանային համառոտ նկարագիրը:

Ա. ԽՈՐԱՆԱՎՈՐ ԳՈՐԳԵՐ

Հավաքածուում կան այս խմբում ներառված բոլոր տեսակներին պատկանող նմուշներ: Ընդ որում՝ ավելի մեծ թիվ են կազմում փոքրասիական հայաբնակ գորգագործական կենտրոններում, ինչպես նաև Հերեկեի սուլթանական Ֆաբրիկայում գործված խորանավոր գորգերը, որոնք բնորոշվում են գորգադաշտի վերին մասի կոնաձեւ խորանով, եզրերին պատկերված երկու սյունով ու խորանի կենտրոնում ներկայացված շահով: Գորգերի այդ տեսակը անվանակոչված է սյունազարդ եզրույթով: Մայր Աթոռում պահվող այս տեսակի մի նմուշ, որն ամենայն

հավանականությունը գործել են Հերեկեում, աչքի է ընկնում կատարման բարձր որակով ու գեղազարդման մանրակների եւ գուներանգների կատարյալ ներդաշնակությունը (պատկեր 1): Այս տեսակին պատկանող հնամենի նմուշ է 1202 թվականին գործված Վիեննայի թանգարաններից մեկում պահվող հայատառ թվակիր հիշատակարանով «Եռախորան» հանրահայտ գորգը:

Այս խմբի կազմում ներառված գորգերի մի տեսակ էլ բնորոշվում է գմբեթավոր գորգադաշտով: Դրանք, որպես առանձին տեսակ, տարբերակել ենք գմբեթավոր եզրույթով: Այս դեպքում գորգադաշտի վերին մասն ընդգծվում է գմբեթաձեւ կամ կամարաձեւ լայն գունաժապավենով, իսկ կենտրոնական հատվածում էլ ներկայացվում է տարատեսակ մանրակներով լրացված մի բարդ հորինվածք: Այս տեսակին է պատկանում 2010 թ. ձեռք բերված մի ուշագրավ նմուշ, որն ըստ ձեռք բերման ընթացքում գրի առված տեղեկությունների ու նաև մեր կատարած տեխնիկա-տեխնոլոգիական հետազոտությունների՝ գործել են 1910-ական թվականներին Հյուսիսային Արցախում: Դրա գեղազարդման համակարգն աչքի է ընկնում մի կարեւոր առանձնահատկությամբ. խորանները կրկնակի են, զբաղեցնում են գորգադաշտի ծայրերն ու ներդաշնակ են գորգադաշտի կենտրոնում պատկերված բարդ հորինվածքին ու դրա մանրակներին¹³:

Խնդրո առարկա խմբին պատկանող գորգերի թվում գեղազարդման համակարգի հարստությունը առանձնակի նշանակություն ունեն խորանավոր ու բուսածաղկային հորինվածքների համադրությամբ գեղազարդվածները: Դրանք տարբերակված են Գանձաառ եզրույթով: Այս տեսակին պատկանող հնամենի ու մինչ մեր ժամանակները պահպանված նմուշ է Հյուսիսային Արցախի Չարեքա վանքի մենաստանում 1731 թվականին գործված՝ վերը հիշատակված գորգը: Այդ գորգի գեղազարդման ավանդույթները լայն տարածում են ստացել հատկապես փոքրասիական գորգագործական կենտրոններում: Դրանց ազդեցությամբ ստեղծված փոքրասիական գորգերը մասնագիտական շրջանակներում առավելապես հայտնի են գորգագործական մշակույթի նշանավոր կենտրոններ Լադիկ եւ Գյորգես բնակավայրերի անվանումներով: Այս տեսակի գորգերի դաշտը նույնպես խորանավոր է, բայց ստորին մասն ամբողջությամբ

¹³ Մայր Աթոռի գանձատուն-թանգարան, գ/հ 35:

գեղազարդված է կակաչներ նախշերից ու լրացուցիչ զարդերից կազմված եւ որոշակի ծիսամոգական խորհուրդ ներկայացնող հորինվածքներով (պատկեր 2): Հիմնականում հենց այս առումով էլ այս տեսակին պատկանող գորգերի գեղազարդման ավանդույթներն անմիջականորեն առնչվում են Գանձասար գորգի հետ:

Բ. ԽԱԶԱԶԱՐԴՈՎ ԳՈՐԳԵՐ

Մայր Աթոռի թանգարաններում այս խմբին պատկանող գորգերը համեմատաբար սակավաթիվ են, եւ նաեւ այս դեպքում է, որ հավաքածուն ունի նոր ձեռք բերումների կարիք: Այս խմբին պատկանող մի ուշագրավ նմուշ է 2008 թվականին ձեռք բերված Լոռի-Փամբակ ենթախմբին պատկանող Լոռի տեսակի տարբերակներից մեկը: Այն ունի հայատառ թվակիր հիշատակարան, ըստ որի՝ գործել են 1911 թվականին եւ վերաբերում է Հյուսիսային Արցախի՝ մասնավորապես Գարդմանի գորգագործական կենտրոններին (պատկեր 3): Խաչազարդն այստեղ ներկայացված է առաջին եւ երրորդ բազմանիստներում եւ ի տարբերություն ենթախմբում ներառված մյուս տեսակներին բնորոշ խաչազարդերի՝ համեմատաբար պարզ է, ու քիչ են լրացուցիչ մանրակները: Կարծում ենք, որ այն գործել են այդ տարածաշրջանի գորգագործական մշակույթի հանրահայտ կենտրոն Վերին շեն գյուղում: Գորգին գիտական ու պատմամշակութային մեծ կարեւորություն են տալիս գորգագաղաթի ծայրերում եղած «1901 թ. ապրիլի 16» եւ «Սիմօն Մայան Բագալեաց» իրար լրացնող, թվակիր, հայատառ հիշատակարանները: Այդ ամենով էլ պայմանավորված՝ խնդրո առարկան կարեւոր սկզբնաղբյուր է հայոց ու մասնավորապես Գարդմանի գորգագործական ավանդույթների ուսումնասիրման, ինչպես նաեւ Լոռի-Փամբակ ենթախմբին պատկանող գորգերի այս տեսակի տարածաշրջանների բացահայտման հարցում:

Գ. ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԽՈՇՈՐ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐՈՎ ԲՆՈՐՈՇՎՈՂ ԳՈՐԳԵՐ

Հավաքածուում մեծ քանակություն են կազմում այս խմբին պատկանող եւ պատմական Հայաստանի գորգագործական հիմնական կենտրոնները ներկայացնող գորգերը:

Երկրաչափական խոշոր հորինվածքներն ու դրանց պատկերագրման սկզբունքները տարբեր են, ուստի մենք դրանք ներկայացնում ենք առանձին ենթախմբերի տեսքով: Ենթախմբերի առանձնացման հարցում որպես հիմնական ելակետ ընդունել ենք հիմնական հորինվածքների գծային ձևերն ու մատուցման սկզբունքները: Ստորեւ առանձին ենթախմբերի տեսքով ներկայացնում ենք շեղանկյունաձեւ եւ բազմանիստ խոշոր հորինվածքներով ու բազմանիստ երկայնաձիգ մեկ ընդհանուր շրջանակում ամփոփված հորինվածքներով բնորոշվող գորգերը:

Հավաքածուում բավականաչափ հարուստ եւ ամբողջական է ներկայացված շեղանկյունազարդով գեղազարդված գորգերի ենթախումբը: Այս տեսակետից առանձնանում են Վանենի տեսակին պատկանող գորգերը (պատկեր 4)¹⁴: Իրականում շեղանկյունազարդն այս հորինվածքում խոշոր չէ, բայց դրա առանցքն է: Շեղանկյունազարդի նիստերին ու գագաթների շուրջը տրոր ներկայացված են հորինվածքի մյուս տարրերը՝ տերեւանախշը կամ ձկնակերպ ոճավորումն ու բազմաթերթ մանր վարդակները: Այս տեսակն ունի համահայաստանյան լայն տարածում ու բնորոշ է նաեւ Պարսկաստանի մի շարք գորգագործական կենտրոններին: Կարելու է ենթադրել, որ Պարսկաստանում այս տեսակն ու դրա հիմնական հորինվածքը հայտնի են Արմանի բաֆ, այսինքն՝ հայկական հանգույց կամ աշխատանք անունով, եւ այն հյուսիսարեւմտյան Պարսկաստանի գորգագործական կենտրոններում արմատավորվել է 1604 թ. Շահ Աբասի կազմակերպած հայոց բռնագաղթի արդյունքում¹⁵: Ներկայացվող հավաքածուում եղածները մեծամասամբ վերաբերում են Վասպուրականի արեւելյան եւ Ուրմիա լճի ավազանի գորգագործական կենտրոններին:

Վերջին ձեռքբերումների թվում է այս խմբի Վանենի տեսակին պատկանող մի գորգ, որն ըստ եղած թվակիր հայատառ հիշատակարանի (ԵՊԱՐՕՎ 1849 ԱՄԻ)՝ գործվել է 1849 թվականին: Մեր հավաքած նախնական տեղեկությունների համաձայն՝ այն գործել են Լոռվա գոր-

¹⁴ Նախկինում մենք գորգերի այս տեսակն անվանել էինք Գլածո՛ր՝ նկատի ունենալով, որ Սյունյաց գրչուխյան այդ նշանավոր կենտրոնում ստեղծված մանրանկարներում եղած այս հորինվածքի տարբերակները վաղագույններն են, մինչդեռ մեր հետագա պրպտումների ընթացքում պարզվեց, որ խնդրո առարկային շատ ավելի նման հորինվածք կա վաղ՝ 1223 թվականին Հյուսիսային Արցախի գրչուխյան կենտրոններից մեկում իշխանուհի Վանենի պատվերով ստեղծված Ավետարանի մի խորանազարդում: Այդ հանգամանքից ելնելով էլ՝ Գլածորի փոխարեն շրջանառության մեջ ենք ներդրել Վանենի եզրույթը:

¹⁵ Այս մասին տես M. JAVAD NASSIRI, *The Persian Carpet*, Napoli, 2002, էջ 25:

գագործական նշանավոր կենտրոններից մեկում՝ Սանահին գյուղում: Բայց դրա գեղազարդման համակարգի մի կարեւոր մասը հանդիսացող կենտրոնական լայն գոտու գեղազարդման տարրերը՝ մասնավորապես ծառանախշի այս տարբերակը, առավելապես բնորոշ է Կոզովիտի, Արտազի եւ Աղբակի գորգագործական կենտրոններին: Վասպուրականի գորգագործական կենտրոններին՝ մասնավորապես Աղբակի կամ Արտազի գորգագործական կենտրոններին է վերաբերում Մայր Աթոռի գանձատանը պահվող այս տեսակին պատկանող երկու նմուշ: Գեղազարդման համակարգի կատարելութեամբ հատկապես կարեւոր է այստեղ ներկայացվածը (պատկեր 5): Մենք հատկապես կարեւորում ենք դրանց տեխնոլոգիական հատկանիշները՝ այդ երկուսի ծայրերի ավարտական կարպետատիպ նեղ շերտերը ծածկված են «օղաճիտ» ու «շուլալ կար» եղանակներով արված մանր զարդաշարերով: Ըստ էության՝ այս երկու նմուշները ներկայացնում են Վասպուրականին եւ մերձակա գորգագործական կենտրոններին բնորոշ վերոհիշյալ առանձնահատկությունն ու հնարավորությունն են տալիս մեզ ավելի ամբողջական դարձնելու հայոց գորգագործական մշակույթի տեխնոլոգիական հատկանիշների մասին մեր ունեցած պատկերացումները:

Շեղանկյունաձեւ ենթախմբին է պատկանում նաեւ Արաբկիր-Սեբաստիա գորգագործական կենտրոններին վերաբերող վերջին տարիներին ձեռք բերված եւս մեկ գորգ (պատկեր 6): Փոքր Հայքի գորգագործական կենտրոնների մասին փաստագրական որոշակի տեղեկություններ կրող նմուշները Հայաստանի թանգարաններում սակավաթիվ են: Այս գորգին վերաբերող մեր գրի առած տեղեկություններից պարզվել է, որ այն գործել են Սեբաստիայի մերձակայքում գտնվող Կովտուն հայաբնակ խոշոր գյուղում 1890—1900 թվականներին: Այդ ամենի շնորհիվ էլ Փոքր Հայքի գորգագործական կենտրոններում ձեւավորված հայոց գորգարվեստի ավանդույթների ուսումնասիրման համար այս նմուշն ունի սկզբնաղբյուրային նշանակություն:

Հավաքածուի շեղանկյունազարդ հորինվածքով բնորոշվող գորգերի թվում է մեր Հյուսիսային Արցախի գորգագործական հնամենի կենտրոններից մեկի՝ Բանանց գյուղի անունով տարբերակված Բանանց տեսակին պատկանող մի ուշագրավ նմուշ: Դրա կենտրոնական հատվածն ամբողջությամբ գեղազարդված է տեսակին բնորոշ ներքուստ եւ արտաքուստ կեռիկներով երիզված շեղանկյունատիպ խոշոր հորինվածքներով:

Առանձնահատկությունն այն է, որ կենտրոնական գոտին այս դեպքում շատ լայն չէ եւ չի գեղազարդված հիմնական հորինվածքի անկյունային հատվածներով (պատկեր 7): Այս օրինակն աչքի է ընկնում գորգադաշտում ներկայացված հորինվածքների ու գեղազարդման մանրակների կուռ կառուցվածքով եւ ներդաշնակ գուներանգներով եւ գործված է այդ տարածաշրջանին բնորոշ գորգարվեստի լավագույն ավանդույթներով:

Հավաքածուում հատկապես մեծաթիվ են ճարտար տեսակին պատկանողները: Մեր հետազոտությունների արդյունքում պարզել ենք, որ բացի տնայնագործների ստեղծածներից՝ դրանց թվում շատ են 1890-ական թվականներին նաեւ Հարավային Կովկասում հիմնված գորգագործական փոքր ձեռնարկություններում գործվածները¹⁶: Վերջիններս, ի տարբերություն տնայնագործական արտադրանքի, բնորոշվում են գուներանգային ու գեղազարդման հատկանիշների միօրինակությամբ: Գեղազարդման մանրակների եւ գուներանգների հարուստ ու ներդաշնակ մատուցմամբ այս տեսակը ներկայացնող աչքի ընկնող նմուշներ են Արցախում, Շիրվանում եւ Վասպուրականի արեւելյան գավառների գորգագործական կենտրոններում գործված գորգերը (պատկեր 8):

Մայր Աթոռի թանգարաններում պահվող բազմախիստ խոշոր հորինվածքներով բնորոշվող ենթախումբը նույնպես ներկայացված է տարբեր տեսակներով: Մասնավորապես՝ բավականին հետաքրքրություն են ներկայացնում Մեմլիմգ, Գանձակ եւ Տավուշ տեսակներին պատկանողները: Այս շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում վերջին շրջանում ձեռք բերված հայատառ թվակիր գրություններով Տավուշ տեսակին պատկանող մի յուրահատուկ տարբերակ, որն ըստ մեր հավաքած դաշտային տեղեկությունների՝ 1898 թ. գործել են Մեղրիի գորգագործական կենտրոններում (պատկեր 9): Այս գորգի գեղազարդման համակարգը կարելուր սկզբնաղբյուր է տեսակի գեղազարդման հիմնական՝ Տավուշ հորինվածքի պատկերագրման տարբերակների, դրանց տեղական առանձնահատկությունների բացահայտման հարցում: Խնդրո առարկա գորգի գեղազարդման համակարգում այն իր հերթին ներկայացված է երկու տարբերակով, որոնք յուրահատուկ են դրանցում տեղ գտած մանրակնե-

¹⁶ Տե՛ս, օրինակ, հետեւյալ գորգերը Գանձատուն-թանգարանում՝ թիվ 8, 17, 18, 50, 53, 55, Վեհարանում՝ 18, 19, 21 եւ այլն:



1. «Սյունազարդ», Բուրսա-
Հերեկե, XIX դ. վերջ—XX դ. սկ.,
մետաքս, բամբակ, 196 x 134 սմ
(գ/հ 45, Գանձատուն)



2. «Լադիկ», Կարահիսար, XX դ. սկ.,
բուրդ, 160 x 108 սմ (գ/հ 47, Գանձատուն):



3. «Լոռի», Արցախ՝ Զրաբերդ, գյուղ
Վերիշեն, 1911, բուրդ, 262 x 145 սմ.
(գ/հ 5, Գանձատուն):



4. «Վանենի», Լոռի-Գուգարք,
1849 թ., բուրդ, բամբակ, 322 x 150
սմ (գ/հ 47 Գանձատուն):



5. «Վանենի», Ուրմիա լճի ավազան, XX դ. սկ., բուրդ, 571 x 237 սմ (գ/հ 9, Գանձատուն):



6. «Շեղանկյունազարդով», Փոքր Հայք՝ Արաբկիր-Սեբաստիա, XIX դարի վերջին քառորդ, բուրդ, 260 x 100 սմ (գ/հ 2014-01, Գանձատուն):



7. «Բանանց» (տարբերակ), Տավուշ-Գարդման 1920-ական թթ., բուրդ, 230 x 132 սմ (գ/հ 12, Վեհարան):



8. «Ճարտար», հարավ-արևելյան Կովկաս, XX դ. սկ., բուրդ, բամբակ, 163 x 124 սմ (գ/հ 51, Գանձատուն):



9. «Տավուշ», Մեղրի-Գողթան գավառ, 1898, բուրդ, 325 x 109 սմ (գ/հ 36, Գանձատուն):




10. Գուրգ՝ մեկ ընդհանուր երկայնաձևից բազմանիստով «Ուրտան», Տավուշ-Գարդման, 1910-ական թթ., բուրդ, 180 x 120 սմ (գ/հ 26., Վեհարան):

րի ու գուներանգների առումով: Այս նմուշին գեղարվեստական առանձնակի արժեք է հաղորդում նաև փղոսկրե հիմնագույնի վրա ներկայացված եւ կեռիկանախշերով գեղազարդված լայն գոտին:

Հայոց գորգագործական մշակույթի հետազոտման համար ընդհանրապես սկզբնաղբյուրային նշանակություն ունեն ԺԸ. դարին վերաբերող գորգերը, եւ դրանց թվում են նաև Գանձատանը պահվող Վանենի եւ Գանձակ տեսակներին պատկանող գորգերից մի քանիսը¹⁷:

Երկրաչափական խոշոր հորինվածքներով գեղազարդված երրորդ ենթախումբը հավաքածուում ներկայացված է սակավաթիվ նմուշներով: Հարկ է շեշտել, որ այս խմբում ներառված տեսակների հիմնական բնորոշիչը երկայնաձիգ բազմանիստ շրջանակն է, որում էլ ներկայացվում են հայոց գորգարվեստի առանձին տեսակների գեղազարդման համակարգերին վերաբերող հիմնական հորինվածքները: Մասնավորապես հենց այդպիսին է Տավուշի գորգագործական կենտրոններում ստեղծված՝ Վեհարանում պահվող խոշոր աստղանախշերով գեղազարդված գորգը (պատկեր 10):

Շարունակությունը՝ հաջորդիվ



¹⁷ Մայր Աթոռի գանձատուն, գ/հ 2, 18:

ԵՒԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, դոցենտ, ԳԻ, ՀՊՄՀ

ՀՈՎՃԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ՅԵՏԱԿՈՒ ԸՆԿԱՆՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ՝

ՆԱ.ԽԱԲԱՆ

1923 թ. մարտի 25-ին «Նորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը գուժում է. «Ամսիս 23-ին, 21 ժամին վախճանվեց Թումանյանը...»²: Բանաստեղծի մահը վերածվում է համաժողովրդական սգահանդեսի: Սգում էին³ ամենքը՝ ծեր ու մանուկ, կին ու տղամարդ, աշակերտ ու ուսուցիչ, գրող ու գիտնական, շինական ու բանվոր, հասարակական ու քաղաքական գործիչներ, շարքային ընթերցողներ, տարբեր ազգութայն մարդիկ: Ժողովրդի հավաքական գիտակցությունն առ Հ. Թումանյանը միշտ էլ արթուն էր եղել, եւ նա հասկացել էր, թե ինչ է կորցրել:

1923 թվականը դառնում է թումանյանական յուրօրինակ տարի: Մինչեւ տարեվերջ մամուլը ողողված է մնում բանաստեղծի մասին հրապարակումներով: Դրանք զգալի մասով սովորական մահախոսականներ չէին, այլ տարբեր գիտանկյուններից վերլուծում ու արժեքավորում էին մի բացառիկ գրական երեւույթ, որ արդեն դառնում էր պատմություն: Ամեն մեկն աշխատում էր առավել սթափ, հետհայաց գնահատումով մոտենալ նրա վաստակին, հայտնաբերել իր Թումանյանին:

Նկատի ունենալով մեր ուսումնասիրության նպատակն ու խնդրադրությունը՝ այդ ընդարձակածավալ նյութից առանձնացրել ենք այն մա-

¹* Ստացվել է 22.02.2023, գրախոսվել է 23.02.2023: էլ. հասցե՝ mnacakanyaneva@mail.ru:

² «Նորհրդային Հայաստան», №61, Երեւան, 1923:

³ Մարտի 25-ին հեռագրին հաջորդող խմբագրության մահախոսականում գրված է. «Ձի կարող լինել եւ ո՛չ մի սիրտ, որ խորին դառնութեամբ ու թախիծով շարձագանք է աչս մահաբօթ գոյժին, եւ ինչպէս կարող է այդպէս շարձագանքել, երբ չկայ մեզանում եւ ո՛չ մի գրագէտ, որ մայրենի լեզուն սովորած չլինի Յովհ. Թումանյանի բանաստեղծութիւններից: Սերունդներ են կրթուել մեր մեծ պոէտի գործերով — եւ այդ գործերից շատ-շատերը այսօր եւ վաղը կրթելու են նորանոր սերունդներ»:

սը, որ, մեր կարծիքով, գրական-պատմական արժեք է ներկայացնում եւ հիմք է դարձել թումանյանագիտության հետագա զարգացմանը:

ՊԱՏՄԱՔՆՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսի հրապարակումների մի մասում փորձ է արվում բանաստեղծի ստեղծագործությունը դիտարկել անբաժան նրա անձնական կյանքից ու մարդկային նկարագրից: Վ. Ահարոնյանը «Յովհաննէս Թումանեան» հոդվածում համառոտ շարադրանքով ներկայացնում է բանաստեղծի մանկության, պատանության, թերի ուսումնառության ու ինքնակրթությամբ զարգացման շրջանները, մարդկային տեսակը բնութագրելիս հիշում հորը՝ Աստու ծառա տեր Թադեւոսին, եւ եզրակացնում՝ քահանա հորից ժառանգած «իր լայնսիրտ ոգիով, իր պայծառ ու կենսուրախ բնավորութեամբ, նա ջերմութիւն եւ լոյս էր սփռում ամեն կողմ, մտերմական մթնոլորտ ստեղծում իր շուրջը»⁴: Հ. Թումանյանն այն քչերից էր, ընդգծում է նա, որոնց կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը լրացնում էին իրար: Այս համապատկերում է որոնում թումանյանական աշխարհի «հինչը»⁵ եւ «հինչպէսը»՝ նրա ստեղծագործության մեջ հայտնաբերելով հայ ժողովրդի կյանքը՝ իր բազմազան դրսեւորումներով, նրա հավաքական միտքը, բարոյա-

⁴ «Հայաստանի ձայն», №37, Փարիզ, 1923, էջ 2–3: Ապրիլի 13-ին «Հայրենիք» թերթում տպագրվում է Ալ. Խատիսյանի «Երեք անփոխարինելի կորուստներ» վերնագրով հոդվածը: Գրում է. «...Հանգած կեանքերու մէջ կան այնպիսիները, որոնք ամբողջ դարաշրջան մը կը կազմեն եւ որոնք իրենց անունով կը գրեն պատմութեան ամբողջ էջեր... Յովհաննէս Թումանեանը կը ներկայացնէր հայուն սիրտը, հոգին եւ բանաստեղծութիւնը: Լոռուայ բանաստեղծական բարձունքներու զաւակ՝ ան կ'երգէր բնածին հանճարի մը խանդով ու գեղեցկութեամբ: Եթէ ժողովուրդները ապրելու են եւ քաղաքակիրթ մարդկութեան մէջ տեղ բռնելու իրաւունք ունին, այդ իրաւունքը անոնց կուտան հանճարներն ու տաղանդները: Հռչակաւոր ոռու բանաստեղծ Վալերի Բրիւսովը ըսաւ անգամ մը, որ այնպիսի ժողովրդական տաղանդներ, ինչպէս Յովհ. Թումանեանն է, իրենց ազգին ազնուականութեան դրոշմ կուտան: Անոր հարուստ երեւակայութիւնը, մեր ժողովրդի հոգիին բանաստեղծական խորքերը թափանցելու զմայլելի ընդունակութիւնը, եւ սքանչելի դաշնակցությունը անոր լեզուին դարձուցած էին Թումանեանը հայոց բանաստեղծութեան արքան: Հայ երեխաներու ամբողջ սերունդներ հիացեր ու սնուեր են անոր երգերով եւ անոնց միջոցով սիրեր են իրենց հայրենիքը: Ան կերգեր Հայաստանը, հայ դիւցազունները, հայ անտառները, հէքեաթներն ու առասպելները» («Հայրենիք», №3330, Բոստօն, 1923):

⁵ Գեղազիտական այս հարցերին Վ. Ահարոնյանն անդրադառնում է նաեւ հունիսի 16-ին՝ Սորբոնի համալսարանում կազմակերպված գրական երեկույթի ժամանակ: Բանախոսության ընթացքում նա հաստատում է այն գրույթները, որոնք Թումանյանին իրապես հռչակում են ազգային մեծ բանաստեղծ:

կան ըմբռնումները, ձգտումներն ու երազանքները, որոնց «միջոցով մեզ միացնում, հաղորդակից է անում համամարդկային իդեալին»: Բանաստեղծի գրական շենքի հիմքն ու ներշնչման աղբյուրը ժողովրդական բանավեպտն է, շարունակում է Ահարոնյանը. «Ոչ մի քար աւելորդ չի այս շենքում եւ ամեն մի աղիւս ճիշտ իր տեղումն է դրուած: Յովհ. Թումանեանի առաջին իսկ բանաստեղծութիւնների մէջ՝ ինչպէս օրինակ՝ «Շունն ու Կատուն», «Հին օրհնութիւն», «Գութանի երգը», «Մարօն» եւ ուրիշներ, գրուած 1887 թուին, երբ Թումանեան տակաւին 19 տարեկան երիտասարդ էր, մենք գտնում ենք նրա ստեղծագործական հետագայ զարգացման բոլոր տարրերը»⁶: Այս դիտակետից անդրադառնում է «Անուշին»՝ իբրեւ հայ գյուղական կյանքի հարազատ եւ գունագեղ պատկերի, «Սասունցի Դավիթին»՝ իբրեւ հայ ժողովրդի «հավաքական ուժի, շքնկծվող, ազատատենչ կամքի ու շինարար հանճարի մարմնացում», «Ղուսավորչի կանթեղին»՝ իբրեւ իր ազգի ապագայի հանդեպ անշեջ հավատի առհավատչայի: «Յովհ. Թումանեանը իր ամբողջ կեանքի ընթացքում տեսել է այդ ջահը, — աւարտում է իր խօսքը Վ. Ահարոնեանը: — Իսկ մենք, որ բանաստեղծի անմեղ, սիրով լիքը սիրտը եւ սրատես հայեացքը չունինք, չենք տեսել այդ ջահը, բայց մենք տեսել ենք երկրի վրայ, մեր կեանքում այդ ջահի սքանչելի ջահակիրին, ինչպիսին է Յովհ. Թումանեանը: Եւ այդքանը բաւական է, որ մենք մեր ազգային մեծ բանաստեղծից ոչ պակաս հաւատով նայինք մեր ժողովրդի պայծառ ապագային»⁷:

Հ. Թումանյանի մահվան բոթն է ներշնչել հայրենիքից հեռու գտնվող Ավ. Իսահակյանին գրելու. «Հեղեղի պէս իջաւ նա առասպելական Լոռու վայրենի լեռներից, բերելով իր հետ մի ամբողջ բնութիւն՝ հուռթի եւ բազմատարր, մի ամբողջ հինաւուրց ժողովուրդ, իր տոհմիկ երգով ու խօսքով, յոյգերով ու երեւակայութեամբ: Եւ ինչպէս ստեղծող բնութիւնը՝ փոքեց նա մեր հոգու առջեւ իսկական, անկեղծ բանաստեղծութիւնը: ...ժամանակի մէջ գտուելով ու մաքրուելով բիրեղացաւ ու ռճաւորուեց այն սքանչելի, աննման լեզուներէ եւ պոէմներէ մէջ, որ կազմում են մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձունքը, որից այն կողմ չի անցել մեր թռիչքը»⁸: Դասական դարձած այս տողերը մինչեւ այ-

⁶ «Հայաստանի ձայն», №47, Փարիզ, 1923, էջ 3:

⁷ Անդ, էջ 5:

⁸ «Արեգ», №5, Բեռլին, 1923, էջ 298:

սօր էլ իբրեւ բնաբան են հնչում նրա համար, ով փորձում է մոտենալ թուժանյանական աշխարհին:

Հետագա շարադրանքում Իսահակյանը մանրամասնում է բերված տողերում խտացվածը եւ եզրակացնում՝ մեծ ու անհուն է կորստի ցավը, բայց մխիթարանք է գիտակցությունը, թե «այն անկշռելի հարուստ աւանդը, որ նա թողեց, բաւական է, որ նա յաւերժացած լինի. նրա համար մահ է մոռացութիւն չկայ: Եւ յաւիտեան այս երկրիս վրայ եկող ու գնացող հայ սերունդներ պիտի կրկնեն նրա իմաստուն խօսքերը.

«Անց են կենում նոր ու հինը,
Գեղեցկութիւն, գանձ ու գահ.
Մահը մերն է, մենք՝ մահիւնը,
Մարդու գործերն են անմահ...»⁹:

Ստ. Զորյանը մահվան առիթով գրված երկու հոդվածում էլ հաստատում է թուժանյանի գործի անմահությունն իսահակյանական հավատը: Ինչպես բանաստեղծի ողջության օրոք իր գրավոր ու բանավոր ելույթներում, այնպես եւ մահախոսականում նա թուժանյանին համարում է «ազգային ձեւի եւ ազգային ոճի մեծագույն վարպետ», ստեղծագործությունը՝ «ժողովրդային բովանդակության եւ ազգային ձեւի մի փայլուն ներդաշնակության հաղթանակ». «Ոչ մեկը մեր գրողներից, գուցե, այնպես լավ չգիտի մեր ժողովրդի լեզուն, հոգին, աշխարհի մասին ունեցած հասկացողությունը, ինչպես թուժանյանը»¹⁰: Այս դիտարկումները հետագա տասնամյակներին պիտի դառնային թուժանյանագիտության հիմնային հարցադրումներ: Զորյանի բացատրությամբ թուժանյան անհատականությունը, մարդը մի «հմայիչ ու կախարհական պոեմ» էր, որ շատերը չէին կարողացել եւ չեն կարող կարգալ այլեւս. «Մի պոեմ, որին կարելի էր լսել օրերով, անվերջ ու անվերջ: Մի պոեմ, որ ամեն սրտի մի խոսք էր ասում, որ «վերացնում ու վեհացնում» էր ամենին: Այդ պոեմն ինքը Հովհ. թուժանյանն էր՝ բազմաբովանդակ ու դյուլթական, ինչպես Լոռու պերճ բնությունը, պայծառ ու զովարար, ինչպես վճիտ աղբյուրները Լոռու»¹¹:

⁹ Անդ, էջ 300:

¹⁰ «Պատկոմ», №2, Երեւան, 1923, էջ 2:

¹¹ «Ճորհրդային Հայաստան», №68, Երեւան, 1923:

ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՍԻՐՈ ԽՈՐՀՐԳԱՆԻՇՐ

Հետմահու հրապարակումներում Թումանյանի անձնական առաքինություններից անբաժան էին դիտվում նրա ազգային-հասարակական հանձնառությունները, որ նա իր ժողովրդի, առհասարակ մարդու համար դժվար պահերին կատարում էր քրիստոնյայի անձնուրաց նվիրումով՝ ապրելով մի կյանք, որ իրոք վառվեց ու «լույս տալով» սպառվեց: Բազմաթիվ ու բազմաբնույթ են այդպիսի վկայությունները, օրինակ՝ իր ցավակցական նամակում վրացական մամուլի խմբագրությունների եւ Համավրացական նոր գրականության միությունը գրում է. «Հովհաննես Թումանյանի մահը մենք զգում ենք իբրեւ ավագ եղբոր կորուստ, որի հետ մեզ կապում էր ստեղծագործության եղբայրական սանդուղքը: Հիվանդ բանաստեղծի հետ միասին վախճանվեց նաեւ համաշխարհային մարդը, որը սիրում էր իր հարազատ հայ ժողովրդին, միեւնույն ժամանակ սիրահարված էր իր հոգուն այնքան հարազատ Վրաստանին...»¹²:

Թումանյանի մարդասիրության եւ նրա նկատմամբ համաժողովրդական սիրո մասին խոսում են Կովկասի տարբեր ազգության գործիչներ: Հիշարժան է, օրինակ, Տիցիան Տաբիձեի¹³ խոսքը. «Հովհաննես Թումանյանն իսկական հին պատրիարքի ազդեցություն ուներ հայ ժողովրդի վրա: Նրան լսում էր ոչ միայն ժողովուրդը, նրան լսում էին նաեւ ժողովրդի առաջնորդները, որոնք համարյա միշտ համոզված էին իրենց սիրո մեջ: Ես չեմ կարող պատկերացնել Հովհաննեսի կյանքի վերջին րոպեները, միայն համոզված եմ, որ նա՝ բարձրահասակ, ճերմակահեր եւ լուսեղեն դեմքով, որն իր ամբողջ կյանքն անցկացրեց սիրո քարոզով, վերջին պահին էլ, վստահ եմ, արցունքն աչքերին, ինչպես աստվածային պատգամախոս, կյանքն ավարտել է սիրո հավերժ հավատարմության

¹² Անդ, էջ 185:

¹³ Սիրո եւ հարգանքի առավել խոսուն վկայություն, անշուշտ, այն գործն էր, որ ձեռնարկում է Տ. Տաբիձեն Հ. Թումանյանի մահից հետո: Նա ի մի է բերում Թումանյանի մասին վրաց մամուլում եղած նյութերը եւ ձեռնամուխ լինում առանձին գրքով դրանց լույսընծայմանը: Ինչպես տեղեկացնում է վրացագետ, թարգմանիչ Հրաչյա Բայրամյանը, Տաբիձեն կազմում է վրաց հեղինակների եւ նրանց պատկանող նյութերի (նամակներ, բանաստեղծություններ, հուշեր եւ այլն) ուրվագիրը. «Ցանկը պարունակող թերթիկի ձախ անկյունում համապատասխան պաշտոնյայի ստորագրությամբ (24/2/1927) նամակագրություն, որով պետհրատին կարգադրվում է հրատարակել: Կարգադրության համաձայն ժողովածուն պետք է լույս տեսներ 1927 թվականին, բայց ինչինչ պատճառներով չի իրականացվել» (Ուղեցույց աստղը, էջ 9): Տաբիձեի այս ժողովածուն տասնամյակներ անց կյանքի է կոչվում Հայաստանում Հրաչյա Բայրամյանի աշխատասիրությամբ:

մասին խոսքերով, ինչպես Հովհաննես առաքյալը, որին վերջին անգամ աշակերտները դուրս բերեցին ժողովրդի առաջ, եւ նա, արցունքն աչքերին, ասաց. «Սիրեցէք զմիմեանս...»¹⁴:

Բանաստեղծի մարդկային բացառիկ առաքինությունների նրբամիտ բնութագրումներով, մեծ կորստի անփոխարինելիության ցավոտ գիտակցութեամբ է շնչում Գրիգոր Ռոբաքիձեի «Լուսեղեն Հովհաննեսը» հոդվածը: «Շատ մեծ է մեր վիշտը,— գրում է նա,— որովհետեւ Հովհաննեսը բանաստեղծ էր. Հովհաննեսը Մարդ էր, Հովհաննեսը բարեկամ էր: Եւ ամեն ինչում կատարելապես լուսեղեն: Զուր չեն նրան Զորորդ Ավետարանչի անունով կնքել: Նման անհատ հարյուր տարին մեկ է շողարձակում, եւ Հովհաննեսը նախեւառաջ անհատ էր: Դեռ իր արտաքինը՝ բարձրահասակ, փոքրասիական պրոֆիլ, ինչպես մեղալիոն վեհապանձ ռասայի՝ միշտ լուսեղեն ժպիտով: Միշտ «ճերմակ», իսկապես կենսաբանական ապացույցը պոետի: Հոգին՝ ամենատես, նուրբ, բարի, ամենաբարձրյալի պես միշտ խանդավառ: Սիրտը՝ պարզ, բաց, կրակված, մանկական, անապական: Վերջապես՝ իսկական զավակ Հայաստանի... Հովհաննեսը սիրո մարմնացում էր: Նրա մոտենալը որեւէ առարկայի կամ թե երեւույթի՝ միշտ էլ անց էր կենում սիրո պրիզմայի միջով»¹⁵:

Հ. Թումանյանին նոր կողմից բացահայտելու փորձ է Վ. Բրյուսովի՝ «Հովհաննես Թումանյանի մասին (1869—1923)» հոդվածը: Ռուս բանաստեղծը մի քանի անգամ արդեն առիթ ունեցել էր իր բարձր գնահատանքի խոսքն ասելու Թումանյանի արվեստի մասին: Բանաստեղծի մահվան կապակցությամբ հրապարակած հոդվածում, ինչպես «Поэзия Армении» ժողովածուի առաջաբանում, նա իրեն հատուկ խորաթափանցությամբ ներկայացնում է հոգեկից բարեկամին՝ իբրեւ գեղագետ բանաստեղծի, մանկագրի, թարգմանչի, հասարակական գործչի եւ, ի վերջո, իբրեւ հավատավոր հայ մարդու, որ ողջ գիտակցական կյանքը անմնացորդ նվիրել է իր ժողովրդին: Վերահաստատում է իր հայտնի միտքը, թե այլազգի ընթերցողը Հայաստանի կյանքն ավելի լավ կարող է ճանաչել Թումանյանի պոեմներից, քան գիտական հաստատվող հատորներից:

¹⁴ Հր. ԲԱՅՐԱՄՅԱՆ, Ուղեցույց աստղը, Երեւան, 1999, էջ 59—61: Վրացերեն առաջին անգամ տպագրվել է՝ «Ռուբիկոն», 8 ապրիլի, Թիֆլիս, 1923:

¹⁵ Անդ, էջ 72—76: Վրացերեն առաջին անգամ տպագրվել է՝ «Ռուբիկոն», 8 ապրիլի, Թիֆլիս, 1923:

Ե. Սուրենիի «Համերաշխության եւ սիրո սիմվոլը», Ստ. Լիսիցյանի «Հովհաննես Թումանյան», Սանդրո Ղանչելիի «Հովհաննես Թումանյանին», Հ. Լ. ստորագրությամբ հեղինակի «Արվեստի մշակների միջազգային գործակցության մասին», Ե. Չարենցի «Եղբայրության շաղախը», Գրասերի «Հովհաննես Թումանյանի հիշատակին» եւ այլ հոգվածներում բանաստեղծը նորից ու նորից ներկայանում է իբրեւ խաղաղության, սիրո, բարության, ժողովուրդների եղբայրության ու համերաշխության խորհրդանիշ:

Նկատելի է նաեւ որոշակի միտում այս ամենն իմաստավորելու խորհրդային նոր գաղափարախոսության դիտակետից, ինչպես ժամանակին մարքսիստական քննադատությունն էր փորձում Հ. Թումանյանի ստեղծագործության մեջ երբեմն հնչող ընկերային բողոքի շեշտերը մեկնաբանել իբրեւ իրականության հեղափոխական բարեշրջության պահանջ: Ե. Սուրենին, օրինակ, հանգամանորեն վկայակոչելով բանաստեղծի հաշտարար առաքելությունը 1905–1906 թթ. ազգամիջյան բախումների, 1918–1919 թթ. հայ-վրացական սահմանային վեճերի, 1921 թ. փետրվարյան իրադարձությունների ժամանակ¹⁶, նկատելի հակում ունի ամեն կերպ նրան ներկայացնելու որպես նոր կարգերի հետեւողական համակիր¹⁷: Եւ եզրակացնում է. «Հովհ. Թումանյանը մեծ բանաստեղծ էր: Բայց նաեւ մի մեծ սիմվոլ էր նա՝ ոռոս, վրացի, թուրք եւ հայ ժողովուրդների եղբայրության: Ափսոս, որ անողոք մահը անժամանակ զրկեց մեզ դեռ էլի երկար ժամանակ տեսնելու մեր մեջ միջազգային սիրո այդ անկեղծ գաղափարախոսին»¹⁸:

Ե. Չարենցի համար եւս Հ. Թումանյանի անունը այս դեպքում ամենից առաջ «եղբայրության դրոշ», «խաղաղության պատգամ» է. «Նրան չէր կարելի չճանաչել, այդ բարձրահասակ, արծաթադեմ լոռեցուն, որ Դսեղից Թիֆլիս էր ընկել եւ այդ բազմացեղ քաղաքում, արեւելքի եւ արեւմուտքի այդ երփներանգ խառնարանում դարձել էր միջցեղային մեր-

¹⁶ Հատկանշական է՝ խոսք չի ասում 1915 թ. ամռանն էջմիածնի եկեղեցու բակում գաղթականների ու որբերի հետ անցկացրած մղձավանջային օրերի մասին: Դա նկատելի է գրեթե բոլոր հոգվածներում, որտեղ խոսք կա Թումանյանի ազգանվեր առաքելությունների մասին, եւ հասկանալի է, թե ինչու:

¹⁷ Այս միտումը երբեմն արտահայտվում է ուղղակի՝ ժողովուրդների համերաշխության ու խաղաղության թումանյանական իդեալը կապելով պրոլետարական գաղափարախոսության հետ (տես «Հայ գյուղացիությունը ու նրա երգիչը» հոգվածը, «Սորհրդային Հայաստան», №77, 1923):

¹⁸ «Մարտակոչ», №25, Թիֆլիս, 1923:

ձեցման աշտարակ, այլազան մշակույթների սինթետիկ դեմք: Գրիգորի Ռոբաքիձեն, Աքպեր Սաղըկով, Մուստաֆա Չոկաե, Վալերի Բոյուսով — ամեն ժողովրդի ու ցեղի պոետ, ամեն մշակույթի տիպական ներկայացուցիչ նրա շուրջն էին խմբվում, հարազատանում նրան, եւ դեպի իրենց հեռու ու մոտիկ հայրենիքները տանում Հովհ. Թումանյանի՝ այդ հմայիչ լոռեցու մասին սիրելի հիշողություններ, հարգանք ու մեծարանք»¹⁹:

Տասնամյակներ շարունակ Հ. Թումանյանի ստեղծագործության այսօրինակ մեկնաբանությունը հոգեբանական ու ստեղծագործական բնութագրի ելակետ պիտի դառնար խորհրդային թումանյանագիտական շատ ուսումնասիրությունների համար: Այս շեշտադրությունը կա նաեւ Յ. Խանզադյանի հոդվածում: Արձանագրելով, որ նրա հասարակական գործունեությունը եւ գեղագետի կոչումը երբեք չեն հակադրվել՝ հավելում է, որ պոեզիայի պատմության մեջ չկա մեկը, որ Թումանյանի նման «պայծառատես լինի պարզության բարձր իմաստության նկատմամբ», երբ «պոեզիան ու պրոզան աննշմարելի կերպով իրար են ձուլվում, «ամենահասարակ» ոճով տրվում են ստեղծագործական նվաճումներ»²⁰:

Ուշագրություն արժանի է Տ. Հախումյանի հոդվածը, որտեղ հավուր պատշաճի բնութագրումների կողքին հանդիպում են նաեւ հեռախփանց դիտարկումներ: «Թումանյանի մեծությունը գուցե ոչ այնքան նրա պարզ ասածների մեջ է,— գրում է քննադատը,— որքան նրա շասածների եւ այն մշուշաքող աշխարհների, որոնց վարագույրի մի ծայրը միայն բացեց նա մեր աչքերի առջեւ իր «Քառյակներով» եւ լռեց»²¹: Քառյակները, իրոք, այն բանալիներն են, որ թողել է բանաստեղծը սերունդներին՝ բացելու իր բանաստեղծական ու մարդկային աշխարհի բազմախորհուրդ ու իմաստուն դոնները: Նրա մահից հետո լրանում է մեկ հարյուրամյակը: Այդ ընթացքում մեծ ու փոքր շատ փորձեր են արվել մուտ գործելու վերերկրային այդ աշխարհի խորքերը: Բայց գոց դոնները դեռ ավելի շատ են, քան բացվածները եւ սպասում են նորանոր բացողների...

Այդ խնդիրը տարբեր նպատակներով ու տարբեր դիտանկյուններից սկսել էր մտահոգել բանաստեղծի ժամանակակիցներին նրա մահից անմիջապես հետո: «Ո՞ւմ հետ էր Հովհաննեսը,— հարցնում է Ս. Խա-

¹⁹ «Խորհրդային Հայաստան», №77, 1923:

²⁰ Անդ:

²¹ Անդ:

նոյանը,— ո՞ւմն էր նա, ո՞րն էր նրա քաղաքա-հասարակական դավանանքը... հայրենասեր էր, թե՛ միջազգային»²²: Պատասխանը բնորոշ է խորհրդային պետական գործչին. «Հովհաննեսը ամենքի հետ էր, պատկանում էր բոլորին, քաղաքական դավանանք — ընդունված իմաստով — չուներ, թե՛ մերն էր, թե՛ նրանցը, հայրենասեր էր ու միջազգային»²³, բայց ավելի շուտ՝ հայրենասեր, առանց շովինիստ լինելու»²⁴: Ավելին, Թումանյանն այն մարդկանցից էր, որոնք իբրև անհատներ՝ «չեն ենթարկվում հայտարարի, կաղապարման, ինչքան էլ աշխատենք նրանց դասի ու կարգի վերածել...»²⁵:

«Մարտակոչը» իր 41-րդ համարն ամբողջովին նվիրում է բանաստեղծին, նրա ստեղծագործական աշխարհի բազմանկյուն, խորքային մեկնաբանություններին: Հոգվածագիրներից յուրաքանչյուրը, իր սրտի խոսքը համեմելով իր մտքի հնարավորություններով, փորձում է խոնարհումը բերել բանաստեղծի հիշատակին:

Թումանյանի գրական որոնումները՝ նոր գաղափարախոսություն դիտանկյունից մեկնություն մի փորձ է Գ. Մելոյանի «Յովհաննէս Թումանեանը կեանքի ու մահուան առեղծուածի հանդէպ» հոդվածը: Հեղինակի կարծիքով՝ հատկապես վերջին տարիներին երբեմնի կենսասեր Թումանյանի «անփարատ թախիծը» սկիզբ է առնում «դասակարգային հակամարտ ուժերի բախման մօմենտից», երբ աստիճանաբար սկսում է փլուզվել նահապետական աշխարհը: «Մի դառն, անփարատ թախիծ,— բացատրում է նա,— բնակալում է Թումանեանի սրտում եւ մորմոքիչ աւաղումով պարբերաբար դուրս թռչում նրա կրծքից՝ քառեակներով, որոնցում գերիշխող մօտիւր կազմում են բացառապէս կեանքի ու մահուան պրոբլեմի հետ կապուած մռայլ խորհրդածութիւնները»²⁶: Կյանքի ու մահվան խնդիրը, սակայն, ըստ Մելոյանի, Թումանյանին այդպես էլ չի հաջողվում լուծել:

²² «Մարտակոչ», №41, Թիֆլիս, 1923:

²³ Թումանյանին նվիրված սգահանդեսներից մեկի ժամանակ, ներկայացնելով իր հիշողությունները, Սաքո Սահակյանը ուշագրավ դիտարկում է անում. «Ճիշտ չէ Թումանեանը ներկայացնել իբրև աշխարհաքաղաքացի կամ միջազգայնութեան շատագով: Թումանեան հայ ժողովուրդին, անոր ցաւերուն եւ ուրախութիւններուն երգիչն է. իսկ այդ ժողովուրդը չգիտեր ատել ուրիշ ազգերը. ահա թէ ինչ իմաստով Թումանեանը պէտք է ընդունիլ իբրև մարդասէր կամ աշխարհաքաղաքացի» («Ճակատամարտ», №3179, 1923):

²⁴ «Մարտակոչ», №41, 1923:

²⁵ Անդ:

²⁶ Անդ:

ՄԱՆԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՄՐՑԱԿԻՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Հ. Թումանյանի մահվան առիթով հրապարակումներում պատշաճ տեղ է զբաղեցնում նրա մանկագրության գնահատումը՝ դաստիարակչական ու զուտ գեղարվեստական բացառիկ արժեքի շեշտադրությամբ: «Թումանյանն իբրեւ դաստիարակ» հոդվածի՝ Նորայր ստորագրությամբ հեղինակը համառոտ ներկայացնում է այն հրապուրիչ աշխարհը, որի ճանաչման բանալին մանուկ ընթերցողին տալիս է բանաստեղծն իր հրաշալի գործերով, եւ ավելացնում. «Դժուար է սպառել գեղարուեստական ամենահմուտ բըշով քանդակած այն հոյակապ եւ ուշալ աշխարհը, որ տալիս է մանուկ սերնդին դաստիարակ Թումանեանը»²⁷: Դժվար է չհամաձայնել այս դիտողության հետ, Թումանյանի մանկագրությունը, որքան մեզ հայտնի է, միշտ դիտարկվել է առավելապես դաստիարակչական առումով, մինչդեռ մանկագրությունը թումանյանական գեղագիտության տիրույթում ներկայացնում է յուրօրինակ գեղարվեստական ենթահամակարգ, որի առանձին ուսումնասիրությունը մինչեւ այսօր էլ օրախնդիր է:

Թվում է՝ այդպիսի փորձ պիտի լիներ Հ. Սուրխաթյանի՝ «Տէրն ու ծառան» հեքիաթին նվիրված հոդվածը: Սակայն հայտնի քննադատն իր դասակարգային սկզբունքների մեջ հետեւողական է նաեւ այստեղ: «Հեքիաթի տենդենցի համաձայն, — բացատրում է նա, — սա արդար լուծումն է շահագործող տիրոջ եւ շահագործուող մշակի միջեւ եղած կօնֆլիկտի»²⁸:

Հատկանշական է, որ Թումանյանի մանկական երկերի մասին դրվատանքով էին արտահայտվում նաեւ օտարազգի բանախոսները: Վրաստանի լուսժողկոմատի ներկայացուցիչ Մ. Օրախելաշվիլին, օրինակ, խոսելով հայ բանաստեղծի՝ այդ օրերին հաճախ շեշտվող միջազգային ճանաչման ու հանրահռչակման մասին, հարկ է համարում առանձնացնել հատկապես նրա մանկագրությունը. «Մանր է, շատ ծանր ամեն մի ժողովրդի համար, երբ նա կորցնում է իր տաղանդավոր եւ մեծ մարդուն, բայց կրկնակի ծանր է, երբ այդ մարդը պատկանում է ոչ միայն մի, այլ համարյա բոլոր ժողովուրդներին... Այդ մտքով նա միջազգային կուլտուրայի մշակներից մեկն էր... Առանձնապես զգալի եւ անփոխարինելի է այդ կորուստը մանուկ սերնդի համար... Հ. Թումանյան լավ էր ճանաչում

²⁷ Անդ:

²⁸ «Մարտակոչ», №41, ներդիր թերթ, 1923:

երեխայի հոգեբանությունը, սիրում էր նրան եւ կարողանում էր բավարարել նրա կենսական պահանջները...»²⁹։

Իրապես, Թումանյանն անմրցակից էր, հիմա էլ դեռ գերազանցված չէ հայ մանկագրության մեջ։ «Կարմիր ծիլեր» մանկական ամսագրին նվիրված գրախոսականում Ա. Բոլյանը խոստովանում է, որ դժվար է պատկերացնել հայոց մեջ որեւէ մանկական ամսագիր՝ առանց Թումանյանի։ «Վերջին շրջանի հայ մանկական գրականությունն ամենայն իրավամբ կարելի է անուանել Թումանեանական, որ ամբողջապէս համախմբուած էր «Հասկեր» ամսագրի շուրջը»³⁰,— գրում է նա եւ հավելում, թե «Հասկերը» Թումանեանի շնորհիւ մշակութային-կրթական խոշոր դեր է կատարել՝ ստեղծելով մանկական գրողների մի «շկոլա»։

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄՆԵՐԻՑ ՎԵՐ

Մահախոսական հոդվածներում ակնհայտորեն երեւում են հարցադրումների, հղումների ուղղվածությունը, հոգեբանական ու մեթոդաբանական սահմանագիծը, որը կամա թե ակամա երկու խմբի է բաժանում դրանք։ Առաջին խմբի հրապարակումներում գերիշխում է ընկերաբանական (sociological) եղանակը։ Զրբաշյանն այս առիթով գրում է. «...Նրա (Թումանյանի.— Ե. Մ.) գրական ժառանգության բոլոր առանձնահատկությունները, ուժեղ եւ թույլ կողմերը ուղղակի կապվում եւ բացատրվում էին դարաշրջանի դասակարգային հարաբերություններով, այն էլ բանաստեղծի սոցիալական հենարանը սահմանափակելով նահապետական գյուղացիության կյանքի եւ գործունեության շրջանակներով՝ անտեսելով նրա ստեղծագործության համազգային եւ համամարդկային գծերը»³¹։

Վաստակաշատ Թումանյանագետն իրավացիորեն նկատում է, որ առհասարակ մեթոդին չպետք է վերաբերվել իբրեւ առանձին անհատների քմահաճույքի կամ անձնական-մասնագիտական նախասիրության։ Այն պատմական երեւույթ է, որ ամեն անգամ ձգտում է նորովի տեսնել հասարակական կյանքի եւ գեղարվեստի կապը։ Պետք է նկատի ունենալ նաեւ, որ նույն եղանակը տարբեր ուսումնասիրողներ կիրառում են

²⁹ «Կարմիր ծիլեր», №2, Թիֆլիս, 1923, էջ 25։

³⁰ «Մարտակոչ», №51, 1923։

³¹ Է. Գ. ԶԻՐԱՇՅԱՆ, Թումանյանը եւ հայ գրականության ավանդույթները, Երեւան, 1994, էջ 473։

տարբեր հիմնավորումներով եւ մոտեցումներով: Այս տեսանկյունից բնորոշ են թումանյանական մի քանի հետմահու հրապարակումներ:

Ո՛վ էր Թումանյանը՝ հարցադրում է հայտնի պատմաբան, պետական-կուսակցական գործիչ Ա. Հովհաննիսյանն իր «Հովհաննես Թումանյան» հոդվածում եւ պատասխանում՝ նա «հայ բանաստեղծական կուլտուրայի գագաթն» էր, որի խոսքը կլանում էր աճող սերնդին, իսկ ծերերի ականջին հնչում «որպես ժողովրդական դարավոր իմաստություն», «անմահանալու համար նա չէր սպասում մահվան»:

Հոդվածագիրը հետաքրքիր աղբյուրներ է տեսնում Թումանյանի գեղագիտական նախասիրությունների, կենցաղավարության եւ բազմատեսակ հետաքրքրությունների միջեւ: Նրա մտքի ու երեւակայության տեսադաշտում է բացարձակապես ամեն ինչ՝ «ժողովրդական պարզ առականերից մինչեւ խորախորհուրդ «Քառյակները», Հովվական քարայրից մինչեւ Սիրիուսի³² բարձունքները»³³: Աշխատասենյակը նման էր թանգարանի, հիշում է հոդվածագիրը, որտեղ կարելի էր տեսնել հայկական ու կովկասյան հնություններ, արվեստի պարզունակ ու դասական նմուշներ, գիտություն տարբեր ճյուղերի վերաբերող գրքեր: Նրա ընտանեկան հարկի տակ, պատկերը լրացնում է հոդվածի շարունակությունը, անընդմեջ հյուրընկալվող մարդկանց շարքերում երեւում են «բոլոր հասակի ու սեռի, ազգության ու դասի, դիրքի ու համոզմունքի» մարդիկ, որոնց տանտերը զբաղեցնում էր զարմանալի վարպետությամբ: Նախնիներից ժառանգած «անվերջ պայքար «գազանի ու հարամու» դեմ, բայց ներքնապես կազմակերպված սոցիալական կենցաղ, համայնական ինքնամփոփ ներդաշնակություն»³⁴, — եզրակացնում է Հովհաննիսյանը: «Կեցության այս երկվությունը» նա նկատում է նաեւ Թումանյանի պոեզիայում: Բայց հարցին՝ մեծարճում էր նա արդյոք անցյալը, թե՛ ողբերգում, միանշանակ պատասխան չի տալիս. «Համապարփակ երկերի մեջ, այնտեղ, որտեղ անդրադառնում է բովանդակ իրականությունը, Թումանյանի քնարն ունի հոռետեսական շեշտ. հոռետես է բանաստեղծը եւ այն երգե-

³² 1923 թ. հունվարյան զրույցներից մեկի ժամանակ Թումանյանը նկատում է. «Իմ վերջին շրջանը՝ փրիսոփայական շրջանը — «տիեզերական խոհերի» շրջանն է — Աշոտ Յովհաննիսյանն էլ էր կարծիքին էր «Սիրիուսի հրաժեշտի» առթիվ խոսելու ժամանակ: Նա շատ ճիշտ էր հասկացել եւ շատ սուր ու նուրբ նկատեց վերջին անգամ, երբ ինձ մօտ էր անջանը» (Ն. Թումանյան, Հուշեր եւ զրույցներ, Երեւան, 1987, էջ 304):

³³ «Նորք», №2, Երեւան, 1923, էջ 316:

³⁴ Անդ, էջ 317:

րի մեջ, որտեղ արտահայտություն է գտնում շահագործվող աշխատանքի «հոգան ու ջափեն»։ Բայց այնտեղ, որտեղ քնարերգում է բանաստեղծը նահապետական կենցաղի ներքին անդորրն ու մանուկ հոգու երջանիկ անմեղությունը, նրա քնարը հնչում է ուրախ ու զվարթ, համակում լուսաշող ապրումներով»³⁵։

Հավասարակշռության ձգտող այս պատասխանից հետո Հովհաննիսյանը, այնուամենայնիվ, արձանագրում է, որ գեղագիր պոետը բոլոր պարագաներում «հոռետես էր ներկայի նկատմամբ, մեծարում էր հեքիաթ դարձած անցյալը, մանուկ օրերի անհոգությունը»³⁶։ Ի տարբերություն Հ. Սուրիսայանի՝ Ա. Հովհաննիսյանը Հ. Թումանյանի գործերում նկատում է նաեւ ձեւավորվող ընկերային նոր գաղափարախոսության դրսևորումներ՝ զերծ «մարտական նացիոնալիզմից»։

Ճշմարտության դեմ չմեղանչելու համար Հովհաննիսյանը նկատում է, որ Թումանյանը պրոլետարական³⁷ պոետ չէր, սակայն, առաջնորդվելով «արվեստագետին պարտադրաբար որոշակի դասակարգային շրջանակների մեջ տեղադրելու»³⁸ սկզբունքով, շտապում է հավելել, որ բանաստեղծը պրոլետարական հեղափոխության մեջ նշմարում է «սոցիալական գալիք հարմոնիայի հեռանկարը... իր փայփայած հին ուխտի եւ հեղափոխության նոր նպատակների գաղափարական ազգակցությունը, ողջունեց նոր ժամանակներն ու գործերը»³⁹։ Բարոյական «հսկա կապիտալ նվաճած բանաստեղծը» Անդրկովկասի ամենախոշոր գրական անունն էր, համոզված է Հովհաննիսյանը։

Ալեքսանդր Մյասնիկյանի՝ «Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը» ծավալուն հոդվածը՝ «սոցիոլոգիական ափսոսանք» ենթավերնագրով, ավելի հստակ մեթոդաբանությամբ է

³⁵ Անդ, էջ 317–318։

³⁶ Անդ, էջ 318։

³⁷ Նոր ձեւավորվող խորհրդային գրականության ազգեցիկ դեմքերն ընդհանուր առմամբ Թումանյանին պրոլետարական գրող չէին համարում, թեև փորձում էին նրա արվեստում հեռանկարային ինչ-որ երանգներ նշմարել։ Պատճառներից հիմնականը գուցե այն էր, որ, ինչպես նկատում է Հ. Հակոբյանը, «Հովհաննես Թումանյան մեծ տաղանդ էր. նա երգեց իր ժամանակը, իր էպոխան (առանց մոտենալու այսօրվա գյուղացիական ավելի մոտիկ էտապներին) եւ այդպիսով լրացրեց այն բացը, որ անհրաժեշտ էր մեր գրական պատմության զարգացման համար» («Կարմիր ծիլեր», №1, Թիֆլիս, 1923, էջ 41–44)։ Ուրեմն Հ. Թումանյանը պատվով կատարեց իր պատմական առաքելությունը գրականության պատմության շղթայում՝ այնուամենայնիվ մնալով որոշակի հեռավորության վրա։

³⁸ Է. Գ. ՋԻԲԱՅԱՆ, Թումանյանը եւ հայ գրականության ավանդույթները, էջ 474։

³⁹ «Նորք», №2, 1923, էջ 319։

գրված: Հոդվածի սկզբում քննադատը սահմանում է իր տեսական ելակետը. «Բանաստեղծությունն ինքնին հասարակական մեծություն է: Նա սերտ կերպով կապված է ժամանակի ու տեղի հետ»⁴⁰: Ակնհայտորեն համատեղվում է երկու սկիզբ՝ արվեստի սոցիալական համարժեքի պլեխանովյան տեսությունը եւ ցեղի, միջավայրի ու ժամանակի պոզիտիվիստական պայմանը: Հետեւելով այս ուղեգծին՝ Ալ. Մյասնիկյանը Հ. Թումանյանի քնարերգության իր բնութագրմամբ՝ «լավկանությունն ու պեսիմիզմը» բացատրում է ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարասկզբին հայ ժողովրդի պատմական ճակատագրի ողբերգական շրջադարձերով, մասնավորապես արեւմտահայության ազատագրման հույսերի փլուզմամբ: Սրանով է պայմանավորում բանաստեղծի «նացիոնալիզմը»՝ այս հասկացության շրջանակներում դիտելով նաեւ «Հայրենիքիս հետ» հայտնի ժողովածուն: Անգամ այն ժամանակ, երբ բանաստեղծի ազգայնականության մեջ «էվոլյուցիա» է նկատում «դեպի լավը, դրականը», երբ նա «ազգերի համերաշխության եւ Կովկասի միջազգային խաղաղության գաղափարի պաշտպանի համբավն է ունեցել», «իր երկերում նա եղել է նացիոնալիստ»⁴¹:

Պետք է նկատի ունենալ, որ «նացիոնալիզմ» հասկացությունը Մյասնիկյանի հոդվածում գործածվում է ոչ այն իմաստով, որ շատ շանցած՝ մահացու խարան պիտի դառնար շատերի, հենց իր՝ Մյասնիկյանի համար: Դա նրա հոդվածում ավելի շուտ բանաստեղծի ստեղծագործությունը բնութագրող հասկացություն է, որ, ինչպես երեւում է առանձին ստեղծագործությունների վերլուծությունից, ամենեւին չի խանգարում բանաստեղծի անառարկելի մեծության եւ արժանի ժողովրդականության գիտակցմանը:

Շատ ավելի ուշ՝ 1960–70-ական թթ., Թումանյանագիտության մեջ արդեն խոսվում էր այս մասին: Էդ. Զրբաշյանը, օրինակ, արձանագրելով, որ նման որակումները երկար ժամանակ իրենց կնիքն են դրել Թումանյանագիտության վրա եւ այսօր թվում են միակողմանի, անում է կարեւոր վերապահություն. «Բայց չմոռանանք, որ 20-ական թվականներին դասական հեղինակին անպայման որեւէ դասակարգի գաղափարախոսի դերում պատկերացնելը գրեթե պարտադիր սկզբունք էր մարքսիստորեն

⁴⁰ Ալ. ՄԱՐՏՈՐՆԻ, Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը, Թիֆլիս, 1923, էջ 3:

⁴¹ Անդ, էջ 6:

մտածող գրականագետների համար»⁴²: Դա, այնուամենայնիվ, չի խանգարում Մյասնիկյանին օբյեկտիվորեն ու բանիմացաբար գնահատելու Թումանյանի արվեստը: Նկատի ունենալով բանաստեղծի էպիկական ժառանգությունը եւ ընդունելով շրջանառվող դրույթը, թե Թումանյանը հայկական Հոմերոսն է՝ գրում է. «Թումանյանի այս տեսակ գրվածքները, շատ չնչին բացառությամբ, զուրկ են սուբյեկտիվիզմից. նա օբյեկտիվ կերպով տալիս է հայ նահապետական գյուղի կերպարանքը: Կարծես նահապետական խոր ժամանակների ականատես պատմիչ լինի նա, որ այնպես վարպետորեն նկարում է «նոր կարգերից», կապիտալիզմից միանգամայն հեռու, նրանց հոտը չառած, իր լիակատար նահապետական, ինքնամոլոպի կյանքով ապրող գյուղի պատկերը»⁴³:

Անդրադառնալով հեքիաթներին ու պատմվածքներին, բարձր գնահատելով «Քաջ Նազարը», «Տերն ու ծառան», «Գիրքորը»՝ քննադատը հարցադրում է. «Ո՞րն է Հ. Թումանյանի հասարակական նշանակությունը»⁴⁴: Պատասխանը բխում է նրա վերլուծական մեթոդաբանությունից. Թումանյանի սոցիալական հենարանի ու գաղափարական դիրքորոշման պատմականորեն սահմանափակ լինելու հանգամանքը հանճարեղորեն ինքնաիրացվում է նրա ստեղծագործություններում: «Նա կարողացավ մեկուսանալ եւ խորասուզվել հայ էպոսի, հայ նահապետականության խորքերը,— բացատրում է Մյասնիկյանը:— Հայ նահապետականությունը եւ դյուցազներգությունը Թումանյանին դարձրին խոշորագույն գրող»⁴⁵:

Քննադատն անհիմն է համարում բոլոր այն կարծիքները, որոնց համաձայն՝ Թումանյանն աշխատանքի, աղքատ գյուղացիության երգիչ է, բանվոր-գյուղացիական բանաստեղծ կամ մոռացվող անցյալի ու հնի գրող: «Թումանյանի արժանիքը նրանումն է,— գրում է Մյասնիկյանը,— որ նա իր մեծ տաղանդով ծառայեց աշխատավոր գյուղին եւ հարազատորեն տվավ կուսական-նահապետական կյանքի պատկերը: Սա է դրականը: Սա է, որ Թումանյանին դարձնում է մինչալյուսոյա հայ գրականության խոշորագույն դեմքը: Նրան կկարդան երկար տարիներ: Ապագա սերունդները նրան կսիրեն շատ ժամանակ»⁴⁶:

⁴² Է. Գ. ՋՐԲԱՇՅԱՆ, նշ. աշխ., էջ 477:

⁴³ Ա. Լ. ՄԱՐՏՈՒՆԻ, Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը, էջ 20:

⁴⁴ Անդ, էջ 36:

⁴⁵ Անդ, էջ 36—37:

⁴⁶ Անդ, էջ 38—39:

Ժողովրդական բանավոր մշակույթի հետ Հ. Թումանյանի կապն այլ դրվածքով է իմաստավորում Խ. Սամվելյանը: «Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունը եւ հայ ազգագրությունը» հոդվածում նախ արձանագրում է, գուցե եւ ոչ առանց հիմքի, որ հայ ժողովրդական բանահյուսությունը, սովորույթներին, լեզվին հայն սկսում է ծանոթանալ նախեւառաջ գեղարվեստական գրականության միջոցով: Երեւոյթը բացատրում է նրանով, որ հայ ազգաբնակչության սոցիալական նկարագիրը «մեր իրականության մեջ անձնավորվում էր հայ գյուղացիությունը...»: «Ահա գյուղացիության այդ իդեալացումով,— շարունակում է հոդվածագիրը,— հայ վիպագրությունն ու բանաստեղծությունն ստացան բնորոշ ու յուրահատուկ գույն, ստեղծելով ժողովրդագրական ուղղություն, որ զարմանալի կենսունակություն ունեցավ հայ գրականության մեջ»⁴⁷:

Հ. Թումանյանի ամենահաջող գործերը համարում է նրանք, որ ներկայացնում են նահապետական գյուղն իր կենցաղավարությամբ, ապրումներով, գոյության նյութական ու հոգեւոր էատարրերով: Պատճառն այն է, իրավացիորեն բացատրում է հոդվածագիրը, որ ոչ թե ազգագրական ժողովածուները, այլ կենդանի իրականությունն է դառնում այն ակունքը, որից իր նյութերն է վերցնում նույն միջավայրում ծնված ու սնված բանաստեղծը:

Գ. Իփեկյանի «Յովհաննէս Թումանեան» հոդվածը գրված է հավանաբար բանաստեղծի մահվան գույժի անմիջական տպավորությամբ եւ ուշադրության արժանի է նրանով, թե անակնկալ կորստի ցավը ինչ արձագանք կարող է գտնել թատերական գործչի հուզաշխարհում: «Այնքան գեղեցիկ, այնքան հոյակապ ապրումներու ակն է այդ անունը,— գրում է Իփեկյանը,— այնքան կապուած է Կովկասահայութեան եւ Կովկասի կեանքի ամեն մէկ երեւոյթին կամ դէպքին, ամեն մէկ հին ու նոր օրերուն հետ, այնքան դրոշմած է իր կնիքը եւ իր գեղեցիկ անհատականութիւնը ամեն մէկ կովկասեան հիմնարկութեան վրայ, ըլլայ այդ պարզ ընկերական, ընտանեկան շրջան, կամ ամենալայն հասարակական շարժում, կամ գրական ու գեղարուեստական գործ, որ այդ մահը իր մէջ կը պարունակէ կարծես, մահուան մասնիկները ամբողջ երկրամասի մը, ամբողջ համայնքի մը կեանքի այլազան արտայայտութիւններուն»⁴⁸:

⁴⁷ «Ճորհրդային Հայաստան», №68, 1923:

⁴⁸ Հովհաննես Թումանյանի կյանքի եւ ստեղծագործության տարեգրություն (1920—1923), էջ 500: Հոդվածի կտրոնը պահվում է Թումանյանի թանգարանի մամուլի արխիվում

Թուժանյանն ամենուր է, ամենքինն է: Հեղինակի համար անպատկերացնելի է Կովկասն առանց Թուժանյանի, առանց նրա «բարի, զվարթ, ընկալու դեմքին պայծառ ճառագայթումի», առանց «գործոն, քաջալերող, ոգեւորող, պայքարող կամ խրախուսող առաջնորդի շեշտին»⁴⁹: Իփեկյանի յուրօրինակ ներբողը շարունակվում է զգացմունքների ու հույզերի անպարագիծ զեղումով: Թուժանյանը հայ ժողովրդի հարազատ զավակն էր, նրա անմնացորդ նվիրատուն, զոհաբերության պատրաստ առաքյալը: Հոգվածագիրը փորձում է ժամանակի ու տարածության հորիզոններում հայտնաբերել Թուժանյանական արվեստի ձեւերը, հոգեբանական նախապատճառը, ապա հիմնավորվածությամբ, գոյավորումը, անաղմուկ քնարերգության ու էպիկական հզոր շնչի զուգորդումները. «Այնքան բազմակողմանի, այնքան ինքնուրույն, այնքան ցեղականօրէն հարազատ է մեծ բանաստեղծին ստեղծագործութիւնը, այնքան գեղեցկագիտական՝ իր ամբողջութեան մէջ, որ ան վերջին երեսուն տարիներու շրջանին անվիճելիօէն իշխած է իբրեւ մեծ վարպետը, արեւելահայ գրականութեան վրայ, եւ առաջնորդած զայն դէպի ազգային գրականութեան ամենաչինչ ու վճիտ ներշնչումի աղբիւրները, ազատելով այդ գրականութիւնը միտումնաւոր, նպատակաւոր քարոզչական տափակութիւններէն... Անմրցելի պատմող, վսեմօրէն պարզ ու վճիտ, ներդաշնակօրէն երաժիշտ, աննմանելի նկարիչ, համակ սէր ու համակրանք դէպի մարդն ու կեանքը, համակիչ բարութիւնով մը թրթռուն, իմաստուն միամտութիւնով ու զուարթութիւնով առլեցուն, Յովհաննէս Թուժանեանի ստեղծագործութիւնը, հայ բանաստեղծութեան ամենամնայուն գեղեցկութիւններէն մէկն է... Անմահ է իր գործը»⁵⁰:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հովհ. Թուժանյանի մահվան կապակցությամբ գրված հոգվածների համաբնագրի ուսումնասիրությունը տեսանելի է դարձնում անառարկելի մի փաստ. բանաստեղծը ժամանակի կենտրոնաձիգ ուժն էր, որ, կամա թե ակամա հայտնվելով տարբեր ժամանակների ու տարածությունների հատման խաչմերուկում, դարձել էր ժողովրդի հոգեւոր ստեղծում-

(ԹԹ ԳՕՖ ՄԲ 97, «Ռամկավար», Եգիպտոս, 1923):

⁴⁹ Անդ, էջ 501:

⁵⁰ Անդ, էջ 502:

ներքի հավաքական հիշողության ու գոյության շարունակության հավատալորն ու առհավատչյան, կեցության կենդանի շարժիչը:

РЕЗЮМЕ

В статье представлены основные идеи публикаций, вышедших в свет непосредственно после смерти О. Туманяна, представляющие исключительную литературно-историческую ценность. До конца 1923 г. прессу наводнило бесчисленное количество публикаций, посвященных поэту. В большинстве из них Туманян и его творчество рассматриваются как исключительное литературное явление, которое уже становясь историей, анализировалось и оценивалось с разных аспектов. Авторы, обращаясь к прошлому, пытались объективно оценить заслуги поэта, открыть своего Туманяна.

Цель изучения статей, написанных в связи со смертью Туманяна, подчеркнуть тот факт, что поэт был центростремительной силой своего времени, воскресившей коллективную память и внесшей новое дыхание в психологическое бытие армянского народа.

Наша задача — обратиться к публикациям, представляющим ценность с литературно-исторической точки зрения, в которых сделана попытка разностороннего анализа и оценки художественных достижений поэта, эстетических критериев творчества. При изучении проблемы нами использовались метод сопоставительный, сравнительно-исторический, а также метод толкования текстов.

В статье делается вывод о том, что изучение публикаций, вышедших после смерти писателя и посвященных его творчеству, позволяет создать всеобщее поле интерпретации туманяновского мира, включающее интересные и разнообразные эстетические, психологические и культурологические вопросы, связанные с литературным творчеством писателя.

SUMMARY


The article presents the main ideas of the publications made on the occasion of H. Tumanyan's death, which are of exceptional literary and historical value. Until the

end of 1923, the press was flooded with countless publications devoted to the poet. In most of them, this exceptional literary phenomenon, who had already become history, was analyzed and evaluated from different angles. The authors, referring to the past, tried to assess the poet's merits in the soberest way, to discover their own Tumanyan.

The purpose of studying the articles written on the occasion of H. Tumanyan's death is to emphasize the fact that the poet was a centripetal force of his time, resurrecting the collective memory and giving a breath of fresh air to the psychological reality of the Armenian people.

Our task is to consider those publications in the press that are of literary and historical value, in which an attempt is made to analyze and evaluate the poet's artistic achievements in various aspects and aesthetic evaluation criteria. In studying the problem, we used comparative, comparative-historical and hermeneutical methods.

The article concludes that the study of publications issued after the writer's death and devoted to his works allows us to create a universal field of interpretation of Tumanyan's world, which includes interesting and diverse aesthetic, psychological and cultural issues related to literary works.



ԷԴԻԿ ՄԻՆԱՅԱՆ

Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

ԱՎԱՆԱՎՈՐ ԶՈՐԱՎԱՐԸ, ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ-ՊԱՏՄԱԲԱՆՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՀԱՅՈՐԴԻՆ

(Նովհաննես Քրիստափորի Բաղրամյան. 125)

Սկիզբը՝ թիվ ԺԲ. 2022 թ.:

Բաղրամյանի գլխավորությունով 16-րդ բանակը զգալի հաջողությունների հասավ հատկապես 1943 թվականի ձմռանը (հունվար-փետրվար ամիսներին) Ժիզդրայի ուղղությունում նոր հարձակման ժամանակ: Դրա հետեւանքով հակառակորդն ստիպված է լինում հեռանալ Ռժել-Վյազմայի հենակետից, որի շնորհիվ իսպառ չքացավ Մոսկվայի ուղղությամբ նրա հարձակման վտանգը եւ 16-րդ բանակը մեծ հաջողությամբ մասնակցեց Կուրսկի ռազմավարական ուղղությամբ ծավալվող խորհրդային զորքերի հարձակմանը: Ժիզդրայի ուղղությունում բանակի մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու համար գեներալ-լեյտենանտ Հովհաննես Բաղրամյանը 1943 թ. ապրիլի 9-ին պարգևատրվեց Կուստուզովի 1-ին աստիճանի զորավարական շքանշանով: Բարձր գնահատվեցին նաեւ բանակի ողջ անձնակազմի ցուցաբերած խիզախությունն ու անձնագոհությունը, ԽՍՀՄ պաշտպանության ժողովումի 1943 թ. ապրիլի 16-ի հրամանով 16-րդ բանակը վերակազմավորվեց 11-րդ գվարդիականի: «Գվարդիական» կոչման արժանանալը մեծ պատիվ էր բանակի անձնակազմի եւ նրա հրամանատարի համար: Դա նրանց մարտական սխրանքների ու հայրենիքի հանդեպ զինվորական պարտքը սրբորեն կատարելու բարձր գնահատականն էր: Բաղրամյանի զորավարական տաղանդը նոր ուժով դրսևորվեց 1943 թ. ամռանը՝ Օրլով-Կուրսկ-Բելգորոդ շրջանում հուլիսի 5-ից մինչեւ օգոստոսի 23-ը տեղի ունեցած ճակատամարտում:

Կուրսկի աղեղում ոչ միայն ամբողջովին ջախջախվեցին հակառակորդի 22 հետեւակային եւ 8 հրասայլային դիվիզիաներ, որոնց մի-

ընցով Հիտլերը մտադրվել էր փոխվրեժ լուծել Ստալինգրադի ճակատամարտում կրած խայտառակ պարտություն համար, այլեւ ընդմիշտ թաղվեց գեբեյսյան ստահոգ քարոզչության ստեղծած այն սին առասպելը, թե խորհրդային զորքերն ընդունակ են հաղթելու միայն ձմեռային պայմաններում: Առանձնապես մեծ էր գվարդիայի գեներալ-լեյտենանտ Բաղրամյանի դերը Օրյոլյան ճակատամարտում հաղթանակի ձեռքբերման գործում:

1943 թ. հունիս-օգոստոսին մասնակցելով Կուրսկի աղեղում ծավալված ահեղ ճակատամարտին՝ գեներալ Հ. Բաղրամյանի գլխավորած 11-րդ գվարդիական բանակն իրեն դրսևորեց փայլուն կերպով: Տեղակալված լինելով Կուրսկի աղեղից հյուսիս, հակառակորդի ուժեղ ամրացված Օրյոլի ելուստի դիմաց, 11-րդ գվարդիական բանակը հուլիսի 12-ին անցնելով հարձակման, ավելի քան մեկ ամսվա ընթացքում թշնամուն ետ շարտեց 200 կմ եւ մեծ դեր խաղաց գերմանաֆաշիստական «Կենտրոն» բանակախմբի՝ Օրյոլի ռազմավարական հենակետի վերացման գործում: Հատկանշական է, որ գերագույն գլխավոր հրամանատարի կենտրոնակայանում վերջնական քննարկման ժամանակ, Օրյոլյան հարձակողական գործողությունը («Կուտուզով») չհաստատվեց նախնական տեսքով, (որին կողմնակից էին Արեւմտյան եւ Բրյանսկի ռազմաճակատների հրամանատար՝ գեներալ-գնդապետներ Վ. Սոկոլովսկին եւ Մ. Ռեյտերը, ինչպես նաեւ՝ գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-գնդապետ Ա. Անտոնովը): Աներկյուղ դեմ գնալով իր անմիջական վերադասի առաջարկած ծրագրին եւ հիմնավորելով իր դիրքորոշումը խորհրդակցության մասնակից երիտասարդ Հովհ. Բաղրամյանը հասավ իր նպատակին. Ստալինը եւ մյուս ներկաներն ընդունեցին գործողության Բաղրամյանական տարբերակը: «Կուտուզով» գործողության հետագա ընթացքն ապացուցեց Բաղրամյանի իրավացիությունը¹:

Օրյոլի գործողության ընթացքում բանակի հմուտ ղեկավարման համար ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի 1943 թ. օգոստոսի 27-ի որոշմամբ Բաղրամյանին շնորհվեց գեներալ-գնդապետի կոչում: Նույն օրը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով գվարդիայի գեներալ-գնդապետ Հովհաննես Բաղրամյանը պարգևատր-

¹ Ску И. БАГРАМЯН, նշ. աշխ., էջ 506:

վեց Սուվորովի 1-ին աստիճանի՝ այն ժամանակվա բարձրագույն զորավարական շքանշանով:

Կուրսկի ճակատամարտի ավարտից մոտ երեք ամիս անց, 1943 թ. նոյեմբերի 17-ին, Հովհ. Բաղրամյանը նշանակվեց նորաստեղծ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, միաժամանակ նրան շնորհվեց բանակի գեներալի կոչում: Առաջ անցնելով ասենք, որ հաջորդ՝ Խորհրդային Միության մարշալի կոչումը հայ տաղանդավոր զորավարը կստանա միայն տասներկու տարի անց՝ Ստալինի մահից հետո, 1955 թվականին: Բանակի գեներալ Բաղրամյանի հրամանատարությունում 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի տարած մի շարք տպավորիչ հաղթանակները ավելի մոտեցրին վերջնական հաղթանակի օրը՝ դրանով մեծապես նպաստելով զորավարի փառքի տարածմանը: Առաջին նշանակալից հաջողությունը ձեռք բերվեց Վիտեբսկի ուղղությամբ 1943 թ. դեկտեմբերի 13–31-ը անցկացված «Գորոդոկյան» գործողության ժամանակ, որի արդյունքում ազատագրվեց երկաթուղային խոշորագույն հանգույց հանդիսացող Գորոդոկ քաղաքը²:

Հայրենական պատերազմի տարիներին Բաղրամյանն իր զորավարական փառքի գագաթնակետին է հասնում 1944 թ. ամռանը՝ Բելառուսական մեծածավալ հարձակողական գործողության ժամանակ, որը հայտնի է «Բագրատիոն» վերտառությունով: Բաղրամյանը ռազմակայանում անձամբ մասնակցում է գործողության ծրագրի քննարկմանը եւ հարձակման գլխավոր ուղղության վերաբերյալ անում արժեքավոր դիտողություններ, որոնք արժանանում են Ժուկովի, Վասիլևսկու, ապա՝ Ստալինի հավանությանը եւ ընդունվում³: Գործողության նախօրեին, հմտորեն օգտագործելով Դնեպրի եւ մյուս խոշոր գետերի գրոհանցման՝ խորհրդային զորքերի կուտակած հարուստ փորձը, Բաղրամյանը մեծ պատասխանատվությամբ իր բանակները նախապատրաստում է հնարավորինս արագ եւ մարդկային նվազ կորուստներով գետանցումներին: Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը հունիսի 23-ին անցան հարձակման: Հաջողությամբ հաղթահարելով ջրային հիմնական արգելքը եւ խորտակելով հակառակորդի մի քանի շերտերից բաղկացած պաշտպանություն-

² Տե՛ս «Հայկական բանակ», հ. 4, 1997, էջ 20–21:

³ Անդ, էջ 21:

նը՝ Բաղրամյանի բանակները հարձակում են ծավալում Վիտեբսկի եւ Պոլոցկի ուղղություններով: Հունիսի 26-ին ազատագրվում է Բելառուսիայի մարզային կենտրոն, երկաթուղային խոշոր հանգույց Վիտեբսկը, իսկ հուլիսի 4-ին՝ ազատագրման գործողությունների ընթացքին աչքի ընկավ 51-րդ գվարդիական՝ նախկին հայկական՝ 76-րդ հրաձգային դիվիզիան, որն արժանացավ «Վիտեբսկյան», իսկ գնդերը՝ «Պոլոցկյան» պատվանուններին)⁴:

Զարգացնելով ձեռք բերած հաջողությունը, Բաղրամյանի զորքերը մտնում են Լիտվա եւ սրընթաց առաջխաղացումով գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրում հարյուրավոր բնակավայրեր, որոնց թվում հուլիսի 22-ին՝ Պանեվեժիս 27-ին՝ Շաուլյայ քաղաքները, մտնում հն Լատվիայի տարածքը, օգոստոսի 1-ին ազատագրում Ելգավա քաղաքը, ապա, շարժվելով առաջ, դուրս գալիս Ռիգայի ծովածոց՝ դրանով իսկ հակառակորդի «Հյուսիս» բանակախումբը կտրելով Արեւելյան Պրուսիայից, սեպտեմբերի գերմանական «կենտրոն» եւ «Հյուսիս» բանակախմբերի միջև: Օգոստոսին, այդ քաղաքի մատուցներում ծավալվեց հրասայլային խոշոր ճակատամարտ, որի արդյունքում ձախողվեցին քաղաքը վերագրավելու եւ Բաղրամյանի ղեկավարած զորքերից վրեժխնդիր լինելու թշնամական կատաղի փորձերը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. հուլիսի 29-ի հրամանագրով «Բելառուսական» գործողության ժամանակ ռազմաճակատի զորքերը հմտորեն ղեկավարելու, այդ ընթացքում ձեռք բերած աչքի ընկնող հաջողությունների, ինչպես նաեւ ցուցաբերած արիության ու հերոսության համար բանակի գեներալ Բաղրամյանին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում⁵:

Բաղրամյանի մարտական կենսագրության փառապանծ էջերից են «Մերձբալթյան» եւ «Արեւելապրուսական» գործողությունները, որոնց ընթացքում խորհրդային զորքերն ազատագրեցին մերձբալթյան հանրապետությունները, խորտակեցին պրուսական յունկերների միջնաբերդ հանդիսացող Քյոնիգսբերգ քաղաք-ամրոցը: «Մերձբալթյան» գործողության ընթացքում Բաղրամյանի զորքերը 1945 թ. հունվարին ազատագրեցին բազում բնակավայրեր, որոնք հակառակորդը ռազմավարական հենակետերի էր վերածել: Առանձնակի հիշատակության է արժանի

⁴ Անդ:

⁵ Անդ, էջ 21:

Բաղրամյանի զորքերի վարպետորեն կատարած քողարկված զորաշարժը, երբ 6 գիշերվա ընթացքում, հակառակորդից աննկատ, Ռիգայի շրջանից Շաուլայի շրջան փոխադրվեց ավելի քան կես միլիոն մարդ, 10 000 հրանոթ ու ականանետ, ավելի քան 1300 տանկ եւ ինքնագնաց հրանոթ⁶:

Երբ զորքերի այսպիսի մեծ զանգվածը թշնամուց աննկատ հայտնվեց նոր գծի վրա եւ Մեմելի ուղղությամբ խոչընթաց հարված հասցրեց թշնամուն, Մերձբալթիկայում գտնվող ֆաշիստական 33 դիվիզիաներ կտրվեցին Արնեյան Պրուսիայից եւ սեղմվեցին Կուռլանդական «պարկում»՝ Լատվիայի Լիեպայա-Վենտսպիլս-Կանդավա շրջանում: Այսպիսով 1944 թ. աշնանը 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը Բաղրամյանի գլխավորությամբ մասնակցեցին Ռիգայի (1944 թ. սեպտեմբերի 14—հոկտեմբերի 22) Մեմելի (1944 թ. հոկտեմբերի 5—22) ռազմավարական հարձակողական գործողություններին, որի արդյունքում ազատագրվեց Մերձբալթիկայի մեծ մասը: Հակառակորդի այդ խոշոր խմբավորումը զրկվեց Գերմանիայի համար ընթացող հետագա մարտերին մասնակցելու հնարավորությունից եւ անձնատուր եղավ միայն 1945 թվականի մայիսի 9-ին⁷:

Լիտվան ազատագրելուց հետո Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը ռազմակայանի ցուցումով ուղղվեցին դեպի հարավ՝ Քյոնիգսբերգ:

Զորքերի ղեկավարումն ավելի գործուն դարձնելու նպատակով ռազմակայանը 1945 թ. փետրվարի 22-ին վերացրեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատը եւ նրա բանակների մի մասի հիման վրա ստեղծեց Զեմլանդյան օպերատիվ զորախումբը, որն ընդգրկվեց 3-րդ Բելառուսական ռազմաճակատի կազմում: Զեմլանդյան զորախմբի հրամանատար նշանակվեց բանակի գեներալ Բաղրամյանը: Նա միաժամանակ վարում էր ռազմաճակատի հրամանատար մարշալ Վասիլեւսկու տեղակալի պաշտոնը: Քյոնիգսբերգի գրավման հիմնական խնդիրը վստահվեց Բաղրամյանի զորախմբին: Հիտլերը մեծ նշանակություն էր տալիս Քյոնիգսբերգի պաշտպանությանը, քաղաքը վերածված էր մի անառիկ ամրոցի, որը հագեցած էր բերդամասերով, բազմաթիվ ամրակառույց կրակակետերով, մեծ եւ պաշտպանության համար հարմարեցված բացառիկ ամրապինդ շենքերով, մարտական մեքենաների եւ հետեւակի համար նախա-

⁶ Տե՛ս Ի. ԲԱՂՐԱՄՅԱՆ, Այսպես մենք հասանք հաղթանակի: Երեւան, 1979, էջ 616—617:

⁷ Անդ:

տեսված բազմապիսի հնարակերտ արգելափակոցներով, խանդակներով, շրափոսներով եւ այլն: Քաղաք-ամրոցի գրավման ծրագիրը մշակելիս Բաղրամյանը հատուկ ուշադրության էր արժանացրել ցամաքային գորքերի հետ ծովային եւ օդային ուժերի սերտ համագործակցությանը: Որպեսզի գորքերի հրամանատարական կազմն ավելի լավ կողմնորոշվի գրոհի ժամանակ, Բաղրամյանի ցուցումով մասնագետները հետախուզության ճշգրիտ տվյալների հիման վրա ստեղծեցին բերդաքաղաքի հսկա մանրակերտը, որում ամենայն մանրամասնությամբ տրվեցին հակառակորդի պաշտպանական ու ամրոցային կառույցների ամբողջ համակարգը, այն պաշտպանող գորքերի մասին անհրաժեշտ տեղեկություններ եւ այլն:

Այս առումով Բաղրամյանին շատ լավ է բնութագրել մարշալ Վասիլենսկին իր «Ամբողջ կյանքի գործը» գրքում. «Անտարակույս, Բաղրամյանը բնատուր կարողություններով օժտված զորավար է: Նա ունի եւ հրամանատարական, եւ շտաբային փորձ, որն օգնում էր նրան հաջող կերպով լուծելու ինչպես գորքերի ղեկավարման, այնպես եւ ռազմական գործողությունների ծրագրերի մշակման հարցերը. ընդ որում նա անպայման ձգտում էր գտնել հաղթանակի հասնելու ամենակարճ ճանապարհը»⁸:

Ապրիլի 9-ին Քյոնիգսբերգի կայսզորը անձնատուր է լինում: Ընդամենը չորս օր տեւած մարտերի ընթացքում (ապրիլի 6—9) ոչնչացվում է հակառակորդի շուրջ 42 հազար զինվոր ու սպա, 120 ինքնաթիռ, 104 հրասայլ ու ինքնագնաց հրանոթ, գերի է վերցվում 92 հազար մարդ, այդ թվում՝ 1800 սպա ու գեներալ⁹:

Անդրադառնալով Քյոնիգսբերգի անկմանը, քաղաք-ամրոցի գերված պարետ՝ գեներալ Օ. Լաշը խոստովանել է. «Ռուսական հրամանատարությունը լավ մշակեց եւ հիանալի իրագործեց այդ գործողությունը: Քյոնիգսբերգի անկումը Արեւելքի խոշորագույն ամրոցի եւ գերմանական պատնեշի կորուստն է»¹⁰: Այս գործողությունից Գազազած Հիտլերը, Օ. Լաշին որպես դավաճանի հեռակա կարգով դատապարտեց մահվան: Գերմանական հզորագույն ամրոցի կարեւորությունն էր վկայում այն փաստը, որ 1945 թ. հունիսի 9-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախա-

⁸ А. М. Василевский, Дело всей жизни, кн. 2-я, Москва, 1989, с. 281.

⁹ Տես Ի. Ք. ԲԱՂՐԱՄՅԱՆ, Այսպես մենք հասանք հաղթանակի էջ 735:

¹⁰ Անդ:

գահուծությունը հիմնեց «Քյոնիգսբերգի գրավման համար» մեդալը, որով պարգևատրվեցին գործողութայն մասնակիցները՝ ավելի քան 750 հազար մարդ: Ամրոցը գրոհելիս աչքի ընկած 98 միավորումների ու զորամասերի շնորհվել է «Քյոնիգսբերգյան» պատվանունը: Բանակի գեներալ Բաղրամյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահութայն 1945 թ. ապրիլի 20-ի հրամանագրով պարգևատրվեց Սուվորովի 1-ին աստիճանի երկրորդ շքանշանով:

Հայրենական մեծ պատերազմի վերջին մարտական գործողությունը, որին մասնակցել է բանակի գեներալ Բաղրամյանը, Քյոնիգսբերգից արեւմուտք՝ Զեմլանդյան թերակղզում պատսպարված Ֆաշիստական զորքերի 100-հազարանոց խմբավորման ջախջախման եւ Բալթիկ ծովի ափին թշնամու վերջին ռազմավարական ռազմակայանի՝ Պիլաու (Բալթիյսկ) նավահանգստի գրավման գործողությունն էր (ապրիլի 13–25): Գործողութայն վերջին օրերին Բաղրամյանը ռազմակայանի որոշմամբ նշանակվել 3-րդ Բելառուսական ռազմաճակատի հրամանատար:

Պիլաուի գրավումից հետո 3-րդ Բելառուսական ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Բաղրամյանի հիմնական խնդիրն էր՝ նվազագույն կորուստներով ավարտել հակառակորդի Զեմլանդյան գործախմբի մնացորդների ջախջախումը: Հիշենք, որ Ֆրիշե-Ներունգ ցամաքալեզվակում թշնամու 30-հազարանոց զորախումբը հանձնվեց¹¹: 1945 թ. մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրը, հակառակորդի մեծաթիվ զինվորներ անձնատուր եղան: 1945 թ. հունիսի 24-ին, Հովհ. Բաղրամյանը մասնակցեց Մոսկվայի Կարմիր հրապարակում տեղի ունեցած պատմական Հաղթանակի Զորահանդեսին՝ գլխավորելով 1-ին Մերձբալթյան համահավաք գունդը¹²:

Հետպատերազմյան տարիներին բանակի գեներալ Բաղրամյանը շարունակում է իր զինվորական ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերում՝ վարելով մի շարք պատասխանատու պաշտոններ, իր հարուստ ռազմական փորձն ու գիտելիքները ի սպաս զնելով երկրի պաշտպանութայն ամրապնդման գործին:

1945–1954 թվականներին նա Մերձբալթյան զինվորական օկրուգի զորքերի հրամանատարն էր 1954–195 թվականներին՝ ԽՍՀՄ պաշտպա-

¹¹ Անդ, էջ 735–736:

¹² Անդ, էջ 736:

նության նախարարության գլխավոր տեսուչ, 1955—1956 թվականներին՝ պաշտպանության նախարարի տեղակալ ընդհանուր հարցերի գծով: 1955 թ. մարտի 11-ին, ինչպես նկատեցինք վերելում, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով բանակի գեներալ Բաղրամյանին շնորհվում է Խորհրդային Միության մարշալի կոչում: 1956 թ. Խորհրդային Միության մարշալ Բաղրամյանը նշանակվում է գլխավոր շտաբի ակադեմիայի պետ, այն ակադեմիայի, որտեղ նա սովորել է աշխատել էր 1936—1940 թվականներին¹³:

Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս, ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պավել Ռոտմիստրովը, որն այդ տարիներին աշխատում էր նույն ակադեմիայում որպես ամբիոնի վարիչ, բարձր է գնահատել Բաղրամյանի աշխատանքը ակադեմիայի պետի պաշտոնում: «Բարձրագույն զինվորական ակադեմիան վերակառուցելու եւ զինված ուժերի ռազմագիտական իսկական կենտրոն դարձնելու համար նրա պետ է նշանակվում Խորհրդային Միության մարշալ Հովհ. Բաղրամյանը: Երկու տարվա արդյունավետ աշխատանքով զինված ուժերի բարձրագույն զինվորական կադրերի այդ դարբնոցը հասավ նոր բարձրության. նրա ղեկավարությամբ աշխատելը հեշտ էր,— գրում է Ռոտմիստրովը,— նա երբեք նախաձեռնությունը չէր կաշկանդում, իր կարծիքը չէր պարտադրում եւ համոզելը գերադասում էր կարգադրելուց: Նա սիրում էր կրկնել, որ գիտությունը չի կարելի հրամայել, ուստի եւ երբեք իր հեղինակության ծանր մահակը չէր իջնում ակադեմիայի գիտնականների գլխներին, եթե որեւէ հարցում նրանց կարծիքները տարբերվում էին իր կարծիքից: Ինձ հաճախ վիճակվում էր ռազմագիտության տարբեր հարցերով բանավիճել ակադեմիայի պետի հետ, բայց մեր վեճերը երբեք չէին անդրադառնում անձնական փոխհարաբերությունների վրա, այլ ընդհակառակը՝ փոխադարձ հարգանքի համար պայմաններ էին ստեղծում»¹⁴:

1958 թվականին մարշալ Բաղրամյանը նշանակվեց ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ զինված ուժերի թիկունքի պետ: Այդ պաշտոնում նա աշխատեց մինչև 1968 թվականը՝ խոշոր ավանդ ներդրելով խորհրդային բանակի, օդուժի եւ ռազմածովային նավատորմի

¹³ Անդ:

¹⁴ П. А. Ротмистров, Путь полководца, «Тыл и снабжение Советских воруженных сил» 1967, №11, с. 21.

հզորություններից մեկն էր համարում զինված ուժերի անձնակազմի, մասնավորապես զինվորների կենցաղի կազմակերպումը, նրանց հանդերձավորումն ու սննդի ապահովումը: Արժե նշել նրա ելույթը բարձրաստիճան հրամանատարների առջեւ «Հոգատարություն մարդկանց հանդեպ» խորագրով: Ելույթը հրապարակվել է բանակային մամուլում եւ դարձել մի յուրահատուկ հրահանգ հրամանատարների համար: Որոշ ժամանակ անց համաբանակային խորհրդակցությունում Բաղրամյանը հանդես է եկել «Զորքերի կենցաղի բարելավման խնդիրների մասին» վերտառությունում¹⁵:

Բաղրամյանի բարոյական նկարագրի մի հետաքրքիր վրձնահարված եւս: Բանակի գեներալ Վ. Կուրասովի վկայությամբ, Բաղրամյանը միշտ հետեւողական էր, որ մարտերում աչքի ընկած զինվորները պարգևատրվեն ժամանակին: Ուշացման դեպքում անողոք էր: Շատ հաճախ ինքն էր գնում զինվորական հիվանդանոցներ եւ այնտեղ վիրավորներին հանձնում պարգեւները:

Բաղրամյանի բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են բարությունը, համեստությունը, հարգանքն ու հոգատարությունը իր հետ առնչվող մարդկանց, մասնավորապես իր ստորադրյալների նկատմամբ, ընդհանրապես բարոյական մաքրությունը, մյուս կողմից, սկզբունքայնությունը, բարոյական խիզախությունը, խելամիտ պահանջկոտությունը նկատել եւ նշել են նրան ճանաչողներից շատ շատերը:

1968 թ. ապրիլին մարշալ Բաղրամյանը նշանակվեց պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչ: Գլխավոր տեսուչների խմբում էին ծառայում խորհրդային բանակի այնպիսի ճանաչված զորահրամանատարներ, ինչպիսիք էին մարշալներ Ժուկովը, Վասիլևսկին, Ռոկոսսովսկին, որոնք սրտաբաց են ընդունում այդ պաշտոնում իրենց վաղեմի մարտական ընկերոջ նշանակումը:

ԽՍՀՄ զինված ուժերին մատուցած ակնառու ծառայությունների, Հայրենական մեծ պատերազմում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարում ցուցաբերած արիության եւ հերոսության համար, ինչպես նաեւ ծննդյան 80-ամյակի առթիվ մարշալ Բաղրամյանը

¹⁵ «Հայկական բանակ», №4, 1997, էջ 23–24:

¹⁶ Տէս Ա. Ն. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ, Մարշալ Բաղրամյան (կյանքի եւ գործունեության ուրվագիծ): Երեւան, 1978, էջ 277:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1977 թ. դեկտեմբերի 1-ի հրամանագրով երկրորդ անգամ արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման¹⁷:

Մինչեւ իր կյանքի վերջը Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչի պաշտոնում զգալի աշխատանք է կատարել զինված ուժերի ամրապնդման, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության պետական խիստ կարեւոր նշանակություն ունեցող գործի կազմակերպման ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ նա շատ ժամանակ էր հատկացնում գիտական, գրական, հետազոտական աշխատանքներին, հրապարակում ռազմագիտական հոդվածներ, ռազմական պատմության վերաբերյալ դասագրքեր, Հայրենական մեծ պատերազմի պատմությունը լուսաբանող սովորածավալ աշխատություններ, խորհրդային ականավոր զորավարների մասին հուշեր: Հիշատակության են արժանի նրա «Հերոս քաղաքը Դնեպրի ափին»¹⁸, «Այսպես է սկսվել պատերազմը»¹⁹, «Այսպես մենք հասանք հաղթանակի»²⁰ եւ այլ արժեքավոր գրքեր, որոնք լայն ճանաչում են գտել եւ, հայերենից ու ռուսերենից բացի, թարգմանվել են նաեւ անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, բազմաթիվ այլ լեզուներով²¹: Հովհաննես Բաղրամյանի մենագրական աշխատությունները կարգալով՝ ընթերցողը հանձին դրանց հեղինակի տեսնում է ոչ միայն ականավոր զորավարի, այլեւ խորագիտակ ռազմական պատմաբանի: Կինելով ռազմական արվեստի վերաբերյալ խոր գիտելիքների տեր գիտնական՝ նա հենց այդ դիրքերից է մոտենում մարտական գործողությունների եւ այլ իրադարձությունների հետազոտմանը եւ գնահատմանը: Բաղրամյանը ռազմական իրադարձությունները վերլուծելիս կարողանում է դրանք վարպետորեն հարաբերակցել ռազմաճակատներում, ընդհանրապես երկրում ստեղծված իրադրության հետ: Նա այդպիսի անցումները կատարում է հետեւելով իրադարձությունների զարգացման

¹⁷ «Հայկական բանակ», թիվ 4, 1997, էջ 24:

¹⁸ [Կիելի հերոսական պաշտպանությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին], Երեւան, 1967:

¹⁹ [Հուշագրություն], Թարգմ.՝ Ա.Հ. Գասպարյան, Երեւան, 1975

²⁰ [Հուշագրություն], Թարգմ.՝ Ս.Մ. Մելիք-Ստեփանյան, Երեւան, 1979:

²¹ «Հայկական բանակ», №4, 1997, էջ 24::

ներքին տրամաբանությունը, եւ այդ պատճառով է, որ շարադրանքը պահպանում է իր ամբողջականությունը, ընդհանուր հենքը, թեեւ հեղինակը պատմում է հազարավոր մարդկանց՝ ինչպես զինվորների ու սպաների, այնպես եւ ականավոր զորավարների ու զորապետերի հրաշք-դյուցազնական սխրանքների մասին: «Մեծ զորավարը հետպատերազմյան տարիներին ընդգրկված էր նաեւ հասարակական-քաղաքական աշխատանքների մեջ. նա եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 2—9-րդ գումարման պատգամավոր: Հերոսի Ոսկե աստղի երկու մեդալներից բացի, զորավարը պարգևատրվել է Լենինի՝ յոթ, Հոկտեմբերյան հեղափոխության՝ մեկ, Կարմիր դրոշի՝ երեք, Սուվորովի 1-ին աստիճանի՝ երկու, Կուտուզովի 1-ին աստիճանի՝ մեկ, Հայրենիքին եւ ԽՍՀՄ զինված ուժերին մատուցած ծառայության համար 3-րդ աստիճանի մեկ շքանշաններով, բազմաթիվ մեդալներով, պատվավոր անձնական զենքով, օտարերկրյա շքանշաններով ու մեդալներով²²:

Իր զինվորական, պետական, հասարակական գործունեության ընթացքում մարշալ Բաղրամյանը մշտապես կապված է եղել իր հարազատ հայ ժողովրդի հետ, հաճախակի եկել է հայրենիք, մասնակցել մի շարք գործնական եւ հոբելյանական միջոցառումների, հանդիպումներ ունեցել Արարատյան դաշտավայրի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայքի, Սյունիքի եւ Արցախի բնակչության լայն խավերի հետ: Նա սերտ բարեկամական կապեր ուներ Մարտիրոս Սարյանի, Վիկտոր Համբարձումյանի, Արամ Խաչատրյանի, Անաստաս եւ Արտեմ Միկոյանների, Իվան Թեոսյանի, իր համագյուղացի, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի, գիտության, մշակույթի, պետական բազմաթիվ այլ գործիչների հետ: Նա համեստ ու զուսպ 24 մարդ էր, ատում էր կեղծավորությունն ու շողոքորթությունը: Բանակի գեներալ Կուրասովը, որը 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի շտաբի պետն էր, այդ մասին հիշում է. «Հովհաննես Բաղրամյանը ուժեղ կամքի տեր մարդ էր: Նա որոշումներն ընդունում էր առանց տատանումների եւ նույնիսկ ամենածանր ժամանակ երբեք չէր բղավում, չէր սպառնում, մինչեւ անգամ ձայնը չէր բարձրացնում: Բայց ենթականերից յուրաքանչյուրը նրա

²² Անդ:

կամքն ու հրամանները կատարում էր անառարկելիորեն: Այդ ամենից բացի, նա հոգի մարդ էր, նրա հետ աշխատելը հեշտ էր»²³:

Մարշալ Բաղրամյանը, որ ժամանակի ամենազարգացած ռազմական գործիչների բուլլից է, միաժամանակ արվեստասեր մարդ էր: Նա շատ էր սիրում գեղանկարչությունը՝ Իլյա Ռեպինի, Լեփտանի, Կրամսկոյի ստեղծագործությունները, Մարտիրոս Սարյանի բնանկարները, Դմիտրի Նալբանդյանի անկենդան բնության (still life) ու դիմանկարները: Նա երեւելի, լրջախոհ թատերասեր հանդիսատես էր. բաց չէր թողնում Մոսկվայի գեղարվեստական, ակադեմիական եւ Փոքր թատրոնների ոչ մի նոր ներկայացում, կարող էր շատ անգամ դիտել Օստրովսկու եւ Չեխովի թատերգությունները: Բաղրամյանը շատ էր սիրում ընթերցել: Նրա գրադարանը ոչ միայն լի էր ռազմապատմական, մասնագիտական գրքերով, այլեւ նրանում կողք կողքի շարված էին ռուսական, հայկական, համաշխարհային դասականների երկերը:

Ընդհանրապես մարշալը շատ ուշադիր էր մարդկանց հանդեպ, ոչ մեկի խնդրանքն անուշադրութան չէր մատնում: Որպես ԽՍՀՄ խորհրդի պատգամավոր օգտագործում էր բոլոր հնարավորությունները երբեմն նույնիսկ անձանոթ մարդկանց կյանքն ու կենցաղը բարելավելու համար: Հովհաննես Բաղրամյանի զինվորական ուղին ճանաչողներն առանձնապես հաճախ են նշում ստորադրյալների, հասարակ զինվորների նկատմամբ նրա հարգալից, հոգատար վերաբերմունքը:

Հարկ է առանձնացնել Չարդախլուում ռազմական փառքի թանգարանի ստեղծման գործին Բաղրամյանի մասնակցությունը: Նա նպաստեց, որ փոխվի թանգարանի շենքի կառուցման վայրը. թանգարանի երկհարկանի կառույցը հիմնվեց իր հայրական՝ արդեն խարխլված տան տեղում: Դա գլուղի մարտական փառքի խնդրին էր վերաբերում, ուստի նա թանգարանի համար ոչինչ չէր խնայում:

Բաղրամյանը մինչեւ մարշալ ժուկովի կյանքի վերջին օրերը, չնայած վերջինիս շնորհագրկմանը, մնաց նրա ամենամտերիմ բարեկամը: Դրա համոզիչ ապացույցն է ժուկովի դստեր՝ Մարգարիտայի պատասխանը «Վեչեռնյայա Մոսկվա» թերթի թղթակցի այն հարցին, թե «ու՞մ հետ էր մտերիմ ժուկովն իր կյանքի վերջին տարիներին»: Նա ասել է. «Հայրս բարեկամություն էր անում նրանց հետ, որոնց համարում էր իր զինա-

²³ Տես Մ. Ի. Մերժսնով, Զինվորը, գեներալը, մարշալը, Երևան, 1975, էջ 123:

կիցները: Իր ողջ կյանքը նա անցկացրել է բանակում՝ ավելի քան 50 տարի, եւ, բնականաբար, նրան առանձնապէս հարազատ էին զինվորական մարդիկ: Ամենից շատ նա հակված այն մարդկանց ընկերութեանը, որոնց հետ ապրել էր կյանքի դժգոհ փորձութիւններ՝ Ռոկոսսովսկու, Վասիլևսկու ընկերութեանը... բայց ամենից առաջ, իհարկեւ, Բաղրամյանի: Ի վան Քրիստափորովիչը նրա մերձավոր բարեկամն էր: Հայրս նրան սիրում էր նրա ազնիվ մարդկային հատկութիւնների, նուրբ հումորի, մեծ խելքի եւ ողջամտութեան համար»²⁴:

Ժուկովի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական տոնակատարութեան ժամանակ Մարգարիտա Գեորգիեւնան նրան պատրաստակամութեամբ հանդիպեց եւ լուսանկարվեց Հայաստանի պատմաբանների պատվիրակութեան հետ:

Հմայիչ մարդու, գիտնականի եւ ականավոր զորավարի կյանքի թելը կտրվեց 1982 թ. սեպտեմբերի 21-ին՝ Մոսկվայում: Կառավարութեան որոշմամբ նրա թաղումը կատարվեց սեպտեմբերի 24-ին, աճյունասափորը դրվեց Կրեմլի պատում: Հովհաննէս Բաղրամյանի անունն է կրում ՀՀ ԶՈՒ լավագույն միավորումներից մեկը: Նրա անունով կա ՀՀ ՊՆ գերատեսչական մեդալ՝ «Մարշալ Բաղրամյան»: Հայ զորավարի անունով են անվանակոչված բնակավայրեր եւ փողոցներ ՀՀ-ում, մետրոյի կայարան: Նրա անունը կրող փողոցի վրա է գտնվում իր արձանը:

Մարշալ Բաղրամյանի հիշատակն այսօր եւս վառ է մնում եւ միշտ էլ վառ կմնա համայն հայութեան սրտում:

РЕЗЮМЕ

В статье представлены жизнь и деятельность выдающегося полководца Советского Союза И. Х. Баграмяна. Работа основана на военно-исторической литературе, а также его личных воспоминаниях, трудах биографов и др. Особо отмечено что в 1920 году Баграмян участвовал в начавшейся в сентябре армяно-турецкой войне а также тот факт, что жизнь и деятельность известного армянского полководца были неразрывно связаны с его родным народом.

²⁴ «Вечерняя Москва», 8 мая 1993, *Բաղրամյանի եւ Ժուկովի փոխհարաբերութիւնների մասին ավելի հանգամանորէն տես Վ. ՄՈՒՐԱԳՅԱՆ, Մարշալ Բաղրամյանը մարշալ Ժուկովի մասին. «Հայկական բանակ», 1997, հ. 1–2, էջ 5–19:*


SUMMARY

The article presents the life and activity of the outstanding commander of the Soviet Union H. K. Baghramyan. The work is based on military-historical literature, as well as his personal memoirs, works of biographers, etc. It is especially noted that Baghramyan took part in the Armenian-Turkish war that began in September 1920, as well as the fact that the life and activities of the famous Armenian commander were inseparably linked to his native people.

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ի Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Ի Ց

Ռազմավարական անակնկալների վարպետ²⁵ մականունն արժանատրաբար վաստակած Յովհաննէս Բաղրամեանի ծրագրած եւ իրականացրած գործողություններն անուրանալի ներդրում էին Բ. Համաշխարհային պատերազմի յաղթանակը կոելու գործում, ուստի եւ դրանք մարդկութեան անցեալի շխունացող էջերից են: Սակայն համաշխարհային պատմութեան ընթացքի վրայ ամենաշատն ազդած իր գործողութիւնը նաեւ ամենագաղտնիս է՝ «Անադիր» «յատուկ միջոցառումը», որի ժամանակ ԽՍՀՄ գրեթէ անհաշուելի քանակութեան զինտեխնիկական եւ կենդանի ուժը թշնամու համար կատարելապէս աննկատ՝ «յանկարծակի յայտնուեցին» Կուբայում:

Այս գործողութեանը վերաբերող դրուագները նպատակային կերպով շրջանցուել են յօդուածում եւ կներկայացուեն առանձին:



²⁵* *Տէս օր.* <https://army.ric.mil.ru/Stati/item/460852/>:



ԱԼԵՔՍԱՆԳՐ ՌԻՔԻՆ

ՆԻՆՎԵԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ ԺԲ. 2022 թ.

ՄԱՍ 2. ՆԻՆՎԵԻ ՀԱՐԹԱՎԱՅՐԸ

Իրաքի ասորիներին մասին պատմությունը շարունակելու համար անհրաժեշտ է նախ անդրադառնալ նրանց պատմությանը, աշխարհագրությանը եւ այն հարցին, թե ինչ է նշանակում քրիստոնեությունը նրանց համար: Առանց նրանց նախաքրիստոնեական եւ քրիստոնեական անցյալի անհնար է հասկանալ նրանց կապվածությունը Իրաքին, մասնավորապես Նինվեի հարթավայրին:

Թե որքան հզոր եւ զարգացած էր նախաքրիստոնեական ասորական քաղաքակրթությունը, հայտնի է երկու անգլիացի եւ մեկ ասորի հնագետների շնորհիվ: ԺԹ. դարի կեսերին Օսթրին Հենրի Լեյարդ անունով անգլիացին ձեռնամուխ եղավ Տիգրիսի ձախ ափին գտնվող Կուլունջիկ բլրի պեղմանը: Ներկայումս բլուրը ձախափնյա՝ Արեւելյան Մոսուլի մաս է: ԺԹ. դարում Մոսուլն ամբողջությամբ տեղավորվում էր գետի աջ ափին: Իսկ բլրի վրա արածում էին ոչխարների հոտերը. դրա համար էլ այն անվանում էին «ոչխարի արոտավայր» (թուրքերեն՝ «կոլունջիկ-գոլունջիկ»):

Լեյարդը հավատացած էր, որ սա ոչ թե պարզապես բլուր է, այլ Ասորեստանի թագավորության հինավուրց մայրաքաղաք Նինվեի ավերակներն ամփոփող: Այն մասին, որ Նինվեն գտնվում է հենց Կուլունջիկի հողաշերտի տակ, կռահել էր մեկ այլ անգլիացի՝ Բադդադում Բրիտանական կայսրության գլխավոր հյուպատոս Կլավդիոս Ջեյմս Ռիչը: Նա ուսումնասիրում էր ասորական քաղաքակրթությունը, որն այն ժամանակ հայտնի էր միայն Աստվածաշնչի եւ հին հույների ու պարսիկների աշխատությունների շնորհիվ: Համեմատելով Նինվեի տարբեր նկարագրությունները՝ Ռիչը եզրակացրեց, թե որտեղ պետք է փնտրել այն: 1820 թվականին պեղումներ սկսեց Կուլունջիկում: Նա հայտնաբերեց սեպագիր արձա-

նագրություններով մի քանի տախտակներ եւ կավի բեկորներ: Սակայն ընդամենը մեկ տարի անց Ռիչը վախճանվեց: Նա մահացավ այդ վայրերում մոլեզնող հնդկախտից:

Ընդհանրապես, Վերին Միջագետքում ցանկացած բլրի տակ, որը մեկուսի կանգնած է հարթավայրում (արաբերենում դրանք կոչվում են «թեյ» կամ «թալ»), շատ մեծ հավանականությամբ, թաքնված է ինչ-որ հնագույն բնակավայր: Սակայն նմանատիպ ոչ բոլոր բլուրներն են ուսումնասիրված նույնիսկ մեր ժամանակներում: Ուր մնաց, թե ժԹ. դարում: Նինվեի որոնումները գրավել էին մեծ թվով եւրոպացի հետազոտողների: Յուրաքանչյուրը համոզված էր, որ հենց «իր բլրի» տակ են թաքնված երբեմնի հարուստ ու փառահեղ ասորական մայրաքաղաքի հետքերը: Իտալական ծագումով Ֆրանսիացի գիտնական Պոլ էմիլ Բոտտան, օրինակ, 1843 թվականին Խորասբագ գյուղակի մոտ (Մոսուլից հյուսիս-արեւելք) բլուր պեղեց: Հողի տակ գտնվեցին հոյակերտ պալատի պատերն ու սյուները: Պալատի մուտքը հսկում էին առասպելական աժդահա հրեշները՝ ցլի կամ առյուծի թեւավոր մարմնով, մորուքավոր տղամարդու գլխով: Աչքերը պատրաստված էին գունավոր քարերից: Բոտտան հեռագրում է Փարիզ՝ նշելով, որ գտել է Նինվեն: Նա վստահ էր, որ սա այն քաղաքն է, որով հիանում էին անտիկ հեղինակները: Սակայն հետագայում պարզվեց, որ Բոտտան հայտնաբերել է Դուր-Շարուքինը, որը նույնպես ասորական քաղաք էր, բայց եւայնպես բավականին զիջում էր Նինվեին:

1847 թվականին գործի է անցնում Լեյարդը՝ հավատալով իր հայրենակից Ռիչի ենթադրություններին: Կուլունջիկի մոտ նկատվել էին հնագույն արհեստական ջրանցքների հետքեր: Լեյարդը ենթադրում է, որ դա կարող է լինել ասորական մայրաքաղաքի ջրամատակարարման համակարգը: Ուստի նա սկսում է փնտրել Նինվեն մեծ ջրանցքի եւ Տիգրիսի միջեւ: Շուտով հաջողվում է հայտնաբերել մեծ դարպասները, որոնց կողքին կանգնեցված էին թեւավոր ցլերը: Մեկ տարի անց պեղվում է թագավորական պալատը: Բայց սրանք բոլորը երբեմնի գոյություն ունեցած պետութայն լուռ վկայություններն էին: Ամենակարեւոր բացահայտումն անում է Լեյարդի օգնական Հորմուզդ Ռասսամը, որ ծնունդով Մոսուլից էր, ազգությամբ ասորի: Նա կրթություն էր ստացել Օքսֆորդում եւ բրիտանական իշխանություններն իրեն ուղարկել էին՝ օգնելու անգլիական արշավախմբին, որը փորում էր Կուլունջիկը: Երբ Լեյարդը, չդիմանալով տեղի բնական պայմաններին, ստիպված եղավ վերադառնալ Անգլիա,

պեղումները գլխավորեց Ռասսամը: Եւ 1854 թվականին նրան հաջողվեց գտնել Աշշուրբանիպալ թագավորի գրադարանը՝ ներկայումս հայտնի ասորական ամենամեծ գրադարանը: Հին Ասորիքը վերջապես «խոսեց»:

Գրադարանը հավաքվել է Աշշուրբանիպալի հրամանով՝ 25 տարում: Այն պարունակում էր տասնյակ հազարավոր պատմական, հրաշապատում եւ գիտական գրվածքներ (հնագետներին հաջողվել է գտնել 30 հազար միավոր):

Գրիչները պատճենում էին կավե գրքերը, որոնք պահվում էին ամբողջ կայսրությունում, Բաբելոնում եւ Միջագետքի հին մշակույթի այլ կենտրոններում: Իսկ այդ գրադարաններն իրենց հերթին ձեւավորվել են դարեր շարունակ:

Բոլոր սալիկները նույն չափի էին: Յուրաքանչյուրի ստորին հատվածում «գրքի» անվանումն էր, որին նա դասվում էր, եւ «էջի» համարը: «Գրքի» վերնագիրը առաջին սալիկի վրա գրված սկզբնական բառերն էին: Աշշուրբանիպալի գրադարանում բնագրերը տեղադրվում էին որոշակի կարգով՝ ըստ գիտելիքների բնագավառների, առանձին դարակաշարերի վրա: Անհրաժեշտ նյութերի որոնումը դյուրացնում էին գրացուցակները, որոնցում, բացի «գրքի» վերնագրից, նշվում էր դրան վերաբերող յուրաքանչյուր սալիկի տողերի քանակը: Բոլոր էջերի վրա պարտադիր դրվում էր կնիք՝ «էկալ Աշշուրբանիպալ, շար քիշշատի, շար մատ Աշշուր...» («Աշշուրբանիպալի պալատ, Տիեզերքի թագավոր, Ասորեստանի թագավոր...») գրությունը: Ընդ որում՝ գրադարան մուտք ուներ կայսրության ցանկացած բնակիչ, որ կարող էր ընթերցել սեպագրերը:

Այս արձանագրությունների վերձանման շնորհիվ կարելի էր մանրամասն պատկերացում կազմել Ասորեստանի թագավորության կյանքի մասին: Անհետացած քաղաքակրթության մշակույթը իմաստային ծավալ է ստանում: Պետք չէր կռահել, թե ինչ եւ ինչպես է եղել, պարզապես պետք էր կարդալ:

Հենց Նինվեի գրադարանում է հայտնաբերվել «Գիլգամեշ» էպոսը՝ աշխարհի հնագույն գրական ստեղծագործություններից մեկը, որից Աստվածաշնչի հեղինակները փոխառել են առանձին պատումներ (օրինակ՝ Համաշխարհային ջրհեղեղի մասին եղածը): Ինչ խոսք, վեպն ստեղծվել է ասորիներից շատ ավելի վաղ՝ Շումերում, ավելի քան չորս հազար տարի առաջ: Շումերը, ինչպես հայտնի է, համարվում է Միջագետքի առաջին քաղաքային քաղաքակրթությունը:

Ասորիները՝ սեմական ծագում ունեցող քոչվորները, Միջագետք են խուժել Արաբական թերակղզուց մոտավորապես չորսուկես հազար տարի առաջ: Նրանք շատ բան են փոխառել շումերների արդեն իսկ զարգացած քաղաքային քաղաքակրթությունից: Սկսել են նստակյաց կյանք վարել: Կառուցել են առաջին քաղաքը՝ Տիգրիսի ափին: Այն անվանել են Աշշուր՝ ի պատիվ իրենց հովանավոր աստծո՝ պատերազմի աստծու: Առաջին քաղաքի անվանումն անցել է ամբողջ ժողովրդին եւ հետագայում նրա ստեղծած կայսրությանը: Աշշուրը, Ասորեստանը այնուհետեւ արաբների եւ թուրքերի միջամտության մեջ վերափոխվել է «Սիրիայի»:

Ասորական պետության արագ զարգացմանը, տնտեսական հզորության ամրապնդմանը նպաստեց բարենպաստ աշխարհագրական դիրքը: Լեռնային շրջաններում առատ էին հանքաքարը, քարը եւ անտառները: Պետության միջով էին անցնում ամենակարճ ուղիները դեպի Իրան, Ուրարտու, Փոքր Ասիա եւ Միջերկրական ծովի երկրներ:

Ընդլայնելով իրենց պետությունը՝ ասորիները նվաճում էին օտար քաղաքներ, հիմնում իրենց քաղաքները: Հաճախակի էին տեղափոխում մայրաքաղաքը մի տեղից մյուսը: Կառուցում էին այն նորովի, յուրաքանչյուր նոր թագավոր, անշուշտ, փորձում էր գերազանցել նախորդին իր գլխավոր քաղաքի հարստության մեջ ու շքեղության մեջ: Ասորեստանի մայրաքաղաքներին բնորոշ էր այն, որ դրանք գտնվում էին միմյանցից համեմատաբար ոչ հեռու՝ Տիգրիսի ափին, ներկայիս Իրաքի հյուսիսում: Դրանցից ամենաշքեղն է համարվում Նինվեն: Այն, փաստորեն, դարձավ Ասորեստանի վերջին մայրաքաղաքը. հենց այդ քաղաքն էր մարմնավորում քաղաքակրթության նվաճումները, որոնք այդ ժամանակ գոյություն ունեին արդեն մեկուկես հազարամյակ:

Քաղաքի անվանումը նշանակում է բնակարան կամ Նինոսի քաղաք: Նինոս թագավորը, ենթադրաբար, ասորական միապետության հիմնադիրն է: Նա ապրել է (այս հարցում աղբյուրները տարակարծիք են) Ք. ա. ԻԱ. կամ ԺԶ., կամ ԺԴ. դարերում:

Նինվեն կայսրության մայրաքաղաք դարձրեց Սենեքերիմ (Սինաքերիբ) արքան (որը թագավորել է Ք. ա. 705—681 թվականներին): Նրա հրամանով բանվորները գրեթե տասը հարկանի տան բարձրության հարթակ կառուցեցին: Դրա վրա խոյացան թագավորական պալատը, տաճարները, զինկոտրատը (բազմաստիճան պաշտամունքային տաճար-աշտարակ): Ճահճային գոլորշին այստեղ չէր հասնում: Այգեգործները պա-

լատի գիմաց հիմնեցին հազվագյուտ բուսականությամբ այգի, շինարարները փորեցին լճակներ, որոնք զովություն էին ապահովում, լճակներում լողում էին կարապներ ու այլ թռչուններ:

Նինվեն ահռելի մեծ քաղաք էր: Նրա տարածքը հավասար էր Հոռմի տարածքի երկու երրորդին Ք. հ. Գ. դարում (այսինքն՝ Հոռմեական կայսրության ծաղկման գագաթնակետին), իսկ բնակչությունը հասնում էր 170 հազար մարդու: Տները մեծ էին ու լուսավոր, փողոցները լայն էին, ուղիղ ու կանաչ: Կենտրոնական փողոցը, որն անվանում էին Թագավորական, ուներ 26 մետր լայնություն, որն ավելի լայն է, քան Սանկտ Պետերբուրգի Նևսկի պողոտան: Այն ծածկված էր մայրաձյութով, երկու կողմից զարդարված էր արձաններով:

Նինվեի հովանավորը Իշտար աստվածուհին էր. քաղաքում նրա պատվին տաճար էին հիմնել: Հետաքրքիր է, որ նա միաժամանակ համարվում էր սեռական զվարճանքների եւ վեճերի, պտղաբերության եւ պատերազմների աստվածուհի: Իշտարի մեկ այլ տաճար գտնվում էր 80 կմ դեպի արեւելք՝ ասորական Արբիլում (այժմ՝ էրբիլ, Իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաքը):

«Գիլգամեշ» վեպում աստվածուհին հիշատակվում է որպես հայտնի պոռնիկ, որը փորձում է գայթակղել Գիլգամեշին: «Ես քեզ համար որթատունկ կլինեմ, իսկ դու այն ձողն ես, որին ինձ կապում են, դու կլինես իմ ամուսինը, իսկ ես կլինեմ քո կինը: Ես քեզ կտամ լաջվարդից ու ոսկուց պատրաստված կառք՝ ոսկե անիվներով, եւ ապակե զարդեր, որպեսզի ամեն օր քո հզոր ձիերը դրան լծես», — համոզում է Իշտարը հերոսին: Բայց Գիլգամեշը հրաժարվում է նրա քնքշանքներից. նա հիշեցնում է տարփուհուն, թե քանի հերոսի եւ աստվածների է նա արդեն գայթակղել ու հետո դավաճանել: Անվանում է նրան «հերոսի գլխին փուլ եկող պալատ»:

Կույունջիկում հայտնաբերված կավե սալիկներից մեկը վկայում է, որ Իշտարի մասին պատմությունները Աշշուրբանիպալ թագավորի սիրած ստեղծագործություններից էին: Նման ստեղծագործություններից էր «Իշտարի էջքը դժոխք»: Այս բնագրում կարելի է գտնել բավականին նմանություններ Հին եւ Նոր Կտակարանների պատումների հետ: Առանցքային պահը մեռյալներից հարություն առնելն էր: Իշտարը ճանապարհորդում է դժոխքում՝ իր ամուսնուն (հերթական)՝ հովիվ Թամուզ աստծուն հարություն տալու համար: Սակայն ինքն է մահանում, երբ զրկվում է իր

բոլոր հագուստներից ու զարդերից: Իշտարին հաջողվում է կյանք վերադառնալ «անմահական ջրի» շնորհիվ: «Անմահական ջրով» նրան ցողում է դժոխքի ծառան՝ ժանտախտի դեւ Նամթարը: Իշտարը վերադառնում է մարդկանց եւ աստվածների աշխարհ՝ Թամուզին թողնելով դժոխքում հիմա նա պետք է ապրի մահացածների մեջ Իշտարի փոխարեն:

Աշտուրբանիպալի կառավարման ժամանակահատվածը համընկնում է ասորական կայսրության ծաղկման վերջին շրջանին: Նա իշխել էր Ք. ա. 669—627 թթ. (մոտավորապես): Նրա օրոք տեղի են ունեցել մի քանի շատ հաջողված ռազմարշավներ հարեան պետությունների դեմ (ասորական բանակը հասել է Եգիպտոս եւ Արաբական թերակղզի): Պարտված տիրակալների կտրված գլուխները ուղարկվում էին Նինվե: Գլուխները կախում էին Աշտուրբանիպալի պալատում՝ այն սրահներում, որտեղ նա հաղթախնջույքներ էր կազմակերպում: Նրա օրոք կայսերական մայրաքաղաքում հայտնվել են ասորիների ռազմական սխրանքները պատկերող բազմաթիվ խորաքանդակներ՝ թշնամու ամրոցները գրոհող, գետերը ճեղքող, նժույգներին լողացնող ու մարտի պատրաստող ռազմիկներ, ստրուկների շարքեր, զամբյուղներով հող ու քարեր քարշ տվող բանվորներ, որոնք հաղթողների համար պալատների պատերն են կառուցում:

Աշտուրբանիպալ թագավորի մահից հետո կայսրությունն սկսեց անկում ապրել: Ք. ա. 610 թվականին, երկամյա պաշարումից հետո, մարերի ու բաբելոնացիների միավորյալ բանակը գրավեց Նինվեն: Ասորեստանի թագավոր Սինշարուիշչունը, գիտակցելով, որ պարտությունն անխուսափելի է, գլխավոր պալատում հավաքեց կանանց, մերձավորներին, հարազատներին, գանձերը եւ հրկիզեց ամենը: Բաբելոնացիների եւ նրանց դաշնակիցների հաջողություններն ասորական պետության դեմ պայքարում բացատրվում են ոչ միայն ասորական բանակի թուլությունը, որն այդ ժամանակ համալրված էր այլ ազգային խմբերի մեծաթիվ ներկայացուցիչներով, այլեւ առաջին հերթին հենց ժողովրդի անտարբերությունը, որը տառապում էր թագավորների, ազնվականության, քրմերի եւ ստրկատերերի իշխանությունից:

«Ասորեստանի գլուղացիությունը, — գրել է պատմաբան-արեւելագետ Իգոր Դյակոնովը, — աղետալի վիճակում էր եւ տառապում էր մեծ գանձումներից, հարկային պարտավորություններից եւ տուրքերից»: Դյակոնովը կարծում է, որ Բաբելոնի եւ Մարաստանի հարձակումը արժանացել է ասորիների համաժողովրդական աջակցությանը, քանի որ նրանք փոր-

ձեւ են տապալել թագավորական հարստութիւնը եւ այդ հարցում մեծ դեր են հատկացրել բաբելացիների ու մարերի զորքերին: «Գեդգի տարեգրութիւնից»¹ հայտնի է, որ Նինվեում հաղթողները ոչնչացնում էին հիմնականում ազնվականութեանը:

Նինվեի կործանումը նկարագրել է աստվածաշնչյան Նաում մարգարեն: «Վայ արշունահեղութեանց քաղաքին... մարտակառքը սլանում է, սուրը շողում է եւ նիզակները փայլում են. բազում են սպանվածները եւ դիերի կույտեր են: Անհամար են դիակները, եւ նրանց վրա սայթաքում են... Քնած են քո հովիվները, ով Ասորեստանի թագավոր, քո ազնվականները ննջում են, քո ժողովուրդը ցրվել է սարերում, եւ չկա մեկը, որ հավաքի նրան»: Նինվեն արժանի էր կործանման, գրել է Նաում մարգարեն իր գրքում, նա թաթախվել է «պոռնկութեան» եւ «դուրսհանում» մեջ: «Սա պատիժ է կախարհութեան մեջ հմուտ հաճելի արտաքինով պոռնիկին շատ պոռնկութեանների համար, որն իր պոռնկութեամբ վաճառում է ազգերին եւ իր դուրսհանումը՝ ցեղերին»: Նաում Մարգարեի ամբողջ գիրքը, որը դարձել է Հին Կտակարանի մի մասը, նվիրված է Նինվեի կործանմանը:

Մահվանից հետո Նաումը թաղվել է ավերված ասորական մայրաքաղաքից ոչ հեռու, 50 կմ հյուսիս-արեւելք՝ Ալկոշ քաղաքում: Ալկոշում հինկտակարանյան մարգարեի գերեզմանը դեռեւս պահպանվում է: Ճիշտ է, դամբարանի մի մասը փլուզվել է, մասամբ խարխուլվել են պատերը: Պահպանված պատերից մեկի վրա կա երբայեցերեն ցուցանակ՝ ննջեցյալի մասին:

Ալկոշը գտնվում է հարթավայրի հենց եզրին՝ հարթավայրը եզերող լեռների լանջին, որը ի պատիվ ասորական հին մայրաքաղաքի կրում է Նինվեի անվանումը:

Նինվեի հարթավայրը՝ արեւմուտքից Տիգրիս գետի, հարավից Մեծ Զաբ գետի եւ արեւելքից ու հյուսիսից լեռնաշղթաների (ամենաբարձրը Գելի Քուրդ լեռնաշղթան է, այս լեռնաշղթայի ստորոտին գտնվում է Ալկոշը) միջեւ ընկած տարածք է: Դա շատ բերրի գոտի է: Ըստ երեւույթին, բնական բարենպաստ պայմանների եւ բերքառատության համար են ասորիներն ընտրել այս հարթավայրը որպէս իրենց կայսրութեան կենտ-

¹ Բրիտանական թանգարանի եգիպտական եւ ասորական հնութեանց բաժանմունքի պատասխանատու Կիրիլ Զոն Գեդգը 1923 հրատարակեց The Newly Discovered Babylonian Chronicle, No. 21, 901, In The British Museum, գիրքը, նորահայտ սալիկով լույս սփռելով ասորական անցյալի վրա:

րոն (բացի Նինվեից, նույն տարածաշրջանում են գտնվել կայսրության այլ մայրաքաղաքներ եւս՝ Նեմրուժը եւ Դուր-Շարուքինը):

Այն բանից հետո, երբ բաբելացիներն ու մարերը գրավել են Նինվեն, բնակիչները լքել են այն եւ այլեւս չեն վերադարձել: Ասորական նոր քաղաքը հիմնադրվեց Տիգրիսի հանդիպակաց ափին՝ Մոսուլը: Մոսուլի ամենավաղ փաստագրված հիշատակումը է հույն զորահրամանատար Քսենոփոնինն է, որ գրողմված է իր գլխավոր «Անաբասիս» գրքում: Ք. ա. 401 թվականին Քսենոփոնը՝ տասը հազար հույն վարձկանների գլխավորությամբ, Պարսկաստանից նահանջի ճանապարհին տեսել է քաղաքի լքված պաշտպանական կառույցները: Նա գրում է, որ քաղաքը գրավել են պարսիկները, ուստի եւ այն ամայացել է: Հետագայում Մոսուլը նոր շունչ առավ, հավանաբար, շնորհիվ այն բանի, որ գտնվում էր մերձավորարեւելյան տարածաշրջանի արեւելքն ու արեւմուտքը միացնող կարեւոր առևտրային ուղու վրա:

Արդեն Ք. հ. Ա. դարից Մոսուլի ասորիները (ինչպես որ մյուս ասորիները, որոնք ապրում էին Նինվեի հարթավայրի քաղաքներում եւ գյուղերում) սկսեցին քրիստոնեություն ընդունել: Ուշագրավ է այն, որ ինքը՝ Հիսուս Քրիստոս, ոմանց կարծիքով ասորի էր, որ դավանում էր հուդայականություն: Համենայն դեպս, նա խոսում էր արամեերեն (ասորերեն): Այս լեզվի բարբառներով խոսում են ժամանակակից ասորիները, նրանց եկեղեցիներում ժամերգությունները կատարվում են Քրիստոսի ժամանակների բարբառով:

Երեք մոզերը, որ ընծաներ էին տանում նորածին Հիսուսին, դուրս էին եկել, ըստ ավանդության, ասորական Ամադիա քաղաքից: Ամադիան գտնվում է Իրաքի հյուսիս-արեւելքում՝ սեղանակերպ լեռան գագաթին, եւ Իրաքի ամենագեղատեսիլ վայրերից է: «Մոզեր» բառն ընդունված է ուսու ուղղափառ ավանդույթում: Այն բազմիմաստ է. ըստ Բրոքհաուզի եւ Եփրոնի հանրագիտարանային բառարանի նշանակում է՝ իմաստուններ, հեքիմներ, գուշակներ, աստղաբաններ, կախարդներ:

Ամադիան հայտնի էր իր մոզերով (որ հունարենից թարգմանաբար նշանակում է «հմայ»): Ավետարանի բնօրինակը գրված է հենց հունարեն, եւ այնտեղ օգտագործվում է «մոզեր» բառը: Այսպիսով, երեք կախարդներ գնացին երկրպագելու նորածին Հիսուսին (ի դեպ, հիշեք, որ Նինվեն կործանվեց «կախարդության» համար, ինչպես վատահեցնում էր Նաում մարգարեն): Իսկ թե ուր, ի վերջո, պետք է նրանք գնան, ցույց

է տվել Բեթղեհեմի աստղը, որը նրանք տեսել են Թուր Աբդին սարահարթն անցնելիս, Խաղ գյուղակի մոտ. այստեղ էլ սկզբնաղբյուրը տեղական ավանդույթյուններից մեկն է: Այդ պատճառով էլ Խաղի բնակիչները վստահ են, որ իրենց գյուղում եկեղեցին սկսել են կառուցել դեռևս Ա. դարում: Ճիշտ է, շինարարությունն ավարտվել է կամ Ե., կամ Զ. դարերում: Եկեղեցին դեռ կանգուն է. ասորերեն կոչվում է Իդատ դՅուղազ՝ Արխո է, թարգմանաբար՝ Մարիամ Աստվածածին:

Թուր Աբդին սարահարթը եւ Նինվեի հարթավայրը Մերձավոր Արեւելքում քրիստոնեության տարածման առաջին օրրաններից էին: Ասորիների շրջանում քրիստոնեության առաջին քարոզիչները Թագեոս առաքյալն էր ու Մարիամ Մագդաղենացին (իսկույն հիշում ենք աստվածուհի Իշտարին. երկուսն էլ հայտնի պոռնիկներ էին. ճիշտ է, Իշտարը երբեք չի զղջացել տարբեր տղամարդկանց հետ հաճախակի կենակցելու համար):

Արդեն Բ. դարում քրիստոնյա ասորիները շարժվեցին դեպի արեւելք՝ տարածելու իրենց ուսմունքը: Դ. դարի վերջին Կենտրոնական Ասիայում ամբողջական քաղաքներ արդեն ընդունել էին նոր հավատքը: Այժմյան թուրքոմանական Մերվ քաղաքը դարձել էր քրիստոնեական կենտրոն, դարձել մայրաքաղաք: Մերվից քրիստոնեությունը շարունակեց տարածվել Մետաքսի Մեծ ճանապարհի երկայնքով:

Հետաքրքիր է, իհարկե, թե ինչն էր դարձել Կենտրոնական Ասիայում քրիստոնեության այդքան արագ տարածման հիմնական պատճառը՝ նրա ոչ բռնի բնույթը, նրա բարոյական սկզբունքները, թե՛ ինչ-որ այլ բան: Իսկական պատճառները դեռ հայտնի չեն:

Քրիստոնյա քարոզիչներն առանձնակի հաջողություն էին վայելում ուլղուրների եւ մոնղոլների շրջանում: Ուլղուրական միջավայրում նոր կրոնը կլանում էր արդեն գոյություն ունեցող բուդդայական մշակույթը: Արդյունքում ստեղծվում էին արվեստի շատ ինքնատիպ գործեր: Օրինակ՝ ուլղուրական քրիստոնյաների պատկերագրությունն իր ոճով շատ նման է ավանդական բուդդայական պատկերագրությանը, բայց տեսարանները վերցված են աստվածաշնչյան ավանդույթյուններից:

ԺԱ. դարում մկրտվեցին կերախտները՝ Կենտրոնական Ասիայի մոնղոլախոս ժողովուրդներից ամենամեծն ու մշակութապես զարգացածը: Ցեղի առաջնորդն ստացավ նոր անուն՝ Յուհաննան (Հովհաննես անվան ասորական տարբերակը): Այս ցեղի եւ թյուրքական ու մոնղոլական այլ ցեղերի տարածքը, որոնք նույնպես ընդունեցին քրիստո-

նեություն, Եւրոպայում հետզհետե հայտնի դարձավ որպես Հովհաննես Երեցի Թագավորութուն:

Կերտիտյաններին 1203 թվականին ջախջախեց Չինգիզխանը: Այդուամենայնիվ, Հովհաննես Երեցի թագավորության մասին ավանդությունը դեռ մի քանի դար շարունակ հուզում էր հեռավոր արեւմուտքում ապրող քրիստոնյա ժողովուրդներին:

Բացի Կենտրոնական Ասիայից, ասորի քարոզիչներները ուղեւորվեցին Կովկաս՝ Վրաստան, Հայաստան եւ Օսիա: Եւ ապա՝ Ղրիմ, Սեւ ծովի հյուսիսային ափ: Քրիստոնեության տարածումն ասորիների համար դարձել էր ազգային գաղափարի պես մի բան:

Նինվեի հարթավայրի եւ Թուր Աբդինի ամենահին վանքերն ու եկեղեցիները, որոնք մինչ օրս պահպանվել են, թվագրվում են Դ. դարով: Երկու տարածաշրջաններում էլ այդ ժամանակահատվածում հազարավոր կամ գուցե ավելի շատ քրիստոնյաներ էին քարոզում կամ ճգնում, շնայած ասորական վերնախավը նախընտրում էր հին պարսկական կրոնը՝ զրադաշտականութունը:

Ջրադաշտական էր, օրինակ, ասորական Սենեքերիմ թագավորը, որն ապրել է Դ. դարի առաջին կեսին: Նա ղեկավարում էր Աշշուրիստան նահանգը, որն ընդգրկված էր Սասանյան Պարսկաստանի կազմում: Մի անգամ Սենեքերիմի որդի Բեհնամը մեծ շքախմբով որսի է գնում ու մոլորվում՝ մենակ մնալով անտառում: Բեհնամին պատահում է ճգնավոր քրիստոնյա սուրբ Մատթեոսը (արամեերեն՝ Մար Մատթայ): Ճգնավորը թագավորի որդուն թավուտներից դուրս բերելու միջոցին պատմում է նրան քրիստոնեության մասին: Բեհնամը Մատթեոսին առաջարկում է հրաշք գործել, եւ այդ դեպքում ինքը կհավատա Քրիստոսին: Հաջորդ անգամ թագավորի որդին քրոջ՝ Սառայի հետ է գալիս ճգնավորի մոտ, աղջիկը տառապում էր բորոտութունից: Մատթեոսը Սառային մկրտում է առվակի ջրում, եւ նա ապաքինվում է: Նույն օրը Բեհնամն ու նրան ուղեկցող 40 ծառաները նույնպես մկրտվում են:

Դրանից հետո ընտանիքում վեճ է ծագում. հայրը դեմ էր, գավակները համառում էին: Սենեքերիմը, չկարողանալով համոզել ո՛չ որդուն, ո՛չ դստերը հրաժարվել քրիստոնեութունից, հրամայում է մահապատժի ենթարկել նրանց: Բեհնամն ու Սառան փախչում են Աշշուրիստանի մայրաքաղաք Մոսուլից: Սակայն, շատ շանցած, նրանց է հասնում թագավո-

րական պահակախումբը: Մահապատիժն ի կատար է ածվում Բահդիդա քաղաքից 20 կմ հարավ գտնվող բլրի վրա:

Երեխաների մահապատժից հետո Սենեքերիմը հիվանդանում է բորոտությամբ եւ խելակորույս լինում: Թե՛ նրա կնոջը, թե՛ իրեն հայտնվում է հրեշտակը եւ հորդորում այցելել Բեհնամի եւ Սառայի մահապատժի վայրը: Մահապատժի վայրում հայտնվելուց հետո Ասորեստանի թագավորն ապաքինվում է եւ որոշում մկրտվել: Իսկ երեխաների գերեզմանների վրա վանք է կառուցում: Բացի այդ, նա հրամայում է սուրբ Մատթեոսի անունով վանք կառուցել Ալփափ լեռան վրա, որտեղ նա ճգնում էր (ներկայիս Բաշիկա քաղաքի մոտ): Այսպիսով, Մար Բեհնամ եւ Սառա ու Մար Մատթայ վանքերը դարձան Նինվեի հարթավայրի առաջին վանական համալիրները: Առաջինի կառուցման ճշգրիտ տարեթիվը հայտնի չէ: Մար Մատթայը կառուցվել է 363 թվականին:

Սուրբ Բեհնամի եւ նրա քրոջ՝ Սառայի անունով են կոչվում Նինվեի հարթավայրում եւ առհասարակ Իրաքում գտնվող մի քանի այլ վանքեր ու եկեղեցիներ: Հարթավայրում շատ հարգված մեկ այլ սուրբ է վանական Հորմիզդը (նրա անունը արտասանվում է նաեւ Հորմուզդ), որ ապրել է Ք. հ. է. դարի սկզբին:

Նա ապաստանել էր Ալկոշի մոտ գտնվող քարանձավում: Ալկոշի մերձակա լեռները, ընդհանրապես հայտնի են բազմաթիվ քարանձավներով եւ աղբյուրներով: Ուստի այս քաղաքը հարթավայրում ամենահներից է:

Երբ եւս երկու ճգնավորներ միանում են Հորմիզդին, նրանք միասին որոշում են վանք հիմնել (արամեերեն «վանական» բառը հնչում է «ուաբբան»): Դա տեղի է ունեցել 640 թվականին: Հետագա դարերում վանքը կոչվել է Ռաբբան Հորմիզդ:

Քարանձավում, որտեղ Հորմիզդն աղոթում էր, ժամանակի ընթացքում նա խաչ է փորագրում: Տասներկուաթեւ, հարթ հղկված խաչը, որի վրա նա աշխատել է երկար տարիներ, հետագայում դարձել է վանքի գլխավոր սրբատեղին: Գրեթե 1400-ամյա վանքը բազմիցս ենթարկվել է ավերածությունների եւ կողոպուտների: Բայց այն նորից վերածնվել է խաչպսակ քարանձավի շուրջը: Մոնղոլները, Լենկ Թեմուրը, արաբները, քուրդ ավազակները, ովքեր զենքով եկել են հարթավայր, անպայման հարձակվել են նաեւ վանական համալիրի վրա: Այնուամենայնիվ, Ռաբբան Հորմիզդի խաչը նրանցից ոչ մեկը չի վնասել (կամ չեն փորձել, կամ չեն կարողացել):

1858-ին Ալկոշին ավելի մոտ տեղանքում՝ հարթավայրում, վանականները կառուցեցին նոր վանք՝ Սուրբ Մարիամ Աստվածածինը: Հենց այն էլ դարձավ վանականների հիմնական կեցավայրը: Իսկ Ռաբբան Հորմիզդը հետզհետե դատարկվեց: Շատ հազվագեպ են այնտեղ ծեսեր լինում:

Երկու հազար տարվա ընթացքում Մերձավոր Արեւելքի քրիստոնյաների մեջ բազմաթիվ երկպառակույթյուններ եղան: Այդ պատճառով ներկայումս Նինվեի հարթավայրի ասորական եկեղեցիները, որոնք հազար տարի առաջ դասվում էին ուղղափառ հոսանքին, բաժանված են Միջագետքի չորս ամենամեծ ճյուղերի միջև՝ Ասորական Ուղղափառ Եկեղեցու (այն կոչվում է նաեւ հակոբեկյան), Արեւելքի Ասորական Եկեղեցու, Ասորական Կաթոլիկ Եկեղեցու եւ Քաղղեական Կաթոլիկ Եկեղեցու: Բոլոր եկեղեցիներն էլ օժտված են ուղղափառուիթյան ծիսական եւ նախազազարդման տարրերով: Եւ անձանոթ մարդը չի հասկանա, թե ինչով են դրանք տարբերվում, մինչեւ ծեսերին շմասնակցի:

Մար Բեհնամի եւ Սառայի վանքը անցավ Սիրիական կաթոլիկ եկեղեցուն:

Մար Մատթայը մնաց ուղղափառ ասորիներին (հակոբեկյաններին): 1551–1804 թվականներին Ռաբբան Հորմիզդը եղել է Արեւելքի եկեղեցու պատրիարքների նստավայրը: 1830-ին վանքը մտել է Քաղղեական կաթոլիկ եկեղեցու ենթակայության տակ, որն առանձնացել էր Արեւելքի եկեղեցուց (քաղղեացիները ճանաչել էին Վատիկանի գերակայությունը, իսկ Վատիկանը նրանց թույլ էր տվել հիմնել սեփական պատրիարքությունը): Արեւելքի եկեղեցուց անջատվելու մյուս օրինակը Արեւելքի ասորական եկեղեցին է. այն հրաժարվեց ճանաչել Վատիկանի գերակայությունը, իսկ որպես իր պատրիարքի նստավայր ընտրեց ներկայիս Թուրքիայի Հաբարի նահանգի լեռներում ծվարած Քոչանիս գյուղը:

Սակայն, չնայած քրիստոնեության տարբեր հոսանքների միջև առկա պառակտումներին եւ հակամարտություններին, ասորիները շարունակում էին կազմել Մոսուլի բնակչության զգալի մասը եւ Նինվեի հարթավայրի ամենահին քաղաքների բնակչության բացարձակ մեծամասնությունը մինչեւ անկախ Իրաքում Սադամ Հուսեյնի իշխանության գալը: 1957 թվականի մարդահամարի համաձայն՝ ասորիները կազմում էին հարթավայրի բնակիչների 75 տոկոսը:

Հուսեյնը, որը 1979-ին դարձավ Իրաքի նախագահ, խթանեց երկրի տարբեր ազգային-դավանաբանական խմբերի միախառնումը՝ միասնա-

կան իրաքյան ազգ ստեղծելու նպատակով, որի լեզուն արաբերենն է: Տարբեր ազգատոհմիկ խմբերի ներկայացուցիչներ իրենց ավանդական բնակության վայրերից տեղափոխվեցին այլ շրջաններ: Մոսուլում աճում էր թուրքմեն եւ արաբ բնակչության մասնաբաժինը: Հայտնվեցին նոր մզկիթներ: Սադամը ձգտում էր փոքրամասնությունների ներկայացուցիչներին ներգրավել պետության կառավարմանը: Օրինակ՝ նրա կառավարության անփոփոխ նախագահը՝ Թարիք Ազիզը (նրա ասորական անունն էր Միխայիլ Յուհաննա), կաթոլիկ քաղաքացիների ընտանիքից էր:

Իրաքում ասորիների թիվը սկսեց կտրուկ նվազել 2003-ին ամերիկացիների եւ նրանց դաշնակիցների կողմից Սադամի տապալումից հետո: Նախքան ամերիկյան բռնազավթումը Իրաքում ապրում էր առնվազն 1 միլիոն ասորի: Իսլամական ծայրահեղականների հարձակումները ոչ մահմեդականների վրա ամբողջ երկրում ստիպեցին քրիստոնյաներին, եզդիներին եւ այլ փոքրամասնությունների լքել իրենց տները, գյուղերը, քաղաքները, անգամ երկիրը: Հարյուր հազարավոր քրիստոնյաներ մեկնեցին Սիրիա, Եվրոպա, ԱՄՆ կամ Ավստրալիա: Բաղդադի կառավարությունը քննարկեց փոքրամասնությունների համար ինքնավարություն ստեղծելու հնարավորությունը՝ նրանց անվտանգությունն ապահովելու ու ավանդույթները պահպանելու համար: Սակայն խոսքերը գործի չվերածվեցին:

Իրաքի հյուսիսում 2014-ի ամռանը «Իսլամական պետության» ծայրահեղականների հարձակումից առաջ Նինվեի հարթավայրում եւ Մոսուլում հաշվվում էր 250 հազար ասորի:

ՄԱՍ 3. ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ

Պատմությունը քրիստոնյա ասորիների, որոնք դեռեւս ապրում են Նինվեի հարթավայրում, ըստ էության, աստվածաշնչյան էպոսի շարունակությունն է՝ հալածյալ ժողովրդի մասին հերթական գլուխը: Այն ժամանակից ի վեր, երբ նրանք զանգվածաբար սկսեցին քրիստոնեություն ընդունել, առնվազն հարյուրամյակը մեկ ենթարկվում են դաժան բռնաճնշումների ոչ քրիստոնյա ժողովուրդների եւ իշխանությունների կողմից: Ժամանակակից եզրաբանությամբ ասած՝ նրանց ցեղասպանության են ենթարկում:

Հետաքրքիր է, որ Աստվածաշնչում ասորիները հաճախ հիշատակվում են որպես հալածողներ, դաժան տիրակալներ, զավթիչներ: Ահա մի մեջբերում Թագավորությունների շորրորդ գրքի 19-րդ գլխից. «Ասորեստանի թագավորները ազգեր ու երկրներ ոչնչացրին, հրի մատնեցին նրանց աստուածներին, որոնք աստուածներ չէին, այլ իրեր, որ փայտից ու քարից պատրաստուած էին մարդկանց ձեռքով, եւ ոչնչացրին դրանց»: Մեկ այլ մեջբերում նույն՝ Թագավորությունների շորրորդ գրքի 17-րդ գլխից. «Ասորեստանի արքան գրաւեց Սամարիան եւ իսրայէլացիներին քշեց Ասորեստան, նրանց բնակեցրեց Ալաթում եւ Աբորում, Գոզան գետի մօտ ու մարերի լեռներում... Ասորեստանի արքան Բաբելոնից, Քուբից, Այալից, Եմաթից ու Սեփփարուիմից մարդկանց էր բերել տուել եւ իսրայէլացիների փոխարէն բնակեցրել Սամարիայի քաղաքներում: Նրանք ժառանգել էին Սամարիան ու բնակուել նրա քաղաքներում»: Իսրայելցիների մասին պատմությունը հայտնի է նաեւ Դուր-Շարուքինի թագավորական պալատի պատերին արված գրություններից:

Հստ ասորական բանավոր ավանդությունների՝ Հիսուս Քրիստոսը եւ նրա բոլոր առաքյալները, բացառությամբ Հուդա Իսկարիովտացու, ասորական այն գաղութաբնակների սերունդներն էին, ովքեր բնակեցրել էին «Սամարիայի քաղաքները», այսինքն՝ հին Իսրայելը: Եւ Հիսուսը սկսեց պայքարել հրեա քահանաների եւ կառավարիչների դեմ, քանի որ նրանք ամեն կերպ նվաստացնում էին ասորիներին: Այս պայքարից էլ ծնվեց կրոնական նոր ուսմունքը՝ իր ժամանակի հեղափոխական գաղափարախոսությունը:

Այն, ինչ հեթանոս ասորիները գործում էին հարեւան ժողովուրդների նկատմամբ, դարեր անց ստիպված էին իրենց վրա զգալ քրիստոնյա ասորիները: Նրանք սպանվում էին, քշվում էին ստրկության, ավերվում էին նրանց եկեղեցիներն ու վանքերը, նրանց քաղաքներն ու գյուղերը բնակեցվում էին ոչ քրիստոնյա ժողովուրդներով:

Այդուհանդերձ, 20-րդ դարի սկզբին ասորիները դեռ շարունակում էին ապրել այն հողերում, որոնցում հառնած էին նրանց հինավուրց եկեղեցիներն ու վանքերը՝ Նինվեի հարթավայր, Թուր Աբդին սարահարթ եւ Դամասկոսից հյուսիս ընկած մի շարք շրջաններ (ժամանակակից Սիրիա): Հիշատակված շրջանները նշյալ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության մաս էին: Ինչպէս մահմեդական կայսրության մյուս քրիստոնյա ժողովուրդները, ասորիները եւս Ռուսաստանից օգնության հույս ունեին:

ԺԹ. դարում ռուսական բանակը Բալկաններում կռվում էր թուրքերի դեմ՝ պաշտպանելով տեղի քրիստոնյաների՝ սերբերի, բուլղարների, շեռնոգորացիների եւ հուլյների շահերը: Կովկասում ռուսները կարողացան հետ գրավել վրացիներով եւ հայերով բնակեցված շրջանների մի մասը: Երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, ասորիները հրաժարվեցին համալրել Ռուսական կայսրության դեմ կռվող թուրքական բանակի շարքերը:

Թուրքական իշխանություններին առավել համառ ընդդիմանում էին Արեւելքի ասորական եկեղեցու հետեւորդները, որոնք ապրում էին Թուր Աբդին սարահարթից արեւելք՝ Հաքարի լեռնային տեղանքում: Դժվարամատչելիության շնորհիվ նրանց տարածքը փաստացի աստվածապետական ինքնավարություն էր. ինքնավարությունը ղեկավարում էր նրանց պատրիարքը՝ Մար-Շիմուն Բենիամինը, որը Քոչանիս գյուղում ապրած 21-րդ պատրիարքն էր:

Թուրքական իշխանությունները ասորիներին մեղադրեցին հայրենիքի դավաճանության մեջ (նրանք նկատի ունեին Օսմանյան կայսրությունը, որտեղ քրիստոնյաներն ապրում էին «երկրորդ կարգի» մարդկանց իրավունքներով): Սկսվեց խաղաղ ասորի բնակչության կոտորածը. թուրք զինվորներին ակտիվորեն օգնում էին քոչվոր սուննի քրդերը: Առաջինը հարվածի տակ հայտնվեցին նրանք, ում հասնելն ամենահեշտն էր՝ Թուր Աբդինի սարահարթի քաղաքներում եւ գյուղերում ապրող ասորիները: Զուգահեռաբար Օսմանյան կայսրությունում տեղի էր ունենում հայերի եւ հուլյների ցեղասպանությունը: Ամենադաժան դահիճները քրդերն էին. սպանելուց առաջ նրանք անհագուրդ խոշտանգում էին քրիստոնյաներին: Նաեւ քանդում էին եկեղեցիներն ու վանքերը: Քրդերը ամայացած քաղաքներ եւ գյուղեր էին տեղափոխում իրենց ընտանիքները (ներկայիս թուրքական Քուրդիստանի տարածքում մինչեւ Առաջին աշխարհամարտը բնակվել են հիմնականում ասորիներ եւ հայեր):

Արեւելքի ասորական եկեղեցու հետեւորդ լեռնական ասորիները հասցրել էին ինքնապաշտպանական ջոկատներ ձեւավորել: Թուրքերը կոչ արեցին կամավորականներին զինաթափվել՝ ձեռքազրկելով Մար-Շիմուն պատրիարքի եղբորը՝ Հորմիզդին, որը սովորում էր Ստամբուլում: Պատրիարքը պատասխանեց. «Իմ եղբայրը մեկն է, իսկ իմ ժողովուրդը՝ բազում, ուստի ես կնախընտրեմ կորցնել եղբորս, բայց պահպանել ժողովուրդս»: Հորմիզդին բերեցին Մոսուլ եւ մահապատժի ենթարկեցին՝ կախաղան բարձրացնելով:

Թուրքական բանակն ու քրդական ջոկատները գրոհում են Հաքարիի լեռնային գյուղերը: Ասորիները անվեհեր դիմադրում էին: Բայց քանակական ու զինական առավելությունը հակառակորդի կողմն էր: 1915 թվականի աշնանը ասորիները, Մար-Շիմունի գլխավորությամբ, անցնելով լեռնաշղթաներով, մտան Պարսկաստան՝ Ուրմիա քաղաք, որտեղ գտնվում էր ռուսական բանակը եւ ապրում էր ասորական համայնք:

Ռուսները Մար-Շիմունի կամավորականներից ստեղծեցին երկու գումարտակ: Այս գումարտակների հետ ռուս զինվորները վտանգավոր արշավանքների էին գնում թուրքերի թիկունքում: Գրող Վիկտոր Շկլովսկին, ով եղել է Ուրմիայում եւ շփվել ասորիների հետ, «Սենտիմենտալ ճանապարհորդություն» գրքում գրում է, որ Մար-Շիմունն անձամբ մասնակցել է արշավանքներին: Նա եւ իր եպիսկոպոսները մասնակցել են սվինամարտերին եւ գերիներ վերցրել:

Ուրմիա փախած ասորիներին Շկլովսկին բնութագրում է հետեւյալ կերպ. «Փախստական ասորիները ապրում էին, սոված էին մնում, թալանով էին զբաղվում՝ առաջացնելով պարսիկների սաստիկ ատելությունը: Կրում էին թաղիքե փոքր գլխարկներ, հագնում լայն շալվարներ, որոնք կարված էին բամբակյա փոքր կտորներից եւ կոճից վերեւ կապվում էին պարաններով, ասեղնագործ վերնաշապիկներ, այդպես շրջում էին շուկաներում: Կրոնը, որը միավորում էր ասորիներին, արդեն վաղուց կորցրել է ուժը եւ պահպանվել է միայն մահմեդականներին որպես քրիստոնյաներ հակադրվելու տեսքով»:

Մար-Շիմունը մեկնում է Թիֆլիս, որտեղ հանդիպում է Կովկասի փոխարքա Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչի հետ: Մեծ Իշխանը խոստանում է, որ համաշխարհային պատերազմի բարեհաջող ելքի դեպքում ասորիները կկարողանան ազգային ինքնավարություն ստեղծել Մոսուլի շրջանում: Ռուսաստանը կդառնա նրանց ինքնավարության երաշխավորը (այդպիսի փաստ արդեն արձանագրվել էր, 1911 թ. Զինաստանում հեղափոխության սկսվելուց հետո Ռուսաստանը դարձավ Զինաստանի հյուսիսում Մոնղոլիայի եւ Ուրյանխայի շրջանի հռչակված ինքնավարությունների երաշխավորը):

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ուրմիայում գտնվող ռուսական բանակը որոշեց վերադառնալ Ռուսաստան: Մար-Շիմունի ասորիները եւ տեղի հայերը ռուսներին խնդրում էին երկու զնդերը թողնել որպես կորիզ, որի շուրջ կստեղծեին քրիստոնյաների ջոկատներ: Սակայն եր-

կու գունդ ասվածը այլևս գոյություն չունենք, բանակը փտում էր, կազմալուծվում, ջարդուփշուր անում շուկաները եւ ձանձրույթից սպանում շրջակա քրդերին:

Տուր Աբդինի սարահարթում շարունակվում էին դեռևս այդ տարածքում բնակվող ասորիների սպանությունները: Ասորիները փորձում էին դիմադրել, որոշ գյուղերում թուրքական զինված զորքերին եւ քրդական ավազակախմբերին բառացիորեն մերկ ձեռքերով էին հակահարված տալիս: Օսմանյան կայսրության փաստաթղթերում նույնիսկ խոսվում է այսպես կոչված «մսագործների գումարտակի» գոյության մասին՝ Ջեզվեդ բեյի գլխավորությամբ, որի գործը անգն ոչ թուրք բնակչությանը վերացնելն էր: Նրանց, ում չէին սպանում, թուրքերը նետում էին համակենտրոնացման ճամբարներ: Դրանցից ամենահայտնիները տեղակայված էին այժմյան Սիրիայի տարածքում գտնվող Ռաս էլ Այն եւ Դեյր էլ Զոր գյուղերի մոտ: Երիտասարդ աղջիկներին քրդերը տանում էին իրենց համար՝ որպես ստրկուհիներ: «Արդյո՞ք այս ժողովուրդը կմեռնի» գրքում, որտեղ ի մի են բերված ասորիների ցեղասպանության վկայությունները, ներկայացվում է քաղդեական-կաթոլիկ ընտանիքից մի աղջնակի՝ Քարիմայի պատմությունը: Քրդերը սպանել էին նրա ծնողներին, երբ նա 10 տարեկան էր: Հաջորդ տարին նա իր տարեկից մյուս քաղդեացի աղջիկների հետ անցկացրել է Ջեզվեդ քրդական գյուղում, որտեղ նրանց բռնաբարել են տեղի տղամարդիկ: Հաջորդ երեք տարին նա ստրկության մեջ է եղել Սիրիթ նահանգի թուրքական մի ընտանիքում: Նրա տառապանքներն ավարտվել են Ստամբուլում ապրող հարազատներին գտնելուց հետո:

1918-ի հունվարին, երբ կազմալուծված դաշնակից բանակը հեռացավ Պարսկաստանից, ասորիները, որոնց հետ մնացել էին մի քանի ռուս սպաներ, մի քանի ամիս պաշտպանեցին Ուրմիան առաջխաղացող թուրքերից: 1918-ի մարտին քրդական խանը՝ կլաններից մեկի ղեկավարը՝ Իսմայիլ աղա Սիմկոն, առաջարկում է Մար-Շիմունին հաշտվել եւ համատեղ մարտնչել օսմանյան բանակի դեմ: Մար-Շիմունը գնում է բանակցելու նրա հետ: Զրույցից հետո, երբ պատրիարքը խորհրդականների, երկու ռուս սպաների եւ թիկնապահների հետ դուրս է գալիս տնից, տանիքներից քրդերը թիկունքից գնդակահարում են նրանց: Հրացանների համազարկերն ուղեկցվում են գնդացրային կրակահերթերով: Մար-Շիմունը զոհվում է:

Ասորա-հայկական աշխարհագրորդ շարունակում էր ղեկավարել գնդապետ Կոնդրատեւը: Չնայած թուրքերի դեմ մարտերում առանձին հաջողություններին՝ Պարսկաստանի հյուսիսում քրիստոնյաների համար իրավիճակը հետզհետե վատանում էր: Թուրքերն արդեն մտել էին նախկին Ռուսական կայսրության կովկասյան շրջաններ: Ասորիներն ու հայերը պետք է ուժեղ դաշնակից փնտրեին: Ուստի նրանք որոշում են դիմել Բաղդադին, որն անգլիացիների հովանու ներքո էր:

Ուրմիայից դուրս է գալիս 250 հազար մարդ: Նրանց ծանր անցումը Պարսկաստանից Իրաք վայրի լեռնային տեղանքով Առաջին համաշխարհային պատերազմի ամենաողբերգական դրվագներից է: «Ճանապարհ չկար, իսկ շարժվել պետք էր թուրքական ճակատի երկայնքով կամ, եթե ավելի ճշգրիտ ասենք, թուրքական ու քրդական լեռների կողքով», — «Սենտիմենտալ ճանապարհորդություն» գրքում ողջ մնացած ասորիներից մեկի՝ Ղազար Զերվանդովի պատմածն է վերապատմում Շիլոսկին: — Շուրջբոլորը թուրքեր էին, եւ քրդեր, եւ պարսիկներ, մահմեդականների ծփացող ծով, եւ կրակոցներ քարերի հետեւից, եւ կռիվներ կիրճերում ժայռերի միջեւ, որոնցում արագահոս քարքարոտ գետակներ էին, եւ ժայռերից կախված քարեր, եւ ժայռեր, ժայռեր, պարսկական ժայռեր, ինչպես քարե ալիքներով սաստիկ ծփացող քարե ծով ... դուրս եկանք կիրճերից եւ քայլեցինք լեռներով: Զուր չկար: Տասներկու օր ձյուն էինք ուտում: Զիերը գայթում էին: Այդ ժամանակ ձիերը խլում էինք ծեր տղամարդկանցից եւ հանձնում երիտասարդներին: Պետք էր պահպանել ոչ թե անձանց, այլ ժողովրդին: Հետո թողեցինք ծեր կանանց: Ապա՝ լքեցինք մանուկներին: Մեկամսյա արշավից հետո հասանք բաղդադա-անգլիական հող: Եվ այդ օրը երկու հարյուր երեք հազար հոգի էինք»:

1915–1918 թվականներին Օսմանյան կայսրությունում ցեղասպանության գոհ դարձավ առնվազն 500 հազար ասորի: Ասորական հարյուրավոր գյուղեր եւ տասնյակ քաղաքներ ամայացան Թուր Աբդինի սարահարթում: Նրանք, ովքեր ողջ մնացին, փախան նախկին Ռուսական կայսրության տարածք՝ բնակություն հաստատելով Վրաստանում, Հայաստանում, Մոսկվայում եւ Պետրոգրադում, կամ Իրաք եւ Սիրիա՝ անգլիացիների եւ ֆրանսիացիների պաշտպանության ներքո:

Անգլիացիներն ու ֆրանսիացիները ասորիներին ինքնավարություն խոստացան Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքներով:

հաբեցին: Ասորիները հատուկ իրավունքներ չստացան ո՛չ անգլիացիների կողմից գրավված Իրաքում, ո՛չ էլ ֆրանսիական պրոտեկտորատում՝ Սիրիայում: Մուստաֆա Քեմալի՝ Աթաթուրքի (թուրքերի հայր) երիտասարդ թուրքական հանրապետությունը անթաքույց ազգայնամոլական քաղաքականություն էր վարում: Փախստական ասորիները որեւէ հնարավորություն չունեին վերադառնալու Թուր Աբդինի սարահարթ: Նրանք, ովքեր փորձում էին վերադառնալ, վտարվում էին: Թուրքիայի տարածքում ողջ մնացած ասորիներին թուրք ազգայնականները հայտարարեցին «սեմական թուրքեր»: Ոչ մի կրթություն ազգային լեզվով, ոչ մի մշակութային ինքնավարություն, ոչ մի ինքնավարություն ազգային փոքրամասնությունների համար. Աթաթուրքը պետություն էր ստեղծել բացառապես թուրքերի համար:

Ասորիների հաջորդ զանգվածային սպանությունը տեղի ունեցավ անգլիական օգուժի աջակցությամբ: 1933 թվականի օգոստոսի սկզբին Իրաքի հյուսիսում ասորի պարտիզանները հարձակվեցին իրաքյան բանակի վրա: Ավերվեց իրաքցիների զորամասը, զոհվեց 33 զինվոր: Պարտիզաններն անցան Տիգրիս գետը եւ թաքնվեցին Սիրիայում:

Անվանապես Իրաքը թագավորություն էր, ուներ ինքնուրույն պետությանը բնորոշ բաղադրիչներ՝ ներառյալ բանակը: Բայց փաստացի ենթարկվում էր Մեծ Բրիտանիային:

Իրաքյան բանակը քրդական ցեղերի եւ անգլիական օգուժի աջակցությամբ պատժիչ գործողություններ իրականացրեց թագավորության հյուսիսում գտնվող ասորական բնակավայրերում: Գործողությունը ղեկավարում էր էթնիկ քուրդ եւ միաժամանակ արաբ ազգայնական, գեներալ Բաքր Սիդկին: Օգոստոսի 7–16-ը իրաքյան բանակը զանգվածային մահապատիժներ իրագործեց Իրաքի հյուսիսում գտնվող Սիմել քաղաքում եւ ասորական գյուղերում: Ձերբակալվածներին տանում էին ամայի տարածք եւ գնդակահարում: «Ձտում» կատարվեց ասորական 60 գյուղերում: Հազարավոր տեղացի բնակիչներ ստիպված էին փախչել Սիրիա, որը գտնվում էր ֆրանսիացիների իշխանության տակ: Ընդհանուր առմամբ, 1933-ի օգոստոսին պատժիչ գործողության արդյունքում իրաքցի զինվորականների կողմից սպանվեցին երեք հազար քաղաքացիական անձ:

Ասորիների ցեղասպանության հաջորդ դրվագը առնչվում է «Իսլամական պետության» գրոհայինների հարձակմանը Իրաքի հյուսիսում 2014-ին:

Հունիսի 10-ին իրաքյան բանակն ու ոստիկանությունը՝ շուրջ 20 հազար մարդ, շտապ լքեցին Մոսուլը: Ինչպես ավելի ուշ հաստատեցին զինվորները իրաքյան լրատվամիջոցներին տված հարցազրույցում, իրենք այդպիսի «հրաման էին ստացել վերադաս հրամանատարությունից»: Նույն բանը ես ավելի ուշ լսել եմ Մոսուլի լրագրողներից, որոնք թողել էին քաղաքը եւ տեղափոխվել այլ շրջաններ. Բաղդադից նահանջի հրաման էր ստացվել: Մոսուլում եւ մոտակա ռազմակայաններում թողել էին տարատեսակ սպառազինություն, այդ թվում՝ ծանր զրահատեխնիկա, հրետանի, հրթիռային կայանքներ եւ գրոհային ուղղաթիռներ: Հենց միայն «Համվի» զրահամեքենաների քանակը առնվազն 2300 միավոր էր. դա հետագայում խոստովանեցին Իրաքի իշխանություններն ու նրանց ամերիկացի դաշնակիցները: Քաղաքն ու զենքը հայտնվեցին ԻՊ մի քանի հարյուր գրոհայինների ձեռքում: Այդ ժամանակ արմատականներն իրենց անվանում էին «Իրաքի եւ Լեւանտի իսլամական պետություն»: Նրանք «Խսլամական պետություն» (խալիֆայություն) հռչակվեցին հենց Մոսուլում՝ հունիսի 29-ին ան-Նուրի մզկիթում:

Օգոստոսի առաջին օրերին ծայրահեղականները Մոսուլից շարժվեցին դեպի արեւմուտք եւ արեւելք: Արեւմուտքում նրանց թիրախը Շանգալ եզդիական ներգավառն էր, Արեւելքում՝ Նինվեի հարթավայրի ասորական բնակավայրերը: Քրդական փեշմարգան, որն ապահովում էր երկու շրջանների անվտանգությունը, նահանջեց առանց կռվի: Շանգալում տեղի ունեցան եզդիների զանգվածային սպանություններ, զոհվեց առնվազն 5 հազար մարդ: Հազարավոր կանայք եւ երեխաներ հայտնվեցին ստրկության մեջ: Ասորիները հասցրեցին հեռանալ իրենց քաղաքներից՝ փախչելով Այնքավա, Դոհուկ, Սուլեյմանիա եւ Իրաքյան Քուրդիստանի այլ բնակավայրեր:

Նինվեի հարթավայրում ԻՊ զինյալներին չհաջողվեց գրավել միայն Ալկոշը: Տեղացիները զինվելով դիրքավորվեցին քաղաքի վերելք գտնվող լեռներում: Տեղի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարներից մեկի՝ Ռեհանի հետ ես շփվել եմ. նա դիպուկահար էր: Երիտասարդ էր, եթե չեմ սխալվում՝ 25 տարեկան էլ չկար, երբ ԻՊ-ը փորձեց հարձակվել Ալկոշի վրա: Լեռներից Նինվեի հարթավայրը ասես ձեռքի ափի մեջ լինի: Ծայրահեղականները առանց լուրջ կորուստների քաղաքին մոտենալու հնարավորություն չունեին: Ավելի քան երկու տարի առաջնագիծը Ալկոշից 15 կիլոմետր դեպի արեւմուտք էր:


ԻՊ արմատականները ոչնչացնում էին գրավված քրիստոնեական սրբավայրերը: Ընդ որում, դա նկարահանում էին եւ տեսանյութերը տեղադրում համացանցում: Նրանց կարծիքով՝ եկեղեցիներն ու վանքերն ավերելը «շիհադի» մի մասն է: Մար էլիա վանքը, որը կառուցվել է 595 թվականին, ահաբեկիչները հողին հավասարեցրին 2014-ի սեպտեմբերին: 2015-ի մարտի 19-ին նրանք պայթեցրին ս. Բեհնամի եւ ս. Սառայի դամբարանը, ավերեցին վանքը, որտեղ գտնվում էր դամբարանը: Մոսուլի կաթոլիկ եկեղեցին ավերվեց 2016 թվականի ապրիլի 24-ին: Ընդհանուր առմամբ, Իրաքում ոչնչացվեց, բանտերի, շտաբների կամ վարժանքների կենտրոնների վերածվեց առնվազն 45 եկեղեցի եւ վանք:

ԻՊ-ն ոչնչացրեց նաեւ պատմության հուշարձաններ: Մոսուլի թանգարանը թալանվեց: Նինվեի, Նեմրութի, Աշշուրի եւ Դուր-Շարուքինի հնագույն ավերակները պայթեցվեցին: Արմատականները ոչնչացրին քաղաքակրթությունների հետքերը, որոնք գոյություն ունեին իսլամից առաջ, եւ որոնք գոյություն ունեին իսլամին զուգընթաց:

2015-ի փետրվարին ԻՊ գրոհայինները Սիրիայի հյուսիս-արեւելքում հարձակվեցին ասորիների վրա: Թեւ-Թամար քաղաքի մոտ գտնվող Հաբուր գետի երկայնքով խիտ տեղակայված են շուրջ 30 ասորական գյուղեր: Տեղի բնակիչների մեջ կան 1915–1918 թվականների ցեղասպանության ժամանակ Թուր Աբդինի սարահարթից փախուստի դիմածների ժառանգներ: Ումանք 1933 թ. Իրաքում տեղի ունեցած կոտորածից մազապուրծ եղածների ժառանգներ են: Ահա այդ ասորիների վրա էլ հարձակվեցին արմատականները:

Հիշյալ տարվա մարտի սկզբին ես ժամանեցի Ղամիշլի: Ինձ հետաքրքրում էր Ռոժավայի ինքնավարությունը, որը Սիրիայի քրդերը դաշնակից ասորական եւ արաբական կազմակերպությունների հետ հռչակեցին Սիրիայի հյուսիսում: Այնուհետեւ ինքնավարությունը բաժանվեց երեք անկլավների (վարչատարածքների)՝ Աֆրին, Քոբանի եւ Ջազիրա: Ղամիշլին Ջազիրա երկրամասի ամենից խիտ բնակեցված քաղաքն էր: Ինձ հաջողվեց պայմանավորվել տեղի իշխանությունների հետ եւ մեկնել Թեւ Թամար, որտեղ մարտեր էին ընթանում: Հաջորդիվ, իմ հաղորդումն է այնտեղից:

Շարունակությունը՝ հաջորդիվ



ՎՐԻՒՐԱՍԵԱԿԸ ԳԵՐԱԶԱՆՅՈՂ ՆՐՋԱՓՈՒԼ ՍԵԿ ՎԱՏՈՐՈՒՄ

«Քանի դեռ Հայկական հարցը լուծուած չէ, այն շարունակ, ինչպէս դամոկլեան սուր, կեոնոսի Թուրքիայի գլխավերեում, մինչեւ վերջապէս ասիական Թուրքիայի համար կդառնայ նոյնը, ինչ Յունական կամ Բուլղարական հարցն է եղել եւրոպական Թուրքիայի համար»

(Եոհաննէս Լեկոսիու):

Քեռլինի եւ Սան Ստեֆանոյի բանակցութիւններն ամփոփող գրականութեան էջերում անխտիր առկայ է պայմանագրային հետեւեալ կէտը՝ «Ռուսաստանը Թուրքիայից ստանում է «1410 մլն ռուբլի ռազմատուգանք, որի մեծ մասը (1100 մլն ռ.) փոխարինւում է տարածքային զիջումներով»։ Այս զիջումները յիշատակելիս, ի թիւս այլոց նշում են «Արդահանը, Կարսը, Բաթումը, Բայազէտը եւ մինչեւ Սողանլուղ ընկած տարածքը»¹։

Բնականաբար առաջին պահին թւում է, թէ չակերտներով քաղուող պայմանագրային ձեւակերպումներն ու տեղանունները ենթակայ չեն թարգմանութեան, ու կողմնակի աչքի համար շարադրանքը նմանում է առուծախի տարրական արձանագրման, ուր ռուսն ու թուրքը հողի ու փողի առեւտուր են անում՝ առանց դոյզն-ինչ ափսոսանքի, ցաւի, կսկիծի՝ փոխանցուող հողերի ու քաղաքների համար, ինչն ինքնին զարմանալի է։ Սակայն ամեն բան պարզում է, երբ օտարահունչ անունները փոխարինում ենք իրենց բնիկ, իրական ձեւերով, եւ տեսնում ենք, որ իրականում մէկը միւսին էր յանձնում Արդահանը, Կարսը, Դարոյնքը ու մինչեւ Այրարատի սահմանը կազմող Մեծրաց իմա՛ Տայոց² լեռներն ընկած տարածքը։

¹ Տե՛ս օր.՝ <https://mer-oughin.am/2021/02/19/երեք-սերունդ-մաս-առաջին/>, հմմտ. <https://gevorgyanstar.wordpress.com/2020/11/13/02-13-11-2020--հայոց-պատմութիւն/>, <https://svetlanamsite.wordpress.com/2021/11/28/սան-ստեֆանոյի-եւ-բեռլինի-պայմանագրերը/> եւն։

² Պէտք է նկատել, որ Մեծրաց եւ Տայոց տեղանուններում հիմնական արմատը՝ գաղափարը, նոյնն է՝ մեծ=տի (տի Հայք—Տայք), եւ այդ պարագային գուցէ տեղին կլինի «Մեծ-

Նրանց համար անհարազատ եւ խորթ վայրեր, որոնք կարող էին ազատ տալ եւ վերցնել փողի դիմաց: Այս կապակցութեամբ թերեւս կարելի է նկատել, որ անունների թարգմանութեան կամ փոխանցման հարցը, թերեւս, պարզ լուծում ունի. ընդամենը պէտք է կիրառել ընթերցողի համար ընկալելի տարբերակներ կամ նուազագոյնը ծանօթագրել, որ իմացուի ասենք Ephrem of Edessa կամ Aprem of Nisibis (Եփրեմ Ասորի) անուններով հանդիպող անձի ինքնութիւնը, Վասիլի (Բարսեղ) Մեծի ով լինելը եւ այլն: Անշուշտ սա պարզ եւ արագ լուծուող խնդիր չէ, բայց գոնէ ձգտել պէտք է: Այս հարցին հնարաւորինս բժախնդրօրէն է վերաբերուել «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան» շարքի հերթական՝ 25-րդ³ հատորի կազմող՝ պատմական գիտութիւնների թեկնածու Գոհար Աւագեանը: Ինչու ենք այս հանգամանքն առանձնակի շեշտում. որովհետեւ զուտ տեղանունների ցանկը գրքում 15 մեծադիր էջ է, ուստի կարելի է նաեւ պատկերացնել, թէ դրանց պարզումն ու ճշգրտումը որքան ժամանակ խլած կլինի, սակայն սրա շնորհիւ է, որ ցուցակում հանդիպող տեղանունները ոչ թե օտար վանող հնչիւնախմբեր են, այլ հասկանալի, պարզ, աշխարհագրօրէն ծանօթ ու հարազատ վայրեր մերազնեայ ընթերցողի համար: Ինչպէս գրում է կազմողը՝ հատորում ժողովուած «փաստաթղթերը տեղեկութիւններ են պարունակում Կարսի մարզի հայկական վանքերի ու եկեղեցիների կալուածքների, դրանց տեղաբաշխման, շահագործման, ստացուող եկամուտների, վանքերի ու եկեղեցիների ընդհանուր դրութեան, շարժական գոյքի, դրանց կառավարմանն ու շէնացնելուն ուղղուած ձեռնարկների, վերանորոգումների, որոշ հինաւուրց վանքերի ու նրանց մնացորդների պահպանութեան, վանահայրերի նշանակման, քահանայական ձեռնադրութիւնների, պարգեւատրումների, նրանց գործունէութեան եւ այլ հարցերի մասին: Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում Անիի աւերակներին, դրանց պահպանութեան ուղղութեամբ ձեռնարկուած քայլերին, Անիի Մայր Տաճարի վերանորոգմանը, պեղումներին վերաբերող վաւերագրերը: Հասցէագրուում է պատմաբաններին, աստուածաբաններին եւ ընդհանրապէս հայագիտութեամբ հետաքրքրուողներին» (տե՛ս էջ 4): Վաւերագրերի ցանկում 333 միաւոր է: Կան փաստաթղթեր, որ օտար լե-

րաց»ի ուղղական դիտել Մեծրայք ձեւը. այլ ստուգաբանութիւն տես <http://lousavor-avedis.org/?p=15557> հասցէում:

³ Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, Գիրք ԻԵ., Կարսի Փոխանորդութիւն, Ս. էջ-միաձին, 2022, 504 էջ:

զուտով են: Մատենաշարի նախնական հատորներում նման փաստաթղթերին կցւում էին թարգմանութիւնները եւ կարծում ենք ապագայում այս աւանդոյթը շարունակելը ցանկալի է: Հաւաքուած նիւթերը պատմական կարեւոր տեղեկութիւններ են հաղորդում 1871–1920 թուականների էական իրադարձութիւնների վերաբերեալ եւ հրատարակւում են առաջին անգամ: Ու չնայած անցեալի այս խօսող վկաներն արդէն մէկ դարից աւելի տարիք ունեն, դրանց միջոցով յաճախ այնպիսի պատկերներ են յառնում, որ ասես մեր օրերի պատմութիւնն են հաղորդում: Օրինակ՝ անդրադարձը Կարսի եկեղեցիներին, «զորս մահմեդականք դարձուցեալ են ի մզկիթս» (էջ 12), տեսարան, որ ամբողջութեամբ մեր օրերին է աղերսւում: Հաշուած էջեր յետոյ «Ախալքալաքէն «Արարատ»ին թղթակցող Կարապետ Տէր-Սարգսեան Մարգարեանցի» գրութիւնն է ուղղուած Գէորգ Դ. կաթողիկոսին՝ «Կարսի Ս. Առաքելոց եկեղեցին ռուս ուղղափառ եկեղեցու վերածելու հրահանգի մասին» (էջ 22): Սրան յաջորդում է Կարսի Հայոց առաջնորդ Գրիգորիս վարդապետ Աղուանեանի զեկուցագիրը Գէորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ նոյնական բովանդակութեամբ՝ խլուող-խրացուող եկեղեցու մասին: Ինչպէս կարելի է նկատել նուաճողական ձեռագիրը նոյնն է՝ սեփականացնել այլոց քրտինքով ու շարչարանքով ստեղծուածը: Յիշեալ երկու վաւերագրերը դիտարկելիս հարց է առաջանում, թէ ինչո՞վ է հիմնաւորելի այն հանգամանքը, որ աշխարհական թղթակցողը նամակը գրել է 1878 թ. հոկտեմբերի 25-ին, իսկ Կարսի հոգեւոր առաջնորդը՝ 29-ին: Ամենայն հաւանականութեամբ կարելի է ենթադրել, որ առաջնորդը դեռ յոյսեր է փայփայել կամ փորձել է հնարաւոր լուծումներ գտնել: Խլել-զաւթելու հակում-բնագրի վերաբերեալ կասկածները փարատում է №10 վաւերագիրը, որ Կարսի Հայոց առաջնորդն ուղղել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին. «Վեհափա՛ռ Տէր. Կարսայ Մայր եկեղեցին, զոր ռուսներ գրաւեցին, եւ որոյ վերանորոգութիւն հրամայուած էր յետաձգել, բայց այս տարի Ս. Ծննդեան տօնէն յառաջ օծելով սկսեցին ժամերգութիւն կատարել առանց վերանորոգելու: Այս եկեղեցույ փոխարէն տեղուոյս կառավարութենէն մեզ առաջարկուեցաւ ճամբի (մզկիթ) դարձուցած երկու փոքրիկ եկեղեցիներէն մէկն առնել: Բայց մեք լսած ըլլալով որ Ձերդ Վեհափառութիւն Մայր եկեղեցույ մասին թղթակցութիւն բացած էք Բարձր. Փոխարքային հետ, յետաձգեցինք նոյն եկեղեցին ընդունել, մնալով սպասու Ձերդ Բարձր հրամանին եւ պէտք եղած հրահանգին» (էջ 26–27, բնագրային հատուածները բերում ենք առանց

ընդմիջարկութեան): Զարմանք յարուցող որեւէ բան կ'ա՛յ նամակում. անշուշտ. ընդհանրապէս իւրացնողների ինչի՛ն էր պէտք աղօթատունը, երբ իրենց գործերով իսկ վկայում էին, որ չեն հաւատում Աստուծոյ գոյութեանը: Այլ հարց. իսկ ի՛նչ վերաբերմունք կար «սեփականացման ծրագրերում շներառուած» հայկական սրբավայրերի հանդէպ: Այստեղ անմիջականօրէն գործող ձեռքը դժուար է նկատել, սակայն ձեռագրի տարբերութիւններ, կարելի է ասել, չկան: Իբրեւ օրինակ կարելի է յիշել Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցի գրութիւնը, ուր վերջինս ահազանգում է, որ «գաւառապետն պաշտպանելով զնորագաղթ եզդի ազգէ քիւրդս եւ թողեալ զանշափ ամայութիւն նորանուաճ երկրին Կարուց՝ բնակեցուցանէ զնոսա առ հրաշակերտ վանորայս նախնաշէն եկեղեցեաց մերոց որով ի հարկէ հետեւելոցն է այնոցունց ոչ թէ վերանորոգութիւն եւ վերականգնումն, այլ վերջնական աւերումն ու անհետանալ մնացեալ նշխարացն, որպէս եւ ի պարապի վանորէիցն Բագնայրի, ուր թէեւ համաձայն հրամանի դորին կարգեցան ի վանահայր եւ ի վերահսկող Յունան վարդապետն Սուքիասեան, սակայն նոյն գաւառապետն եւ ստորագրեալք նորա հետզհետէ ջանադիր լինին կարճել զամենայն միջոցս աշխատանաց նոյն վանահօրն եւ զօրացուցանել զբնակութիւնս եւ զիրաւունս յիշատակեալ մարաց» (էջ 73): Անշուշտ հնարաւոր է, որ նշեալ հակահայ դրսեւորումները «ինքնագլուխ» կամ «նուիրատուութիւններով» առաջնորդուող գաւառապետի դիրքորոշման արդիւնք են, սակայն դրա հաւանականութիւնը բացառում է այլ եւ այլ փաստաթղթերով, որ ուղղակիօրէն վկայում են պետական յատուկ քաղաքականութեան մասին: Ահա Ամենայն Հայոց Գէորգ Դ. կաթողիկոսին ուղղուած զեկուցագրում Կարսի վիճակի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանը գրում է՝ «Ի կառավարութենէն Ռուսաց բացարձակ արտօնութիւն տուեալ է ի Ռուսաստանի բնակեալ յունաց եւ մալականաց գաղթել ի վիճակն Կարուց, եւ վերաբնակել անդանօր: Այլ սակայն ցարդ Ռուսիաբնակ հայկական ազգիս ուրուք ոչ երբեք, որպէս ցանկան բազումք ի գիւղորէիցն Աղէքսանդրապօլի եւ Ախալքալաքայ» (էջ 36): Նամակի շարադրանքում եպիսկոպոսը ներկայացնում է առկայ իրավիճակը, նշելով, թէ վտանգ կայ, որ իշխանութիւնների թոյլտուութեան շնորհիւ հայկական սրբավայրերի հարեւանութեամբ հաստատուած յոյներն ու մալականները կարող են իւրացնել դրանք, մինչդեռ «ոչ թոյլատրի գէթ յայնոսիկ գիւղորայս բնակել քանի մի գերդաստան Հայոց, առ ի պահպանել զայնոսիկ վանորայս» (էջ 36): Բացայայտումների առումով սպա-

ուիչ է N^o 169 վաւերագիրը, որ «Եկեղեցական գոյքի բռնագրաւման» ցարական յայտնի օրէնքի դրսեւորումների մասին է: Սրա կապակցութեամբ Կազմողն օգտակար ծանօթագրութիւն է դրել. «Ըստ եկեղեցական գոյքի բռնագրաւման մասին 1903 թ. յունիսի 12-ի ցարական օրէնքի Հայ Եկեղեցու եւ հոգեւոր հաստատութիւնների ողջ անշարժ գոյքն ու դրամական միջոցներն անցնում էին ռուսական պետութեան տնօրինմանը (ընդգծումը մերն է.— Գ. Հ., Ա. Խ.): Իր հերթին՝ պետութիւնը գոյքից եւ դրամից գոյացած եկամուտներից բաժին էր հանելու Եկեղեցուն, իսկ զգալի մասը՝ պէտք է յատկացնէր բացուելիք պետական դպրոցներին»: Այս օրէնքի նպատակն էր,— բացատրում է կազմողը,— հայկական մշակութային-լուսաւորչական հիմնարկները զրկել գործունէութեան նիւթական միջոցներից, իսկ հոգեւորականներին՝ դարձնել պետութիւնից նպաստ ստացող հնազանդ պաշտօնեաներ: Նման անարդարացի որոշման դէմ ամենուրեք տեղի ունեցան բողոքի ցոյցեր, զինուած ընդհարումներ ուստիկանութեան հետ, ահաբեկուեցին մի շարք ցարական պաշտօնեաներ: Պայքարը ղեկավարում էր հայ հոգեւորականութիւնը Մկրտիչ Ա. Խրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի զլխաւորութեամբ: 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ Զ-րդը ճարահատեալ հրամայեց վերադարձնել գոյքը եւ վերաբացել հայկական դպրոցները: Հայ Եկեղեցու գոյքի բռնագրաւման եւ դպրոցների փակման վերաբերեալ ցարական օրէնսդրական փաստաթղթերն ու արձանագրութիւնները տես ՂԱԱ, ֆ. 101, ց. 1, գ. 58, թթ. 1—4» (էջ 245): Այսօր վերջին հարիւրամեակների գաղութարար-նուաճող զաւթիչների գործելաոճի վերաբերեալ քննարկումներ են սկսուել: Դրանց շարակարգից յատկապէս երկու տեսակէտ կցանկանայինք յիշել. ոմանք հիմա պաշտպանւում են ասելով՝ Անյայտ էր, գաղտնի էր, թէ ինչ է կատարուել ու կատարւում արինոռուշտ կայսերապետութեան շրջանում: Առաւել վարպետորդիները խոստովանում են, որ գիտէին, թէ ինչ է կատարւում, սակայն համատարած վախի ու սարսափի մթնոլորտում ոչ ոք չէր կարող խօսել իրականացուող քաղաքականութեան մասին: Թէ՛ առաջին, թէ՛ երկրորդ դէպքի համար կարող ենք բերել Պարոյր Սեւակի տողերը, որ հրապարակուել են խորհրդային ծաղկուն գրաքննութեան տարիներին՝ ապացուցելու. մտաւորականը պարտաւոր է եւ տեսնել, եւ ասել ճշմարտութիւնը.

5000 տարուայ,

500 տարուայ,

եւ 50 տարուայ

պատմութիւն ունի այդ ջարդ-սպանդը, նախնի-եղեռնը,
 որ չի՛ աւարտուել ու չի՛ աւարտում.
 կարմիր էր, հիմա ներմակ է դարձել,
 եւ հիմա արդէն նա գանգ չի հատում,
 այլ գրաւում է,
 չի կտրում ձեռքեր, այլ վարձում ընդմիջտ,
 չի առեւանգում, այլ հմայում է,
 չի հեղում արիւն, այլ ծախս է առնում
 եւ, միացնելով երակ-երակի,
 իր ամենակոյ արեանն է խառնում...⁴

Հրապարակուած հատորում առանց կրճատումների ու գաղտնա-
 գրման խտացուած է գրեթէ մէկ դարի պատմութիւն: Վաւերագրերի մե-
 ծագոյն մասը բացի ուղղակիօրէն հաղորդուող տեղեկութիւններից նաեւ
 կողմնակի բաւարար նիւթ են տրամադրում ի սպառ վերացնելով պատ-
 մութեան թուացեալ քօղը եւ վերջնականապէս համոզելով՝ պէտք չէ սպա-
 սել Դամոկլէսի սրին, ձիամազի կտրուելուն, Սասունցի Դաւթի թուրն
 է հարկաւոր:

ԳԷՈՐԳ ՀՆԶԱՅԵԱՆ⁵
 Բանասիրական գիտ. թեկնածու
 ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ
 Բանասիրական գիտ. թեկնածու

⁴ Տե՛ս <http://sevak.am/lpoem/poem/ԵՌԱԶԱՅՆ-ՊԱՏԱՐԱԳ>:
^{5*} Այս ազգանունը վերջինը կրել է Հռիփսիմէ Հնձացեանը, որ իր մահով վախճանուել է
 1953-ին: Գերդաստանի բոլոր միւս անդամները եղեռնի զոհեր են, սակայն ամուսնու ազգա-
 նունն ընդունած Հռիփսիմէի թոռներն ու ծոռները՝ Բագրատունեաց շառավիղ Մելիք-Բաղդա-
 սարեանները, մեծ-մօր ազգանունը երբեմն կիրառում են իբրեւ ծածկանուն՝ փորձելով այդու-
 վառ պահել նախնեաց յիշատակը: Հնձացեան տոհմի առաւել յայտնի ներկայացուցիչները
 Հռիփսիմէի պապն ու նախապապը՝ Նիւմայի եւ Նիտայի անուանի աշուղներն են (նկատենք,
 որ իրենց թոռերին պարտասիր չէ աշուղութիւնը դիտարկել որպէս գլխաւոր զբաղմունք: Այդ
 տարիներին իբրեւ աշուղ յիշուել են Յակոբ Պատրիարք Նալեանը Նիւմայի տէս «էջմիածին»,
 2006, Զ., էջ 141 եւ Գ. ԲԱՄՊՈՒՔՅԵԱՆ, Յակոբ Նալեան Պատրիարք. կեանքը, գործերը եւ աշա-
 կերտները, Ստամբուլ, 1981՝ Յովհաննէս Եպիսկոպոսը՝ Թալիպի, Յակոպը Վարդապետ Պէրպէ-
 րեանը՝ Իսէվի եւ այլք). տէս «Ծաղիկ», Պոլիս, 1892, 13 յունիս: Այս լրագիրը Հնձացեաններին
 ներկայացնում է այսպէս՝ «30. Նիտայի, հաշատուր՝ Կարնոյ Հենձ գիւղէն. երգած է տաճկ. եւ
 սորա զաւակն եւս եղած է հռչակաւոր աշուղ, որ է՝ 31. Նիւմայի, Բահակ՝ Կարնոյ Հենձ գիւղէն,
 երգած է տաճկերէն»: Տե՛ս նաեւ «Նիւմայի» – «Նոր-Դար», 1996, թ. 18 (20), 8 մայիս: Իր դասա-
 խօսութիւններից մէկի ժամանակ ՀԽՍՀ արուեստի վաստակաւոր գործիչ կոչմանը առաջինն
 արժանացած Գարեգին Լեւոնեանը՝ աշուղ Զիւանու որդին, անդրադարձել է նաեւ Հնձացեան-
 ներին. «Սալեաթ-Նօվայից յետոյ նշանաւոր աշուղներ յիշուցին Քեշիշ օղլի, որ իր երգ ու նու-
 ազով հասել է մինչեւ սովթանների ապարանքները, Թուջաւ, Նիտայի եւ նուազ նշանակութիւն
 ունեցող մի շարք անուններ». տէս «Գործ» (Թիֆլիս), 1909, 16 ապրիլ, № 77. – խմբ.:

ԱՆՆԱ ԾԻՐԱՆԱԾԻՆ. ՍՐԲԱԶԱՆ ԱՈՒՔԵԼՈՒԹՅՈՒՆ

2016 թվականի աշնանը «Հայաստան» հրատարակչությունը հայերեն թարգմանությունում լույս է ընծայել ուկրաինացի ակնավոր պատմաբան Ն. Նիկիտենկոյի¹ «Աննա Միրանածինը»² գեղարվեստական ռժով շարադրված պատմագրական ուսումնասիրությունը, որը նվիրված է Ռուսիո քրիստոնեության ընդունման 1025-ամյակին: Սլավոնական միջավայրում սա առաջին լուրջ անդրադարձն է հայ նշանավոր գործիչ, Բյուզանդիայի արքայագուստր Աննա Մակեդոնացու պատմական գործունեությանը:

Մենք ավանդաբար հեռացնում ենք մեզ Բյուզանդական կայսրությունից՝ ընդունելով այն որպես Հայաստանի դեմ պատերազմող երկիր: Սակայն, շատերի կարծիքով, արդեն ութերորդ դարի երկրորդ կեսից Բյուզանդիան թե՛ բնակչության մեծամասնությամբ, թե՛ կառավարող իշխանությամբ ավելի շատ հայկական էր, քան հունական. ընդ որում հայազգի բյուզանդական մեծամեծներից ոմանք ծանրակշիռ դեր են խաղացել համաշխարհային պատմության ընթացքում: Նշված ժամանակաշրջանից Բյուզանդիան դառնում է մեր ժողովրդի գոյության մի մասը, որը մենք անտեսելու իրավունք չունենք:

«Այն հայերը, որ պաշտօնապէս Բիւզանդիոնի կայսր կը ճանչցուին պատմութեան մէջ, եւ որոնք միայն մուտ կը գործեն ցանկերու եւ ժամանակագրութեանց մէջ երկոտասան են»³: Տեղին ենք համարում հիշել, ասենք՝ Մորիկին (583—602), Վարդանին (711—713 թթ.)⁴, նրան հաջորդել են Անաստասիոս Բ. (713—715 թթ.) եւ Թեոդոս Գ. (715—717 թթ.), ավելի

¹ Նադեժդա Նիկոլայի Նիկիտենկո, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի մշակույթի վաստակավոր գործիչ: 1977 թվականից աշխատում է «Կիևի Սոֆիա» ազգային արգելոցում: Ուսումնասիրում է Սոֆիայի տաճարն իբրև ճարտարապետության եւ արվեստի ակնավոր հուշարձան, հոգեւոր մշակույթի գլուխգործոց եւ պատմական եզակի արժեք: 26 գրքի եւ ավելի քան 300 հոդվածի հեղինակ է:

² Արքայակերտից մինչեւ Կիև: Աննա Միրանածինը: Իմաստուն, թե՛ Անիծյալ: [Պատմագիտ. աշխ.] / Ն. Ն. Նիկիտենկո, Թարգմ.՝ Վ. Վ. Մադոյան, «Հայաստան» 294 էջ:

³ Հ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ, Հայ կայսերք Բիւզանդիոնի, հտ. Ա., Վենետիկ, 1905, էջ 20:

⁴ Փիլիպպիկոս Վարդան Մամիկոնյան:

ուշ (813—825) թթ. բյուզանդական թագուհի կրել է Լեւոն Ե.⁵ (իր օրոք ձուլված ոսկե դրամները ներկայումս պահվում են Աթենքի՝ Բյուզանդական թանգարանում: Հույն եւ սլավոնական պատմիչները նրան անվանում են հանցագործ, քանի որ, ոմանց կարծիքով, նա ձգտել է հայ (կամ առաքելական) քրիստոնեության դրույթները տարածել ողջ երկրում) Լեւոն Զ. Իմաստասեր (886—312) եւ այլն:

Թ. դարի կեսից կայսերական գահն անցնում է հայերին, հայկական Մակեդոնյան արքայատոհմին (կոչվում է Մակեդոնյան՝ հարստության հիմնադիր՝ Բարսեղի ծննդավայրի ակնարկության մինչեւ տասնմեկերորդ դարի կեսերը, որից հետո Բյուզանդիան կտրուկ անկում է ապրում սկսելով իր ընթացքը դեպի մայրամուտ:

Ի թիվս այլ հանգամանքների հաճախ անկման սկիզբն աղերսում են արքայադուստր Աննայի անվանը, որը եղել է բյուզանդական հայ թագավորներից մեկի՝ Ռոմանոս Բ. դուստրը եւ փոքր տարիքից հայտնի է եղել իր հմայքով եւ գեղեցկության մեջ: Աննան տակավին հինգ տարեկան էր, երբ 968 թվականին գերմանական կայսր Օտտո Ա. պատվիրակություն էր ուղարկել՝ Աննայի ձեռքը խնդրելու: Հիշենք, որ բյուզանդական կայսրերի հետ բարեկամանալը միջին դարերում նշանակում էր օգոստոսափառ թագավորական տոհմը դասվել: Ուստի շատերն էին ձգտելու Աննայի փառքին ու հմայքին: Եւ այսպես՝ Աննան ընդամենը հնգամյա՝ ծաղիկ հասակում էր, հինգ տարեկան էր, սակայն արքայադուստր էր, ամենաերեւելի տոհմի զավակ, ուստի ո՞վ էր Գերմանիայի կայսրը, որ սիրտ առներ հավակնելու հայ արքայադուստր ձեռքին: Պատվիրակությունը վերադարձել է ձեռնունայն: Մի քանի տարի հետո Օտտոն իր երազանքը փորձել է իրականացնել իր որդու համար, սակայն տասն օր քաղաքի



Իշխանուհի Աննան (ըստ Կիեվի Սուրբ Սֆիայի որմնանկարների): Նկ. Վ. Իսակով

⁵ Հայտնի է նաեւ Հայ, Հայկազն կամ Արծրունի մականուններով:

արվարձաններից մեկի պանդոկներում տառապելուց հետո պատվիրակությունը ծարավ վերադարձել է հայրենիք: 967 թվականին նույն պատվին են արժանացել Ֆրանսիայի կայսր Ռոբերտ Բ. խնամախոսները: Ու թերեւս կարելի է կարծել, որ արքայադուստր Աննան հիրավի ծնված է եղել հրաշագործության համար: 987 թվականին Հին Ռուսիայի իշխան Վլադիմիրը, լսելով Աննայի մասին եւ փափագելով բարեկամանալ բյուզանդական կայսրերի հետ, խնամախոս է ուղարկել Կոնստանդնուպոլիս, կայսր Բարսեղ Բ.՝ Աննայի եղբոր մոտ, որն իր ունեցվածքով եւ հարստությանմբ մարդկության պատմության մեջ 3-րդ տեղն է դասվում մի շարք պատմաբանների հաշվարկներով:

Իր պարագային Աննային տա՛լ մի վայրենի, կռապաշտ իշխանի, որն արդեն իսկ մի քանի կին ուներ եւ ըստ ռուսական տարեգրությունների՝ հիսուն հարձ: Բարսեղը մոլեգնել էր միայն այդ մտքից, բայց... պատմության ընթացքն անքննելի է... Արաբների եւ արեւելյան վայրի ցեղերի հարձակումների պայմաններում Բարսեղն ստիպված էր հզոր բարեկամ որոնել, եւ ռուս իշխանն այդպիսինն էր, մանավանդ որ Բյուզանդիայում այդ ժամանակ ծառայում էր գրեթե հինգ հազար ռուս զինվոր: Այո՛, սա 988 թվականի սկիզբն էր, այն թվականի, որը պաշտոնապես ընդունված է իբրեւ Ռուսիայում քրիստոնեության ընդունման տարի:

Ըստ ռուսաց կավրենտյան տարեգրության՝ ռուս իշխանն այդ շրջանում նոր կրոն է որոնելիս եղել եւ ժողով է հրավիրել՝ երեք կրոնների ներկայացուցիչների փաստարկները լսելու համար: Հրեան մերժվել է անմիջապես, իսկ քրիստոնյա եւ մահմեդական հոգեւորականների ասածները լրջորեն հետաքրքրել են իշխանին, սակայն նա հայտնվել է անելանելի վիճակում. քրիստոնեական կարգով Վլադիմիրն իրավունք ուներ ընդամենը մեկ կին ունենալու. հանգամանք, որ իշխանի առաջին մտատանջությունն էր՝ «մարդն աշխարհից ի՛նչ է տանելու», իսկ մահմեդականության պայմաններով պետք է հրաժարվեր ոգելից խմիչքից (մարդն ինչո՞ւ է լույս աշխարհ գալիս): Երկար խորհելուց հետո՝ իշխանը գերադասել է խմիչքը: Իսկ իրականում... Իրականում, ըստ ուկրաինական աղբյուրների եւ ժամանակակից գիտնականներ Ն. Նիկիտենկոյի, Ի. Գայուկի եւ այլոց ուսումնասիրությունների, Բյուզանդիայում Վլադիմիրին կտրուկ պայման է առաջադրվել. Աննայի հետ ամուսնանալու համար երկիրը կնքել Փրկչի խաչով: Պայմանն ընդունվել է անմիջապես, եւ Վլադիմիրը խաչի գորությունն է արժանացել 989 թվականի մայիսի 12-ին՝ Ղրիմի

Խերսոնես քաղաքում, բյուզանդական գաղութներից մեկում, ուր եկել էր Աննային դիմավորելու:

Բոլոր ուսս գիտնականների համոզմամբ Ռուսիայի՝ քրիստոնեության ընդունումը փրկություն էր երկրի համար: Ռուսիան մկրտվեց, իր իշխանից անմիջապես հետո, եւ ժողովուրդը Վլադիմիրին անվանեց այնպես, ինչպես չի անվանել եւ ոչ մեկին՝ Կարմիր (Սքանչելի) Արեւ⁶: Նա առաջին ռուսն է, որը դասվել է ռուսական սրբերի շարքը: Աննայի զավակները՝ Բորիսը եւ Գլեբը, որոնք Բյուզանդական գահի միակ թագաժառանգներն էին (Բարսեղ Բ. ամուսնացած չի եղել) նույնպես սրբադասված են: Ըստ ուսս պատմահայրեր Վ. Տատիշչեւի եւ Ս. Սոլովյովի՝ այս իշխանագունները մոր ազդեցությամբ քրիստոնեական մարդասիրություն են դրսևորել իրենց խորթ եղբայր՝ Յարոսլավի հանդեպ, որ խարդավանքով ու խաբեություններ սպանել է գահաժառանգներին: Տեղին է նկատել, որ Ն. Կարամզինի համառ ջանքերով այս Յարոսլավն արդի պատմագրության էջերում հանդես է գալիս ոչ թե իր արժանի՝ Անիժյալ կոչումով, այլ, չգիտես ինչու, Իմաստուն է հորջորջվում: Ենթադրվում է, որ Աննայի դուստրերից մեկը՝ Մարինա Դոբրոնեգան է՝ Լեհաստանի կայսր Կազիմիր Ա. կինը, իսկ երկրորդ դուստրը՝ Ֆեոֆանան՝ Նովգորոդյան պոսագնիկ (քաղաքագլուխ) Օստրոմիրի կինը, որը պատվիրել է հայտնի Օստրոմիրյան ավետարանը՝ ռուսական գրության պահպանված ամենահին հուշարձանը: Վլադիմիրը, գտնվելով կնոջ մոգական ազդեցության ներքո, բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր է կառուցել Հին Ռուսիայում, որոնցից լավագույնը Կիևյան Սուրբ Սոֆիան է, որի պատերին պահպանվել են հայ արքայադաստեր պատկերները:

Մեր հասարակությունը մեծ ոգևորությամբ է ընդունում ուկրաինական գիտնականների եւ ուղղափառ հոգևորականների ճիգերը վերականգնելու պատմական ճշմարտությունը. Աննային, որը դարձել է Ռուսիայում քրիստոնեության ընդունման գլխավոր շարժառիթը, նույնպես դասել Ռուս Ուղղափառ Եկեղեցու սրբերի շարքը: Ինչպես գրում է Անդրեյ Շիպովալովին իր «Կիևյան Ռուսիո հայերի անգին ընծան» աշխատության մեջ⁷, «ամեն անգամ, երբ ձեր քաղաքի փողոցներում հայ կհանդիպեք, նայեք նրա աչքերին: Հավաստիացնում եմ՝ դուք կտեսնեք Աննա Հայուհուն, որ մկրտել է Ռուսիան»:

⁶ Владимир Красное Солнышко.

⁷ А. ШИПОВАЛОВ. Бесценный дар армян Киевской Руси... *տե՛ս* <http://www.nashasreda.ru>

Ն. Նիկիտենկոյի դիտարկվող աշխատությունը թարգմանվել է առաջին հերթին հայերի դերը համաշխարհային պատմության մեջ ընդգծելու համար: Ինչքան էլ ռուսական աղբյուրները պնդեն, թե Բարսեղ Բ. ստիպված էր համաձայնել բարբարոս իշխան Վլադիմիրի եւ իր սիրեցյալ քրոջ ամուսնությանը, եւ որ դա Բյուզանդիոս հռչակավոր կայսեր համար պարտադրված քայլ էր, պսակի հիմնական պայմանը մեկն էր՝ Ռուսիայի քրիստոնեացումը, որն այդ ժողովրդի պատմության մեջ բոլոր աղբյուրների եւ գիտնականների տվյալներով ամենանշանակալից իրադարձությունն է: Բացի դրանից՝ հեղինակը վկայում է, որ նաեւ անգլիական, լեհական, գերմանական թագավորների արյան մեջ կան հայկական հյուլեններ, որոնք գուցե մի օր կբարձրաձայնեն իրենց մասին:

Մյուս կողմից ներկա աշխատությունը ցույց է տալիս հայ ընթերցողին, թե ինչպես է ձեւավորվել ռուսական կայսրությունը եւ ինչ բնավորության ու կամքի մարդկանց շնորհիվ: Ինչպես է պատահել, որ մի շարք ժողովուրդներ հիմնել են իրենց ինքնուրույն, անկախ պետականությունը, իսկ մեր ժողովուրդը մինչ այսօր ստիպված է ազատագրական պայքար մղել: Իրոք դա մեր պառակտումների հետեւանքն է, թե՞ պատմության քմահաճույքը: Ռուսաստանն իրատեսորեն ընկալելով իբրեւ աշխարհի հզոր գերտերություններից մեկը եւ ելնելով քննության առարկա գրքի բովանդակությունից՝ անդրադառնանք այդ երկրի կազմավորման սկզբունքային մի քանի հիմնահարցի:

Սկսենք Վլադիմիր Կարմիր Արեւից՝ Աննայի ամուսնուց, որին արեւելյան սլավոնական ժողովուրդները համարվում են իրենց ողջ պատմության ամենամեծ իշխան: Իբրեւ առաջնային յիշենք, որ հենց միայն գրքում գետեղված փաստերն այս մարդու մասին ահ ու սարսափ են առաջացնում: Դժվար է խոսել ռուս առաջին սրբի մասին եւ պատկերացնել, որ նա սպանել է իր հարազատ եղբորը՝ գեղեցկուհի կնոջը տիրանալու համար: Ընկալելի է, որ այդ կինն ունեցել է բացարձակ հմայք եւ գեղեցկություն, ինչի պատճառով բյուզանդական վանքից Սվյատոսլավն առեւանգել է նրան՝ ավագ որդու համար: Ն. Նիկիտենկոյի վկայությամբ այդ կինը եղել է Հովհաննես Չմշկիկի ազգականը, այսինքն՝ հայկազն, բայց աղբյուրներում հույն է համարվում, քանի որ ռուսներն այն ժամանակ, թերեւս, հայ չեն ճանաչել: Բայց մեզ համար դա չէ կարեւորը: Կարեւորն այն է, թե ինչպես կարելի է բնութագրել նման պատճառով եղբայրասպան դարձած մարդուն:

Երբ Վլադիմիրը ցանկացել է ամուսնանալ Պոլոցկի իշխանադուստր Ռոզնեդայի հետ եւ ստացել մերժում, նա գրավել է քաղաքը, ծնողների աչքի առաջ բռնաբարել աղջկան եւ հետո աղջկա աչքերի առջեւ սպանել նրա հորն ու երկու եղբայրներին: Նույն հաշվեհարդարը նա իրականացրել է Խերսոնեսի քաղաքապետի եւ նրա դստեր հետ: Թե ինչ կյանք է վարել նա մինչեւ Աննային կնուխյան առնելը, սարսուռով են պատմում ռուսական բոլոր տարեգրությունները, հետեւաբար նաեւ դրանցից օգտված Ն. Նիկիտենկոն: Միթե պատմությունը կերտում են միայն նման արնախում մարդիկ:

Սակայն Վլադիմիրն իր ժողովրդի համար կատարել է մի սրբագան քայլ, որն ավելի հզոր է, քան իր բոլոր շարագործությունները: Նա մկրտել է երկիրը եւ ամեն ինչ արել Ռուսիայի հզորացման համար: Ինչպես նման դեպքերում նշում են, իշխանի բարի գործերն Ահեղ դատաստանին գերակշռելու են չարին: Գուցե Աստված այդ դատաստանը տալիս է ժողովրդին, եւ ժողովուրդն է իր պատմության ընթացքում հայտարարում իր գերագույն վճիռը:

Վլադիմիրն ուզում էր ունենալ հզոր երկիր եւ այդ պատճառով նույն իրավական դաշտում է պահել իրեն հպատակ բոլոր իշխաններին: Երբ նրա որդին՝ Յարոսլավը, որին նվիրված է նշված աշխատության երկրորդ մասը, հրաժարվել է նախասահմանված հարկերը վճարել կենտրոնական իշխանությանը (այսինքն՝ հորը), Վլադիմիրը պատրաստվել է զորք ուղարկել որդու դեմ՝ խռովությունը խեղդելու համար: Նա ռուս առաջին արքան էր, որ պետականությունը դասեց ամեն ինչից վեր: Դարեր անց նույն գաղափարով Ռուսաստանը կայսրության վերածեց Պետրոս Ա., որ ի սեր հայրենյաց կախազան բարձրացրեց նաեւ իր միակ, թագաժառանգ որդուն:

Դժվար է հիմա՝ մեկ հազարամյակ անց, երբ հայտնի է պատմության ընթացքը, դատել մեծ իշխանի մասին: Բացի նրանից, որ նա վայրենի Ռուսիան դարձրեց Բյուզանդական կայսրության, քաղաքակրթության, մշակույթի ժառանգորդ, նա ձգտում էր խաղաղության՝ ընկալելով դրա դերը պետության զարգացման գործում: Նա փորձել է բարեկամական հարաբերություններ հաստատել բոլոր հարեւանների հետ: Այդ են վկայում նրա որդիների ամուսնությունները՝ հարեւան տիրակալների դուստրերի հետ:

Սակայն նա թույլ է տալիս նույն սխալը, որը թույլ է տվել շեքսպիրյան Լիր արքան: Նա բաժանում է երկիրը իր բազմաթիվ, տարբեր կանանցից

ծնված որդիները միջե՛ն՝ սրանով իսկ սկիզբ դնելով երկպառակությունը: Իր երկրորդ սխալ քայլը Բորիսի թագադրումն էր: Ըստ ամենայնի նա թագը պետք է իբրև ժառանգություն հանձներ կամ ամենահզոր որդուն, կամ ավագին, ինչպես դա ընդունված էր այն դարաշրջանի եւրոպական միապետություններում: Իսկ նա ժառանգորդ դարձրեց իր սիրած որդուն, որ արժանի բարձրության վրա չգտնվեց եւ ինչ-որ փոքր հողակտորների համար պատերազմ սանձագերծեց ընդդեմ Յարոսլավի: Վերջինս իր հերթին պայքարի մեջ ներքաշեց օտարերկրացի վարձկաններին, բախտի բերմամբ հաղթող դուրս եկավ, ոչնչացրեց իր հոր մնացյալ ամբողջ արու սերունդը (եթե Վլադիմիրը մի եղբորն էր սպանել, Յարոսլավն սպանեց բոլորին եւ այս առումով իսկապես ապացուցեց, որ հոր «արժանի» զավակն է): Նա դարձավ Ռուսիայի միակ տերն ու տիրակալը: Ինչպես համոզիչ կերպով շարադրում է Ն. Նիկիտենկոն, ի վերջո թագը մնացել է հզոր Վլադիմիրի ամենակծծի, ամենաթույլ եւ ամենաանբան ժառանգին, որ, ինչպես նկատել ենք, Ն. Կարամզինի «օրհնություն» պատմագիտության էջերում հանդես է գալիս որպես Յարոսլավ Իմաստուն, շնայած մեր հեղինակի կարծիքով նա առաջին հերթին Անիծյալ է:

Հատկանշական է, որ իր գործունեության դառն ծանրությունն զգացել է նաեւ Յարոսլավը եւ սրբերի շարքն է դասել Բորիսին ու Գլեբին, տարեգրություններից վերացրել բոլոր հիշողություններն իր եւ եղբայրների միջեւ կատարվածի վերաբերյալ՝ մեղքը բարդելով ավագ եղբոր՝ Սվյատոպոլկի խղճին: Ինչպես միշտ՝ պատվիրատուն է որոշել պատմական իրադարձությունների գրանցումն ու մեկնաբանությունը: Սակայն շմոռանանք, որ առաջինը Բորիսն է ոտնձգություններ արել Յարոսլավի իշխանության դեմ...

Յարոսլավը շարունակել է հոր քաղաքականությունը քրիստոնեության խորացման, ամրապնդման գործում, ընդլայնել է Կիևը, բարեկամական հարաբերություններ է հաստատել հարեւան պետությունների հետ: Նա երկիրը պահել է միասնական, ժառանգության է տվել ավագ որդուն, փորձել է ստեղծել ընդհանուր տնտեսվարման կարգ, ինչի շնորհիվ, այլեւայլ հեղինակների համոզմամբ «ահեղ դատաստանին իր բարի գործերի նժարն ավելի ծանր է լինելու...»: Մեծ խրատ եւ ուսանելի օրինակ երկրագնդի տիրակալների համար:

Դիտարկվող աշխատության տեսանկյունից կարելի է ասել, որ ռուսական գերտերության ակունքներում եղել են վիկինգները, որոնք եւ

ստեղծել են ուսու պետականության կմախքը ու ժէ. դարի սկզբին ժառանգության տվել Ռոմանովներին: Ռյուրիկովիչները չէին խզում իրենց հարաբերությունները նախնիների հետ եւ հարկ եղած դեպքում անմիջապես օգտվում էին նրանց աջակցությունից: Միայն վիկինգների օգնությամբ Յարոսլավը կարողացել է վերացնել իր եղբայրներին եւ հաստատել իր ուստրերի իշխանությունը ողջ Ռուսիայի տարածքում: Իրողությունը կարելի է մեկնաբանել նաեւ այլ կերպ: Փաստորեն մինչեւ Բաթուխանի արշավանքը ուսուական քաղաքական հարցերը լուծվել են Սկանդինավիայում՝ առաւ կոչվող ցեղի (որից ծագում է Ռուսաստանի անվանումը) հզորների կամքով, որոնց հետ կապը եղել է երկար, եւ Ռուսիայի տիրակալները չեն մոռացել իրենց նախնիների ո՛չ լեզուն, ո՛չ բարեկամությունը: Այսինքն՝ օտարների միջամտությունը Հին Ռուսիայի պետականության մեջ եղել է միշտ, սակայն հօգուտ երկրի եւ նրա իշխանության:

Քննարկվող գրքում կա եւս մեկ խրատ պատմության անաղարտության մասին: Ինչքան էլ փորձեն տիրակալները թաքցնել իրենց հանցագործություններն աշխարհից, ճշմարտությունը միշտ հաղթում է, թեկուզ եւ տասնյակ դարեր անց:

Գրքում փորձ է արվել հայ ընթերցողին փոխանցել Ն. Նիկիտենկոյի տեսակետն ամենայն մանրամասնությամբ: Միակ շեղումը, որը կրում է ոչ բովանդակային բնույթ, այն է, որ հեղինակը նկարագրել է իր երկրի շրջադարձային պահերից մեկը, իսկ թարգմանիչը շարադրանքի կառուցվածքում փորձել է ընդգծել հայ ժողովրդի սկզբունքային լուծման մեզ բարեկամ երկրի այդ շրջադարձի մեջ, չնայած Ն. Նիկիտենկոն եւս ուշադիր է մեր ժողովրդի հանդեպ ու ամենայն սիրով եւ ակնառու ակնածանքով նշում է հայերի դերը Բյուզանդական կայսրության հզորացման անցողարձերում: Վերջինիս կապակցությամբ նոր ուժով է հնչում դարերով մեզ տանջող հարցը. արդո՞ք մեր ժողովուրդն ի վիճակի էր արդեն միջին դարերում անկախություն ձեռք բերել եւ լրացնել հզորների շարքը: Ընթերցելով պրոֆեսոր Ն. Նիկիտենկոյին՝ գալիս ենք այն եզրակացության, որ, ըստ էության, այդ ուժը եղել է, սակայն աշխատել է հօգուտ օտարների: Հունական ողջ տարեգրությունը վկայում է, որ սկսած Թ. դարից Բյուզանդիայի քաղաքական կյանքում վճռորոշ դերը խաղացել են հայերը: Եւ միայն կարելի է զարմանալ, թե ինչից ելնելով էին հայ ֆեոդալները իրենց հոռմեացիների հետնորդ համարում եւ կոտորում իրար Բյուզանդիայի գահի շուրջ: Հայերից բաղկացած բանակը հայ զորավարի ղեկա-


վարույթյամբ (լինի դա Լեւոն Ե., Նիկեփորոս Փոկաս, թե նրա մորաքրոջ որդին՝ Հովհաննես Զմշկիկը, թե Բարսեղ Բ....) ճնշում էին արաբներին հարավում, իսկ եւրոպական վայրի ցեղերին՝ հյուսիսում, երբ այդ ուժը պետք է աշխատեր հանուն մեր հայրենիքի: Հունական աղբյուրները որոշ բյուզանդահայ զորավարների անունները նաեւ նշում են հայերեն, օրինակ՝ «Մլեր Մեճճ», ինչը, թերեւս, կարող է առիթ տալ ենթադրելու, որ Բյուզանդիայի արքունիքում Թ.—ԺԳ. դդ. գիտեցել են հայերեն, չնայած գրավոր լեզուն եղել է հունարենը: Ասվածի անուղղակի ապացույց, թերեւս, կարելի է համարել նաեւ այն, որ մակեդոնական արքայատոհմի հիմնադիր փառապանծ կայսր Բարսեղ Ա., ժամանակագրությունների տվյալներով, մինչեւ իր կյանքի վերջը չի կարողացել ամբողջովին տիրապետել հունարենին. հիմնականում խոսել է հայերեն: Պատմության վկայություններ, հայերն իրենք իրենց զուր են հռոմեացիների ժառանգորդ ճանաչել. Հունաստանում կան հիշողություններ եւ արձաններ՝ նվիրված բոլոր բյուզանդական կայսրերին, բացի... ազգություններ հայ կայսրերից, չնայած Բյուզանդիան իր հզորության գագաթնակետին է հասել հենց նրանց օրոք:

Օտարները հայազգի հզոր թագավորներ շատ են ունեցել: Վրաստանի միասնական պետությունը ձեւավորվել է Աշոտ Բագրատունու ճիգերով՝ առաջին ամենայն վրաստանի թագավորի, որի հետեւորդները, դառնալով Բագրատիոնի, պահեցին այդ երկրի անկախությունը մինչեւ ԺԹ. դարի վերջը: Օտարերկրյա վերջին կայսրը, որ հայկական արմատներ ուներ, թեկուզ արդեն մոռացություն մատնված, պարսից շահ Մոհամմադ Ռեզա Փեհլեւին էր՝ Պահլավունյաց տոհմից, որին գահազրկեց 1979 թվականի պարսկական հեղափոխությունը: Այս ամենը, լավագույն դեպքում, հպարտանալու առիթ է տալիս, սակայն ո՛չ ավելին: Ինչպես տեսնում ենք, առավել արդյունավետ կլիներ, եթե օտարերկրացիները ստեղծեին հայկական պետությունն այնպես, ինչպես դա տեղի է ունեցել Ռուսաստանում, Ֆրանսիայում, Անգլիայում, Վրաստանում: Ինչ է սա. իմաստուն անհաջողություն, թե՛ անիծյալ ճակատագիր:

Ինչ գաղափարների շուրջ կարող էր համախմբվել հայ ժողովուրդը: Պատմությունը ցույց է տալիս, որ դրանք կարող են լինել հավատքը, թագավորը, հայրենասիրությունը (Ռուսաստան), օրինականությունն ու հարստությունը (ԱՄՆ), ազգային պատիվն ու օրինականությունը (Ճապոնիա), իմաստությունն ու օրինականությունը (արդի Զինաստան) եւ

այլն: Օրինականության բացակայությունը ժամանակ առ ժամանակ ցնցում է Ռուսաստանն ու իր համախոհներին: Մարդկության անցած ուղին ցույց է տալիս, որ օրինականության բացակայության դեպքում ոչ մի երկիր ապագա չունի: Հուսանք, որ մեր երիտասարդ երկիրը ապագա կունենա եւ մի օր կհասնի օրինականության նավահանգիստ: Եւ դիմելով աշխարհի ներկա իշխանավորներին՝ կուզենայինք խոսքն ավարտել այնպես, ինչպես ավարտում է իր գիրքը պրոֆեսոր Ն. Նիկիտենկոն. «Խնչ օգուտ ունի մարդ իր ողջ շարժարանքից, որ տանջվում է արեգակի ներքո: Սերունդ է գնում, սերունդ է գալիս, բայց երկիրը մնում է հավերժ»: Ու դարձյալ. «Արդ, ծածուկ բան չկա, որ չհայտնվի, եւ գաղտնի բան չի եղել, որ ի հայտ չգա» (էջ 47):

ՎԱԳԱՐՇԱԿ ՀՆՁԱՑՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
16.02.2023



СОДЕРЖАНИЕ

ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И ГРАМОТЫ БЛАГОСЛОВЕНИЯ

Послание ЕГО СВЯТЕЙШЕСТВА ГАРЕГИНА II, ВЕРХОВНОГО ПАТРИАРХА И КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН, по случаю Великого Поста	5
--	---

ПРОПОВЕДИ

Проповедь АРХИМАНДРИТА НЕРСЕА ХАЛАТЯНА, произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	7
Проповедь ПРОТОАРХИМАНДРИТА ЗАКАРИИ БАГУМЯНА, произнесенная в монастыре Св. Гаяне во время Св. Литургии в честь праздника Сретения Господня	11
Проповедь АРХИЕПИСКОПА АРШАКА ХАЧАТРЯНА, произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	16
Проповедь АРХИЕПИСКОПА ВАЗГЕНА МИРЗАХАНИЯНА, произнесенная во время Св. Литургии в монастыре Св. Гаяне	20

РЕЛИГИОВЕДЕНИЕ

АРХИМАНДРИТ МАТТЕОС ДЖУГАЕЦИ — Проповедь на Великий Четверг о слове «Я от Самого Господа принял то, что и вам передал»	24
АЛЕКСАНДР МЕНЬ — Истоки религии	46

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

АШХУНДЖ ПОГОСЯН — Коллекция ковров в музеях Первопрестольного Святого Эчмиадзина (основные типы и их значение в изучении культуры армянского ковроделия)	67
--	----

ԵՎԱ ՄՈՒՇԱԿԱՆՅԱՆ — Посмертное представление образа Ованеса Туманяна в публикациях его современников 82

ՋԷԴԻԿ ՄԻՆԱՏՅԱՆ — Выдающийся полководец, военный деятель-историк и армянин-патриот (*Ованнес Христофорович Баграмян — 125*). 101

ՏՕՕԾՇՆԵՆԻՅԱ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՐՅԲԻՆ — Ниневийские христиане. 115

ՐԵՇԵՆԶԻՅԻ. ԲԻԲԼԻՕԳՐԱՓԻՅԱ

ԳԵՕՐԴ ԽՈՒԶԱԿՅԱՆ, ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ — Этап, превосходящий столетие — в одном томе. 136

ՎԱԳՐՏԱԿ ԽՈՒԶԱԿՅԱՆ — Анна Порфирородная: *священное апостольство* . . 142



CONTENTS

PONTIFICAL ENCYCLICALS, LETTERS OF BLESSING

Message of HIS HOLINESS KAREKIN II, CATHOLICOS OF ALL ARMENIANS , on the occasion of the Great Lent	5
--	---

SERMONS

Sermon delivered by ARCHIMANDRITE NERSEH KHALATYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	7
Sermon delivered by PROTO-ARCHIMANDRITE ZAKARIA BAGHUMYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery on the Feast of Presentation of Jesus in the Temple	11
Sermon delivered by ARCHBISHOP ARSHAK KHACHATRYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	16
Sermon delivered by ARCHBISHOP VASKEN MIRZAKHANYAN during the Divine Liturgy celebrated at St. Gayane Monastery	20

RELIGIOUS STUDIES

ARCHIMANDRITE MATTHEOS OF JULFA — Sermon of Maundy Thursday on the verse: “For I have received of the Lord that which also I delivered unto you”	24
ALEXANDER MEN — Origins of Religion	46

HISTORICAL-PHILOLOGICAL STUDIES

ASHKHUNJ POGHOSYAN — The rug collection of Holy Etchmiadzin museums (main types and their importance for the study of the Armenian carpet-making culture)	67
--	----

EVA MNATSAKANYAN – Posthumous presentation of Hovhannes Tumanyan’s image in the publications of his contemporaries 82

EDIK MINASYAN – Outstanding commander, military figure, historian and Armenian patriot (*Hovhannes Kristapor Baghramyan. 125*) 101

ESSAYS

ALEXANDER RIBIN – The Christians of Nineveh. 115

LITERARY REVIEW

GEVORG HNDZATSYAN, ANI KHUDAVERDYAN –A cycle exceeding a hundred years in one volume 136

VAGHARSHAK HNDZATSYAN – Anna Tsiranatsin: *sacred mission* 142



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ուղերձը Մեծ պահքի առիթով 5

ՔԱՐՈՉԽՕՍԱԿԱՆ

Տ. ՆԵՐՍԵՀ ՎՐԴ. ԽԱՂԱԹԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 7

Տ. ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Տեառնընդառաջի տօնին 11

Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔ. ԽԱՉԱՏՐԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 16

Տ. ՎԱԶԳԷՆ ԱՐՔ. ՄԻՐԶԱԽԱՆԵԱՆԻ քարոզը՝ խօսուած Ս. Գայանէ վանքում
մատուցուած Ս. Պատարագին. 20

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ԶՈՒՂԱՅԵՅԻ – Քարոզ աւագ հինգշաբթի օրուան,
այս խօսքին մասին. «Ես Տիրոջմէ առի ինչ որ ձեզի աւանդեցի» 24

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵՆ – Կրօնի ակունքները 46

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇԽՈՒՆԶ ՊՕՂՈՍԵԱՆ – Մայր Աթոռի թանգարանների գորգերի հաւաքածուն
(հիմնական տեսակներն ու դրանց նշանակութիւնը հայոց գորգագործական
մշակոյթի ուսումնասիրման համար) 67

ԵԻԱ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ – Յովհաննէս Թումանեանի կերպարի յետմահու
ընկալումը ժամանակակիցների հրապարակումներում 82

ԷԳԻԿ ՄԻՆԱՍԵԱՆ – Ականաւոր գորավարը, ռազմական գործիչ-պատմաբանն
ու հայրենասէր հայորդին (*Յովհաննէս Քրիստափորի Բաղրամեան. 125*). . . . 101


ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌԻԲԻՆ – Նինուէի քրիստոնեաները 115

ԳՐԱԽՕՍՈՒԹԻԲԻՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻԲԻՆ

ԳԷՈՐԳ ՀՆՁԱՑԵԱՆ, ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴԵԱՆ –
Հարիւրամեակը գերազանցող շրջափուլ մէկ հատորում. 136

ՎԱՂԱՐՇԱԿ ՀՆՁԱՑԵԱՆ – Աննա Ծիրանաձին. *սրբազան առաքելութիւն*. . . . 142



- ԱԲՀ** - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (Մ. Ազգերեան, Գր. Ճէլալեան), Վենետիկ, 1846 եւ 1865
- ԱԺ** - Արեւելագիտական ժողովածու, Երեւան
- ԱԻ** - Արեւելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԱՀ** - Ազգագրական հանդէս (խմբ.՝ Ե. Լալայեան), հ. 1-26, Շուշի/Թիֆլիս, 1896-1916
- ԱՅՏ** - Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Երեւան
- ԲԵՀ** - Բանքեր Երեւանի համալսարանի, Երեւան
- ԲՀ** - Բանքեր հայագիտության, Երեւան
- ԲՀԱ** - Բանքեր Հայաստանի արխիվների, Երեւան
- ԲՄ** - Բանքեր Մատենադարանի, Երեւան
- ԳԱԹ** - Գրականության եւ արվեստի թանգարան, Երեւան
- ԳԻ** - Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԳՀՃ** - Գեորգեան հոգեւոր ճեմարան (աստուածաբանական համալսարան), Ս. Էջմիածին
- ԴԱՆ** - Դաշտային ազգագրական նյութեր
- ԴՀՊ** - Դիւան հայոց պատմութեան (խմբ.՝ Գ. Աղանեանց), հ. 1-13, Թիֆլիս, 1893-1917
- ԴՀՎ** - Դիվան հայ վիմագրության, Երեւան
- Ե(Լ)Ժ** - Երկերի (լիակատար) ժողովածու
- ԵՊԿ** - Երեւանի պետական կոնսերվատորիա
- ԵՊՀ** - Երեւանի պետական համալսարան
- ԷԱԺ** - Էմիւնյան ազգագրական ժողովածու (խմբ.՝ Գ. Խալաթյանց, Կ. Կոստանյան), հ. 1-9, Մոսկվա, 1901-1913
- ԷՊԱԹ** - Էջմիածնի պատմաազգագրական թանգարան
- ԼԻ** - Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ԼՀԳ** - Լրաբեր հասարակական գիտությունների, Երեւան
- ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, Վիեննա
- ՀԱԱ** - Հայաստանի ազգային արխիվ, Երեւան
- ՀԱԲ** - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառյան), հ. 1-4, Երեւան, 1971-1979
- ՀԱԲՆ** - Հայ ազգագրություն եւ բանահյուսություն, Երեւան
- ՀԱԲՈ** - Հայոց անձնանունների բառարան (Հ. Աճառյան), հ. 1-5, Երեւան, 1942-1962
- ՀԱԹ** - Հայոց ազգագրության եւ ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, Սարդարապատ
- ՀԱԻ** - Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան
- ՀԱՊ** - Հայաստանի ազգային պատկերասրահ, Երեւան
- ՀԲԲ** - Հայերեն բացատրական բառարան (Ստ. Մալխասյանց), հ. 1-4, Երեւան, 1944-1945
- ՀԺՀ** - Հայ ժողովրդական հեքիաթներ, Երեւան
- ՀՀ** - Հայագիտական հանդէս, Երեւան
- ՀՀ ԳԱԱ** - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, Երեւան
- ՀՀՀ** - «Հասկ» հայագիտական հանդէս, Անթիլիաս
- ՀՀՀԾ** - Հայաստանի հնագիտական հուշարձանները, Երեւան
- ՀՀՀՍ** - Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ
- ՀՀՄ** - Հայաստանի հնագույն մշակույթը, Երեւան
- ՀՀՄԾ** - Հին Հայաստանի մշակույթը, Երեւան
- ՀՀՑ** - Հայագիտության հարցեր, Երեւան
- ՀՀՇՏԲ** - Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան (Թ. Խ. Հակոբյան, Ստ. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան), հ. 1-5, Երեւան, 1986-2001
- ՀՊԹ** - Հայաստանի Պատմության թանգարան, Երեւան
- ՀՊՀ** - Հնագիտական պեղումները Հայաստանում, Երեւան
- ՀՊՀՑ** - Հայոց պատմության հարցեր, Երեւան
- ՀՊՄՀ** - Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Երեւան
- ՀՍՀ** - Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1-13, Երեւան, 1974-1987
- ՀՏ** - «Հուշարձան» տարեգիրք, Երեւան
- ՄԱ** - Մերձավոր Արեւելք, Երեւան
- ՄԱԵԺ** - Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, Երեւան
- ՄՀ** - Մատենագիրք Հայոց, Անթիլիաս

- ՄՄ** - Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան
- ՄՊՎ** - Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Երևան
- ՄՑՀԶ** - Մայր ցուցակ հայերին ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՆՀԲ** - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Գ. Անտիքեան, Խ. Սիրմելեան, Մ. Ազգերեան), հ. 1-2, Վենետիկ, 1836-1837
- ՆՀԺՊ** - Նյութեր հայ ժողովրդի պատմության, Երևան
- ՇՀՀԿ** - Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. գիտական աշխատանքներ, Գյումրի
- ՊԲՀ** - Պատմաբանասիրական հանդես, Երևան
- ՊԻ** - Պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երևան
- ՊՄ** - «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Երևան
- ՎՀԵՊ** - Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Երևան
- ՎՀՀ** - «Վին» համահայկական հանդես, Երևան
- ՏՀԳ** - Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան
- ՑԶՄՄ** - Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Երևան
- ՔՀ** - Քրիստոնյա Հայաստան, Ս. Էջմիածին
- ՔՀՀ** - «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002
- ՕԱՀՀՍ** - Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան
- АГВ** - Армянский гуманитарный вестник, Ереван
- АО** - Археологические открытия, Москва
- АПА** - Археологические памятники Армении, Ереван
- АРА** - Археологические раскопки в Армении, Ереван
- ВВ** - Византийский временник, Ленинград-Москва
- ВДИ** - Вестник древней истории, Москва
- ВЕУ** - Вестник Ереванского университета, Ереван
- ВОН** - Вестник общественных наук, Ереван
- ДВ** - Древний Восток, Ереван
- ДКА** - Древнейшая культура Армении, Ереван
- ИАЭ** - Институт археологии и этнографии, ИАН РА, Ереван
- ИАН** - Известия Академии наук Армянской ССР, Общественные науки, Ереван
- ИФЖ** - Историко-филологический журнал, Ереван
- КБС** - Кавказско-ближневосточный сборник, Тбилиси
- КВ** - Кавказ и Византия, Ереван
- КДА** - Культура древней Армении, Ереван
- КСИА** - Краткие сообщения института археологии, Москва
- КСИИМК** - Краткие сообщения института истории материальной культуры, Москва
- МАК** - Материалы по археологии Кавказа, Москва
- МИАН** - Материалы по истории армянского народа, Ереван
- МНМ** - Мифы народов мира, Москва (ред. С. А. Токарев), 1991-1992
- НАА** - Национальный архив Армении, Ереван
- СА** - Советская археология, Москва
- СМОМПК** - Сборник материалов для описания местностей и племён Кавказа, т. 1-46, Тифлис, 1881-1915
- СЭ** - Советская этнография, Москва
- ХВ** - Христианский Восток, Санкт-Петербург
- AJNES** - Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan
- AS** - Anatolian Studies, Cambridge
- AW** - Antike Welt, Mainz am Rhein
- BAR** - British Archaeological Reports, International Series, Oxford
- САН** - Cambridge Ancient History, Cambridge
- IC** - Iran and the Caucasus, Leiden
- JANER** - Journal of Ancient Near Eastern Religions, Leiden
- JAOS** - Journal of American Oriental Society, Michigan
- JAS** - Journal of Armenian Studies, Belmont
- JSAS** - Journal of the Society for Armenian Studies, Fresno
- MDOG** - Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft, Berlin
- OrCh** - Oriens Christianus, Leipzig
- PO** - Patrologia Orientalis, Paris-Brepols
- REArm** - Revue des études arméniennes, Paris
- SMEA** - Studi Micenei ed Egeo-Anatolici, Roma

ISSN 1829-4243
eISSN 2953-7843

Հրատարակում է
Գէորգեան հոգևոր ճեմարանի
(աստուածաբանական համալսարան)
գիտխորհրդի երաշխատրույթեամբ եւ որոշմամբ

Հրատարակչական բաժնի տնօրէն՝
Տ. Արարատ քինյ. Պօղոսեան

Խմբագրութեան հասցէն՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Ք. ՎԱԴԱՐՇԱՊԱՏ,
ՄԱՅՐ ԱԹՈՌՍՈՒՐԻ ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ»
ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Республика Армения, Эчмиадзин, редакция журнала «Эчмиадзин»

Republic of Armenia, Etchmiadzin, Editorial Office of the Journal "Etchmiadzin"

էլ. փոստ՝ etchmiadzinamsagir@gmail.com
Հեռ. (+374-10) 517-276

Ստորագրուած է տպագրութեան՝ 17.03.2023 թ.



ԻՆՅՐ ԼԹՈՒ ԽՈՒԲ
ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏՊԱՐԱՆ